

Գ. Ղազարյան



ՈՒՂՂՆՓՆՈՒ ՀՆՅՒՔ



Կազմի լուսանկարը՝  
Ակնի հայ հոռոմները,  
XX դ. սկիզբ  
(Կ. Պապադոպոլոսի  
անձնական հավաքածու)

Գիրքը նվիրում եմ քսարիս՝ Վարսենիկ (1907-1991 թթ.) և  
հորս՝ Անդրուս (1935-2017 թթ.) Պապարյանների  
լուսավոր հիշատակին

**GEVORG KAZARYAN**

*Dr of Theology*

**THE EASTERN  
ORTHODOX ARMENIANS**

**Yerevan-Athens**

**2024**

9(47.925)

2-15

հշ

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ

Դոկտոր Աստվածաբանության

8599

# ՈՒՂՂԱՓԵՆՈՒ ՀԱՅՔԻ

Երևան-Աթենք

2024



ՀՏԴ 27-9:94(479.25)  
ԳՄԴ 86.37+63.3(5Հ)  
Ղ 158

**Ղ 158** **Ղազարյան Գևորգ**  
**Ուղղափառ Հայք / Գ. Ղազարյան.- Եր.: Հեղ. հրատ., 2024.- 241 էջ:**

Աշխատությունը նվիրված է հայ ժողովրդի նվազ ուսումնասիրված հատվածին՝ ուղղափառ (օրթոդոքս կամ քաղկեդոնական) հայերին: Հայագիտության մեջ սա առաջին փորձն է՝ համապարփակ ցույց տալու հայության այս հատվածի անցած պատմական ուղին ու դրա հանգրվանները՝ սկսած Միջնադարից և ավարտած գրեթե մեր օրերով: Հարուստ ու տարաբնույթ նյութը համակարգած ու ներկայացված է յոթ գլուխների մեջ: Գրքում հատուկ ուշադրություն է սևեռված ուղղափառ հայերի թողած պատմամշակութային ժառանգությանը՝ սրաժամանակ փորձելով ուրվագծել ապագայում հետազոտելիք ուղղություններն ու թեմաները: Իր տեսակի մեջ եղակի ուսումնասիրությունն արժեքավոր է հատկապես Հայաստանի եկեղեցական պատմությանը, ինչպես նաև հայ-բյուզանդական ու հայ-հունական կապերով հետաքրքրվողների համար:

ISBN 978-9939-0-4823-9



9 789939 048239

ՀՏԴ 27-9:94(479.25)  
ԳՄԴ 86.37+63.3(5Հ)

ISBN 978-9939-0-4823-9

© Ղազարյան Գևորգ, 2024

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք .....	9
Համառոտագրություններ .....	11
Գլխագրերի նկարները .....	13
<b>ԳՎՈՒՆ Ա. ՈՍԿԵ ԱՐԵՎԱՄԱԳԸ</b> .....	15
Առաքյալների քարոզչությունը Հայաստանում .....	16
Փոքր Հայքը՝ երկիր մարտիրոսաց .....	17
Մեծ Հայքի լուսավորումը.....	19
Հայոց գրերի ծնունդը .....	20
Հայաստանը՝ կովածաղիկ .....	22
<b>ԳՎՈՒՆ Բ. ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ</b> .....	25
Տիեզերաժողովը՝ Սր. Հոգու ձայն. ....	26
Առաջին Տիեզերաժողովը .....	26
Երկրորդ և երրորդ Տիեզերաժողովները .....	27
Չորրորդ Տիեզերաժողովը .....	30
Հայոց Եկեղեցին և Քաղկեդոնի Տիեզերաժողովը .....	33
Դվինի երկրորդ ժողովը .....	34
Դվինի երկրորդ ժողովից հետո .....	36
Թեոդոսուպոլիս-Ավանի կաթողիկոսությունը .....	36
632-633 թթ. Կարնո միությունը .....	40
«Ներսէս արար. յիշեցէք» .....	42
Նոր երկրնտրանք .....	43
Վճռական ջրբաժանը .....	45
<b>ԳՎՈՒՆ Գ. «ՅԵՐԿԻՐՍ ՀԱՅՈՑ»</b> .....	47
«Ծայթ» կամ «արքայուն» հայերը .....	48
Միության կողմնակիցները Հայոց Եկեղեցու նվիրապետության մեջ .....	49
Կղարչքի և Տայքի թագավորությունը .....	55
Զաքարյանների իշխանությունը .....	59

Մշակութային զարթոնք .....	62
Հայալեզու ուղղափառ ծիսամատյանների փշրանքներ .....	68
<b>ԳԼՈՒԽ Դ. ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԴՈՒՐՍ</b> .....	73
Ուղղափառ հայերը հոռոմոց կայսրության վերնախավում .....	74
Դավառանների տոհմը .....	82
Փիլարտոս Վարաժնունին և իր իշխանությունը .....	83
Պաղեստինի և Ասորիքի հայ վանականները.....	84
Արևմտյան եվրոպայում .....	91
Հայ վանականները Սբ. Լեո Աթոսում .....	92
Թրակիայի համայնքը .....	98
Պետրիցոսի (Բաշկովոյի) Սբ. Աստվածածին վանքը.....	100
<b>ԳԼՈՒԽ Ե. ՀԱՅՔԻ ՈՒՂԱՓՍՈՒ ԹԵՄԵՐԸ III-XV դդ.</b> .....	103
Ա. Կոստանդնուպոլսի պատրիարքություն .....	104
Փոքր Հայքի մետրոպոլիտոսությունները .....	104
Կոլոնիայի աթոռը.....	108
Պեղաբթյեի և Հոռեի (կամ Հոռյանի) ինքնազուխ արքեպիսկոպոսությունները .....	109
Եկեղյաց գավառի աթոռները.....	110
Խորձյանի և Տարոնի մետրոպոլիտոսությունը.....	113
Տրապիզոնի մետրոպոլիտոսության թեմերը.....	118
Բ. Անտիոքի պատրիարքություն.....	121
Թեոդոսուպոլիս-Կարինի աթոռը .....	121
Զորբորդ Հայքի և «մյուս» Զորբորդ Հայքի մետրոպոլիտոսությունները.....	124
Գ. Քարթլիի կաթողիկոսություն.....	127
Տայքի և Կղարչքի թեմերը.....	127
Անիի, Կարսի, Վաղարշակերտի և Դմանիսի աթոռները.....	130
<b>ԳԼՈՒԽ Զ. ԿԵՆԱՑ ՈՒ ՄԱՀՈՒ ՄԻՋԵՎ</b> .....	133
Օսմանյան տերությունն ու քրիստոնյա հպատակները.....	134
Տայքի իսլամացումը.....	135
Թեմերի ամայացումը.....	137
Ամիդի մետրոպոլիտոսությունը.....	137

Տրապիզոնի մետրոպոլիտոսության աթոռները.....	138
Ախթալայի աթոռը.....	139
Գաղթ Սեբաստիայից Բյուզանդիա.....	141
Գաղթ Կամախից Ռոդոստո.....	142
Չմշկածագի մեծ գայթակղությունը.....	144
Կարին-Քեոզոսուպոլսի մետրոպոլիտոսությունը.....	145
Սեբաստիա, Նիկոպոլիս և Կոլոնիա .....	148
Ուղղափառ հայ գործիչներ Ռուսիայում.....	149
Հոգևոր մշակույթի զարթոնքը XVII-XIX դդ.....	151
Կոստանդնուպոլսի ուղղափառ հայերը.....	158
Արիստարխիս գերդաստանը.....	160
<b>ԳՂՈՒԽ Է. ԿԱՐՄԻՐ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ .....</b>	<b>163</b>
Ամիգի համայնքը.....	164
Հողուս գյուղը.....	165
Ակնի հայ հոռոմների գյուղերը.....	166
Չմշկածագի հայ հոռոմ գյուղերը.....	172
Իզմիրի հայ հոռոմները.....	173
Իզմիրի հայ հոռոմների հելլենականացումը.....	177
Համիդյան ջարդերից մինչև Փոքրասիական աղետ.....	181
Թեմական դրությունը XX-XXI դարի սկզբում.....	187
ԱՄՓՈՓՈՒՄ.....	194
РЕЗЮМЕ.....	197
SUMMARY.....	201
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.....	205
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐ.....	222
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ, ՎԱՆՔԵՐԻ, ՄԱՏՈՒՌՆԵՐԻ ԵՎ ՄՁԿԻԹՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ .....	239
ՀՈՒՆԱՐԵՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ .....	241



# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Ով անտարբեր է պատմության հանդեպ, նա չի կարող լավ քրիստոնյա լինել»:

Հ. Գեորգի Ֆլորովսկի

Անցել է ավելի քան մեկ դար այն պահից, երբ ակադ. Ն. Մառը գիտական հանրությանը ներկայացրեց «Քրիստոնյաների “Արքայուն” մոնոլոլերեն անունը քաղկեդոնական հայերի հարցի կապակցությամբ» իր նշանավոր զեկույցը, որն ուղղափառ հայոց պատմությանն ու հոգևոր-մշակութային ժառանգությանը նվիրված առաջին ու դարակազմիկ աշխատությունն էր: XX դ. ընթացքում և ցայսօր Մառի բացած ուղղությամբ հրապարակվեցին բազմաթիվ ու այլաբնույթ ուսումնասիրություններ: Այդուամենայնիվ, առ օրս չկա երևույթի ընդհանուր պատկերը ներկայացնող ամբողջական մի աշխատություն, քանի որ փարբեր մասնագետներ լուսաբանել են մասնավոր հարցեր: Եթե պատկերավոր համեմատություն բերեմ, ապա կարծես բարձունքից հեռադիտակով մանրամասն զննես քաղաքի զանազան մասերը՝ այդպես էլ չկարողանալով պատկերացում կազմել դրա ընդհանուր տեսքի մասին: Բացի այդ, բոլոր ուսումնասիրությունները գրեթե բացառաբար սահմանափակված են Միջնադարով, ինչի պատճառով էլ անհասկանալի է մնում ուղղափառ հայության ճակատագիրը նոր և նորագույն շրջանում:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ սույն գրքում փորձել եմ նախևառաջ գծել ուղղափառ հայության պատմության ու ժառանգության համայնապատկերը՝ խուսափելով բազմաթիվ առանձին հարցերի մանրազնին քննությունից: Հակառակ դեպքում գիրքը կվերածվեր հայագիտական զանազան խնդիրների (պատմական, հնագիտական, աշխարհագրական, աստվածաբանական, արվեստաբանական, բանասիրական ևն) ծանծրալի մի հավաքածուի: Մանավանդ որ անցնող տարիներին հրապարակել եմ թեմային նվիրված մի շարք հոդվածներ; Դրանց շնորհիվ այս աշխատությունը մի կողմից բավականին թեթևացել է, իսկ մյուս կողմից հարստացել է հղումներով և ավելի հիմնավոր դարձել: Բացի դրանից, նյութը դուրս եմ հանել Միջնադարի ժամանակագրական շրջանակներից՝ համարյա հասցնելով մեր օրեր: Հարուստ ու

տարաբնույթ նյութն ըստ կարելիւոյն համակարգել ու բաշխել եմ յոթ գլուխների մեջ՝ միաժամանակ փորձելով ուրվագծել ապագայում հետազոտելիք ուղղություններն ու թեմաները:

Հարուկ կուզենայի մատնանշել այն հանգամանքը, որ օրթոդոքս հայոց պատմության ներկայացումն ու հետազոտությունը նախկինում հաճախ բախվել է որոշակի գաղափարաբանական սահմանափակումների. օրինակ, եթե Միջնադարում՝ դավանաբանական հակամարտության մթնոլորտում «ծայթ» հայերը կարող էին համարվել «հավատարացներ» (Պողոս Տարոնացի) կամ նույն միակողմանի փրամաբանության շարունակությամբ՝ «Քաղկեդոնիկութեան աւարներ» (Գարեգին եպս Սրվանձտյանց), ապա խորհրդային փարիներին, իշխող մարքս-էնգելսյան նյութապաշտության թալադրանքով, երբ կրոնն առհասարակ հայտարարված էր «ժողովրդի օպիում», ժողովրդական զանգվածների շահագործման միջոց, օրթոդոքս հայերի գոյությունը կապվում էր սոսկ նյութական գործոնների և դրդապատճառների հետ՝ ճնշումներ, հալածանք, շահադիպական նկատառումներ ևն: Բնականաբար, երբ կրոնը դադարում է ոգեղեն իրողություն համարվելուց, Եկեղեցու պատմությունն ընդհանրապես և ուղղափառ հայոց պատմությունը մասնավորապես վանդակվում է պարզունակ կարծրափայտերի ու նեղ կաղապարների մեջ, ստվերվում բացասական վերաբերմունքով: Ահա այդ ժխտական վերաբերմունքի արդյունքում օրթոդոքս հայերի պատմամշակութային հարուստ և ինքնատիպ ժառանգությունն օտարվում, վտարվում է հանուր հայ ժողովրդի պատմության գանձարանից: Այսպես, դեռևս անցած դարի 70-ականներին լուսահոգի Պարույր Մուրադյանն ահագանգում էր այն մասին, որ «Հայաստանում քաղկեդոնեության դերի ու նշանակության անտեսումը հանգեցրել և հանգեցնում է հայ ժողովրդի պատմական ժառանգությունից մի շարք... հուշարձանների բացառմանը»:

Այսօր, երբ այլևս չկան անցյալի նյութապաշտ գաղափարախոսական շղթաները, բայց կա անհրաժեշտություն՝ նորովի բացահայտելու և հետազոտելու հայ ժողովրդի հոգևոր հարստությունը, ուղղափառ հայոց պատմության և ինքնության վերհանումն ու բազմակողմանի ուսումնասիրությունը, բայց անպայման նաև՝ այդ ամենից դասեր քաղելն օրակարգային նշանակություն ունի: Խոնարհաբար հույս եմ փածում, որ աշխատությունս իր նպաստը կրերի այդ նվիրական գործին՝ ի վայելումն ազգիս Հայոց:

Գևորգ Ղազարյան

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԲԵՂ** Բանբեր Երևանի համալսարանի  
**ԲՂ** Բանբեր հայագիտության  
**ԲՄ** Բանբեր Մատենադարանի  
**ԳԱ ՇՀՀԿ** Գիտական աշխատություններ ՀՀ ԳԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
**ԴՎ** Դիվան հայ վիմագրության  
**Լ** Լրագրեր հասարակական գիտությունների  
**ՀԱ** Հանդես Անսորեայ  
**ՀՀՀ** Հայկազեան հայագիտական հանդես  
**ՀՀՃՏԲ** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան  
**ՀՃՈՒՀ** Հայկական նարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ  
**ՄՂ** Մատենագիրք Հայոց  
**ՄՄ** Երևանի Մաշտոցյան Մատենադարան  
**ՄՅՄ** Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուն Մատենադարանի  
**ՊԲՂ** Պատմա-բանասիրական հանդես  
**Տեղեկագիր** Տեղեկագիր ՀՄՄԸ ԳԱ հասարակական գիտությունների  
**ՅՂ** Յեղասպանագիտական հանդես  
**ՕՍՀԳՄ** Օտար աղբյուրները հայկական գաղթաբախների մասին  
**ՕՍՀՀՄ** Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին  
**ԱԲ** *Analecta Bollandiana*  
**ԱԲԱՎ.ՊՔ** *Abhandlungen der Bayerischen Akademie der Wissenschaften, Philosophisch-Philologische und Historische Klasse*  
**ԱՇՕ** *Acta Conciliorum Oecumenicorum*  
**ԱՇՕ.ՏՏ** *Acta Conciliorum Oecumenicorum. Series Secunda*  
**ActAth** *Actes de l'Athos*  
**ԱԴՇԵ** *Античная древность и средние века*  
**ԱՓ** *Αρχαίον Πόντου*  
**ArchAth** *Archives de l'Athos*  
**ԲԲ** *Византийский Временник*  
**ԲՈ** *Bibliothèque Hagiographique orientale*  
**ԲՃ** *Βυθινιακά Χρονικά*  
**ԲՅ** *Byzantinische Zeitschrift*  
**ՇՏՇՕ** *Corpus Scriptorum Christianorum Orientalium*

- DACL** *Dictionnaire d'Archeologique Chretienne et Liturgique*
- DOP** *Dumbarton Oaks papers*
- ДРВМ** *Древняя Русь. Вопросы медиевистики*
- ΕΑ** *Εκκλησιαστική Αλήθεια*
- ΕΕΕ** *Εκπαιδευτική Ελληνική Εγκυκλοπαίδεια*
- ΕΕΘΣΑ** *Επιστημονική Επετηρίς της Θεολογικής Σχολής Αθηνών*
- ΕΗ** *Εθνικόν Ημερολόγιον (1861-1871)*
- ΕΠΕ** *Εγκυκλοπαίδεια του Ποντιακού Ελληνισμού*
- ΚΒ** *Κавказ и Византия*
- ΚΜΣ/ΑΠΠ** *Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο Προφορικής Παράδοσης*
- Mansi** *J. D. Mansi, Sacrorum Consiliorum nova et amplissima Collectio*
- ΜΕΕ** *Μεγάλη Ελληνική Εγκυκλοπαίδεια*
- ΜΟΧΕ** *Μεγάλη Ορθόδοξη Χριστιανική Εγκυκλοπαίδεια*
- ΜΧ** *Μικρασιάτικα Χρονικά*
- ΝΣ** *Νέα Σιών (περιοδικό Πατριαρχείου Ιεροσολύμων)*
- ΠΞ** *Православная Энциклопедия под редакцией Патриарха Московского и всея Руси Кирилла*
- ΡG** *Patrologia Graeca*
- РЖИЦ** *Российский журнал истории Церкви*
- ΤΟΔΡΛ** *Труды Отдела древнерусской литературы АН СССР*
- ΘΗΕ** *Θρησκευτική και Ηθική Εγκυκλοπαίδεια*
- Вестник ПСТУ** *Вестник Православного Свято-Тихоновского гуманитарного университета*
- ВЦИ** *Вестник церковной истории*

## ԳԼԽԱԳՐԵՐԻ ՆԿԱՐՆԵՐԸ

Գլուխ Ա. Գրիգոր Լուսավորչի Աջը, XVII դ., Մայր Աթոռ Սբ. Էջմիածին

Գլուխ Բ. Դերջանի Ապարանից Սբ. Դավիթ վանքի զույգ խաչքարերը, XII դ.


Գլուխ Գ. Զաքարե և Իվանե Երկայնաբազուկ Զաքարյանները,  
բարձրաբանդակ, Հառիճավանքի կաթողիկե, XIII դ.

Գլուխ Դ. Վասիլ I կայսրը և նրա որդի Լևոնը, մանրանկար բյուզանդական  
ձեռագրից, XII-XIV դդ., Մազրիդի ազգային գրադարան

Գլուխ Ե. Ամիդի Ագաթանգեղոս մետրոպոլիտի եպիսկոպոսական թագը,  
Արգիրուպոլիս, 1739 թ., Բենակիսի թանգարան, Աթենք

Գլուխ Զ. Աստվածաշնչյան Եփրատ գետը Ակնի գավառում

Գլուխ Է. Ակնցի հայ հոռոմ գաղթականները Հունաստանում, XX դ.



Գլուխ Ա \_\_\_\_\_

ՈՍԿԵ ԱՐԵՎԱԾԱԿԸ

## ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Թաղեոս առաքյալի հայկական Վկայաբանության (V դ.) համաձայն՝ Փրկչի Համբարձումից հետո այս առաքյալը գալիս է Եդեսիա, որտեղ բժշկում ու մկրտում է Աբգար թագավորին: Եդեսիայի նորահիմն եկեղեցին ամրապնդելուց հետո առաքյալը Մեծ Հայք է գալիս: Նրա քարոզչության շնորհիվ մկրտվում են բազմաթիվ մարդիկ, այդ թվում՝ Սանատրուկ թագավորի դուստր Սանդուխտը: Հեթանոս Սանատրուկը նորադարձներին հալածանքի է ենթարկում, ինչի արդյունքում Թաղեոս առաքյալը, Սանդուխտ արքայադուստրն ու բազմաթիվ հավատացյալներ նահատակվում են Արտազ գավառի Շավարշան ավանում<sup>1</sup>:

Հայաստանում քարոզած մյուս առաքյալը Բարթողոմեոսն է: Նրա հայկական Վկայաբանության համաձայն՝ առաքյալը դարձի է բերում Սանատրուկի քույր Ոգուհուն, Տերենտիոս զորավարին և այլոց: Բարթողոմեոս առաքյալը ևս նահատակվում է Սանատրուկ արքայի հրամանով<sup>2</sup>:

Այսպիսով, ավանդությունների համաձայն՝ առաքյալների քարոզչության ու նահատակության շնորհիվ Հայաստանում հիմնվում են



Սր. Թաղեոս և Բարթողոմեոս առաքյալները  
Մանրանկար, հեղ. Գ. Ղազարյան, 2010 թ.

առաջին քրիստոնեական համայնքները: Եվսերիոս Կեսարացու վկայությամբ՝ շուրջ 253-255 թթ. Ալեքսանդրիայի Կրոնիսիոս հայրապետը մի նամակ է գրում «առ Հայս վասն ապաշխարութեան, որոց եպիսկոպոս էր յայնժամ Մեհրուժան»<sup>3</sup>:

1 Տես Վկայաբանութիւն Թաղէի:

2 Տես Վկայաբանութիւն Բարդղղոմէոսի:

3 Եւսերիոս, Պատմութիւն, էջ 517: Պետք է նշել, որ հայագիտության մեջ Մեհրուժանի անձի և նստավայրի մասին տարբեր կարծիքներ կան. ըստ Մաղափա աբ Օրմանյանի՝ Մեհրուժանը գահակալել է Մեծ Հայքում Վասպուրականի Արտազում: Հիմնական փաստաթղթերից է այն, որ «Մեհրուժան» անունը բնորոշ է Արծուրնյաց տանը, որի տիրույթն է եղել Վասպուրական աշխարհը: Ցանկանալով Մեհրուժանին ներկայացնել որպես Մեծ, և ոչ քե Փոքր Հայքի եպիսկոպոս՝

## ՓՈՔՐ ԼԱՅՔԸ՝ ԵՐԿԻՐ ՄՍՐՏԻՐՈՍԱՅ

Փոքր Հայքը հայ ժողովրդի բնօրրանի կարևորագույն մի հատվածն է, որտեղ դեռ Ք. ա. IV դ. Մեծ Հայքից առանձին հայկական թագավորություն էր ստեղծվել<sup>4</sup>:

Ք. ա. I դ. Փոքր Հայքը նվաճվեց հարևան Պոնտոսի թագավորության, ապա՝ Հռոմեական կայսրության կողմից: Հռոմեացիները Փոքր Հայքը կցեցին Կապադովկիային, իսկ III դ. վերջում այն առանձին նահանգ դարձավ:

III դ. Քրիստոնեությունը Փոքր Հայքում մեծ տարածում էր գտել ոչ միայն հասարակ մարդկանց, այլև բանակի, մեծատոհմիկների, պետական բարձր պաշտոնյաների մեջ: Դեկոս կայսեր (249-251 թթ.) հարուցած հալածանքների ժամանակ Մելիտենեի առաջին մարտիրոսն է դառ-



Սբ. Պոլիսկտոսի գլխատումը  
Մանրանկար Վասիլ կայսեր Հայսմավորբից, X դ., Վատիկանի գրադարան  
Պոլիսկտոսը մեծ հռչակ է ունեցել Փոքր Հայքում, իսկ Երուսաղեմում  
նրա անունով հայկական վանք է գոյություն ունեցել:

**նում գինվորական Պոլիսկտոսը (Պողիքտոսը):  
Խոշտանգվածների մեջ էր նաև քաղաքի  
եսպիսկոպոս Ակակը: Երկրամասում Քրիստո-**

Յուստինյանը սխալաբար պնդում է, թե Փոքր Հայքը «անագան գործածուած անուն մըն է Պոնտոսի եւ Կապադովկիոյ ձկն մասին տրուած», իսկ Կեսարիայի, Նիկոպոլիսի և Մելիտենեի աթոռները «բացարձակապէս յունագրի եւ յունալեզու» է համարում (տես Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, 59-60): «Մեհրուժան» անվան արժրունիական հանգամանքի վրա հենվելով՝ Ն. Աղոնցը մատնանշում է, որ Արժրունիների սկզբնական նահանգը համարվում էր Մոփսը, և այդ պատճառով էլ Մելի երիտ կլիներ ընդունել, որ Մեհրուժան եպիսկոպոսի նստավայրը եղել է Մոփսում (տես Աղոնց, Հայաստանը, էջ 386):  
4 Փոքր Հայքի բաղաձայնական պատմության, աշխարհագրության, եկղց. նվիրակության համառոտ ակնարկը տես Աղոնց, Հայաստանը, էջ 80-106: Հայ պատմագրության մեջ Փոքր Հայքի զբաղեցրած տեղի մասին խոսելով՝ Աղոնցը գրում է «Փոքր Հայքի հողերի նշանակությունը հայոց պատմության մեջ ըստ արժանվոյն չի գնահատված: Ըստ տարածված կարծիքի, վաղ ժամանակներում անշատված լինելով Հայաստանից, Փոքր Հայքը ոչ միայն կտրված էր հայերից, այլև խորք մնաց նրանց պատմական մշակույթին: Այս տեսակետը այն աստիճան հաստատված է համարվում, որ պատմաբանները առանց այլևայլության Փոքր Հայքը դուրս են հանում հայկական շահերի շրջանակից: Փոքր Հայքի մասին կազմված ավանդական պատկերացումները դեռևս կարիք ունեն քննադատական ստուգման, որովհետև հիմք չկա հայոց պատմությունից դուրս հանելու վաղուց ի վեր բնիկ հայ բնակչություն ունեցող մի ամբողջ շրջան: Իրականում հայոց պատմական կյանքում Փոքր Հայքին վիճակվել է մի շատ լուրջ առաջնություն, և այն արդարացի գնահատել կարելի է միայն այն դեպքում, եթե հրաժարվենք եկեղեցական այն գաղափարախոսությունից, որին հարել և մինչև այսօր էլ հաճում է հայ պատմագիրությունը: Այդ միակողմանի վերաբերմունքն էլ խանգարել է Փոքր Հայքի ուսումնասիրությանը հայկական տեսակետից» (Աղոնց, Հայաստանը, էջ 81-82: Հմմտ. Բարթիկյան, «Քրիստոնեությունը», էջ 3-4):



նեության տարածումը լրջորեն անհանգստացրեց Կիովղետիանոս կայսրին (284-305 թթ.) և կեսար Մաքսիմիանոսին: Նրանք Կապադովկիա և Փոքր Հայք ուղևորեցին հատուկ լիազորություններով օժտված երկու կառավարիչների՝ Ագրիկոլայոսին ու Կուսիասին: Վերջիններս, Սեբաստիա և Սատաղ քաղաքներում հաստատվելով, քրիստոնյաների հանդեպ դաժան հալածանք բարձրացրեցին:

Նուրջ 305 թ. Փոքր Հայքի Արավրակ քաղաքում Կուսիասը դատ հարուցեց տեղի ազնվազարմ պաշտոնյա Եվստրատիոսի (հայկ. անվամբ Հուսիկի) դեմ: Նույն դատավարությանը կցվեցին քաղաքի երեց Ավքսենտիոսը (Օգսենտիոսը), զինվորականներ եվգենիոսն ու Օրեստեսը, հայ գեղջուկ Մարդարիոսը: Այս հինգ քրիստոնյաները տանջանքների և մահապատժի ենթարկվեցին<sup>5</sup>:

Կիովղետիանոսի օրոք բարձրացված հալածանքների այիքը հասավ Մելիտենե, որտեղ նահատակվեցին քաղաքի կոմես Եվդոքսիոսն ու իր ընկերները<sup>6</sup>:

316 թ. Փոքր Հայքի մեկ այլ՝ Նիկոպոլիս (այժմ՝ Շապին-Կարահիսար) քաղաքում Կուսիասը հրկիզեց 45 տղամարդկանց որոնք, երկրի տարբեր տե-



Սր. Բեգաթիվ վկաները

Սրբապատկեր, XIV-XV դդ., Աթոս Լեոան Նիլանդար վանք

Արժե հատուկ նշել, որ բյուզանդական պատկերներում սր. Մարդարիոսը կրում է փոքրիկ գլխարկ, մինչև ծնկները հասնող շապիկ, տաբատ ու կարճ թիկնոց, ինչը ճշտիվ համապատասխանում է միջնադարյան հայ շինականի տարազին<sup>7</sup>:

դերից հավաքվելով, նրա առջևն էին եկել ու անվախ կերպով իրենց հավատքը խոստովանել<sup>7</sup>:

Սատաղում հեթանոս կառավարիչը ձերբակալեց, ապա աքսորի ենթարկեց տեղի սահմանապահ քրիստոնյա զինվորներին<sup>8</sup>:

Հուռմեական կայսրության արևելյան հատվածի կայսր Մաքսիմիանոս Դազայի (305-313 թթ.)՝ Հայքում ծավալված հալածանքների մասին

5 Այս սրբերը՝ Եվստրատիյանները կամ «Բեգաթիվ մարտիրոսներ», մեծ համբավ են ունեցել ողջ Բյուզանդիայում: Նրանց որմնանկարները շատ հաճախ կառելի է տեսնել բյուզանդական եկեղեցիներում, իսկ այն աղոթքները, որ ասել են Մարդարիոսն ու Եվստրատիոսը մահատակությունից առաջ, ընդգրկվել են օրոգոդոս Ժամագրի մեջ (տես *Ջրոլոգիոն*, էջ 51-52, 134): Հավանական է, որ այս աղոթքները ժամագիրք են ներմուծվել հայ վանականների միջոցով:

6 Տես PG 115, 617-634:

\* Հմմտ. Հացունի, *Պատմություն*, էջ 140-143, 199-202:

7 Տես PG 115, 323-346:

8 Տես *Λαμψίδης, Άγιος Εὐγένιος*, էջ 22-24:



Նիկոպոլի վկաների մատիոսությունը  
Արմենակար, XV դ., Մեծ Մետեորա  
Վանքի կաթողիկոսի գավիթ

յաց պատերազմողս ընդդէմ իւր յարոյց զնոսա: Արդ նա հանդերձ զօրօք իւրովք ի պատերազմի անդ ընդդէմ Հայոց ի բազում ուրեք հարեալ վատթարէր առաջի նոցա: Իսկ որ միանգամ ընդ իշխանութեամբ նորա բնակեալ էին ի քաղաքս, սով և մահ սատակէր զնոսա»<sup>9</sup>:

Հալածանքները շարունակվում են նաև Կիկևիտա կայսեր օրոք (307-324 թթ.): Այսպես, 320 թ. նույն կուսիսան ու Ագրիկողայոսը մահապատժ են ենթարկում Սեբաստիայի կայազորից 40 քրիստոնյա զինվորների (գրբ.՝ «մանուկների»):

Նվաճելուս Կեսարացին գրում է. «... Յարեաւ և պատերազմ ի բռնաւորէն ըննդէմ Հայոց, որք ի սկզբանէ անտի բարեկամք և մարտակիցք էին Հռոմոց, զորս քրիստոնէայս եւ յերկրպագութիւն ճշմարտին Աստուծոյ փոյթս, նեղելով բռնաւորին ատելոյն Աստուծոյ զի կոռց և դիւաց զոհեցեն, փոխանակ բարեկամաց թշնամիս, և փոխանակ նիզակակ-

IV դ. սկզբին Փոքր Հայքում շարունակական հալածանքների ընթացքում նահատակված բազմաթիվ քրիստոնյաներից են Սեբաստիայի առաջին հայտնի եպիսկոպոս Վլասը (307-323 թթ), նույն քաղաքից՝ իշխանավոր Սեբերիանոսն ու Իրինարթոսը, Պեղաբթոյեի եպիսկոպոս Աթինոզենեսն ու իր աշակերտները, Մելիտենեի մի խումբ քրիստոնյաներ՝ Հերոնի գլխավորությամբ և շատ ուրիշներ:



Սր. Վլաս Սեբաստացին  
Ռուս. սրբապատկեր, XV-XVI դդ., Պետերբուրգի Ռուսական թանգարան  
Ռուսիայում Վլաս հայրապետը ընտանի կենդանիներին բժշկող ու ձկան փշից խեղդվողներին փրկող սուրբ է համարվել:

### ՄԵԾ ՀԱՅՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄԸ

301 թ.<sup>10</sup>. Գրիգոր Լուսավորչի (շուրջ 239-226 թթ.) և հայոց Տրդատ Գ (287-330 թթ.) արքա-

<sup>9</sup> Նաբեբոս, Պատմութիւն եկեղեցւոյ, էջ 688-689: Այս հատվածում հիշված «Հայոց» կոնկրետ նշանակության մասին հայագիտության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել: Տարածված է այն մտացույժը, որ խոսքը 301 թ. Քրիստոնեությունն ընդունած Մեծ Հայքի մասին է (տես Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, 111): Առավել ծանրակշիռ է թվում սակայն, Հ. Բարթիկյանի տեսակետը, համաձայն այն նվաճելուսի տեղեկությունը Փոքր Հայքին է վերաբերում (տես Բարթիկյան, «Քրիստոնեությունը», էջ 12-15):  
<sup>10</sup> Սա համընդհանուր տարածում գտած թվագրությունն է, սակայն կան ուսումնասիրողներ որոնք, հիմնվելով Լուսավորչի



Սբ. Գրիգորի ելքը Խոր վերապից  
 Ռամսանկար XIX դ.- Մոսկվայի Սբ. Աստվածածնի Հովանու  
 (Սբ. Վասիլ Երանելու) տաճար, Լուսավորչի մատուռ

յի շնորհիվ Քրիստոնեությունը Մեծ Հայքի միակ պաշտոնական կրոն հայտարարվեց: Լուսավորչի անխոնջ քարոզչությամբ Մեծ Հայքում կազմավորվեց եկեղեցի, որի գլուխն էր Վաղարշապատի ընդհանրական (հուն. *καθολικός*) եպիսկոպոսապետը: Գրիգորը հայոց առաջին կաթողիկոս ձեռնադրվեց իր հոգևոր հայրենիքում՝ Կապադովկյան Կեսարիայում: Ըստ Ագաթանգեղոսի վկայության՝ Գրիգորը Լուսավորիչը, Կեսարիայից ձեռնադրված վերադառնալիս մեծաշուք ընդունելություն գտավ Սեբաստիայի եպիսկոպոսների,

իշխանավորների ու ժողովրդի կողմից և իր հետ մեծ թվով հոգևորականների բերեց Մեծ Հայք<sup>11</sup>: Երկրի հոգևոր կենտրոնները դարձան Աշտիշատի վաղնջական եկեղեցին (որը «մայր եկեղեցեաց Հայոց» անվանումն ուներ) և Վաղարշապատի Կաթողիկեն (Եջմիածնի Մայր տաճարը):

Հայոց մկրտությունը կարևոր նշանակություն ունեցավ այլ ժողովուրդների՝ վրացիների և աղվանական ցեղերի լուսավորման գործում: 301 թ. սկսած քրիստոնյա Հայաստանը և իր հարևանները հոգևոր, մշակութային ու պատմական ընթացքի մի նոր ճանապարհ բռնեցին:

## ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԾՆՈՒՆԴԸ

Սկզբնական շրջանում, քանի որ հայոց լեզուն այբուբեն չուներ, Հայաստանի եկեղեցին պաշտամունքը երկու լեզուներով՝ հունարենով ու ասորերենով էր կատարում: Մայրենիով եկեղեցական պաշտամունք ունենալն ու Քրիստոնեությունը հայալեզու դարձնելու գործը շատ շուտով կենսական անհրաժեշտություն դարձավ: Հայոց գրերի ստեղծման նվիրական գործին լծվեց Մեսրոպ Մաշտոցը (360-440 թթ.)՝ ունենալով կաթողիկոս Սահակ Մեծի (387-439 թթ.), ինչպես նաև Վռամշապուհ արքայի (392-420 թթ.) աջակցությունը: Այսպես, 405 թ. Մաշտոցը երկարատև գիտական աշխատանքից ու հոգևոր ճգնանքից հետո ստեղծեց 36 տառերից բաղկացած այբուբենը, որը կատարելապես հա-

հունարեն «Վարի» վրա, Հայոց դարձը թվագրում են 313-314 թթ. (տես Անանեան, Ս. Գրիգոր):

11 Տես Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, էջ 1689:



Պր. Գրիգորը բժշկում է Տրդատին ու նրա պալատականներին  
Որմնանկար, XIII դ., Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցի



Հայոց, վրաց, արխագների և աղվանների թագավորներն  
ընդառաջ են գնում Կեսարիայից վերադարձող սր. Գրիգորին  
Որմնանկար, XIII դ., Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցի

մապատասխանում էր հայոց լեզվի պահանջներին: Սամոսատում հույն գեղագիր, հետագայում քաղաքի եպիսկոպոս և շորորոզ Տիեզերաժողովի մասնակից Հռոփանոսի (Ռուֆինոսի)<sup>12</sup> օգնությամբ Մաշտոցը գեղագրական վերջնական տեսքի բերեց այբուբենն ու Հայաստան վերադարձավ:

Հռոմեական կայսրության ու Պարսից տերության միջև 387 թ. բաժանված Մեծ Հայքի երկու հատվածներում էլ Մաշտոցի եռանդուն ջանքերով հայկական դպրոցներ հիմնվեցին: Հռոմեահպատակ Հայքում դպրոցներ բացելու համար Մաշտոցն ուղևորվեց Կոստանդնուպոլիս,

որտեղ նրան ջերմ ընդունելություն ցուցաբերեց Ատտիկոս պատրիարքը (406-425 թթ.): Վերջինս, ի դեպ, ծնունդով սեբաստացի էր<sup>13</sup>:

Մաշտոցն ու Սահակն իրենց աշակերտների խմբերը կրթական խոշոր կենտրոններ՝ Նդեսիա, Ալեքսանդրիա, Աթենք էին ուղարկում: Համեմատաբար կարճ ժամանակում սկզբում ասորերենից, ապա հունարեն բնագրի հիման վրա խմբագրվելով, հայերենի թարգմանվեց Աստվածաշունչը, որին հետևեցին ծիսական գրքերը, աստվածաբանական, փիլիսոփայական կարևորագույն երկերը<sup>14</sup>: Վ դ. սկզբին գերակշիռ մեծամասնությամբ

<sup>12</sup> Տես Տեր-Մինասյան, «Գրերի գյուտի», էջ 451-453: Նույն Ռուֆինոսի ձեռքով է արտագրվում Մաշտոցի թարգմանած աստվածաշնչյան գիրքը՝ Սողոմոնի առակները (տես Մանանդյան, «Մեսրոպ Մաշտոցը», էջ 38):

<sup>13</sup> Տես Γεδεων, Πίννακες, էջ 164:

<sup>14</sup> Հ Մանանդյանի գնահատմամբ՝ «Հունական գիտության ու գրականության հայերեն թարգմանված երկերը արքանացնում էին միայն ընդլայնում մտահորիզոնը, և դրդում ինքնուրույն մտավոր աշխատանքի... Գրականությունն ու գիտությունը, որոնց հիմքը



Սբ. Սահակը և սբ. Մաշտոցը  
Մանրանկար, հեղ. Գ. Նազարյան, 2014 թ.

յամբ հունարենից թարգմանված մատենագրության ծավալը հսկայական է, իսկ Նոր Կտակարանի

հայերեն տարբերակը հունարեն բնագրին ամենահարազատը լինելու պատճառով որոշ մասնագետներ «Թագուհի թարգմանություն» են անվանել<sup>15</sup>:

Մեծն Մաշտոցն առանձին այբուբեններ արարեց նաև վրաց և աղվանների համար:

Սեփական այբուբենով ապահովագրված հայոց լեզուն դարձավ այն շաղախը, որով միավորվեցին հայ ժողովրդի պարսկահայատակ ու հոռմեհայատակ հատվածները. շաղախ, որ դարերի ընթացքում երաշխավորեց քաղաքականապես ու դավանաբանորեն բաժանված հայորդիների ազգային ինքնություն պահպանումը<sup>16</sup>:

Հայոց այբուբենի ստեղծումն ու Քրիստոնեություն հայալեզու դառնալը հզորագույն մի խթան դարձավ Հայաստանի և ողջ կովկասյան երկրամասի հոգևոր զարգացման համար: Ստվարածավալ թարգմանությունները հայ աշխարհը հաղորդակից դարձրեցին համաշխարհային քրիստոնեական հոգևոր ու մտավոր ընթացքին՝ միևնույն ժամանակ հայ մշակույթի ինքնուրույն զարգացման հիմքը դառնալով: Հունարենից կատարված թարգմանությունների շնորհիվ հարստացավ ու նոր հնարավորություններ ստացավ հայոց լեզուն:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԿՌԿԱՄԱՂԻԿ

Մեծ Հայքի թագավորությունը, հին աշխարհի երկու հզոր պետությունների՝ Հռոմեական կայսրության ու Պարսկաստանի միջև գտնվե-

որեցին Մեսրոպ Մաշտոցը, Սահակը և նրանց աշակերտները, VI դարում հաջողությամբ զարգանում էին հելլենական ուղղությամբ, որը հայ հոգևոր մշակույթի մեջ նոր խոշոր հեղաշրջում առաջ բերեց» (Մանանդյան, «Մեսրոպ Մաշտոցը», էջ 80):

15 Տես Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, էջ 309:

16 Տես Մանանդյան, «Մեսրոպ Մաշտոցը», էջ 29, 74, 83:

րով, աշխատում էր խաղաղ դիրք պահպանել այս երկուսի միջև՝ միաժամանակ իր շահերին տեղ կանգնելով: Բնականաբար, դա չափազանց դժվարին մի խնդիր էր, որը կենաց ու մահու պայքարի էր վերածվում:

Դեռևս հայոց Արշակունյաց հարստության հիմնադիրը՝ Պարսից արքաներայր Տրդատ Ա թագավորը (66-88 թթ.), բարեկամական դաշինք էր կնքել Հռոմի հետ, սակայն 226 թ. Պարսկաստանում Արշակունյաց հարստությունը տապալվեց, ու գահ բարձրացան Սասանյանները: Հայոց Արշակունիների և Սասանյան Պարսկաստանի հարաբերությունները խիստ թշնամական դարձան: Երկու երկրների միջև խորը ջրբաժան բացվեց, երբ հայերը Քրիստոնեություն ընդունեցին, և այդպիսով, քրիստոնյա Հայաստանը կրակապաշտ պարսիկների կրոնական մոլեռանդության թիրախը դարձավ: Առավել ևս, որ Քրիստոնեությունը սերտորեն առնչվում էր Հայաստանի քաղաքական (հունա-հռոմեական) կողմնորոշման հետ:

364-368 թթ. Հայաստանն ասպատակած պարսիկներն ամայացրեցին երկիրը՝ շատերին նահատակելով ու եկեղեցական կարգը վերացնելով, ընդ որում հատուկ ուշադրություն դարձվեց նվաճված Հայաստանում հունարենով եկեղեցական գիր-գրականությունը ոչնչացնելուն:

387 թ. Մեծ Հայքը երկու մասի բաժանվեց. նրա արևմտյան մասը Հռոմեական կայսրությանն անցավ, իսկ մեծագույն՝ արևելյան մասը՝ Պարսկաստանին: Սահմանագիծը հյուսիսից հա-

րավ իջավ Կարինից մինչև Մծբին: Հայաստանի պարսկահպատակ հատվածում հունարեն լեզվով կրթությունն արգելվեց: Արշակունիներն այստեղ իշխեցին մինչև 428 թ., որից հետո Մեծ Հայքի թագավորությունը լուծարվեց:

Սակայն հայ-հռոմեական հարաբերություններն էլ պարզ չէին: Հայաստանը, Հռոմեական կայսրությանը (Բյուզանդիային) ապավինելով, պայքարում էր պարսից դեմ և ջանում էր իր ինքնուրույնությունը պահպանել: Բայց քրիստոնյա կայսրերի միջամտությունն անշահախնդիր չէր և չէր էլ կարող լինել. ինչպես և ցանկացած կայսրություն՝ Հռոմը որևէ քաղաքական իրավիճակ նախևառաջ իր շահերի համար էր օգտագործում:

IV-V դդ. յուրահատուկ պայմաններ էին ստեղծվել նաև Հայաստանի Եկեղեցու ներքին կյանքում: Քրիստոսի վարդապետությունը Հայաստան էր բերվել երկու տարբեր կողմերից՝ հունա-հռոմեական աշխարհից և ասորական-սեմական տարածաշրջանից: Վերոնշյալ երկու ուղղություններն իրարից բավականին տարբեր մոտեցումներ ունեին Աստվածաշնչի ընկալման ու մեկնության, աստվածաբանական ու փիլիսոփայական ինչ-ինչ խնդիրներում: Էական դեր էր խաղում նաև լեզվական տարբերությունը:

Իր կազմավորման առաջին իսկ շրջանից սկսած Հայաստանի երիտասարդ Եկեղեցին սնվում էր թե՛ հունական, թե՛ ասորական հոգևոր աղբյուրներից: Եկեղեցականների դասում առաջ էին եկել «հունասեր» և «ասորասեր» կուսակցությունները<sup>17</sup>: Հունական կամ ասորական

եկեղեցական ավանդույթներին հետևելը Հայաստանում շատ շուտով քաղաքականության հետ առնչվող մի երևույթ դարձավ:

Գրիգոր Լուսավորչի մահվանից հետո Հայաստանի քահանայապետական աթոռին էին բազմում նրա շառավիղները: Սակայն երբ ինչ-ինչ պատճառներով դա տեղի չէր ունենում, ապա Աղբիանոս եպիսկոպոսի ժառանգները՝ «Աղբիանոսյաններն» էին կաթողիկոս դառնում: Լուսավորչի տոհմի ներկայացուցիչները «հունասեր» ուղղության կողմնակիցներն էին: Որպես կանոն նրանք հունական կրթություն ունեին և, կայսրության օգնությանն ապավինելով, ջանում էին նեցուկ կանգնել Մեծ Հայքի թագավորության պահպանմանը: Բացի այդ, Լուսավորչի ժառանգներն առանձնանում էին իրենց սկզբունքայնությամբ ու սրբությամբ, Ավետարանի բարոյական չափանիշներին չհամապատասխանելու համար նույնիսկ հայոց թագավորներին էին կշտամբում: Այս ամենը գրգռում էր Հայաստանին տիրած պարսից արքաների ոչ միայն կասկածամտությունը, այլև ուղղակի հալածանքները: Այսպես, 428 թ. հունասիրության մեղադրանքով պարսից արքունիքը գահընկեց արեց Հայոց վերջին Արշակունուն՝ Արտաշես Գ արքային (422-428 թթ.), Լուսավորչի տան վերջին շառավիղին՝ Մեծն Սահակին, իսկ հետագայում՝ նրա աշակերտ Գյուտ կաթողիկոսին (461-478 թթ.):

Ինչ վերաբերում է Աղբիանոսյաններին, ապա նրանք ասորասեր հոգևորականության առաջ-

նորդներն էին: Հիմնականում նրանք զուրկ էին բարոյական ու հայացքային ամուր սկզբունքներից, հեշտությամբ էին ծառայում ոչ միայն Արշակունյաց, այլև պարսից կառավարությանը: Ասորասեր հոգևորականները, որոնց Ղազար Փարպեցին «աբեղա» (ասոր. «awilā»)՝ «միայնակյաց», «վանական») է անվանում, աչքի էին ընկնում կրթական ցածր մակարդակով. Փարպեցու վկայությամբ՝ նրանք Աստվածաշնչի գրքերի անուններն ու հերթականությունն անգամ չգիտեին: «Աբեղաները» թշնամաբար էին դիմավորում Արևմուտքից վերադարձող կրթված հայ հոգևորականներին ու հետապնդում էին նրանց<sup>18</sup>:

Պարսից կառավարությունը հմտորեն էր օգտագործում ասորասեր հայ հոգևորականությունը՝ Հայաստանին կայսրությունից կտրելու և երկրում իր շահերն առաջ տանելու համար: V դ. երկրորդ կեսին պարսիկները հաջորդաբար հայոց կաթողիկոսներ նշանակեցին պարսկասեր Սուրմակին, ասորիներ Շմուելին ու Բրթիշոյին: Իրենց անկարգ վարք ու բարքի պատճառով այս դերակաթողիկոսները միայն ժողովրդի և հոգևորականության ատելությունն առաջացրեցին:

Այսպիսով, Հայաստանի պատմա-աշխարհագրական պայմանները, որոնց մեջ հայտնվեց ու զարգացավ եկեղեցին, իրենց հերթին պայմանավորեցին եկեղեցական պատմության հետագա զարգացումները: Դրանց առիթ տվեցին V դ. առաջացած քրիստոսաբանական խնդիրներն ու վերջիններիս ծիրում ծավալված պատմական գործընթացները:

18 Տե՛ս Ղազար Փարպեցի, Թուղթ, էջ 2391-2394:



ԳԼՈՒԽ Բ \_\_\_\_\_

ԵՐԿՈՒ ՏԱՆԱԴԱՐԸ



Տակավին առաքելական քարոզչության շրջանում, երբ քրիստոնեական կենցաղակերպին վերաբերող խնդիրներ ծագեցին, շուրջ 49 թ. Քրիստոսի առաքյալները հավաքվեցին երուսաղեմում և այդ հարցերի վերաբերյալ ժողովական որոշում կայացրեցին<sup>1</sup>: Առաքյալների օրինակին հետևելով՝ Եկեղեցու առաջնորդները հավատքին ու քրիստոնեական կենցաղավարությանը վերաբերող կարևորագույն խնդիրները լուծելու համար ևս սկսեցին ժողովներ գումարել: Եկեղեցու պատմության վաղ շրջանում այդ ժողովները բացառապես տեղական բնույթ ունեին:

313 թ. Կոնստանդինոս (Կոստանդիանոս) I կայսրը (306-337 թթ.) հրապարակեց Միլանի հրովարտակը, որով Քրիստոնեությունը Հռոմեական կայսրության մեջ արտոնյալ և ազատ կրոն հռչակեց: Այդ պայմաններում արդեն հնարավոր դարձավ գումարել եկեղեցական ժողովներ, որոնց կարող էին մասնակցել եպիսկոպոսներ համայն քրիստոնյա աշխարհից: Այդպիսի ժողովները «տիեզերական» (այսինքն՝ համաշխարհային) անվանումն ստացան:

Տիեզերաժողովը Սբ. Հոգու գործիքն է, Ընդհանրական Եկեղեցու գերագույն օրենսդրական, վարչական ու դատական մարմինը: Տիեզերաժողովի դավանաբանական որոշումը՝ որպես Եկեղեցու հավաքականությանը Սբ. Հոգու կողմից բացահայտված ճշմարտություն, պարտադիր է Եկեղեցու բոլոր անդամների համար:

Առաջին Տիեզերաժողովը՝ 318 եպիսկոպոսների մասնակցությամբ, կայացավ 325 թ. փոքրասիական Բյութանիա նահանգի Նիկիա քաղաքում: Ժողովը գումարվեց Ալեքսանդրիայի Եկեղեցում ծագած խնդիրների պատճառով, որոնցից էր Արիոս քահանայի հերետիկոսական ուսմունքն այն մասին, թե Որդին Հոր արարածն



Մեծն Կոնստանդինն ու առաջին Տիեզերաժողովի Հայերը՝  
Հավատո հանգանակի տեխստով  
Հունական սրբապատկեր, XIX դ.

է: Նիկիո առաջին Տիեզերաժողովը դատապարտեց Արիոսին և հաստատեց Եկեղեցու ուղղա-

1 Տես Գործք, ԺԵ, 1-29:



Սր. Մելետիոս Անտիոքացին  
Հունական սրբապատկեր, 1994 թ.

փառ վարդապետությունը, համաձայն որի՝ Որդին «համագո» կամ «նույնագո» (ὁμοούσιος) է Հորը, այսինքն՝ ճշմարիտ Աստված է:

Հայկական ու բյուզանդական աղբյուրների համաձայն՝ առաջին Տրեզերածողովին Մեծ

Հայքից մասնակցել են Լուսավորչի որդին՝ Արիստակես կաթողիկոսը (325-333 թթ.), Հայոց Միջագետքից՝ Սիմեոն Ամիդեցի, Մարուֆա Մարտիրոսապոլսեցի եպիսկոպոսները, իսկ Փոքր Հայքից՝ Սեբաստիոս Եվլալիոս և Սատաղի Եվթիոս եպիսկոպոսները<sup>2</sup>:

Արիոսի թյուր ուսմունքը մեծ տարածում էր գտել քրիստոնյա աշխարհում: Արիոսական տարբեր ուղղություններ եկեղեցու վարդապետությանն ընդգրկմանում էին, և Տրեզերածողովից հետո շուրջ կես դար քրիստոնյա աշխարհը մեծ խռովությունների և աստվածաբանական փնտրտուքի մեջ էր:

## ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՏՐԵԶԵՐԱԺՈՂՈՎՆԵՐԸ

381 թ. Թեոդոս I կայսեր (379-395 թթ.) և Անտիոքի պատրիարք Մելետիոսի<sup>3</sup> (361-381 թթ.) ջանքերով կայսրության մայրաքաղաքում 150 եպիսկոպոսների մասնակցությամբ մի ժողով գումարվեց: Այն դատապարտեց ուղղափառ դավանանքից շեղվող ուղղությունները՝ վերահաստատելով Նիկիո Տրեզերածողովի վարդա-

<sup>2</sup> Σκου Δελικάνης, *Η Πρώτη*, էջ 148-149. Ղազարյան, «Հայոց մասնակցությունը», էջ 21:

<sup>3</sup> Մելետիոս Անտիոքացին ծննդով Մելիտենեից էր և սկզբնապես Սեբաստիայի եպիսկոպոսն էր: Անտիոքի պատրիարք դարձավ Մելետիոսը IV դ. երկրորդ կեսին գլխավորեց ուղղափառների հակաարիոսական պայքարը: Իր հայացքների համար նա երեք անգամ արտաքսվել է, ընդ որում առաջին անգամ՝ Մելիտենե, իսկ երրորդ անգամ՝ Նիկոպոլիսի Գեսաս գյուղ, որտեղ մի կալվածք ուներ: Մելետիոսի ջանքերով է նախապատրաստվել երկրորդ Տրեզերածողովը, որի առաջին նիստերը նախագահել է հենց Մելետիոսը և դրանցից մեկի ժամանակ էլ հոգին ավանդել է (381 թ. մայիսին): Մելետիոս Անտիոքացու հետ շեղման անակագրական կապ է ունեցել Մեծն Բարսեղը (տես PG 32, 405-408), որը նրան «Աստծո ճշմարիտ Եկեղեցու ամենամասնակցի եպիսկոպոս» է անվանել: Մելետիոսին դամբանական ունի նվիրած Գրիգոր Նյուսացին (տես PG 46, 851-864. Մուրադյան, *Գրիգոր Նյուսացին*, էջ 185-206), իսկ ներքողական՝ Հովհան Ոսկեբերանը, որը Մելետիոսի ձեռամբ էր ստեղծված աստիճան ստացել (տես PG 50, 515-520):



Սր. Կյուրեղ Ալեքսանդրացին  
Որմնանկար, Էմմանուել Պանսելինոս,  
Աթոսի Պոստատի եկեղեցի, 1310 թ.

պետությունը: 381 թ. այս ժողովին Փոքր Հայքից մասնակցեցին Մելիտենեի առաջնորդ Օտրիոսն ու Արաբիսոսի եպիսկոպոս Օտրիոսը, Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսը, որը Բարսեղ Կեսարացու (330-379 թթ.) եզրայրն էր, ինչպես նաև Հայոց Միջագետքից՝ Ամիդի Մարաս եպիսկոպոսը<sup>4</sup>:

Նիկիոն և Կոստանդնուպոլսի ժողովների գործունեության արդյունքում մշակվեց ու հրապարակվեց Հավատո հանգանակը՝ ուղղափառ հավատքի դոգմատիկ դրույթների յուրատեսակ ցուցակը:

431 թ. փոքրասիական Նիեսոս քաղաքում

գումարվեց հաջորդ մեծ եկեղեցաժողովը՝ Ալեքսանդրիայի հայրապետ Կյուրեղի (412-444 թթ.) նախագահությամբ ու 200 Հայրերի մասնակցությամբ: Ժողովականների թվում էր Կյուրեղի ամենաչեղճ պաշտպաններից մեկը՝ Մելիտենեի առաջնորդ Ակակը (շուրջ 370-438 թթ.)<sup>5</sup>, ինչպես նաև Արկայի Ակակ եպիսկոպոսը<sup>6</sup>:


Ժողովը հրավիրվել էր՝ քննելու համար Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոս Նեստորի (428-431 թթ.) ուսմունքը, համաձայն որի՝ Հիսուս Գրիստոսի մեջ կան ոչ միայն երկու բնություններ, այլ նաև երկու տարբեր անձեր՝ մեկը՝ Աստուծո Որդին, մյուսը՝ Մարիամի որդի Հիսուսը: Այս երկու տարբեր անձինք իրար հետ միություն չունեն, այլ որոշակի «բարոյական» փոխհաման, համակցման (συνάφεια) մեջ են: Այսպիսով, Հիսուս Գրիստոսը երկուսի էր ճեղքվում: Մինչդեռ Նեստորի ընդդիմադիր Կյուրեղի համաձայն՝ Հիսուս Գրիստոսը ճշմարտապես Աստուծո Որդին է, որ Աստվածածին սբ. Կույս Մարիամից մարմին առնելով, իրապես մարմնացել, մարդ է դարձել: Մարդեղության մեջ տեղի է ունեցել երկու բնությունների ճշմարիտ միությունը, ընդ որում Գրիստոսի մարդկային բնությունը սեփական անձ չունի, և մարմնացյալ Աստվածորդու Անձը միմիայն Լոգոսն է<sup>7</sup>:

4 Տե՛ս Mansi, III, 569: Ζάμνα. Δελικάνης, *Η Πρώτη*, էջ 407-408:

5 Մելիտենեի Ակակ եպիսկոպոսն իր ժամանակի հայտնի եկեղեցական գործիչներից մեկն էր: 420-422 թթ. Կ. Պոլիս ուղևորվելիս Մեսոպոլիսի Մաշտոցը հենց նրա խնամակալության տակ է թողնում իր աշակերտների մեծ մասը: Ակակի մոտ է մնացել նաև բյուզանդական Հայաստան անցած Սահակ Պարթևը: Պահպանվել են Ակակի երկու թղթերը՝ ուղղված Սահակ կաթողիկոսին և հայերին, ինչպես նաև Սահակի պատասխան նամակը: Այս նամակագրության թեման նեստորական խնդիրներն էին (Տե՛ս *Գիրք Թղթոց*, էջ 49-59): Նամակագրությանը հարակից հարցերի մասին տես Պապանդրեու, *Հայ եկեղեցու*, էջ 132-146:

6 Տե՛ս ACO, I, 2, II, էջ 3-4:

7 Տե՛ս Γιαννόπουλος, *Ιστορία και Θεολογία*, էջ 177-182: Կյուրեղ Ալեքսանդրացու Բրիտանոսարանական եզրաբանության ու



Սբ. Ակակ Մելիտենեցին  
Որմնակար, Թեոփանես Կրետացի,  
Աթոսի Ստավրոնիկիտա վանքի կաթողիկե, 1546 թ.

Եփեսոսի ժողովը դատապարտեց ու բա-  
նազրեց նեստորի անձն ու ուսմունքը՝ հաս-  
տատելով Կյուրեղի վարդապետությունը: Եկե-

ղեցական իրավիճակը սակայն թելադրեց, որ  
ժողովից հետո Կյուրեղն ու իր կողմնակիցնե-  
րը հաշվի առնեն դրան շմասնակցած Անտիոքի  
պատրիարքության և նրա աստվածաբանական  
ուղղությանը հետևող շրջանակների («արևել-  
յան եպիսկոպոսներ») կարծիքը: Վերջիններս  
ալեքսանդրացիներին քննադատում էին ծայ-  
րահեղ արտահայտությունների համար, որոնք  
ըստ արևելյանների, նսեմացնում էին Տիրոջ  
մարդկային կողմը: Մասնավորապես խնդրա-  
հարույց էր Կյուրեղի կիրառած «մի է բնութիւն  
Բանին Աստուծոյ մարմնացեալ» (μία φύσις  
τοῦ Θεοῦ Λόγου σεσαρκομένη) բանաձևը<sup>8</sup>:

Երկար քննարկումներից հետո 433 թ. երկու  
կողմերը՝ Կյուրեղի և Անտիոքի հայրապետ Հով-  
հաննեսի զլխավորությամբ ընդունեցին մի բա-  
նաձև, որը կոչվում է «Սահման հաշտութեանց»  
(Ὁρος τῶν Διαλλαγῶν): «Սահմանով» կողմե-  
րը փոխզիջումներ արեցին. արևելյանները բա-  
նադրեցին նեստորին ու նրա ուսմունքը (նեստո-  
րականությունը)՝ ընդունելով Կյուրեղի և Եփե-

ճառագրների մանրակրկիտ վերլուծությունը տես Van Loon, *The Dyophysite*.

<sup>8</sup> Այս բանաձևը Կյուրեղը վերցրել էր Աբանաս Ալեֆանդրացու անվամբ հայտնի մի երկից («Խոստովանություն առ  
Հարթանոս»), որի իրական հեղինակը միաբնակության տիրահռչակ ռաֆիմիոս Ապոլինար Լաոդիկեցին էր: «Մի է բնութիւն»  
բանաձևը խնդրահարույց էր իր բազմանշանակությամբ (տես Յովհաննէս Օմնեցի, *Ընդդէմ երևութականաց*, էջ 52-53): Ինչ  
փոքրերում է բանաձևի կյուրեղյան իմաստավորմանը, ապա նախևառաջ պետք է նշել, որ Կյուրեղի աստվածաբանական  
նորարանությունը՝ դավանաբանական թեժ ֆենարկումների պահանջով բավական ճկուն էր ու բազմանշանակ: Հստակ է, որ  
Ալեֆանդրիոս հայրապետի երկերում «անձ» (ὀποστας), «դեմք» (πρόσωπον) և «բնություն» (φύσις) եզրերը նույնացված  
են (տես Παπαδόπουλος, *Άγιος Κύριλλος*, էջ 152, 212. Μαρτζέλος, *Γένεση*, էջ 187-189): Բացի դրանից, թե Աբանասի, թե  
Կյուրեղի երկերում «Բանի բնություն» արտահայտությունը մատնանիշ է անում Լոգոսի աստվածային բնությունը կամ Անձը:  
Նորարանական այս ճշգրտումներն ու կյուրեղյան բրիստոսաբանության առանձնային գաղափարները հաշվի առնելով՝ պետք  
է ընդունել «մի է բնութիւն» բանաձևի հետևյալ ընկալումը. «Աստվածային Բանի բնությունը (անձը) մշտապես մեկն է, բայց  
այդ մեկ Անձը մարմնացել է, միավորվել մարդկային բնությանը, որն անձ-դեմք չունեւ: Այս ճանապարհով է, որ մեկ է Քրիստոսը,  
մեջ ապես անձ-դեմք մեկ Որդի է (և ոչ թե երկու)» (Παπαδόπουλος, *Άγιος Κύριλλος*, էջ 220: Հմմտ. նույն, էջ 167, 178, 207):

սոսի ժողովի վարդապետությունը, իսկ Ալեքսանդրիայի հայրապետը մի կողմ դրեց «բնական միութիւն», «անձնաւորական միութիւն» արտահայտություններն ու «մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացեալ» բանաձևը<sup>9</sup>:

Այսպիսով, 433 թ. «Սահման հաշտութեանց» վավերագիրը բազմաթիվ ուսումնասիրողների կողմից Եփեսոսի ժողովի դավանական վճիռն է համարվում<sup>10</sup>: Ահա վասիկ այն. «Արդ, խոստովանում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստուծո միածին Որդուն, որ կատարյալ Աստված է և կատարյալ մարդ՝ բնական հոգով ու մարմնով: Նույն ինքն ըստ աստվածության համագո է Հորը, իսկ ըստ մարդկության համագո է մեզ: Որ հովիտյաններց առաջ Հորից ծնվել է ըստ աստվածության, և նույն ինքը վերջին օրերին մեզ համար և մեր փրկության համար կույս Մարիամից է ըստ մարդկության [ծնվել]: Քանզի երկու բնությունների միությունը եղավ, դրա համար մեկ Քրիստոս, մեկ Որդի, մեկ Տեր ենք խոստովանում»<sup>11</sup>:

## ՉՈՐՐՈՐԴ ՏԻԵԶԵՐԱԺՈՂՈՎԸ

IV դ. ի շարս բազմաթիվ հերետիկոսությունների առաջ եկավ ապոլինարականութունը, որի հիմնադիրն էր Ապոլինար Լաոզիկեցին (մահ. 390 թ.): Նրա կարծիքով՝ Քրիստոսի մարդկային բնությունը կատարյալ, ամբողջական չէ, քանի որ

նա մարդկային բնական հոգի չունի: Ապոլինարի այս վարդապետությունը բավական մեծ ընդգրկում գտավ՝ մի ամբողջ աստվածաբանական ուղղության՝ միաբնակության (Μονοφυσιτισμός) համար հիմք դառնալով: Վերջինս անտեսում, չեզոքացնում էր Քրիստոսի ճշմարիտ մարդ լինելը՝ ողջ շեշտը նրա Աստվածության վրա դնելով: Միաբնակ հայացքները պարարտ հող գտան Կյուրեղ Ալեքսանդրացու ծայրահեղ հետևորդների մեջ, որոնք անտեսեցին 433 թ. հայրապետի ստորագրած «Սահման հաշտութեանց»ը:

Մայրահեղ կյուրեղական էր Կոստանդնուպոլսի մերձակայքի վանքերից մեկի վանահայր Եվտիքեսը (շուրջ 370-454 թթ.), որը կարծում էր, թե Քրիստոսի մեջ կա միայն մեկ բնություն, և Քրիստոսը մեզ նման մարդ չէ (համագո չէ մեզ): Եվտիքեսի հայացքները մեծ աղմուկ առաջացրեցին, և նրա քննադատությամբ հանդես եկան Կոստանդնուպոլսի Փլաբիանոս հայրապետն (447-449 թթ.) ու Հոսմի պապ Լեոն I Մեծը (440-461 թթ.): Վերջինս Կյուրեղ Ալեքսանդրացու վարդապետության հիման վրա շարադրեց քրիստոսաբանական կարևոր մի գրություն, որը հայտնի է որպես «Լեոնի տոմար» (Τόμος τοῦ Λέοντος):

448 թ. Կոստանդնուպոլսի տեղական ժողովը Եվտիքեսին դատապարտեց ու կարգալույծ հռչակեց: Եվտիքեսի պաշտպանությամբ, սակայն, հանդես եկավ Ալեքսանդրիայի Դիոս-

9 Պետք է նշել, որ իր երկերում սբ. Կյուրեղը ոչ միայն միջնորդավորված, այլև անմիջականորեն խոսում է (միությունից հետո) Քրիստոսի մեջ երկու բնությունների առկայության մասին (տես Παπαδόπουλος, Άγιος Κύριλλος, էջ 209):

10 Տես Παπαδόπουλος, Άγιος Κύριλλος, էջ 194:

11 Սահմանի հունարեն բնագիրը տես АСО, I, 1, IV, էջ 17:

կորոս պատրիարքը (444-451 թթ.): 449 թ. Գրոսկորոսը եփեսոսում մի «տիեզերածողով» գումարեց, որն իր անկարգ ընթացքի համար «ավագակային» կոչվեց: Այս ժողովը եվտիքեանն արդարացրեց՝ դատապարտելով Կոստանդնուպոլսի ժողովն ու Առն պապի Տոմարը:

Խճճված այս իրավիճակը պարզելու նպատակով 451 թ. հոկտեմբերին մայրաքաղաքի Քաղկեդոն արվարձանում գումարվեց չորրորդ Տիեզերածողովը, որին մասնակցեցին 630 եպիսկոպոսներ: Նրանց թվում էին մոտ քսան մասնակիցներ Փոքր Հայքից<sup>12</sup>, Հայոց Միջագետքից<sup>13</sup>, ինչպես նաև Մեծ Հայքից՝ Կարինի Մանասեպիսկոպոսը<sup>14</sup>:

Տիեզերածողովի նախագահութունը հանձնված էր Հռոմի ներկայացուցիչներին ու Կոստանդնուպոլսի Անատոլիոս հայրապետին (449-458 թթ.), սակայն գործնականում նախագահութունն իրականացնում էին կայսերական



Չորրորդ Տիեզերածողովը  
Որմնանկար, Զախարի Զոգրաֆ,  
Աթոսի Մեծ լավրայի կաթողիկե, 1852 թ.

<sup>12</sup> Առաջին Հայքից ժողովին մասնակցել են Հովհան Սեբաստացի, Հովհան Նիկոպոլսեցի, Կեկրոպիոս Սեբաստապոլսեցի, Անատոլիոս Սատաղեցի եպիսկոպոսներն ու Դորոթեոս Բահանան, իսկ Երկրորդ Հայքից՝ Կոստանդին Մելիտենեցի, Ակակ Աբարաթիացի, Դովնոս Կուկուզեցի, Ադոլ Արաբիսոսցի, Հովհան Արկացի, Հերակլ Կոմանացի եպիսկոպոսները, Ադելֆիոս Բուեպիսկոպոսը, Դուկիոս, Եվփրոն և Օտրիոս Բահանաները (տես ACO, II, 2, II, էջ 142, 146: ACO, II, 2, II, էջ 72):

<sup>13</sup> Միջագետքյան հայոց տարածներից Քաղկեդոն էին ժամանել Սիմեոն Ամիդեցի, Զելեն Մարտիրոսուպոլսեցի, Նոյ Սոփանենցի (Մովսիս), Մարաո Հաննիթեցի, Եվսեբիոս Մարոնուպոլսեցի, Կայոմաս Վաղարշակուպոլսեցին (Անգեղեցի), ում Միթիկ (Ադոնցի ընթերցմամբ՝ Տիրիկ) եպիսկոպոսները և Պետրոս Բահանան (տես ACO, II, 2, II, էջ 142, 145, 153: ACO, II, 2, II, էջ 69): Պետր է նշել, որ Ն. Ադոնցը, չորրորդ Տիեզերածողովի արձանագրություններում առկա միջագետքյան եպիսկոպոսների անունները համեմատելով նույն տարածաշրջանի եպիսկոպոսների՝ 453 թ. Առն կայսեր ներկայացրած զեկուպոս պարունակված անունների հետ, եկել է այն եզրակացությանը, որ «Վաղարշակուպոլիս» և «Մարոնուպոլիս» տեղանուններն իրականում երկու եպիսկոպոսների՝ Վաղարշի և Մարոնի անուններն են, որոնք ձեռագրային սխալի պատճառով տեղանուններ են դարձել (տես Ադոնց, Հայաստանը, էջ 50-51): Այս դեպքում «Միջագետքից» Տիեզերածողովին մասնակցած հայրերին ևս երկու եպիսկոպոս կավելանա: Փաստորեն այս ամենով հասկանալի է դառնում, թե որքան անհիմն է տարածված այն կածմբը, թե Քաղկեդոնում հայեր չեն եղել չորրորդ Տիեզերածողովին չեն մասնակցել միայն պարսից իշխանության տակ եղած Վաղարշապատի կաթողիկոսության ներկայացուցիչները (տես Ղազարյան, «Հայոց մասնակցությունը», էջ 24-26):

<sup>14</sup> Տես ACO, II, 2, II, էջ 94:

ներկայացուցիչները՝ «իշխանները»<sup>15</sup>: Վերջիններիս թվում էր Մարկիանոս կայսեր սենեկապետ («պրեպոզիտոս») և սենատոր Արտաշեսը (Մամիկոնյա՞ն)<sup>16</sup>:

Ժողովական Հայրերը մերժեցին Եվտիքեսի և Դիոսկորոսի միաբնակ հայացքները և, Կյուրեղ Ալեքսանդրացու հեղինակության վրա հիմնվելով<sup>17</sup>, մշակեցին ու հրապարակեցին շորրորդ Տիեզերաժողովի քրիստոսաբանական սահմանը. «Արդ, սբ. Հայրերին հետևելով, բոլորս միաբան ուսուցանում ենք՝ խոստովանել մեկ և նույն Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Որ նույն ինքը կատարյալ է աստվածություն մբ և նույն ինքը կատարյալ է մարդկություն մբ, ճշմարտապես Աստված է և նույն ինքը ճշմարտապես մարդ՝ բանական հոգով ու մարմնով: Ըստ աստվածության համազոտ է Հորը, և նույն

ինքն ըստ մարդկության համազոտ է մեզ. ըստ ամենայնի նման է մեզ՝ բացի մեղքից: Որ հավիտյաններց առաջ Հորից ծնվել է ըստ աստվածության, և նույն ինքը վերջին օրերին մեզ համար և մեր փրկության համար Աստվածածին կույս Մարիամից է ըստ մարդկության [ծնվել]: Մեկ և նույն Քրիստոսը՝ Տեր Որդին Միածին, որ երկու բնությունների մեջ անշփոթաբար, անփոփոխաբար, անբաժանապես և անանջատապես է իմացվում<sup>18</sup>: Բնությունների տարբերությունը միության պատճառով բնավ չի վերանում, այլ յուրաքանչյուր բնության հատկությունն առավել պահպանվում է և մեկ դեմքի ու մեկ անձի մեջ համընթանում: Որ երկու դեմքերի չի մասնատվում կամ բաժանվում, այլ մեկ և նույն Որդին միածին՝ Բանն Աստված Տեր Հիսուս Քրիստոսը, ինչպես որ ի վերուստ մարգարեները նրա

15 Տե՛ս Γεαννόπουλος, *Ιστορία και Θεολογία*, էջ 206:

16 Տե՛ս Բարթիկյան, «Առաջին Մամիկոնյանները», էջ 14-15:

17 Քաղկեդոնի սահմանի բանասիրական մանրակրիխա բնությունը ցույց է տալիս, որ դրա մեծագույն մասը բառացիորեն փառված է Կյուրեղի առ Նեստոր II և III, ինչպես նաև՝ 433 թ. առ Հովհաննես Անտիոքացի նամակներից: Լեոն պապի Տոմարից վերցված է միայն հետևյալ նախադասությունը. «Բնությունների տարբերությունը միության պատճառով բնավ չի վերանում, այլ յուրաքանչյուր բնության հատկությունն առավել պահպանվում է և մեկ դեմքի ու մեկ անձի մեջ համընթանում»: Ընդ որում, լեոնյան այս հատվածն այն աստիճան է ձևափոխված ու կյուրեղյան ոգուն համահունչ դարձված, որ որոշ հետազոտողներ չեն էլ կասկածել, որ այս տողերը Կյուրեղինը չեն: Սա վկայում է այն մասին, որ Քաղկեդոնի ժողովի համար բացառիկ հեղինակությունը Կյուրեղն է եղել, և չորրորդ Տիեզերաժողովի բանաձևի հիմքը մեծն Կլեմենտացու վարդապետությունն է (տե՛ս Μαρτζέλος, *Γένεση*, էջ 141-223):

18 Նեստորական ու եվտիքեսական հակադիր ծայրահեղությունների մասին խոսելով՝ Վ. Լոսկին արձանագրում է. «Մի կողմից (այսինքն՝ նեստորականության-Գ.Ն.) մարդկությունն ինքն իր մեջ է ամփոփվում, մյուս կողմից (այսինքն՝ միաբնականության-Գ.Ն.) Աստվածությունից կլանվում: Հակադիր այս երկու փորձությունների միջև Քաղկեդոնի դոգման ճշմարիտ Աստված և ճշմարիտ մարդ Քրիստոսի վերաբերյալ Աստուծո ճշմարտությունը և մարդու ճշմարտությունն է սահմանում, առանց բաժանման կամ կլանման դրանց միությունն է սահմանում... «անշփոթաբար, անփոփոխաբար, անբաժանապես և անանջատապես»՝ Քրիստոսի Անձի մեջ երկու բնություններն այսպես են միավորված, ընդ որում առաջին երկու սահմանումներն ուղղված են միաբնակների, իսկ վերջին երկուսը՝ նեստորականների դեմ: Ըստ էության՝ բոլոր շորս սահմանումներն էլ ժխտական են. άσυχχύτως, άτρέπτως, άδιαίρέτως, άχωρίστως սրանք պառֆատիկ եղանակով մարմնավորման խորհուրդն են ուրվագծում, բայց այդ խորհրդի «ինչպես»-ն արգելում են մեզ պատկերացնել» (Лосский, *Догматическое богословие*, էջ 528-529):

մասին, և ինքը՝ Հիսուս Քրիստոսը մեզ խրատեց, և Հայրերի հանգանակը մեզ ավանդեց»<sup>19</sup>:

Քաղկեդոնի Տիեզերաժողովը որպես տիեզերական հոշակեց 381 թ. Կոստանդնուպոլսի և 431 թ. Եփեսոսի ժողովները, որոնք զրանից հետո համարվեցին համապատասխանաբար երկրորդ և երրորդ Տիեզերաժողովներ<sup>20</sup>:

## ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՔԱՂԿԵԴՈՆԻ ՏԻԵԶԵՐԱԺՈՂՈՎԸ

Վաղարշապատի կաթողիկոսությունը, թեպետ Վարդանանց պատերազմի պատճառով<sup>21</sup> չկարողացավ մասնակցել չորրորդ Տիեզերաժողովին, այդուհանդերձ, զրա հրապարակած հավատո սահմանի վերաբերյալ սկզբնապես որևիցե առարկություն չունեց<sup>22</sup>:

Սակայն չորրորդ Տիեզերաժողովի դավանանքը, ինչպես և տարիներ առաջ նիկիո Հանգանակը, եկեղեցական որոշ շրջանակներում

մեծ բաժանումների ու խռովությունների առիթ դարձավ: Ժողովի որոշումները մերժողները՝ «հակաքաղկեդոնականները», հիմնականում տարածում գտան եգիպտացիների (ղպտինների) և ասորիների մեջ: Այս ազգերի մեջ հակաքաղկեդոնական դիրքորոշումը մեծապես սնունդ էր ստանում հակակայսերական (հակաբյուզանդական) տրամադրություններից:

Հետզհետե հակաքաղկեդոնական խմորումները տարածվեցին նաև Հայաստանում և ի վերջո հանգեցրին նրան, որ Վաղարշապատի (Դվինի) կաթողիկոսությունը չորրորդ Տիեզերաժողովը հերետիկոսական հոշակեց ու դատապարտեց<sup>23</sup>: Մեզ հասած պատմական վկայությունների համակողմողմանի քննությունը ցույց է տալիս, որ Հայաստանի եկեղեցին Քաղկեդոնի Տիեզերաժողովի որոշումները պաշտոնապես մերժել և նզովել է VI դ. երկրորդ կեսին՝ Դվինի երկրորդ ժողովի որոշումներով:

19 Սահմանի հունարեն բնագիրը տես ACO, I, 1, II, էջ 129-130:

20 Տես Ξεζάκης, *Ορθόδοξος Δογματική*, τ. Α', էջ 161. Γιαννόπουλος, *Ιστορία και Θεολογία*, էջ 234-235:

21 Տիեզերաժողովի հրավիրման հրովարտակը դուրս եկավ 451 թ. մայիսի 17-ին, Տիեզերաժողովն իր աշխատանքներն սկսեց հոկտեմբերի 8-ին, մինչդեռ նույն թվականի մայիսի 26-ին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտից հետո Հայաստանյայց եկեղեցու պարագլուխները՝ Հովսեփ Ա կաթողիկոսի (437-452 թթ.) գլխավորությամբ ձերբակալվել էին և Պարսկաստան տարվելով, նահատակվել հուլիսի 25-ին:

22 Այսպես, Փոտ պատրիարքի համաձայն՝ «Հայք վտանգեալք ի հինից Պարսից, ոչ գօրեցին և պարապեցան գալ ի ժողովն. վասն այնորիկ ոչ եհաս պատեառ ժողովոյն ի Հայք հաւաստեալ բայց հակառակութիւն ինչ վասն ժողովոյն ոչ գոյր, այլ ամենեւեան ընդունէին զժողովն» (*Թուղթ Փոտայ*, էջ 67): Նշելի է նաև, որ V դ. վերջում Ղազար Փարպեցին Վահան Մամիկոնյանին ուղղված իր նամակում հիշատակում ու դատապարտում է հերետիկոսներին, այդ թվում Եվտիմիան՝ Քաղկեդոնի մասին ոչինչ չասելով (տես Ղազար Փարպեցի, *Թուղթ*, էջ 2384): Սա խոսում է նրա մասին, որ Հայաստանի երջանակների համար Եվտիմիան դատապարտած Քաղկեդոնի դավանանքը միանգամայն ուղղափառ էր և ընդունելի:

23 Հայագիտության մեջ անցած դարի սկզբից տարբեր կարծիքներ են արտահայտվել այն մասին, թե երբ և ինչ պայմաններում է Հայաստանյայց եկեղեցին պաշտոնապես մերժել ու դատապարտել Քաղկեդոնի Տիեզերաժողովը: Այդ անտեսելիների մասին վերլուծաբար տես Անանեան, *Քննություն*, էջ 46-119:



## ԳՎԻՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎՐ

VI դ. սկզբում հակաքաղկեդոնականների մեջ քրիստոսաբանական մի խնդրի առնչությամբ երկու հակադիր ուղղություններ առաջացան: Դրանցից մեկը Անտիոքի միաբնյա պատրիարք Սեդրոսի (512-518 թթ.) հետևորդներն էին, իսկ մյուսը՝ Հալիկաոնասի Հուլիանոս եպիսկոպոսի: Ժամանակի ընթացքում սեկրոսականները գերակշիռ դիրք ունեցան և Հակոբ Մանձաղոս (505-578 թթ.) եպիսկոպոսի ջանքերով Ասորի-Հակոբիտ (Հակոբիկյան) եկեղեցին կազմեցին:

Հուլիանոսի սակավաթիվ կողմնակիցները, որոնց մի մասը Հայաստանի հարավ-արևմտյան շրջաններում էր բնակվում, նման հնարավորություն չունեցան: Առանց նվիրապետության մնալով՝ այս ասորիները ոմն Աբդիշո (Աբդ-ե-շուահ) երեցի գլխավորությամբ դիմեցին Հայոց եկեղեցու եպիսկոպոսներին՝ լուծելու համար իրենց այդ խնդիրը: «Պատմութեան» անանուն հեղինակի<sup>24</sup> համաձայն՝ նրանք դիմեցին Տարոնի Ներշապուհ եպիսկոպոսին՝ ասելով. «...Բոլորը մոլորվել են, գնալով Նեստորի հետևից և Քաղկեդոնում՝ նրա նմանների և որովհետև ոչ մի կերպ չենք կարող ձեռնադրվել, դիմել ենք, որ ձեր բարեպաշտ ձեռնադրությամբ եպիսկոպոս դառնանք»<sup>25</sup>:

Ներշապուհն այս ամենի մասին տեղեկացրեց Ներսես Բ կաթողիկոսին (548-557 թթ.) և հայոց եպիսկոպոսներին: Վերջիններս Դվինում ժողով գումարեցին, որի ժամանակ «նզովեցին Քաղկեդոնի սուրբ ժողովը որպես նեստորական ըստ Աբդիշոյի գրության, որովհետև այդ (նույն) տարում թարգմանեցին Աբդիշոյի կողմից բերված վերոհիշյալ գրությունները, որոնք գրվել էին Տիմոթեոսի և ասորի Ֆիլիքսի կողմից և որոնք ուղղված էին Քաղկեդոնի ժողովի և նրանց դեմ, ովքեր ի վերա Քրիստոսի, մեր Աստուծո խոստովանում էին երկու բնություն: Նրանք ընդունեցին այդ գրվածքները և նույն այն ժողովում, որը կայացավ Դվին քաղաքում, դավանեցին մեկ բնություն Աստուծո Բանին և մարմնի, և որ անմահ բնությամբ նա խաչվեց և մահացավ, դրա համար էլ «Սուրբ Աստված»-ին ավելացրին նաև «որ խաչեցար»-ը... և նզովքով որոշեցին չհաղորդվել Նրուսաղեմի և Նոր Հռոմի հետ և նրանց հետ, ովքեր ի վերա մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի խոստովանում են երկու բնություն: Նրանք Աբդիշոյին եպիսկոպոս ձեռնադրեցին, ինչպես և հակոբիկ եվտիքեսին և նրանց երկու այլ ընկերներին, որոնցից մեկը հուլիանական էր, իսկ մյուսը՝ այլ աղանդի կողմնակից...»<sup>26</sup>:

24 «Պատմութիւն վասն Հայոց իրաց»-ը (լատիներեն՝ *Narratio de rebus Armeniae*) շուրջ 700 թ. գրված հայ ֆաղկեդոնյա մի երկ է, որ պատմում է հայոց բաժանման և դրան հաջորդած իրադարձությունների մասին մինչև Սահակ Գ Զորավորեցի կաթողիկոսի օրերը (677-703 թթ.): Սկզբնապես այն գրված է եղել հայերեն, սակայն բնագիրը կորել է, և «Պատմութիւն»-ը մեզ է հասել հունարեն թարգմանությամբ: Գրվածի ֆինական բնագիրը ծավալուն ուսումնասիրությամբ տես Garitte, *La Narratio*: «Պատմութեան» հայերեն թարգմանությունը տես Բարթիկյան, «Narratio»:

25 Բարթիկյան, «Narratio», էջ 464:

26 Բարթիկյան, «Narratio», էջ 464-465:

Իհարկե, նշանավոր այս իրադարձությունը «ասորական խաբեությունից»<sup>27</sup> բացի այլ գրգռապատճառներ էլ ուներ: Մասնավորապես, մեծ էր պարսից կառավարության դերը: Վրաց կաթողիկոս Արսեն Սափարաձեի (XI դ.) հաղորդմամբ՝ Դվինի ժողովի որոշումն ուղղակիորեն պարտադրվել էր պարսից արքունիքի կողմից<sup>28</sup>: Իսկ Փոստ հայրապետի տեղեկությունամբ՝ պարսից Խոսրով Անուշիրվան թագավորն (531-579 թթ.) այնքան գոհ է մնացել ժողովի գործունեությունից, որ «գովեալ զներսէս եւ զյառաջ խոստացեալ դաշինսն

կատարեաց զորդին տալով նմա յորդեգիրս եւ զՀայաստան աշխարհի զհարկսն ի նա հաւատաց եւ յեպիսկոպոսնունսն հաւանեալս ընդ նմա»<sup>29</sup>:

Այսպիսով, 553-555 թթ.<sup>30</sup> Դվինի կաթողիկոսությունը՝ ի դեմս կաթողիկոսի և իր եպիսկոպոսների մեծ մասի, Քաղկեդոնի Տիեզերածոզովի վարդապետությունը սխալաբար նույնացնելով նեստորականությանը, բանադրեց այն՝ դրանով խզելով հաղորդութենական (եվխարիստիկ) կապը Տիեզերական Եկեղեցուց<sup>31</sup>:

27 «Գլխաւոր խաբէութիւնը յայնմ էր, - գրում է Սահակ եպս Կոզյանը, - որ Ասորին գիտցաւ ինքզինը ներկայացնել հաւատակից Հայոց, Նեստորականութիւնը՝ հասարակաց թշնամի, իսկ Քաղկեդոնը՝ հաւասար Նեստորականութեան: Հետևանքը պարզ էր. նզովքը որ Նեստորի դէմ կ'արժէր, պէտք էր արժէլ նաեւ Քաղկեդոնի համար» (Կոզեան, «Հայոց եկեղեցին», էջ 193): Նույնի համաձայն՝ «Ներսէս եւ Ներշապուհ կը նզովեն Քաղկեդոն մը որ Պատմականը չէ, այլ Զրպարտոսածը, կը դատապարտեն վարդապետութիւն մը, որ չէ սորվեցուցած Քաղկեդոն այլ սորվեցուցած է Նեստոր...» (Կոզեան, «Հայոց եկեղեցին», էջ 194): Արժե եղջ նաև, որ հայոց ծանոթությունը քաղկեդոնյան վարդապետության հետ եղել է Տիմոթեոս Կուզի աղավաղ տեղեկությունների միջնորդությամբ. «Հայք ոչ միայն Լեոնի Տոմարն կամ Քաղկեդոնի ժողովոյն Սահմանն շունէին հայերէն թարգմանութեամբ, այլ եւ ոչ այս մասին հայտը որ եւ իցէ գիրք: Վիճմանց ժամանակ հակառակ կողման վարդապետութիւնն աչաց առջեւ ունէին մի միայն Տիմոթեայ Հակահանութեան մէջ. այս իսկ պատճառաւ նշգրիտ ծանօթութիւն չեն կազմած այնչափ անզամ նզոված Քաղկեդոնի ժողովոյն պատմութեան եւ վարդապետութեան մասին» (Ակիմեան, *Տիմոթէոս Կուզ*, էջ 37):

28 Տես Արսեն Սափարաձի, *Վրաց և Հայոց*, էջ 35-36, 39-40:

29 Թուղթ Փոստայ, էջ 69-70: Արսեն Սափարաձեն ևս հաղորդում է, որ Դվինի ժողովից հետո պարսիկները հայ եպիսկոպոսներին են հանձնել երկրից հարկեր հավաքելու գործը, ինչը հանգեցրել է հայ նախարարների տկարացմանը (տես Արսեն Սափարաձի, *Վրաց և Հայոց*, էջ 41-42): Կարապետ եպս Տեր-Մկրտչյանն այս տեղեկությունները «փոքր-ինչ առասպելական», բայց միանգամայն հավանական է համարում (տես Տեր-Մկրտչեան, *Հայոց եկեղեցւոյ Պատմութիւն*, էջ 213-214): Պետք է նշել, որ եպիսկոպոսներին հարկահանության գործառույթով օժտելը պարսից սովորական քաղաքականությունն էր: Քացի այդ, Վաղարշապատի կաթողիկոսը մինչև 449 թ. ուներ հարկահանության իրավունքը, որը վերացրեց Հակեբարը: Փաստորեն, Դվինի ժողովի հակաֆաղկեդոնական դիրքորոշման շնորհիվ կաթողիկոսական այդ մենաշնորհը վերականգնվեց, բայց ի տարբերություն անցյալի՝ արդեն թագավորական իշխանության բացակայության պայմաններում:

30 Թե հայկական, քե օտար աղբյուրները Դվինի ժողովի տարբեր տարեթվեր են նշում, ինչը տարածայնություն է մտցնում նաև հետազոտողների միջև: Համարելով բոլոր այդ տեղեկությունները, հ. Պողոս Անանյանը ցույց է տալիս, որ «Ներսէսի օրով քանի մը ժողով տեղի ունեցած է, կամ լաւ եւս Դուինի ժողովը քանի մը տարի տեւած է» (Անանեան, *Քննութիւն*, էջ 57): Դրանցից առաջինը, որն զբաղվել է Աբդիշոյի խնդրով, ըստ հ. Պողոսի, տեղի է ունեցել 553 թ. սկզբներին, իսկ 555 թ. մարտի 21-ին գումարվել է մի այլ ժողով, որն զբաղվել է նեստորական խուժիկների և Քաղկեդոնի խնդրով (տես Անանեան, *Քննութիւն*, էջ 8): Մեզ է հասել այս ժողովի «Ուխտ միաբանութեան» եզրափակիչ գրությունը (տես *Գիրք Թղթոց*, էջ 199-203):

31 Տես Տեր-Մինասեան, *Յարարերութիւնները*, էջ 101-102:

## ԴՎԻՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎԻՑ ՀԵՏՈ

Դվինի ժողովի վճիռները ողջ Հայոց եկեղեցու համար չէ, որ ընդունելի եղան: Այսպես, հակառակ ներսես Բ կաթողիկոսի սպառնալիքներին Ռշտունյաց Սահակ, Մոկաց Սողոմոն, Անձևացյաց Ստեփանոս, Ակեռ Հոռոմանոս, Զարեհավանի Միքայել և Բզնունյաց Աստվածատուր եպիսկոպոսներն այդպես էլ չժամանեցին Դվին՝ ժողովի որոշումներն ընդունելու<sup>32</sup>: Բացի այդ, լուրջ խնդիրներ առաջացան Դվինի կաթողիկոսության, նրա հոգևոր իրավասության տակ գտնվող Աղվանից կաթողիկոսության ու Սյունյաց աթոռի միջև: Վերջինս անջատվեց Դվինից և Աղվանից կաթողիկոսությանը միավորվեց: Աղվանքն ու Սյունիքը օգնություն և ուղղորդում հայցեցին Երուսաղեմի պատրիարքությունից<sup>33</sup>:

571 թ. հակապարսկական ապստամբությունից հետո մի խումբ հայ նախարարներ՝ Վարդան Մամիկոնյանի և Հովհաննես Բ Գաբեղյան կաթողիկոսի (557-574 թթ.) գլխավորությամբ ապաստան գտան Կոստանդնուպոլսում: Երբ հավատքի վերաբերյալ տարաձայնություններն ի հայտ եկան, Հուստինոս II կայսեր (565-578 թթ.) միջամտությամբ մայրաքաղաքում աստվածաբանական մի քննարկում կազմակերպվեց, որի արդյունքում մայրաքաղաքում ապաստանած հայերն առժամանակ ընդունեցին չորրորդ

Տիեզերածղովը և ի նշան այդ իրողության՝ հովանավորեցին տաճարի մուտքերից մեկի շինարարությունը, որը և անվանվեց «Հայոց դուռ»<sup>34</sup>:



Սր. Սոֆիայի տաճարը Հուստինիանոսի օրոք  
Վերակազմությունը՝ Ն. Գերասիմովի

## ԹԵՈՂՈՍՈՒՊՈԼԻՍ-ԱՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ

VI դ. 70-ական թթ. չորրորդ Տիեզերածղովի կողմնակիցների ու ընդդիմադիրների պայքարը Հայաստանում սաստկացավ: Քաղկեդոնի կողմնակիցներին գլխավորում էր Կարինի Թեոդորոս եպիսկոպոսը, իսկ հակաքաղկեդոնականներին՝ Դվինի Մովսես Բ եղիվարդեցի կաթողիկոսը (574-604 թթ.): «...Ապա ընդ երկուսնալն հայրապետութեան Հայոց՝ էր մեծ

32 Անանյանն այս եպիսկոպոսների բացակայության հավանական պատճառ է համարում նեստորականության հակված լինելը, քանի որ Դվինի երկրորդ ժողովը նաև հականեստորական էր (տես Անանեան, *Քննություն*, էջ 96-97):

33 Տես Անանեան, *Քննություն*, էջ 98-99. Terian, "Monastic".

34 Տես Բարթիկյան, «Narratio», էջ 465: Այս պատումի այլ տարբերակների մասին տես Սուրբ Սոֆիա, էջ 17-18:



Սր. Հովհան Սյունակյաց կաթողիկոսը  
Մանրանկար, հեղ. Գ. Ղազարյան, 2014

**մարտ ընդ Մովսէս և ընդ Քէոզորոս Կարնոյ եպիսկոպոս, զոր փիլիսոփայապետն կոչէին... Քէոզորոս ետ հրաման ժողովիլ եպիսկոպոսացն Հայոց, որ ի նորայն կողմանն, ի Կարնոյ քաղաք**

և ասէ. “պարտ է մեզ առնել կաթողիկոս”. և ասին զՅովհան ոմն Սիւնական<sup>35</sup>, ձեռնադրեցին և հնազանդեցան քաղկեդոնական կրօնիցն<sup>36</sup>: Հովհան Բագարանցու ընտրությունը, հավանաբար, տեղի է ունեցել շուրջ 584 թ.<sup>37</sup>:

571-590 թթ. Հայաստանի տարածքում ծավալված բյուզանդա-պարսկական պատերազմի արդյունքում Պարսկաստանը Հայաստանի մեծ մասը՝ Այրարատը (բացի Գլինից), Գուգարքը, Տայքը, Տարոն-Տուրուբերանն ու Աղձնիքը բյուզանդիային զիջեց:

Հայերի դավանական տարածայնությունների մասին տեղեկանալով՝ Մավրիկ կայսրը (582-602 թթ.) հրավեր ուղարկեց Մովսես կաթողիկոսին ու հայոց եպիսկոպոսներին՝ Կոստանդնուպոլիս ժամանելու և խնդիրները քննարկելու: Կաթողիկոսը կտրականապես հրաժարվեց հատել պարսկա-բյուզանդական սահմանը՝ Ազատ գետը: Նմանապես, «Վասպուրական աշխարհի եպիսկոպոսները և նրանք



Մավրիկ կայսրը  
Մանրանկար  
բյուզանդական ձեռագրից,  
XV դ., Մոզենայի  
գրադարան

<sup>35</sup> Հովհան Բագարանցու «սիւնական» մակդիրից երևում է, որ կաթողիկոսը սյունակյաց-ճգնավոր է եղել: Համենայն դեպս պատմիչները նրան բնորոշել են որպես սրբակյաց մի անձնավորության: Հովհանի կյանքի և կաթողիկոսության հանգրվանների մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Ավանի կաթողիկեի գիտական ուսումնասիրությունը (տես Марутян, *Архитектурные памятники*, էջ 67-71):


<sup>36</sup> Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն*, էջ 268:

<sup>37</sup> Տես Марутян, *Архитектурные памятники*, էջ 69-70: Տ. Մարոսյանն այս թվականին եկել է՝ գլխավորապես հիմնվելով Ավանի տաճարի հետազոտության վրա: Մինչդեռ սկզբնաղբյուրները վերոհիշյալ ժողովն ու դրանից հետո Հովհանի ընտրությունը դնում են բյուզանդա-պարսկական պատերազմից հետո՝ շուրջ 591 թ.:

ովքեր գտնվում էին Պարսից տիրապետության տակ նմանապես չջանկացան գնալ: Իսկ Տարոնի եպիսկոպոսները և ովքեր որ գտնվում էին հռոմայեցիների տիրապետության տակ գնացին Կոստանդնուպոլիս: Երկար քննելուց հետո, նրանք հռոմներից համոզվեցին և ստորագրեցին և երգմամբ համամիտ դարձան նրանց: Երբ նրանք վերադարձան Հայաստան, Մովսեսը նրանց չընդունեց, նույնպես և Պարսկահայաստանի մյուս եպիսկոպոսները: նրանք իրենց կաթողիկոս ձեռնադրեցին Հովհաննեսին՝ Կոզովիտի Բագարան գյուղից»<sup>38</sup>:

591 թ. կայսեր նախաձեռնությամբ Հովհան Բագարանցու նստավայրը Կարինից փոխադրվեց Ավան, որտեղ կաթողիկոսի աթոռանիստը դարձավ Ավանի տաճարը՝ կառուցված նույն ինքն Հովհանի կողմից<sup>39</sup>: Երկու հակադիր՝ Ավանի քաղկեդոնական ու Դվինի հակաքաղկեդոնական կաթողիկոսարաններն այսպիսով իրար դեմ հանդիման հայտնվեցին, և «14 տարի ... նրանց միջև հարաբերությունները սրված էին՝ Քրիստոսի երկու բնությունների և Քաղկեդոնի ժողովի հարցում»<sup>40</sup>:

Հայաստանում դավանաբանական երկու հո-



Ավանի տաճարի վերակազմությունն  
ըստ Տ. Մարությանի

սանքների հակադրությանն իհարկե մեծապես նպաստում էր երկրի քաղաքական բաժանվածությունը. եթե Բյուզանդիան հետամուտ էր հայոց մեջ Քաղկեդոնի կողմնակիցների հաղթանակին, ապա Պարսկաստանը՝ հակաքաղկեդոնական հոսանքի<sup>41</sup>: Սակայն արտաքին միջամտություններից անկախ, խնդիրը նախ-

38 Բարթիկյան, «Narratio», էջ 467: Ըստ Փոտ պատրիարքի՝ այս հայ եպիսկոպոսները 21 հոգի են եղել (տես Թուղթ Փոտայ, էջ 69-70). իսկ ըստ Վարդան Բարձրբերդցու՝ 25 (տես Վարդան Բարձրբերդեցի, Պատմություն, էջ 115): Բացի այդ, պետք է նշել, որ ժողովին ներկա են գտնվել նաև Մովսես կաթողիկոսի երկու ներկայացուցիչները՝ Գրիգոր և Վրթանես վարդապետները: Նրանք չեն համաձայնել ժողովի վճիռներին և Դվին են վերադարձել:

39 Ավանի տաճարի մասին տես Մարության, Ավանի տաճարը: Ա. Ղազարյանի համաձայն՝ Ավանն անկյունավոր խորշերով առաջին ֆառախորան եկեղեցին է, ինչպես նաև՝ առաջին հնգազմբերը, որի փոքր գմբեթները ոչ թե առանձններին, այլ անկյուններին են խոյանում: Բացի այդ, Ավանում համադրված են էջմիածնի մայր տաճարի և Սբ. Սոփիայի հատակագծերը (տես Казарян, Архитектура, էջ 19-20: Казарян, Церковная архитектура, Т. 1., էջ 256-265:


40 Բարթիկյան, «Narratio», էջ 467:

41 Այս ընթացքում Հայաստանի հակաքաղկեդոնականներին պարսից կառավարությունն արտակարգ հովանավորություն

եառաջ ներքին էր. հայ հասարակությունը եկեղեցական-դավանական տեսակետից հիրավի երկատվել էր<sup>42</sup>:

604 թ. Մովսես եղիվարդեցին մահացավ, և Հայաստանի միակ կաթողիկոս մնաց Հովհան Բագարանցին: Հակաքաղկեդոնական հայոց առաջնորդն այս ժամանակ կաթողիկոսական աթոռի տեղապահ Վրթանես Քերթող վարդապետն էր, որը փորձում էր կենտրոնացնել ուժերը և Մովսես կաթողիկոսին մի հաջորդ ընտրել առաջ: Սակայն հակառակ Վրթանեսի և իր կողմնակիցների ջանքերին, Դվինի կաթողիկոսարանը երեք տարի շարունակ թափուր մնաց:

606 թ. պարսկահպատակ Հայաստան ժամանեց պարսից արքայի սիրելի Սմբատ Բագրատունին, որը և հակաքաղկեդոնականների հզոր պաշտպանը դարձավ<sup>43</sup>: 607 թ. Սմբատի նախաձեռնությամբ Դվինում բազմամարդ մի ժողով գումարվեց, որի նպատակը հակաքաղկեդոնական կաթողիկոսի ընտրությունն էր: Ժողովը սակայն, սկզբնապես ձախողվեց: Սմբատ Բագրատունու պահանջով ժողովական տասը եպիսկոպոսները Քաղկեդոնի Տիեզերածողովի դեմ օտարագրություններ հանձնեցին, ինչից հետո



Ավանի տաճարի ավերակներն այսօր  
Լուսանկարը՝ ՀՃՈՒՀ

նրանցից մեկը՝ Ռշտունիքի Աբրահամ Աղբաթանեցի եպիսկոպոսն ի վերջո կաթողիկոս ընտրվեց (607-615 թթ.):

610 թ. բյուզանդա-պարսկական բախումները վերսկսվեցին: Դրանց արդյունքում բյուզանդական Հայաստանի տարածքները կրկին Պարսկաստանին անցան: Պատերազմական գործողությունների ժամանակ պարսիկները հասան Կարին և 607 թ. այնտեղ ապաստանած Հովհան կաթողիկոսին եկեղեցական գանձերի հետ գերեվարեցին: 610-611 թթ. ծերացյալ կաթողիկոսը գերություն մեջ վախճանվեց: Նրա մարմինը բեր-

ել ազատվում. այսպես, նրանց սիրաշահելու նպատակով պարսից արքան հրամայում է ֆանդել Դվինի բերդը և դրա տեղում մաք տաճար կառուցել (տես Լաֆադարյան, *Նրևան*, էջ 58-59):

Ք Պ Մուրադյանի նրբանկատ դիտողությամբ՝ «Բնականաբար, ֆաղկեդոնյա հայերի գործունեությամբ բարձրացվում էր եկրի ֆաղափական ու գաղափարական կողմնորոշման հարցերը, բայց չէ՞ որ պաշտոնական և ազգայնացած միաբնյա կողմնորոշումն ևս գործում էր ոչ առանց նման կողմնորոշման՝ դոգմատիկ խնդիրները լուծելիս երբեմն նույնիսկ աշխարհիկ իրաձեռնությունից օգտվելով: Բացի այդ, հայ իրականության հրատապ հարցերով մտահոգ ինչպես ֆաղկեդոնականների, այնպես էլ հակաֆաղկեդոնականների բյուզանդամետ, իրանամետ և ցանկացած այլ կողմնորոշում ծնված էր տեղական, ազգային իրավիճակով, բխում էր ուժերի իրական հարաբերակցությունից» (Мурадян, «Культурная деятельность», էջ 325-326):

Ք Հ Ներսես Ակինյանի պատկերավոր արտահայտությամբ՝ Սմբատը «շահուեցալ ի նպաստ Դուին տիրող հաաաափին, և անկէ նաե՛ր ուր ուր այս կուսակցութեան միութիւն կը պակսէր, հոն իր զօրաւոր բազուկը կ'երկնցընէր» (Ակինեան, *Կիրիոն*, էջ 143):

վեց և ամփոփվեց Ավանի տաճարում: Աբրահամ կաթողիկոսի գահակալությունը ևս մեկ այլ ցավալի իրադարձություն մը հատկանշվեց. 608-609 թթ. մեկընդմիջտ խզվեցին հակաքաղկեդոնական Դվինի և քաղկեդոնական Վրաց կաթողիկոսությունների հոգևոր կապը, ինչը երկու հարևան ժողովուրդների հետագա հարաբերությունների մեջ խորը և ցավալի խոց բացեց<sup>44</sup>:

### 632-633 թթ. ԿԱՐՆՈ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

614 թ. պարսկա-բյուզանդական պատերազմի ընթացքում պարսիկները հարձակվեցին երուսազեմի վրա և, Քրիստոսի խաչափայտը գերելով, Պարսկաստան տարան: 628 թ. Հերակլ կայսրը (610-641 թթ.) հարձակվեց պարսիկների վրա և, խաչն ազատագրելով, երուսազեմ վերադարձրեց: Պատերազմի ընթացքում կայսրին մեծ օժանդակություն ցուցաբերեցին հայոց զոր-

քերը՝ քաղկեդոնյա Մժեժ Գնունու գլխավորությամբ: Պատերազմի ընթացքում Հայաստանի մի զգալի մասը պարսիկներից նվաճվեց և նորից քրիստոնյա կայսրությանն անցավ:



Հերակլ կայսեր ոսկե դրամը

632-633 թթ. Կարինում, Հայաստանի կառավարիչ նշանակված Մժեժ Գնունու (629-635 թթ.) նախաձեռնությամբ ու Հերակլ կայսեր ներկայությամբ տեղի ունեցավ աստվածաբանական մի քննարկում-ժողով, որի արդյունքում Հայոց եզր

կաթողիկոսը (630-641 թթ.) և պատվիրակ հայ եպիսկոպոսներն<sup>45</sup> ընդունեցին շորրորդ Տիեզերածղովի դավանությունը. «... (Հերակլը) գալով Մեծ Հայք հրամայեց Թեոդոսուպոլսում մեծ ժողով գումարել՝ բոլոր եպիսկոպոսների և վարդապետների, կաթողիկոս եզրի և բոլոր

44 Աբրահամ կաթողիկոսի՝ 608 թ. վրացիների հանդեպ արձակած նզովի բովանդակությունը սահմուկեկուցիչ է. «Վասն որոյ եւ գլառաջագոյն սահմանն վարդապետացն մերոց, գոր ի վերայ Հոռոմին հատին, եւ կացցէ մինչեւ ցբուն՝ թէ ոչ դարձցին ի ճշմարտն, մե՛ք գնոյն ի վերայ Վրաց հրամայեցա՛ք, ամենեւիմք մի՛ հաղորդել ընդ նոսա, մի՛ յաղօքս, եւ մի՛ ի կերակուրս, եւ մի՛ յըմպելիս, մի՛ ի բարեկամութիւն, մի՛ ի դայեկութիւն, մի՛ աղաքիմ երթալով ի խաչն, որ ի Մցխիթայի տեղամբն համբալի, մի՛ ի Մանգղեաց խաչն. եւ մի՛ ի մեր եկեղեցիս գնոսա ընդունել, այլ եւ ամուսնութեամբ ամենեւիմք հետանալ. բայց միայն գնել ինչ, եւ կամ գնոյ տալ որպէս Հրէից: Նոյն հրաման եւ վասն Աղուանին անշարժ կացցէ, զի պատկառեալ դարձցին ի թիւր ճանապարհն... Թէ անխտաբար վաբեցի ո՛ք հաղորդելով ընդ նոսա, եւ կամակից լինիցի պղծութեան հաւատոց նոցա, այնպիսիմն նզովեսցի՛ն հոգով, նզովեսցի՛ն մարմնով, եւ ամենայն կենցաղով իւրեանց, եւ որոշեացին ի սրբոյ եկեղեցոյ Աստուծոյ, եւ եղիցին խաւարաբնակք եւ յաւիտենից հոռոյն կերակուր: Իսկ եթէ ո՛ք ամբարտաւանեսցէ արհամարհելով գնզովիմս, զիտասցէ այնպիսին զի յետ հոգեւոր պատուհասի, եւ գնամնաւորս պատուաստ եմք ի վերայ ամե՛կ» (Գիրք Թղթոց, էջ 363-364):

45 XIV դ. մատենագիր Զաքարիա Մործորեցին հիշատակում է եզրի հետ Կարին մեկնած 4 եպիսկոպոսների՝ Տիրատուր Արտագեցուն, Քրիստափոր Դարունեցուն, Մարտիրոս Գողթնացուն ու Եպիփան Տարոնացուն (Մամիկոնեից) և 3 վարդապետների՝ Վարդան Բագաոհեցուն, Թովմաս Արշարունեցուն և Թեոդորոս Քոթենավորին (տես Զամչեանց, Պատմութիւն, հ. Բ, էջ 538): Հայոց Եկեղեցու մնացյալ եպիսկոպոսները, հավանաբար, Կարին են եկել բյուզանդական Հայքից:



Կարինի «Միարան» Սբ. Աստվածածին տաճարը

Պատկերվել է շուրջ 600 թ., հավանաբար ավելի վաղ (հուսարինիանոսյան) մի սրբավայրի տեղում: Իր «Միարան» անվանումն ստացել է այն պատճառով, որ այստեղ է կայացել 632 թ. Կարնո միարանությունը: Տաճարը կանգուն է եղել մինչև Մեծ Նղեռնը և հրաշագործ սրբավայրի համբավ է ունեցել բաղարի բոլոր քրիստոնյաների համար:

ազատների մասնակցությամբ, քննելու և եզրակացության հանգելու համար Քրիստոսի՝ մեր Աստուծո երկու բնությունների և Քաղկեդոնի ժողովի հարցի շուրջը: Երեսուն օր նրանք քննեցին այդ հարցը և հայերը համոզվեցին (սուրբ հայրերի) գրքերից և իրենց ձեռքով ստորագրեցին ու երգվեցին այլևս այդ մասին երբեք չհակաճառել»<sup>46</sup>:

Այսպիսով, Կարնո ժողովի արդյունքը եղավ այն, որ հայերն ընդունեցին շորրորդ Տիեզերաժողովի դավանությունը և վերականգնեցին իրենց հաղորդութենական միությունը Տիեզերական Եկեղեցու հետ. «... Գնացին միաբան առ թագաւորն եւ յանձն առին զՔաղկեդոնին, արարին պատարագ եւ հաղորդեցան միմեանց, եւ ետուն ձեռնարկ միարանութեան արքայի»<sup>47</sup>:


Եզր կաթողիկոսի և Հայ Եկեղեցու առաջնորդների այս քայլն ընդունելի եղավ հայ հանրության կողմից<sup>48</sup>:

<sup>46</sup> Քարթիկյան, «Narratio», էջ 468: Կարնո ժողովի մասին հետախոսական մանրամասնություններ է հաղորդում Մանեփանոս մետրոպոլիտ Օրբելյանը († 1305 թ.). Հերակլ կայսեր այն հարցին, թե հայերն ինչու՞ չեն միանում հույներին, Եզր պատասխանում է, որ պատճառը Քաղկեդոնի ժողովն ու Լևոն պապի Տոմարն է: Հերակլը կաթողիկոսին է հանձնում չորրորդ Տիեզերաժողովի դավանագիրը՝ երգվելով, որ եթե հայերն այնտեղ հերետիկոսական որևէ բան գտնեն, ապա ինքը հայոց պատանանքին կդարձնի ողջ կայսրությունը, բայց հակառակ պարագային հայերը պիտի միանան իրենց: Ըստ Օրբելյանի՝ հայոց վեոի մեջ մեծ է լինում Եզրի գաղմիկ Թեոդորոսի (Քոթեմավոր) դերը. վերջինս, հայոց վարանումները տեսնելով, ասում է «Ընդէ՛ր վիճի՛ եւ տրամեալ է: Ոչ գոյ ի նոսա քիւրուքին ինչ վասն հաւատոյ. մի եմ մե՛ եւ նո՛քա, եւ նո՛քա բուն արմատ եմ. եւ մե՛ք ոստ մի՛ ի նոցանէ՛ բուսեալ եւ առեալ զհաւատս եւ զամենայն կարգս քրիստոնէութեան: Ոչ է պարտ ապստամբիլ ի նոցանէ՛ եւ խլիլ յարմատոյն մե՛ր. այլ մե՛ք կրտսերագոյնքս հնազանդիմք երիցագոյն հրամանաց նոցին, եւ լիցի մի հօտ եւ մի հովիտ» (Մանեփանոս Օրբելեան, Պատմութիւն, էջ 117):

<sup>47</sup> Մանեփանոս Օրբելեան, Պատմութիւն, էջ 118

<sup>48</sup> Բոլոր սկզբնաղբյուրներն իբրև Եզրի միակ լուրջ հակառակորդի՝ Հովհան Մայրագումեցուն են նշում: Այդ պարագային ամենքն է Մաղաֆիա արք Օրմանյանի հետևյալ միտքը. «Կաթողիկոսին կողմէ՛ յայտնուած զիջողութիւնը և կայսեր կամքին առէ՛ խոնարհիլը, մեծապէս զայրացուցին Հայ եպիսկոպոսները և բոլոր Հայ ժողովուրդը: Սաստիկ գրգռութիւն մը բորբոքեցաւ Եզրի դէմ, բայց գրգռութեան չափն ինչ ալ ըլլայ, զինքն աթոռէ՛ վար առնել շխորհեցան» (Օրմանեան, Հայոց Եկեղեցին, էջ 65): Այլու արբազանը, հիմնավորելու համար այն, որ Եզրի ընդունած դավանանքը միակամությունն էր և հետո չէր Հայ Եկեղեցու





Վաղարշապատի Սբ. Գայանե տաճարը՝ կառուցված 630-ական թթ. Եգր կաթողիկոսի կողմից

### «ՆԵՐՍԷՍ ԱՐԱՐ. ՅԻՇԵՑԷՔ»

641 թ. Եզրի մահվանից հետո Հայոց կաթողիկոսական գահին բազմեց Ներսես Գ (641-661 թթ.) կաթողիկոսը: Նա Տալաթ նահանգի Իշխան գյուղից էր՝ բազմակողմանի զարգացած մի անձնավորություն, որը կրթություն էր ստացել Բյուզանդիայում, երիտասարդ ժամանակ կայսերական բանակում էր ծառայել, իսկ հետո, կրոնավոր դառնալով, եպիսկոպոսական աստիճանի արժանացել: Ըստ Սեբեոսի վկայության՝ Ներսեսը «էր այր առաքինի վարուք, պահաւք եւ աղաւթիւք»<sup>49</sup>:

Ներսես հայրապետը Քաղկեդոնի Տիեզերածողովի համոզված կողմնակիցն էր, բայց քանի որ այդ տարիներին հայոց եպիսկոպոսների մեջ

կրկին հզոր էին հակաքաղկեդոնական միտումները, նորընտիր կաթողիկոսն ստիպված էր իր հայացքներն առժամանակ երևան չհանել:

Իր կաթողիկոսության առաջին իսկ տարում Ներսեսը ձեռնամուխ եղավ Զվարթնոց կամ Սբ. Գրիգոր տաճարի շինությանը: Քրիստոնեական ճարտարապետության այս գլուխգործոցը, որի ներքին հարգարանքը համապատասխանում էր



Սբ. Ներսես Ծինող կաթողիկոսը Մանրանկար, հեղ. Գ. Ազգարյան, 2014 թ.

Բրիտանացի արքայազնից, պնդում է նիշտ հակառակը. «Նկատելի է ես, որ Եգր, Հեռակլի գիրք ընդունելն ետքն այլ Դուինի մէջ անհակառակ կրնդունուի մեծամասնութեան, կամ լաւ ես հանրութեան կողմէն...» (Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, 809):

49 Սեբէոս, Պատմութիւն, էջ 556:



Զվարթնոցում ներսեսի բողոժ հունարեն արձանագրությունը.  
ΠΑΡΕΧΕΤΟΙ ΗΣΕ ΜΗΜΟΝΕΥΣΑΤΕ  
(Ներսես արար. յիշեցէր):

ժամանակվա բյուզանդական տաճարներին<sup>50</sup>, շատ երևույթին կոչված էր երկրի նոր հողեր կենտրոնը դառնալու<sup>51</sup>: Զվարթնոց տաճարի շքա սյուների տակ Շինող կաթողիկոսն ամփոփեց Գրիգոր Լուսավորչի նշխարների մի մասը, իսկ նրա գլուխը դրեց տաճարի կենտրոնում՝ հերկրպագություն հավատացյալների:

Զվարթնոցի շինությանը զուգահեռ կաթողիկոսն սկսեց խոր վիրապի ութանկյուն եկեղեցու կառուցումը, որը մեզ չի հասել: Հավանաբար, 641 թ. Ներսեսը վերակառուցել է Դվինի Ար. Գրիգոր կաթողիկեն՝ այն Ար. Սարգսի անվամբ վերանվանելով<sup>52</sup>:

### ՆՈՐ ԵՐԿԸՆՏԱՆՔ

642 թ. արարների հարվածների ներքո Սասնյան Պարսից տերությունը վերացավ: Ար-

ևելքում անձանոթ ու անկանխատեսելի մի նոր ուժ ասպարեզ իջավ՝ Արաբական խալիֆայությունը: Հայաստանից նոր ընտրություն էր պահանջվում. մի կողմից կար Բյուզանդիան, որը քրիստոնյա գերտերություն էր և որպես այդպիսին՝ նախընտրելի էր արաբներից: Բայց հակաքաղկեդոնականների համար Բյուզանդիայի ներկայությունը սպառնալիք էր: Բացի դրանից, Բյուզանդիան հաճախ Հայաստանի համար ողբերգական քայլերի էր դիմում: Այսպես, հայ մատենագրությունը խորը ցավով է արձանագրել Մավրիկ կայսեր՝ հայոց զորքերը Թրակիա գաղթեցնելու և դրանով երկիրն անպաշտպան թողնելու քաղաքականությունը:

Բյուզանդիայի համեմատ արաբների ներկայությունը կարծես նոր հույսեր էր արձարձում: Արաբները քրիստոնյա չէին, և այդ իսկ պատճառով քրիստոնյաների ներքին դավանական խնդիրների հարցում նրանք սկզբունքորեն անտարբեր էին: Բայց Բյուզանդիայի հետ հակամարտության հրամայականներից էլնելով՝ արաբների համար նախընտրելի էր ցանկացած դավանանք՝ բացի «կայսերականից»: Բացի այդ, արաբները պատրաստ էին սիրաշահելու հայերին՝ Բյուզանդիայից նրանց կտրելու և իրենց դաշնակիցը դարձնելու համար:

<sup>50</sup> «Զվարթնոցի հատակագծային-տարածային կոմպոզիցիան շատ հարցերում ինֆնատիպ է և հարևան երկրների նախադասակարգության մեջ ուղղակի նախօրինակներ չունի: Եկեղեցու նախադասակարգությունը ... վաղմիջնադարյան հայ շինարարական արվեստի օրգանիկ ծնունդն է: Միևնույն ժամանակ հայ շինարարական արվեստի նմուշներից և ոչ մեկը չի պատկերում վաղբյուզանդական նախադասակարգության հետ ծագումնաբանական այն բացահայտ կապը, որն այս տաճարի տարածային կառուցվածքի և հարդարամքի մեջ է արտացոլված» (Казарян, «Алтарная преграда», էջ 85):

<sup>51</sup> Սիմեոն Երևանցի (1763-1780 թթ.) կաթողիկոսի համաձայն՝ Ներսեսը «չին է գտուրն Գրիգոր խոչ էջմիածնի» (Սիմեոն Երևանցի, Զամր, էջ 13: Հմմտ. Սեդրակեան, Պատկերայարգությունը, էջ 181-184):

<sup>52</sup> Տես Казарян, «Триконховые», էջ 16-17:

Բյուզանդամետ և արաբամետ հայ կուսակցություններն իրար բախվեցին: Բյուզանդամետներին ներսես կաթողիկոսն էր գլխավորում, իսկ արաբամետներին՝ երկրի կառավարիչ Քեոզորոս Ռշտունին (639-654 թթ.), որը արաբների հետ պատրաստվում էր ռազմական դաշինք կնքել:



Բանակի տաճարն ըստ Ա. Կալգինի վերակազմության

Ըստ Ա. Ղազարյանի՝ թե՛ Զվարթնոցի, թե՛ Բանակի տաճարները պատճենել են Երուսաղեմի Սբ. Հարություն տաճարը, որը վերանորոգվել էր Հերակլ կայսեր օրոք՝ նաշափայտի վերադարձից հետո՝:

652 թ. իմանալով, որ հայերը պատրաստվում են Արաբական խալիֆայության հետ դաշինք կնքելու, Կոստանդ II կայսրն (641-668 թթ.) իր մեծաբանակ զորքով Հայաստան ժամանեց: Դվինի մայր տաճարում հունարեն լեզվով

պատարագ մատուցվեց, որի ժամանակ ներսես կաթողիկոսն ու հայ եպիսկոպոսներն ի հաստատումն Տիեզերական Եկեղեցու հետ իրենց միություն կայսեր հետ միասնաբար Սբ. Հաղորդություն ստացան<sup>53</sup>: Արաբամետ կուսակցությունը սակայն մեծ թափ ուներ, և երբ կայսրը Կոստանդնուպոլիս վերադարձավ, ներսես կաթողիկոսը, Քեոզորոս Ռշտունուց զգուշանալով, կայսեր հետ գնաց մայրաքաղաք, ապա՝ Տայք: Իր հայրենիքում ներսեսը մնաց վեց տարի՝ 653-659 թթ.: Այս ընթացքում Շինող կաթողիկոսը շարունակեց իր եկեղեցաշեն գործունեությունը: Այսպես, Բանակ բնակավայրում նա կառուցեց շքեղ մի տաճար, որը կրկնում էր Զվարթնոցի գլուխգործոցը: Ըստ երևույթին, նույն ժամանակաշրջանում է կառուցվել Իշխանի տաճարը<sup>54</sup>: Տայքի ներսեսաշեն եկեղեցիներից է Օլթիի տաճարը, որտեղ կաթողիկոսը հունարենով թողել է իր անվանակիր արձանագրությունը<sup>55</sup>:

Իսկ այդ ընթացքում՝ 652 թ. Քեոզորոս Ռշտունին հայերի համար բավական ձեռնտու պայմաններով դաշնագիր կնքեց արաբների հետ: Համաձայն դրա՝ Հայաստանը ճանաչում էր արաբների գերիշխանությունը՝ փոխարենը նրանց հովանավորությունն ու արտոնություններն ստանալով: Շատ չանցած՝ 659 թ., երբ հայոց հետ դաշինք կնքած արաբներն ի վեր-

53 Տես Սերբու, Պատմություն, էջ 167:

54 Տես Казарян, Архитектура, էջ 21:

\* Տես Казарян, Архитектура, էջ 38-39:

55 Տես Edwards, «Medieval», էջ 22: Պետք է ի դեպ նշել, որ Տայքում անցկացրած տարիների ընթացքում եկեղեցաշեն գործունեության շնորհիվ ներսես կաթողիկոսը բարի համբավ է բոլոր վրաց մատենագրության մեջ, ինչի շնորհիվ էլ Վրաց եկեղեցում նա սուրբ է համարվում (տես Чеишвили, «Нерсес», էջ 53):



Իշխանի տանաի սյունաշար խորանը՝ ի հանգույն կամարակապ Զվարթնոցի

չո ասպատակեցին Հայաստանը, գերեվարվեց Քեղդորոս Ռշտունին: Նա մահացավ գերութեան մեջ: Աղետալի այս ժամանակ Ներսես կաթողիկոսն իր աթոռը վերադարձավ, և արաբական սպառնալիքի առջև հայտնված հայերը կրկին կայսրութեանն ապավինեցին...

## ՎՃՌԱԿԱՆ ԶՐԲԱԺԱՆԸ

703 թ. հայոց կաթողիկոս դարձավ արաբներ ու համոզված հակաքաղկեդոնական եղիա Արճիշեցին (703-717 թթ.), որը հալածանք սկսեց քաղկեդոնականների հանդեպ: Մինչ այդ՝ 686 թ. Աղվանից կաթողիկոս էր դարձել Ներսես-Բակուրը: Տարիներ անց, ունենալով տեղի իշխանուհի Սպրամի օժանդակությունը, Ներսես կաթողիկոսն սկսել էր Աղվանքում Ուղղափառությունը տարածել: Նրա այս քայլից դժգոհները իշխանության ձգտող Շերո իշխանի օգնությամբ խնդրեցին Հայոց եղիա կաթողիկոսի միջամտությունը: Վերջինս իր հերթին դիմեց արաբական խալիֆին՝ նրան մի գրություն ուղարկելով: Այդ նամակի մեջ եղիան Աղվանից կաթողիկոսին մեղադրում էր որպես արաբական իշխանության դավաճանի (հօգուտ հույների) և Աստուծո դեմ դրանով մեղանշողի. «Յամենակալէն Աստուծոյ ունիմք զծառայական աշխարհս հնազանդ ձերոյ տէրութեանդ... Իսկ այժմ, որ Աղուանիցն է կաթողիկոս, նստեալ ի Պարտաւ, խորհուրդ արարեալ ընդ կայսրն Յունաց՝ զնա քարոզէ յաղաւթս եւ զաշխարհս ստիպէ, զի ի հաւատ եւ ի միաբանութիւն նմա եկեսցեն...»<sup>56</sup>:

Նրախտապարտ խալիֆը եղիայի տրամադրությունն տակ զորք տրամադրեց՝ «ապստամբներին» հետապնդելու նպատակով: 704 թ. եղիան, արաբական զորքով Աղվանք շարժվելով, Ներսես կաթողիկոսին և Սպրամ իշխանու-

56 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն, էջ 295-296:

հուն տվայտանքների և անարգանքի ենթարկեց, և ի վերջո շղթայակապ Դամասկոս ուղարկեց: Ճանապարհին ներսես կաթողիկոսը սովամահ եղավ ու շղթայակապ էլ թաղվեց<sup>57</sup>: Այսպիսով, արաբների օգնությամբ եղիան ճնշեց Քաղկեդոնի կողմնակիցների տարածումը, Ազվանից եկեղեցին գրվեց Դվինի կաթողիկոսության խիստ վերահսկողության տակ: Եղիայի հրամանով ներսես-Բակուրի հարուստ գրադարանը սնդուկներով թարթար գետը թափվեց<sup>58</sup>: Արաբական իշխանությանը հանձնվեցին ազվան իշխանների անունները, որպեսզի, եթե նրանցից որևէ մեկն Քաղկեդոնի հավատքը դավանի, «սրով և գերութեամբ սպառենցի...»<sup>59</sup>:

Հայոց եկեղեցին իր հակաքաղկեդոնական կեցվածքն ու արաբամետ ուղղվածությունը վերջնականապես ամրագրեց 726 թ., երբ Հովհաննես Գ Սձնեցի կաթողիկոսի (717-728 թթ.) նախագահությամբ Մանազկերտում հրավիրված եկեղեցաժողովում կրկին նզովեց չորրորդ Տիեզերաժողովը, պաշտոնապես չեղյալ հայտարարեց Կարինի միաբանությունը և հավատո միություն հաստատեց հակաքաղկեդոնական (հակոբիկյան) ասորիների հետ<sup>60</sup>:

57 Տես Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն*, էջ 339-340:

58 «Եւ գեղկելի ներսիսի գրեանն, գորս լցեալ էր յարկեղս լի հերձուածովք, առեալ զամենայն ես ի գեան Տրտու...» (Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն*, էջ 340):

59 Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն*, էջ 349: Արցախ աշխարհի ուղղափառ համայնքների պատմության համար ուշագրավ է Դասնո վանքի կամ Հոռոմաշենի (Գանձակի շրջանի Գյուլամբար գյուղի մոտ) պատմությունը, որն ըստ տեղի ավանդազրույցի՝ 751 թ. հիմնել են Բյուզանդիայից, հավանաբար պատկերամարտության պատճառով փախած վանականները: Վանքն ավերվել է խորհրդային տարիներին (տես Զալալեանց, *Ճանապարհորդութիւն*, մ. Ա, էջ 162. Կարապետյան, *Հյուսիսային Արցախ*, էջ 486, 545):

60 Տես Տէր-Մինասեանց, *Յարաբերութիւնները*, էջ 205:



Գլուխ Գ \_\_\_\_\_

«ՅԵՐԿԻՐԱ ԱՆՅԱՑ»

«ԾԱՅԹ» ԿԱՄ  
«ԱՐՔԱՅՈՒՆ» ՀԱՅԵՐԸ

Արաբական տիրապետության շրջանում ուղղափառ հայերը հայտնի են դառնում «ծայթ» («ծայդ») անվանումով: Հայագիտության մեջ վերջինիս ստուգաբանության վերաբերյալ տարբեր տեսություններ են առաջարկվել, սակայն դրանցից ոչ մեկը կարծես համոզիչ չէ<sup>1</sup>:

1787 թ. Վանքի Ավետարանի կազմի վրա հիշատակված «զայտակացի» ձևի վրա հիմնվելով մենք արդեն առաջ ենք քաշել այն տեսակետը, որ «ծայթը» ծագում է արաբերեն «սայեդ» բառից, որը նշանակում է «տեր», «տիրակալ» և այդպիսով, նույնական է ուղղափառ քրիստոնյաների արաբերեն մեկ այլ՝ «մալաբիլը» (=մելքիտ), այսինքն՝ «թագավորական» անվանման հետ. մուսուլման արաբներն այսպես էին անվանում օրթոդոքսներին՝ ցույց տալով, որ նրանք Բյուզանդիո կայսեր հավատակիցներն են<sup>2</sup>: Մյուս կողմից, «ծայդը» մոտ է եղել արաբերեն «ջա'հրդ» բառին, որ նշանակում է «հավատուրաց»<sup>3</sup>: Ահա այսպես առաջ է եկել հետազոտողներին այդքան զբաղեցրած ու շփոթեցրած բառախաղը. քաղկեդոնական հա-

յերն իրենք իրենց «ծայթ» են անվանել՝ նկատի ունենալով «սայեդի» նշանակությանը, իսկ հակաքաղկեդոնականները նրանց անարգաբար «ծայթ» են հորջորջել՝ նկատի ունենալով «ջահրդի» իմաստը<sup>4</sup>:

Ն. Մառի տեսության համաձայն՝ արաբերեն «մելքիտի» հայկական համարժեքն է «արքայուն» բառը, որը Միջին Ասիայում ու Չինաստանում բնակություն հաստատած ուղղափառ հայերից մոնղոլերենին է անցել և XIII-XIV դդ. սկզբնաղբյուրներում ու Ռսկե հորդայի վավերագրերում «քրիստոնյա» իմաստով կիրառվել<sup>5</sup>: Եվ փաստորեն, «ծայթը» նույն բանն է նշանակում, ինչ և՝ «արքայունը»:

Հետաքրքրական է նշել, որ հայտնի են «ծայթ» արմատով տեղանուններ, որոնք ուղղափառ հայոց բնակավայրերն են եղել: Դրանցից է, օրինակ, Կապադովկիայի Մաթ գյուղը, ինչի մասին է խոսում 1410 թ. Մխիթար Ապարանեցու հետևյալ վկայությունը. «...Ոմանք ի Յունաց և ռմանք ի Հայոց, որք մերձակայք են այնմ գաւառին (Կեսարիոյ) և երկրին, որք կոչին Մայթ Յոյնք և Մայթ Հայք, որք ամենեւին դաւանութեամբ և օրինօք և պարագայիւք նոյն են Մայթ Հայքն ընդ նոյն Յունաց...»<sup>6</sup>:

1 Այդ կարծիքների մասին՝ հարակից գրականությամբ, տես Бартикийн, «Гаврас», I, էջ 184-190:

2 Տես Ղազարյան, «Ակնի», էջ 225:

3 Տես Peeters, «Sainte Shoushanik», էջ 254-256:

4 Այդ բառախաղը նշմարվում է Պողոս Տարոնացու և Թեոպիստոսի պարագայում. նրանցից առաջինը «ծայթը» կիրառում է անարգական իմաստով, մինչդեռ Թեոպիստոսից մեջբերված հատվածներից երևում է, որ վերջինս այն օգտագործել է դրական նշանակությամբ (տես Պաղոս Տարոնացի, Թուղթ, էջ 517, 522): «Մայդ» կամ «հոռոմ» հասկացությունների աստվածաբանական հենքի մասին տես Ղազարյան, «Հայ հոռոմների», էջ 193-197:

5 Տես Мартъ, «Аркауны», էջ 41-68:

6 Ալիշան, Հայագատում, էջ 552-553:

Երզնկայի գավառում հայտնի են եղել Ծաթ (Ծաթեր) գյուղն ու նույնանուն գյուղակը, Ակնի շրջանում՝ Ծաթ գյուղը<sup>7</sup>: Տայքում հավանաբար կար Ծաթագրակ (թուրք. Զողգերեկ) գյուղը<sup>8</sup>: Քերես Շիրակում է գտնվել Անիի մայր տաճարի վիմագիր արձանագրություններից մեկում հիշատակված Ծաղնոց գյուղը<sup>9</sup>: Այս շարքում իհարկե պետք է նշել ներկայիս Քումանյանի շրջանի Ծաթեր գյուղը<sup>10</sup>: Մի կասկածելի տեղեկություն կա Փայտակարանում՝ Կուրի աջ ափին գտնված Ծաղ բնակավայրի մասին, որտեղ ընդհուպ XIX դ. մոտ 150 ընտանիք հայ հոռոմներ են բնակվելիս եղել<sup>11</sup>:

## ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՅՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅՈՒ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի (946-968 թթ.) վկայությամբ X դ. կեսերին քաղկեդոնականների թիվը Հայաստանում և Աղվանքում<sup>12</sup> չափազանց մեծ էր, ընդ որում Հոռոմոց կայսրության հետ դավանական միություն կողմնակիցներ կային նաև Հայաստանյայց Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության մեջ<sup>13</sup>:

Այսպես, 918 թ. Սյունյաց եպիսկոպոս ձեռնադրվեց Հակոբ Դվնեցին՝ «այր բարձրահա-

7 Տես ՀՀՇՏԲ, հ. Բ, էջ 828-829:

8 Տես Բաղայան, «Տայքի», էջ 456:

9 Տես ԴԶՎ, պր. 1, էջ 39: Զամարյանների շրջանի Շիրակում եղած ուղղափառ օջախների մասին տես Մուրադյան, *Վրացերեն արձանագրությունները*, էջ 134:

10 Տես Մելիքսեթ-Քեկ, «Պողոս Տարնեցի», էջ 43-44:

11 Տես Ալիևեան, *Կիրիոն*, էջ 78: Հավանաբար այստեղ ծաթերը շփոթվել են քաթերի հետ: Ի դեպ, արժե նշել, որ Մենվոզ աեղանունների շարքին է պատկանում նաև «Այրումը»՝ առաջացած բուրբական նույնանուն ցեղախմբից: Ըստ հետազոտողների՝ «Այրումները հայացած աղվանների և մասամբ հայերի բյուրբացած և իսլամացած սերունդներն են, որոնք VI դ. Հայաստանի բաժանումից հետո մնացին սահմանափակ գոտում՝ բյուզանդական կողմից և որոնց համար կիրառվում էր այրում անվանումը, որ բյուզանդահայտակ հայ էր նշանակում (Աгаев, «ДАННЫЕ», էջ 146): Ըստ այսմ «այրում» առաջացել է «հայ հոռոմ» անվանումից: Հօգուտ այս տեսակետի կան այլ փաստարկներ ևս, սակայն խնդիրն առանձին ավելի խոր ուսումնասիրության կարիքն ունի (տես Կարապետյան, *Հյուսիսային Արցախ*, էջ 16-18):

12 X դ. Աղվանի Բագրատունյաց կամ Շամիի թագավորության (վրացերեն՝ Հեռեթի) գահակալ Ատրնետսեհի մահվանից հետո նրա կնիքը Դենար Բագրատունին (Կղարջի Բագրատունիներից) Աղվանից Սահակ Բ (929-947 թթ.) և Գագիկ Ա (947-958 թթ.) կաթողիկոսների օգտին է լինելու՝ Իշխանիկի օգնությամբ տարածում էր Ուղղափառությունը (տես Անանուն, *Վրաց մատյանը*, էջ 203), սակայն այս գործընթացը կասեցվեց ինչպես կաեսենեմ, Անանիա կաթողիկոսի ջանքերով, Իշխանիկն էլ անցավ վերջինիս կողմը: Քաղկեդոնականները ավելի կայուն դիրք գրավեցին Վրաստանին անցած Շամիի թագավորության արևմտյան վրացամերձ տարածքներում, որտեղ առաջօր էր ուղղափառ ուսուցիչների մի հանրությունը (տես Բարխուդարյան, «Իշխանությունները», էջ 69-71): Ինչ վերաբերում է Դենար Բագրատունուն, ապա ըստ Գ. Գրիգորյանի՝ նա անփոփոխ էր Սյունյաց Վահանավանում Սբ. Գրիգոր Լուսավորիչ կաթողիկոսի հարավային մոտքի աղջկա: Նրա կողմին է թաղվել Սյունյաց իշխան Ջեվանշիրը՝ հայոց կաթողիկոս Վահանի հայրը (տես Григорян, «Несомненные», էջ 222-223): Բայց այսօր դրանում կարելի է կասկածել, քանի որ Դենար անունն էր կրում նաև Իշխանիկի կինը՝ Կոնստանտինա Կղարջի Բագրատունիներից: Արժե նաև նշել, որ հետագայում Դենարի կերպարը, միանյութվելով Քամար թագունու կերպարին, լի արտահայտություն է գտել ռուսական պատկերագրական հուշարձաններում (տես Овчинникова, «Повесть»):

13 Տես Անանիա Մոկացի, *Յաղագս ապստամբությանն*, էջ 256-258:





Սր. Մարգարեներ  
Որմնանկար, Տաթևի վանքի կաթողիկե, X դ.

սակ և գեղեցկատեսիլ, հանճարեղ և իմաստուն, քաղցրաբարոյ և հեզամիտ, լի ամենայն առաքինութեամբ»<sup>14</sup>:

Հակոբը Սյունիքում եկեղեցաշէն գործունեութիւն ծավալեց, վանքեր հաստատեց: Ուշագրաւ է, որ իր կառուցած եկեղեցիները Հակոբը ջանում էր զարդարել որմնանկարներով, ընդ որում նրա պատկերասիրութիւնը կանգ չէր առնում ոչ մի դժվարութեան առջև. Տաթևի վանքի կաթողիկեի համար «Յակոբ ետ ածել նկարիչս և զաւուխս որ է պատկերագործ ի հեռաւոր աշխարհէ Քռանդ ազգաւ. և զլուսաճեմ յարկս աստուածաբնակ տաճարիս բազում և անհուն ծախիւք ետ նկարել...»<sup>15</sup>:

Շուտով, սակայն, մեծ խնդիրներ առաջա-

ցան Հակոբ Սյունեցու և Անանիա կաթողիկոսի միջև: Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ հեռավորութեան ու կաթողիկոսարանի՝ հաստատուն նստավայր չունենալու պատճառով Հակոբը գաղարել էր Հայոց կաթողիկոսից մյուսն ստանալուց՝ սերտ կապեր հաստատելով Ազվանից կաթողիկոսութեան հետ: Յասմամբ լի Անանիան ժամանեց Սյունիք, որտեղ նրան ներկայացած Սմբատ և Զեվանշեր իշխաններն ու Հակոբ եպիսկոպոսը կաթողիկոսի ներումը հայցեցին, և այդպիսով հույզերը հանդարտվե-



Գնդեվանք՝ կառուցված Սոփի իշխանունու և Հակոբ եպիսկոպոսի կողմից

ցին: Բայց որոշ ժամանակ անց Հակոբի մասին նորանոր լուրեր հասան կաթողիկոսին, թե Հա-

14 Օրբելեան, Պատմութիւն, էջ 253:

15 Օրբելեան, Պատմութիւն, էջ 256-257: Եվրոպական արվեստի հետ սերտ աղերսներ ունեցող տաքլյան որմնանկարները, համաձայն Ս. Մանուկյանի հետազոտության, կատարել են իտալացի վարպետները (տե՛ս Манукян «Фрески Татева», էջ 313-317:

կորը «զետարով՝ Անձևացեաց եպիսկոպոսն նա շնզեաց ի ձէնջ, նաև հերձուածս ևս յօղէին էթէ քաղաքորբորեալ ունի և պճաղկեդոնին. և այնպէս խոռվութիւն և պատերազմ մեծ զարթուցին ի մէջ եկեղեցւոյ»<sup>16</sup>:

Սյունյաց առաջնորդն իրոք որ լուրջ քայլք էր կատարել՝ պաշտոնական հարաբերութեաններ մշակելու Բյուզանդական արքունիքի հետ. պահպանվել է կայսրութեան բարձրաստիճան պաշտոնյա Թեոդորոս Դաֆնոպատիսի պատասխան նամակը Սյունյաց եպիսկոպոսին՝ սրված շուրջ X դ. 30-ական թթ.<sup>17</sup>:

Դաֆնոպատիսի թղթից իմանում ենք, որ Հակոբն իր նամակում պաշտպանել է Քրիստոսի մեկ բնութեան վարդապետութունը, ինչն առաջացրել է արքունիքի զայրույթն ու ստիպել Թեոդորոսին՝ գրելու կոշտ պատասխան<sup>18</sup>: Հայտնի է, թե ի՛նչ շարունակություն է ունեցել այս նամակագրությունը, բայց ինքիսին խոստուն է այն փաստը, որ Հակոբ Սյունեցին դավանական

քննարկում է սկսել Հոռոմոց կայսրութեան հետ:

Միևնույն ժամանակ անկախանալու փորձ կատարվեց Աղվանից եկեղեցում: Ծագած խնդիրները հարթելու համար Անանիան մեկնեց Աղվանք, ապա՝ Սյունիք: Հակոբ եպիսկոպոսը, նրա ժամանման մասին իմանալով, թաքնվեց Բաղք ամրոցում՝ Ջեվանշեր իշխանի հովանավորության ներքո: Անանիան երկար ժամանակ մնաց Տաթևի վանքում՝ Ջեվանշերից պահանջելով Հակոբին, բայց ապարդյուն. «Ապա ոչ կարացեալ տեւել ի տեղւոջն զի ձմեռնային էր ժամանակն. սաստիկ ցասմամբ բարկացեալ սուրբ կաթողիկոսին աւերեաց զտեղին և քանդեաց և շարաշար նզովիւք կապեալ կաշկանդեալ խառնեաց ի տոռունս կապանաց զիշխանն և զեպիսկոպոսն. և անց, զնաց յիւր աթոռն»<sup>19</sup>:

Այս դեպքերից ինը տարի անց՝ 958 թ. Հակոբ եպիսկոպոսը, որն այդպես էլ չհաշտվեց Անանիայի հետ, մահացավ:

<sup>16</sup> Օրբելեան, Պատմութիւն, էջ 277: Ստեփանոս մետրոպոլիտ Օրբելյանի համար, որը կերտում էր Սյունյաց աթոռի փառապանծ պատմությունը և մեծ գովեստով էր խոսում Հակոբի անձի մասին, բնականաբար ծանր պիտի լինեք ընդունել Սյունյաց առաջնորդի հակաթեոնական լինելը. ուստի, փորձելով փրկել Հակոբի և Սյունյաց աթոռի պատիվը՝ նա արտահայտում է իր անձնական կարծիքը. «Եւ և ես իսկ զբարտաւն համարիմ զայսպիսի բանս և ոչ նշմարտութիւն զբարտա եպիսկոպոսին Յակոբայ, զի զի՛նչ փառք էր և պարծանք մնա թողոյ զմեծ աթոռն սրբոյն Գրիգորի լոսաւորչին և ծառայել խրում ծառայակցին որք և անկատար և քերի ունկին արեան շնորհին» (Օրբելեան, Պատմութիւն, էջ 277): Օրբելյանը, սակայն շտապում է փակել իր համար տեսան այս թեման հետևյալ արտահայտությամբ. «Բայց թողցով զայս քննել արդարադատին Աստուծոյ» (նույն): Օրբելյանի փաստարկը լավագույնս խոսում է այն մասին, որ Հակոբի ընդլզման պատճառը ոչ թե նվիրապետական էր, այլ ուրիշ՝ դավանական: Մաղաքիս արք Օրմանյանը, նկատարվող իրադարձությունները քննելով, ընդունում է, որ Հակոբը փաղկեղծնամեա էր. «...Յակոբին փաղկեղծնականութեան վրանը յարմար կու գար, վասն զի Աղուանից կողմը կը բռնէր, Աղուանք ալ շարունակ կը փորձուէին Վրաց հետեւի: Վրացիներն ալ հասանդնուպոլսոյ Յունական եկեղեցւոյն յարած էին...» (Օրմանեան, Ազգապատմութիւն, հ. Ա., 1281):

<sup>17</sup> Տես Θεόδωρος Δαφνοπάτης, *Επιστολή*:

<sup>18</sup> Թեոդորոսի թղթի հակիրճ վերլուծությունը տես Kazaryan, *Οι Αρμενοβυζαντινές*, էջ 244-247:

<sup>19</sup> Օրբելեան, Պատմութիւն, էջ 283:



Սարերների վանական համալիրի ընդհանուր տեսքը  
Լուսանկարը՝ Հ. Ղազարյանի


Հավանաբար X դ.՝ Գենարի օրոք է կառուցվել Գարեջի վանքից քիչ հեռու գտնվող Սարերեքի վանական համալիրի առաջին հայոց վանքը: Դրա եկեղեցու պատերը զարդարվել են որմնանկարներով, որոնց վրա եռալեզու՝ հայերեն, հունարեն և վրացերեն արձանագրություններ են: Որմնանկարների ոճը նման է կապագոթկյան հուշարձաններին, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ վանքը հիմնադրել են Կապագոթկիայից ժամանած «ծայթ» վանականները:



Սարերեքիի հայոց եկեղեցու որմնանկարներից  
Խաչիկոսյան տեսարանը՝  
հայերեն, հունարեն և վրացերեն մակագրություններով  
Լուսանկարը՝ Հ. Ղազարյանի

**Հակոբ Սյունեցու մահվանից հետո Անանիա Մոկացին շտապեց Սյունիք՝ վախենալով, որ**

\* Տե՛ս Հակոբյան, «Սարերեքիի որմնանկարները»:



Վահանավանքը, X դ.  
վերականգնված XX-XXI դդ.

երկրամասի եկեղեցական ապստամբությունը շարունակություն կունենա: Կաթողիկոսի մտավախությունները սակայն անտեղի էին. Սյունիքում նրան ներկայացան տեղի իշխանները՝ Վասակն ու բանադրված Զեվանշերը, որոնք Անանիայից ներողություն խնդրեցին ու թողություն ստացան: Ընդառաջելով նրանց խնդրանքներին՝ Անանիան Սյունյաց եպիսկոպոս ձեռնադրեց Զեվանշերի որդուն՝ Վահանավանքի առաջնորդ Վահանին: Սյունեցիները երզմնագիր տվեցին Անանիային առ այն, որ իրենք Հայոց աթոռին հավատարիմ կմնան և Աղվանքի հետ մտերմություն չեն անի:

Այս դեպքերից տասը տարի անց՝ 968 թ. Անանիա Մոկացին վախճանվեց: Ժողովական ընտրությամբ «վասն առաւել սրբութեանն եւ իմաստութեանն»<sup>20</sup> Հայոց հայրապետ ընտրվեց Վահան Սյունեցին: Շատ շուտով, սակայն, սկսեցին



Վահան Ա. կաթողիկոսը  
Մանրանկար, հեղ. Գ. Ղազարյան, 2015 թ.

լուրեր տարածվել այն մասին, որ Վահանը հերե-տիկոս է: Ասողիկի խոսքերով՝ «Սա ընդ քաղկե-դոնականս սիրելութիւն եւ հաճութիւն կամեցաւ առնել թղթով»<sup>21</sup>, իսկ Սամվել Անեցիին գրա մասին գրում է. «Սա դաշնագիր եղեւ ընդ Վիրս միաբան դաւանութեամբ... զի ետ բերել պատկերս վասն նորոգման աղանդոյն Քաղկեդոնի...»<sup>22</sup>:

Իսկ Ստեփանոս Օրբելյանը շեշտում է Վահանի պատկերասիրությունը. «...Սկսաւ պատկերս բերել ի Վրաց եւ դնէր ի վերայ սեղանոյն. եւ հրամայէր յամենայն եկեղեցիս զնոյն առնել, ըստ Հոռոմոց սահմանին կանխիք զարդարեալ եւ առանց կաւնի ոչ առնել պատարագ: Վասն որոյ կարծիս իմն առեալ ամենեցունց եթէ դաշնագիր է ընդ Յոյնս և կամի սպրդել յեկեղեցի զաղանդ նոցին ...»<sup>23</sup>:

Վահան կաթողիկոսի «մեղքն» իհարկե պատկերասիրությունը չէր. պատկերասիրությունը պարզապէս արտաքին արտահայտությունն էր ավելի լուրջ մի իրողության. Հայոց եկեղեցու գահակալը հավատո միաբանություն էր հաստատել բյուզանդացիների հետ. ներսես Լամբրոնացու վկայությամբ՝ «Վահան կաթողիկոս ի ժամանակս Վասլի և Կոստանդեայ ձգեցաւ ի հելլենացոց հաղորդութիւն և նովին աշտիճանան պատուեցաւ ի նոցանէ»<sup>24</sup>: Նրա այս քայլը զրգոեց

20 Օրբելեան, Պատմութիւն, էջ 289:

21 Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, էջ 756:

22 Սամուէլ Անեցի, Ժամանակագրութիւն, էջ 175:

23 Օրբելեան, Պատմութիւն, էջ 289:

24 Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածութիւն, Յատկում, էջ 27: Ուշագրավ է, որ Լամբրոնացին Վահանի այս քայլի մասին գրում է անտիոքացի «ժայք» և «արգելական ճգնափոր» Հոսիկին, և այն է՝ Նգր կաթողիկոսի միութեան հետ հիշատակելով: Անտաքար, Վահանի միավորումը նույնքան հայտնի իրողություն էր, որքան և Նգրինը: Հոռոմոց հետ Վահանը կապ է հաստատել Մելիտենեի Թեոդորոս մետրոպոլիտի միջոցով. քանի որ պահպանվել են նրանց նամակագրության մասին անշեկոյնություններ (տես Պաղոս Տարանացի, Թուղթ, էջ 475. հմմտ. Չամչեանց, Պատմութիւն, հ. Բ, էջ 840):

հայոց Աշոտ Ողորմած թագավորի (953-977 թթ.) ցասումը. Բագրատունի արքան հրամայեց Անիում ժողով գումարել: Չսպասելով իրեն դատապարտելիք եկեղեցածողովի գումարմանը՝ Վահան կաթողիկոսը մեկնեց Վասպուրականի թագավորություն<sup>25</sup>, որտեղ նրան սիրահոժար ընդունեց Աբուսահլ-Համազասպ թագավորը (958-968 թթ.): Վասպուրականում կաթողիկոսի կողմնակիցներից մեկը դարձավ Երիտասարդ Գրիգոր Նարեկացին (947/949-1003 թթ.)<sup>26</sup>:

Անիում հավաքված ժողովականները կաթողիկոս ընտրեցին Ստեփանոս Սևանցուն: Երկու կաթողիկոսները միմյանց հանդեպ բանադրանք արձակեցին, իսկ 973 թ. երկուսն էլ միաժամանակ մահացան<sup>27</sup>:




Սբ. Գրիգոր Նարեկացու հրաշքը  
Մանրանկար, հեղ. Գ. Նազարյան, 2004 թ.

25 Վասպուրականի թագավորությունն ընտրելը պատահական չէր. դեռևս Խաչիկ-Գագիկը (908-943 թթ.)՝ այդ թագավորության հիմնադիրը, Ռոմանոս I Լակապենոս կայսեր (920-944 թթ.) և Կոստանդնուպոլսի հայրապետին դիմել էր մի նամակով, որտեղ տեղեկացնում էր դավանաբանական իր փնտրտումների, հայոց վարդապետների՝ իրեն առաջարկած պատասխանների մասին: Այս թղթում Գագիկն իրեն հայտնում է որպես «ցանկացող կապակցութեան սիրոյ, եւ ծառայական հարկատրութեան առ բարեպաշտ թագաւորդ եւ առ սուրբ հայրապետդ հաւատարմացուցանել, եթէ արդե՛մ հնարատուրել ի բաց բառնալ գկրնիմն՝ որ կայ ի միջի... եւ զմիջնորմն յառակել...» (Գրիգ Թղթոց, էջ 549):

26 Այդ մասին է վկայում Ներսես Լամբրոնացին իր «Ատենաբանութեան» մեջ. պատասխանելով հակառակորդների այն հարցին, թե ինչու՞ ոչ ոք չի բացահայտել երկու բնությունների մասին վարդապետության ուղղափառությունը՝ Լամբրոնացին քննադատում է նշանավոր այն անձանց, որոնք հենց այդ վարդապետությունն են որպես ուղղադավան ընդունել. «Ապա թէ ոչ՝ ո՞ր դիցում գրանա... Ձեզրի հայրապետին, եւ զիրոյ ժողովոյն զհաւանութիւն: ՉՎահանայ հայրապետին զհամաձայնութիւն առ մեծ եկեղեցին Հռոմոց, եւ զնորին հետետղաց թագաւորացն եւ վարդապետաց, յորոց մի էր եւ իմն աստուածաշնորհ՝ եւ յոգունց գեւազանց՝ հրեշտակն ի մարմնի Գրիգոր Նարեկացի» (Ներսէս Լամբրոնացի, *Ատենաբանութիւն*, էջ 94): Հետագայում, արդեն Վահանից հետո, իշխանությունները Գրիգորին փորձեցին դատել որպես հերետիկոսի, ինչպես դրա մասին տեղեկացնում է սրբի ծերեցցյան վարիչ (XV դ.). «Ձի ջան եւ փոյթ էր սրբոյն միաբանութեան եկեղեցեաց, զի գեղծեալ եւ զանփոյթ արարեալ կարգս եկեղեցոյ սրբոյ ի ծուլից եւ ի մարմնաստր առաջնորդաց կամր հաստատել եւ վերստին նորոգել: Վասն որոյ այսպանէին գնա բիրտ եւ սուր մարդիկք եւ համբաւէին գնա ծայր...» (ՄՄ, թիվ 7379, 353բ): Ըստ նույն հուշարձանի՝ իշխաններն ու եպիսկոպոսները պատվիրակներ ուղարկեցին՝ Նարեկացուն դատաւարության տանելու, բայց Գրիգորի գործած հրաշքից հետո այդ մտադրությունն ի կատար ածելն անհնար եղավ: Այս եւ հարակից հարցերի մասին տես Kazaryan, *Օր Արմեոսոսն շնորհնէս*, էջ 150-155:

27 Այս տեղեկությունը գալիս է Ասողիկից և համընդհանուր ընդունելության է արժանացել, սակայն Հակոբ Սանահնեցին, որն Ասողիկից անկախ պատմագրական ավանդույթ է ներկայացնում և որը մեզ է հասել Մատթեոս Ուտհայեցու միջնորդությամբ, Վահան կաթողիկոսի մահը թվագրում է շուրջ 983 թ. (Մատթեոս Ուտհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 33, 34): Վահան Սյունեցու կյանքի և



Հատված  
Նարեկացու ծեղկնայան վարքից

Ահիում նոր կաթողիկոս ընտրվեց իսաչիկ Ա Աղաբունին (973-992 թթ.):


Այս ամբողջ զարգացումները սպառնալիք էին հակաբաղկեղոնականների համար, ուստի նրանք փնտրեցին քայլերի դիմեցին: Դեռևս Անանիա կաթողիկոսի պահանջով Աբաս Բագրատունի թագավորը (929-963 թթ.) արգելեց երկու դավանափոխումների ներկայացուցիչների միջև ամուսնափոխումները, հավանաբար նաև պատժիչ միջոցառումների ձեռնարկեց<sup>28</sup>: Մոկացի կաթողիկոսի հրահանգով քաղկեդոնականների մկրտությունն անվավեր հայտարարվեց, և հաստատվեց նրանց վերամկրտությունը<sup>29</sup>: Վահան Այունեցու դեպքե-

րից հետո՝ իսաչիկ Ա կաթողիկոսի օրոք, «ծայթ» հայերի բնակավայրերի վրա ըստ երևույթին արշավ է կազմակերպվել՝ նպատակ ունենալով նրանց բռնի վերամկրտությունը, ինչը սակայն տապալվել է վերջիններիս զինված դիմադրության շնորհիվ<sup>30</sup>:

## ԿՂԱՐՁՔԻ ԵՎ ՏԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում ուղղափառ հայության կենտրոններից էր Տայքը, որն սկզբնապես Մեծ Հայքի 15 նահանգներից մեկն էր և Ք. հ. III դ. սկսյալ՝ Մամիկոնյան նախարարական տան ժառանգական տիրույթը<sup>31</sup>:

Տայքն օրթոդոքս հայոց բնակավայր էր դար-



Չորդվանի բազիլիկը. 984 թ.

<sup>28</sup> Անանիայան մասին տեղեկությունների ֆննդությունը տես Kazaryan, *Oi Armevoβuζantines*, էջ 135-142:

<sup>29</sup> Տես Անանիա Մոկացի, *Յաղագս ապստամբության*, էջ 259:

<sup>30</sup> Տես Մտեփանոս Ասողիկ, *Պատմություն Տիեզերական*, էջ 754:


<sup>31</sup> Հ. Մեթեն Ալիևյանն ու Հ. Բարթիկյանն այսպես են մեկնաբանում Ուլստանեսի՝ «ծաք ազգի» մկրտության մասին կցկտոր տեղեկությունները (տես Ուլստանես, *Պատմություն Հայոց*, էջ 454. Ալիևեսան, *Կիրոսն*, էջ 79-80. Бартикян, «Гаврас», II, էջ 188-190):

<sup>32</sup> Եփրեմասի պատմության և մշակութային ժառանգության այլևայլ հարցերի շուրջ տես *Պատմական Տայք*:

ձել բավականին վաղ. «Պատմութեան» համաձայն՝ երբ 618 թ. Հայաստանի բյուզանդական մասն անցավ պարսիկներին, և Հովհաննես Բագարանցի կաթողիկոսը գերվեց, «Աբրահամ կաթողիկոսը ստիպեց Հովհաննեսի բաժնի եպիսկոպոսներին նզովել Քաղկեդոնի ժողովը, հակառակ դեպքում հեռանալ Հայաստանի շրջաններից: Վերջիններս չհամաձայնվեցին և նրանցից ոմանք անցան Տայք, ոմանք հոռոմոց երկիրը և վախճանվեցին օտարության մեջ»<sup>32</sup>:

VIII դ. վերջում, երբ Մամիկոնյան տունը թուլացավ և, արաբներից հետապնդվելով, Բյուզանդիա հեռացավ, Տայքն ու Տարոնը Մամիկոնյանների մրցակից Բագրատունիներին անցան:

VIII դ. 30-ական թթ. Տայքն ու դրանից հյուսիս ընկած Կղարջքը ենթարկվեցին արաբական զորքերի ասպատակություններին: Դրանց հաջորդեց համաճարակը, այնպես որ ողջ երկրամասում՝ անտառային գոտիներում, սակավաթիվ մարդարնակ բնակավայրեր մնացին<sup>33</sup>: Ահա այս ավերածությունից ու ամայացումից հետո Տայքում բնակություն հաստատեցին Վիրքից ժամանած վանականները, որոնց համար գրավիչ էր երկրամասի անդորրն ու անառիկությունը: Մոտավորապես VIII դ. կեսերին նրանց առաջին խումբը բնագրվեց լքված Օպիզա վանքում, իսկ ավելի ուշ երկրամասում վանական կյանքը հաստատելու ուղղությամբ կարևոր գործունեություն ծավալեց Գրիգոր



Խանձտա վանքը, X դ.

Խանձտացին (759-861 թթ.): Իր աշակերտների հետ նա կառուցեց Խանձտա Սբ. Գևորգ վանքը և միաբանություն հիմնեց: Խանձտացու հիմնած վանքն էր նաև Շատրեբրդի մենաստանը: Այս ամենը Տայքում վանական կյանքի տարածման ու զարգացման սկիզբ հանդիսացավ, և Անշիի եպիսկոպոսի կողմից Գրիգորը Կղարջքի բոլոր 12 վանքերի արքիմանդրիտ (վանահայր) նշանակվեց, իսկ նրա ազգական Սաբանը, ներսեսաշեն Իշխանի տաճարը վերանորոգելով, Իշխանի թեմի եպիսկոպոս ձեռնադրվեց:

Նկեղեցական կյանքի աշխուժացումն ընթացավ երկրամասի քաղաքական զարգացմանը զուգահեռ: Այսպես, 899 թ. հայոց առաջին Բագրատունու զարմիկ և Կղարջքի տիրակալ Ատրներ-

32 Բարթիկյան, «Narratio», էջ 467:

33 Տե՛ս Григорий Мерчуле, *Житие*, էջ XV-XVI:



Աստվածամայրը  
Մանկան հետ և  
Դավիթ III թագավորի՝  
կյանքի օրոք բանդակված  
գլխանկարը Յշկ վանքից

սեհը Սմբատ Ա (891-914 թթ.) թագավորի ձեռքով թագադրվեց և հռչակվեց Բագրատունյաց տերության երկրորդ անձը<sup>34</sup>: X դ. կղարջքի թագավորությունը «կյուրապաղատությունը» հետզհետե տարածվեց դեպի հարավ ներառելով Շիրակի Բագրատունիներին պատկանող Տայքը<sup>35</sup>:

X դ. Տայքի տիրակալ ու Վրաց փաստացի թագավոր դարձավ Բագրատունի Դավիթ Գ կյուրապաղատը (960-1001 թթ.), որը տարածաշրջանի ազդեցիկ

գործիչներից էր և հոգևոր մշակույթի մեծ հովանավոր<sup>36</sup>:

Դավթի օրոք կառուցված հուշարձաններից է Յշկ վանքը (963-973 թթ.): Հովհաննես Մկրտչին նվիրված այս մենաստանը, որ ճարտարապետական մի գոհար է, Տայքի հոգևոր-մատենագրական կարևորագույն կենտրոնն է եղել: 978 թ. հենց այստեղ է գրվել վրացերեն հնագույն ամբողջական Աստվածաշունչ մատյանը: Դավթի օրոք են կառուցվել նաև Խախու (վրաց. Խախուցի), Չորդվան և Պարխարի մենաստանները:

Տայքը հայ-վրացական սերտ համագործակ-



Պարխարի բազիլիկը, X դ.

ցույցից ու փոխազդեցության գոտի էր: Այստեղի վանական հաստատություններում եռանդուն թարգմանչական-գրական գործունեություն էին ծավալել տեղի հայ ու վրացի վանականները: Սա մի մեծ խթան հանդիսացավ վրաց մատենագրության ու մշակույթի զարգացման համար: Փաստորեն, հենց Տայքում է հիմնվել վրաց գրականության նոր դպրոցը և այստեղ է




Խաչկույր իշխանի տանուրից, 973 թ.  
Պատվիրատու՝ Իշխանի եպիսկոպոս Իլարիոն Վրաստանի արվեստի պետական թանգարան

<sup>34</sup> Տես Եղիազարյան, Հայ Բագրատունիների, էջ 65-67:

<sup>35</sup> Տես Ակոպով, Տայք, էջ 32:

<sup>36</sup> Դավիթ թագավորի ծագման, կյանքի և գործունեության, ինչպես նաև հարակից խնդիրների մասին տես Ճանաչեան, Դավիթ կյուրապաղատ:





Օշկի կաթողիկեի ներսը

սկիզբ առել նրանց մշակույթի ոսկեդարը, որն իր գագաթնակետին հասավ XII դ.<sup>37</sup>:

Պետք է նշել, որ տայեցի ուղղափառ հայոց շրջանակներում հայերեն լեզուն պահպանում

էր իր նշանակությունը, թեպետ ծիսական լեզուն վրացերենն էր<sup>38</sup>: Այսպես, X դ. Տաջրում ընդօրինակված վրացերեն մի Շարակնոցում գրիչը հայերեն նշումներ է արել<sup>39</sup>: Նույն ժամանակաշրջանում Գավիթ Կյուրապաղատի և նրա պալատականների համար արաբերենից Տայոց բարբառի է թարգմանվել «Զրոյց Պղնձէ քաղաքի» հեքիաթ-առակը<sup>40</sup>: Հայտնի են նաև տայքյան ձեռագրեր և մանրանկարներ եռալեզու հայերեն, վրացերեն ու հունարեն գրություններով<sup>41</sup>: Բացի այդ, հայկաբանություններ կան տեղի վրացական հուշարձաններում, ինչը բնականաբար խոսում է հայոց լեզվի վրացերենի վրա ունեցած ազդեցության մասին<sup>42</sup>:

Քանի որ Կղարջքի և Տաջքի թագավորությունն իր իշխանության տակ էր ամփոփել հայկական ու վրացական տարածքներ, ապա պետության հիմքում դրվեց հպատակների ոչ թե ազգային, այլ դավանական միության գաղափարը: Այսպիսով, Տայոց Բագրատունիները հավակնում էին իրենց իշխանությունը տարածել վրաց կա-

37 Ըստ Լ. Մելիսեթ-Քեկի «“Տայ-Կղարջեան” շկոյան վրաց հին գրականութան մէջ հայերի համար յատկապէս նշանակալից է այն տեսակետից, որ չը նայած հայ և վրաց բոյր եկեղեցիների պաշտօնապէս բաժանման... գրական ասպարէզում դեռ էլի շարունակում էր երկու հարևան և եղբայրակից ժողովուրդների փոխադարձ շփումն» (Մելիսեթ-Քեկ, «Հայերը», էջ 35):

38 Տես Григорий Мерчуле, *Житие*, էջ XVI: Վրացերենն՝ որպէս ծիսական լեզվի կարգավիճակն ունէր քաղաքական նպատակ և կոչված էր վրաց իշխանությունների, վրացապատկան տարածքների միավորվող շաղախը դառնալու: Խնդրի այլ կողմին անդրադառնալով՝ Պ. Մուրադյանը նշում է «Հարկավ վրաց իշխանությունների տիրույթներում հայտնված հայկական համայնքները (Տայֆում-Կղարջում, Գարե-Կախերում, Արեշում և այլուր) չէին կարող անջրպետվել այն հասարակությունից, որի մասն էին կազմում, ուստի վրացերեն լեզվի իմացությունը նրանց միջավայրում գորեղանում էր՝ տեղ-տեղ նույնիսկ մայրենիի հաշվին, իսկ հայերենը տակավին մատչելի էր վրաց հոգևոր շրջանակներին» (Մուրադյան, *Հին Թիֆլիսի*, էջ 127):

39 Տես Արուստե, «10-րդ դարի վրացերեն»:

40 Տես Ակիմեան, «Զրոյց»:

41 Օրինակ՝ դրանցից են 936 թ. Շաքերդում գրիչ Թեոդորոսի ընդօրինակած Զրուշի Ավետարանը, 973-976 թթ. գրված Շաքերդի ձեռագիրը ևն (տես Мурадян, «Грузинские приписки», էջ 82-84):

42 Տես Арутюнова-Фиданян, *Армяне-халкидониты*, էջ 80-81:

Թաղկոսություն հոտ կազմող օրթոդոքս բնակչության վրա՝ ի տարբերություն Շիրակի Բագրատունիների, որոնք իրենց հովանավորության տակ էին առել Հայոց կաթողիկոսությունը: Այս շրջանի մեջ Կղարջբի և Տայբի թագավորությունը մրցակցում էր Աբխազիայի թագավորության հետ: Մարտը շահեց հենց Աբխազաց պետությունը, երբ Բագարատ Գ Բագրատունին (978-1014 թթ.) դարձավ Աբխազիայի, Քարթլիի, Կղարջբի ու Տայբի մի մասի թագավորը<sup>43</sup>: Սրանով սկիզբ դրվեց Վրաց միավորյալ թագավորությանը, որն իր ծաղկման գագաթնակետին հասավ XII դ. վերջում-XIII դ. սկզբում:

## ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XI դ. երկրորդ կեսին սելջուկները նվաճեցին Հայաստանը և 1071 թ. Մանազկերտի նահատամարտից հետո Փոքր Ասիա առաջադրանք: Սելջուկներին հպատակված երկրներից էր Վրաստանը, որը սակայն, շուտով հզորացավ ու հովհասի ամենահզոր տերությունը դարձավ: Վրաց թագավորին էր ծառայում նախկին Անիի թագավորության զորքի մի մասը, իսկ թամար



Պղնձահանի Սր. Աստվածածին վանքի կաթողիկեն

թագուհու (1184-1209 / 1213 թթ.) պալատում ամենաազդեցիկ անձինք էին հայազուն իշխաններ Զաքարե և Իվանե Զաքարյանները: Նրանցից առաջինը հայ-վրացական զորքի «սպասալարն» էր՝ զորավարը, իսկ Իվանեն ուներ «աթաբեկ», այսինքն՝ «թագաժառանգի խնամակալ» պատվավոր տիտղոսը: Իվանեն իր եղբոր պես սկզբնապես Հայ եկեղեցու անդամ էր, սակայն հետագայում Ուղղափառություն ընդունեց՝ մկրտվելով Վրաց եկեղեցու<sup>44</sup>:

1196-1207 թթ. Զաքարեն ու Իվանեն սել-

<sup>43</sup> Պատմական այս բարդ գործընթացների մասին մանրամասն տես Եղիազարյան, Վրաց Բագրատունիների:

<sup>44</sup> Հուսակ հայտնի չեն ոչ Իվանեի այդ ֆայլի դրդապատճառները, ոչ էլ նշգրիտ թվականը: Ըստ Գանձակեցու՝ «Իսակ յառաժեշտ յաղանդն Քաղկեդոնի, յոր կործանեալ էին վիրք, զի սիրեաց նա զփառսն մարդկանց առաւել քան զփառսն նաւանայ, հրապուրեալ նա ի քաղաւստյն՝ որ Թամարն կոչէր...» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 166): Անշուշտ, սակայն պատմիչի այս զգացական տողերին դժվար է անվերապահ հավատ ընծայել: Վրաց մատենագրության մեջ կա մի երկ, որը հանգամանալից պատմում է Իվանեի դարձի մասին՝ այն մի հրաշքի հետ կապելով, սակայն, չնայած այստեղ պատմական վտղ պատմական ուշագրավ մանրամասնություններին, երկը ևս անվստահելի է (տես Անանուն, Թագակիրներ, էջ 16-19): Առավել իրական է այն տեղեկությունը, թե Իվանեի ընտրությունն աստվածաբանական գրականության մեջ յառամուխ լինելու արդյունք է եղել (Անանուն, Թագակիրների, էջ 11): Ինչ վերաբերում է ժամանակագրությանը, ապա վերջնական վրացական երկի համաձայն՝ Իվանեի դարձը տեղի է ունեցել Վրաց Հովհան Ե կաթողիկոսի օրոք՝ 1208-1210 թթ.: Երբ ժամանակահատվածը ստույգ չէ, քանի որ 1196-1199 թթ. առաջ կառուցված Թեժառույփն արդեն վկայում է դրա շինարարի՝



Իվանե Զաֆարյանը  
Մանրանկար, հեղ. Գ. Ղազարյան, 2015 թ.

չուկներից ազատագրեցին Հայաստանի մի մեծ մասը: Այդ տարածքները մտան Վրաց թագավորության կազմի մեջ, բայց կառավարվում էին տեղի հայ իշխանական տների կողմից: Այսպես, Անիի թագավորության տարածքները որպես սեփականություն անցան Զաքարեի, իսկ Արարատյան դաշտն ու Գեղարքունիքը՝ Իվանեի տներին: 1212 թ. Զաքարեի մահվանից հետո Իվանեն հայկական հողերի ամենաազդեցիկ իշխանավորը դարձավ: Նրա իշխանությունն անցավ այլևայլ զավթիչների դեմ մղված պայ-

քարով: 1207 թ. Իվանեն իր Թամթա դստերը կնուխյան տվեց Խլաթի սուլթանին, ինչի շնորհիվ հայկական հարավային տարածքներում հաստատված մահմեդական այդ ամիրայության քրիստոնյաների վիճակը մեծապես բարելավվեց. նրանցից գանձվող հարկերը թեթևացվեցին կամ ընդհանրապես վերացվեցին<sup>45</sup>:

1227 (կամ 1234) թ. Իվանեն, որը գաղտնի վանական ուխտ էր արել, մահացավ ու թաղվեց Պղնձահանքի Սբ. Աստվածածին վանքում: Աթաբեկությունը ժառանգեց նրա որդի Ավագը, իսկ սպասալարությունն ստանձնեց Զաքարեի որդի Սարգիս Շահնշահը: Վերջինս հոր մահվանից հետո դաստիարակվել էր Իվանեի տանը: Թե՛ Ավագը, թե՛ Շահնշահն ուղղափառ էին: Վրաց թագավորության մեջ նրանք պահպանեցին իրենց հայրերի զբաղեցրած բարձր դիրքն ու հեղինակությունը:

1236 թ. մոնղոլները, որոնք մինչ այդ մի քանի անգամ արդեն ասպատակել էին Կովկասը, նոր արշավանք սկսեցին: Նրանք գրավեցին բազմաթիվ բնակավայրեր, այդ թվում Թիֆլիսն ու Շահնշահի նստավայր Լոռեն: Ավագին հաջողվեց պատսպարվել Կայան բերդում, սակայն տեսնելով պաշարված ժողովրդի տառապանքը, նա որոշեց անձնատուր լինել մոնղոլներին: Վերջիններս, գնահատելով Ավագի անձնագործ արարքը, մեծապես պատվեցին նրան և ապահովեցին Ավագին ենթակա տարածքների անվտանգությունը<sup>46</sup>:

Մոնղոլների խանի մոտ գնալով՝ Ավագը նրա-

Իվանեի ուղղափառ լինելու մասին (տե՛ս Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 120):

45 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 165-166:

46 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 254-257:



Քրիստոսի Մնունդը  
Որմնանկար, Պղնձահանքի վանքի կաթողիկե, XIII դ.  
Լուսանկարը՝ ՀՃՈՒՀ

Պղնձահանքի Սբ. Աստվածածին վանքի կաթողիկեի խորանը նրանց պատվվեց որպես տարածաշրջանի «մեծ իշխան»։ մոնղոլները նրան հանձնեցին երկրի կառավարումը, իսկ հայ իշխանական տները Ավագին իրենց հպատակությունը հայտնեցին<sup>47</sup>։ Շահնշահը ևս, մոնղոլների հետ հաշտության պայմանք կնքելով, հաստատվեց Անիում։

1250 թ. վախճանված և Պղնձահանքում հոր կողքին թաղված Ավագին հաջորդեց Շահնշահի որդի Զաքարեն, որին 1261 թ. ապստամբության կեղծ մեղանդրանքով մոնղոլներն ապանեցին։ Վշտաբեկ Շահնշահը սրանից հետո

մահացավ ու թաղվեց Քոբայրավանքում<sup>48</sup>։ Զաքարյանների իշխանությունն աստիճանաբար թուլացավ ու վերացավ։ Դրա պատճառներից էր Զաքարյանների գերակայությունից ազատվել ցանկացող և ինքնուրույնության ձգտող իշխանների, նախևառաջ՝ Օրբելյանների կենտրոնախույս տրամադրությունները։

Զաքարյանների դարաշրջանի ուղղափառ հայ իշխաններից արժե նշել մի քանիսին։ 1266 թ. մոնղոլները Սամցխե-Ջավախք երկրամասի՝ Վրաց թագավորությունից անկախ իշխանավոր ճանաչեցին Սարգիս Զաղեցի (վրաց.՝ «Զաղե-լի») աթաբեկին, ինչից հետո գավառն ստացավ «Սաաթաբագո» («Աթաբեկի երկիր») անվանումը<sup>49</sup>։ Սարգսի որդի Բեքան մեծացրեց իր տիրույթները, այնպես որ նույն դարի 80-ական թթ.

<sup>47</sup> Վերակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 263։

<sup>48</sup> Տես Վիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 393։ Մաղախյա առք Օրմանյանը Զախաբեի ու Շահնշահի մահվան մասին նկատում է «Անոնց մահերն այ քրիստոնեկոստեան համար նահատակութիւններ նկատուած են» Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, 1954)։

<sup>49</sup> Տես Ալպոյանեան, Սահմանները, էջ 464։



Սարգիս Ա. (վանական դարձած),  
 Բեֆա Ա և Սարգիս Բ Զաղեցիները  
 Կախտորական որմնանկար,  
 Սափարավանքի (Ջավախք) կաթողիկե, XIII-XIV դդ.



Խուրլուրդա Մահկանաբերդցին  
 Որմնանկար, Հաղպատավանքի Սբ. Նշան եկեղեցի, XIII դ.  
 Կուսանկարը՝ ՀՃՈԻՀ

Խուրլուրդա աթարեկը, ինչպես Դավիթ Շինարար  
 Թագավորը և Իվանեն, մենաշնորհներ է արել Ավանի բնակիչներին  
 «վասն միամտության նոցա», այսինքն՝ նրանց դավանակցության համար:

**Սաաթաբազոն բնդգրկում էր Սպերը, Կարսը, Արտահանը, Տայքը, Կողը, Կղարջքը, Շավշեթը, Աճարան, Բորժոմի հովիտը, Ջավախքը<sup>50</sup>: Նույն ժամանակաշրջանում վրաց ամիրսպասալարն ու ամենազաղեցիկ դեմքերից էր Մահկանաբերդի տիրակալ Խուրլուրդա Արծրունին, որի հայրը՝ աթարեկ Սադուն Մահկանաբերդցին, Վրաց թագավորության փաստացի տերն էր<sup>51</sup>:**

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔ

Իվանեն ու իր հաջորդները հավասարակշռված ներքին քաղաքականություն են վարել. օրթոդոքս լինելով հանդերձ՝ նրանք հարգանքով են վերաբերվել Հայ եկեղեցուն, հովանավորել նրա սպասավորներին ու վանքերին<sup>52</sup>, թեպետ հայերի ու վրացիների միջև դավանաբանական

50 Տես Անանուն, Ժամանակագրություն, էջ 60-61: Ակուպով, Տայք, էջ 51-52:

51 Պետք է նշել, որ Սադունը եղել է Հայ եկեղեցու անդամ: Նրա մասին տես Գասպարեան, «Սադուն Բ.»:

52 Օրինակ՝ Իվանեի հովանավորությամբ է Մխիթար Գոշը ճիմնել Գոշավանքը, Իվանեն օժանդակել և ապաստան է տվել մահմեդականներից հետապնդվող Աղվանից կաթողիկոսին (տես Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 182, 211, 216): Շաննշահի որդի Մխաբձեղն ու իր կին Վանենը, որոնք հովանավորել են Քոբայրը և այնտեղ էլ բաղվել, ամայացած Սանահինը տեսնելով «մահու շափ» վշտացել են ու շտապել այն շենացնել (տես Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 183-184): Մեկ այլ օրինակ. Թեժառույժում ամփոփված Բուբա «մեծ գորավարը» (մահ. շոտջ 1230 թ.), որը ևս ուղղափառ էր և ազատագրված Հայաստանի ամենանշանավոր տերերից մեկը, հովանավորել է Գեղարժունյաց Հայրավանքին, Սյունյաց Նորավանքին և Սանահինին (տես Մուր-



Աբրահամի գոգը և դրախտ մուտք գործող սրբերը  
Որմնանկար, Պղնձահանքի վանքի կաթողիկե, XIII դ.  
Լուսանկարը՝ ՀՃՈՒՀ

ուրք քննարկումներ և անգամ բախումներ էլ են եղել<sup>53</sup>: Զաքարյանների օրոք հայ և վրաց մշակութայինը նկատելի ծաղկում ապրեցին:

Իվանեի օրոք Հայաստանի առաջակա ուղղափառ կենտրոնն էր Պղնձահանքի Սբ. Աստվածածին վանքը: Սկզբնապես սա հայ առաջնական մենաստան էր, որը հավանաբար կառուցել էր 1188 թ. Տաշիր-Ձորագետի Կյուրիկե Գ (1145-1170 թթ.) անվանական արքայի գուտոր Մարիամը: Իվանեի Զաքարյանն այս վանքն ուղղափառ միաբանությունը հանձնեց և, Սբ. Աստ-

վածածին հոյակերտ կաթողիկեն կառուցելով՝ 1205-1216 թթ. շքեղաշուք որմնանկարներով զարդարեց<sup>54</sup>: Վանքն ըստ երևույթին Հայքի (Սոմխիթի) մետրոպոլիտի նստավայրն էր<sup>55</sup>:

Պղնձահանքում գրական-թարգմանչական գործունեություն է ծավալել Սիմեոն արեղան (շուրջ 1188-1255 թթ.): 1227 թ. Սիմեոնը օրինակել է մի ժողովածու, որտեղ ամփոփված են Գրիգոր Նյուսացու «Մեկնութիւն ժողովողին», «Մեկնութիւն Երգոց Երգոյն», «Խօսք յինն Երա-



Առաքյալների Հաղորդությունը (հատված)  
Որմնանկար, Պղնձահանքի վանքի կաթողիկե, XIII դ.  
Լուսանկարը՝ ՀՃՈՒՀ

վանք, Վրացերեն արձանագրությունները, էջ 124-126): Այս և այլ օրինակներ նկատի ունենալով, չափազանցություն պետք է համարել Պղնձահանքում այն տեղեկությունը, թե Զալալեղինի դեմ պատերազմելուց առաջ Իվանեի գորհերը «հպարտութեամբ մեծամեծս քննախն, և դաշինս եղեալ էին, երբ յաղթեսցեն նմա, զամենայն հայ մարդ ի կրօնս վրաց դարձուցեն, որք ընդ իշխանութեամբ ևնքս և զընդդմացեալսն՝ սրով բարձցեն» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 224):

<sup>53</sup> Տես Մուրադյան, Գոշի Թուղթը:

<sup>54</sup> Ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, խորանի որմնանկարների վրա աշխատել է Բյուզանդիայում (Բալկաններում) առավել առած մի հայ վարպետ: Եվս մեկ վարպետ եղել է կամ հայ, կամ հույն, իսկ մնացյալ վեցը՝ վրացիներ (տես Лидов, «Восстание Ахталы»: Лидов, Ростислу):

<sup>55</sup> Վախալտաի վկայությունից բացի՝ այս մասին կարող է վկայել սինթրոնը՝ խորանի աստիճանաձև զանավորակը՝ նախատեսված Երեմիայի և Բահամանների համար: Կաթողիկեի՝ ի սկզբանե որպես ուղղափառ տաճար կառուցված լինելու հանգամանքի մասին մեզ վերջում նրա ճարտարապետական առանձնահատկությունները՝ ցածր բեմը, խորանից պակասաբար բացվող մուտքերը ևն:



Միմեոն Պղնձամանեցու  
հիշատակարանը, 1227 թ.  
ՄՄ, ձեռ. թիվ 1013

նութիւնսն», «Յազագս Կուսութեան»,  
Նեմեսիոս Եմեսացու «Յազագս բնութեան մարդոյ»<sup>56</sup> երկերը (ՄՄ, ձեռ. թիվ 1013)<sup>57</sup>: Հետագայում Միմեոն Պղնձահանեցին վրացերենից հայերենի է թարգմանել այլաբնույթ երկեր. Պրոկլ Դիադոքոսի «Նադկապք աստուածաբանականք»-ը,

Հովհան Դամասկացու կոթողային «Աղբիւր գիտութեան» առաջին «Դիալեկտիկա» և երրորդ՝ «Ամանդութիւն ուղղափառ հաւատոյ»<sup>58</sup> մասերը ևն<sup>59</sup>: Միմեոնը թարգմանել է նաև Հովհան Մինայեցու «Սանդուխք»-ի վերջին 10 գլուխները<sup>60</sup>: Թարգմանական գործունեությունից բացի, Միմեոնը հանդես է եկել որպես ինքնուրույն հեղինակ՝



Ուրակոզմ խաչի Բանդակ՝ վրացերեն արձանագրություններով  
Հնեվանք, 1200-1206 թթ.

իր խորհրդածություններն անելով ժամանակվա աստվածաբանական խնդիրների շուրջ<sup>61</sup>: Պրոկլ Դիադոքոսի երկի հիշատակարանում Միմեոնը գրել է. «Թարգմանեցաւ գիրքս... ձեռամբ Միմէժոնի անպիտան քահանայ կրօնաւորի ի վրաց լեզուէ ի հայ լեզուս. յերկիրս Հայոց՝ ի վանս Վրաց որ կոչի Պղնձահանք... Աղաչեմ զձեզ, ով եղբարք, զի յոյժ աշխատութեամբ թարգմանեցի ... զի յոյժ ծերացեալ էի եւ տկարացեալ յաշաց եւ ի մտաց եւ ի զօրութենէ. զի զԿ. ամենիւր էի: Այլ զի ոչ էր սա թարգմանեալ ի մեր լեզու...եւ ես

56 Միմեոնի ընդօրինակած այս երկի հայերեն թարգմանությունը, որը կատարվել է VII դ., հիմք է հանդիսացել դրա համեմատական բնագիրը պատրաստելու համար (տես Նեմեսիոս Եմեսացի, Յազագս):

57 Տես ՄՅՄ, հ. Դ, ս. 53-58:

58 Նշված երկերի բնական բնագրերը համապատասխանաբար տես Հովհան Դամասկացի, Հայերեն, հ. Ա, էջ 101-189, հ. Բ, էջ 37-355:

59 Ալկինեան, Միմեոն, էջ 1-9:

60 1401 թ. Լեիմուս ընդօրինակված «Սանդուխքի» (ՄՄ, ձեռ. թիվ 1925) հիշատակարանում ասված է «Այս Սանդուխտ գիրքս, որ Կլիմաս կոչի վաղընչոց թարգմանեալ է յամենէ ի յԱնդիոք, ի սուրբ Միմեոն, գառաջն Ի. (20) ի յոյն լեզուէն, և ոչ ժամանեաց կատարեալ, Բանդի վախճանեցաւ, իսկ այլ ոմն յեղբարց մեռոց՝ անուն Միմեոն <Միմեոն> կոչեցեալ, ի Բան Գառէն ի վեր թարգմանեաց ի վրաց լեզուէ, գրովի երկուսասան եւ մեկնութիւն՝ ձև. 2...» (ՄՅՄ, հ. Զ, ս. 592): Ըստ մեկ այլ սկզբնաղբյուրի՝ «Սանդուխքի» առաջին Բան գրվածները թարգմանել է Մինաս Տրապիզոնցին (տես Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 210-211): Այսպիսով, կարելի էգրահանգել, որ Մինաս Տրապիզոնցին ինչ-որ ժամանակ եղել է Անտիոքի Սբ. Միմեոն վանոս:

61 Տես Ղազարյան, «Դունիակ», էջ 274-277:

այն սակա թարբմանեցի, զի մի՛ պակաս եղիցի  
 առ յազգէս մերմէ»<sup>62</sup>:

Զաբարյանների շրջանում կարևոր կենտրոններ  
 են եղել նաև Հնեվանքը (Հյունե վանքը)՝ նվիրված  
 հնարար Խաչատրայտին, և Քոբայրը: Սրանցից  
 առաջինի շինության թվականի և պարագաների  
 մասին ճշգրիտ ոչինչ հայտնի չէ, բայց արդեն XI դ.  
 վերջում Հնեվանքն ուղղափառ վանք էր և Գևորգ



Հնեվանքը՝ վերանորոգված XXI դ.

աբեղեպիսկոպոսի նստավայրը<sup>63</sup>: 1154 թ. վանքում  
 վերանորոգչական-շինարարական մեծածավալ  
 աշխատանքներ է իրականացրել վրաց ամիրպա-  
 տար ու Տաշիրի տեր Սմբատ Օրբելյանը<sup>64</sup>:

<sup>62</sup> ՄՅՄ, հ. Գ., էջ 1459: Սիմեոնի հիշատակարանների մեջ առկա ազգային բաղադրիչի մասին տես Բոզոյան, «Ազգային»:

<sup>63</sup> Տես Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 188: Գևորգ աբեղեպիսկոպոսը եղել է Ուղղափառություն ընդունած Տաշիրի  
 ամառական Դեմետրի ուղի: Թողել է շինարարական երկու արձանագրություններ իր իսկ կառուցած եկեղեցիներում՝ մեկը Կուրթան  
 գյուղի մոտ գտնվող եկեղեցում, մյուսը՝ Վանանա վանքում, որի տեղադրությունն այսօր անհայտ է (տես Մուրադյան, Վրացերեն  
 արձանագրությունները, էջ 146-149, 185-189):

<sup>64</sup> Տես Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 141: Ուրպես ուղղափառ սրբավայր վանքը շարունակել է մնալ  
 նաև Զաբարյանների շրջանում, բայց XVIII դ. Հնեվանքն ու Քոբայրը արդեն հայ առաքելական մենաստաններ էին (տես  
 Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 139, 169):

<sup>65</sup> Տես Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 173, 175: Քոբայրի որմնակարների ուսումնասիրությունը տես  
 Драмбян, Фрески. Драмбян, «Фрески Большой церкви». Драмбян, «К вопросу»:




Քրիստոս Փրկիչը


Որմնակար, Քոբայրավանքի կաթողիկե, 1282 թ.

Քոբայրավանքը հիմնվել է XI-XII դդ. որ-  
 պես հայ առաքելական մենաստան, իսկ հետա-  
 գայում՝ XIII դ. 20-30-ականներին, Շահնշահ  
 Զաբարյանի կնոջ նախաձեռնությամբ ուղղա-  
 փառ վանքի է վերածվել: 1276 թ. Քոբայրում  
 վերանորոգումներ է կատարել Շահնշահի որ-  
 դի Գևորգ աբեղան, իսկ 1282 թ. նա հոյակապ  
 և ինքնատիպ որմնակարներով է զարդարել  
 վանքի կաթողիկեն ու հյուսիսային գավիթը<sup>65</sup>:





Կիւրանց վանքի կարողիկեն



հունապի վանքի կարողիկեն



Պղնձահանքի Սբ. Երրորդություն վանքը




Ահորիի Բզավոր եկեղեցին



Թեժատույփի վանքը



Սեդվու վանքը




Սվերդովի եկեղեցին



Հրեշտակ  
Որմանակար, XIII դ.,  
Կիրանց վանքի կաթողիկե


Լուսանկարները ՀՃՈՐՀ



Սրվեղի վանքը



Սրվեղի վանքի կաթողիկեն ներսից



Սամսոնի վանքը



Կոշի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

**Ջաբարյանների շրջանից մեզ հասած ուղղափառ հուշարձաններն են. Պղնձահանքից ոչ հեռու Սբ. Երրորդություն վանքն ու Սբ. Գևորգ եկեղեցին, Կիրանց<sup>66</sup>, Սրվելի<sup>67</sup>, Խուճապի<sup>68</sup>, Սեղվու Սբ. Նշան<sup>69</sup>, Մանսուկի (՝)<sup>70</sup>, Սամսոնի<sup>71</sup>, Թեժառույքի վանքերը, Մաթոսավանքը (՝), Սվերդլով<sup>72</sup>, Աբորի<sup>73</sup> և Կոշ (՝) գյուղերի եկեղեցիները ևն: Ելնելով այս հուշարձանների աշխարհագրությունից, պետք է արձանագրել, որ Արևելյան Հայաստանում ուղղափառ**

**համայքներ գոյություն են ունեցել Գուգարքում և Կոտայքում: Այս վերջինում, Թեժառույքից բացի, ուղղափառ օջախ էր Ավանը, ինչի մասին են վկայում տեղի կաթողիկեի XIII դ. վիմագիր արձանագրությունները<sup>74</sup>:**

### ՀԱՅԱԼԵԶՈՒ ՈՒՂՂԱՓԱՌ ՄԻՍԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Միջնադարյան «ծայթ» հայոց համայնքներին անդրադառնալիս անհրաժեշտ է լուսաբանել նրանց ծիսական լեզվի խնդիրը: Պետք է նշել, որ օրթոդոքս ժամակարգության մի մեծ մասը բաղկացած է սաղմոսներից, այնպես որ ուղղափառ հայերը առանց որևէ խնդրի կարող էին ժամերգության էական մասը հայերենով կատարել, քանի որ կար հայերեն Աստվածաշունչը: Նույնը վերաբերում է ավետարանական ընթերցվածներին:

Ինչ վերաբերում է մնացյալ ծիսամատյաններին<sup>75</sup>, ապա մեզ հասել են դրանց հայերեն

66 Կիրանց վանքի անվանումը ժողովրդական ավանդագրույցը կապում է «կիր» և «անց» արմատների հետ. իբր թե կառուցման ժամանակ շինարարը կիրն անց է արել (տես էլլարյան, *Հուշարձաններ*, էջ 67-68): Իրականում սակայն, տրամաբանական է անվանման մեջ տեսնել հունարեն κύρ(ισ) «տեր», «պարոն» բառը և հայերեն «անց» հոգնակի սեռականի վերջավորությունը: Ըստ այսմ «Կիրանց վանք» կնշանակի՝ «կիրերի», այսինքն՝ «տերերի» վանք: Խոսքը թերևս Ջաբարյանների մասին է: Վանքի մասին տես АКОПЯН, «Киранци».

67 Տես Սաֆարյան. «Սրվելի»:

68 Տես Շախկյան, *Լոռի*, էջ 134-136:

69 Տես Շախկյան, *Լոռի*, էջ 56-57:

70 Տես Շախկյան, *Լոռի*, էջ 128-129:

71 Տես էլլարյան, *Հուշարձաններ*, էջ 68-69: Սամսոնի վանքը կարելի է դասել ուղղափառ հուշարձանների խմբին՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ նրա եկեղեցու բեմը ցածր է:

72 Տես Շախկյան, *Լոռի*, էջ 22:

73 Տես Շախկյան, *Լոռի*, էջ 57-59:

74 Տես Ղաֆաղարյան, *Երևան*, էջ 192-193, 195:

75 Ուղղափառ եկեղեցու հիմնական ծիսամատյաններն են Պատարագամատույցը, Ժամագիրքը, Ուրծայն Շարակնոցը



Հատված՝ Հովսեփ Կոստանդնուպոլսեցու Հայսմավուրհից  
1302 թ. ընդօրինակությամբ

Պատմագրի Մխիթարյան միաբանության մատենադարան, թիվ 1048  
Թարգմանությունների փշրանքներ, որոնք թե-  
պետ վատ են ուսումնասիրված, սակայն փաս-  
տում են, որ միջնադարյան ուղղափառ հայե-  
րու որպես կանոն ունեցել են մայրենի լեզվով  
անթղեցական աղոթասացություն: Այսպես, մո-  
տավորապես IX-X դդ. մեզ են հասել Բարսեղ  
Պատարացու, Հովհան Ոսկեբերանի, Նախասր-  
բյեղոց և Հակոբոս Տյառնեղբոր պատարագա-  
մատուցների հայերեն թարգմանությունները<sup>76</sup>,

որոնք ապահովաբար իրականացվել են ծիսա-  
կան կիրառության համար<sup>77</sup>:

Միսամատյանների հետ որոշակի աղերս  
ունեն սրբոց վարքերի ժողովածուները՝ Հայս-  
մավուրքները:

991-992 թթ. ոմն կոստանդնուպոլսեցի Հով-  
սեփ «թորգոմական բարբառի» է թարգմանել  
բյուզանդական Հայսմավուրքը և այն ուղար-  
կել է «ի Հայոց եկեղեցիս»<sup>78</sup>: Հովսեփի գոր-  
ծը հիմք է հանդիսացել հայ իրականության  
մեջ հետագայում ծնվելիք հայսմավուրքային  
խմբագրությունների համար<sup>79</sup>:



Կարապետի հեղինակած թարգմանությունը  
Վենետիկի Մխիթարյան միաբանության  
մատենադարան, թիվ 886

(Ὁμοιωσις)՝ ըստ շաբաթվա օրերի և 12-հատուրյա Ամսական Շաբակնոցը (Μηναίον)՝ ըստ տարվա տասներկու ամիսների:  
76 Տես Գաբրիելեան, Սրբազան Պատարագամատուցք, էջ 180-216, 341-383, 412-429, 430-454:  
77 Շատ է Հովսեփ Գաբրիելյանի՝ «գոնի Հայ Հոռոմոց Բով կ'ենթադրենք որ գործածուած ըլլան: Ըստ մեզ ունենալու կին անոնք, գոնի  
առաջուովին փոխուած չէր հայերէնը, միս պաշտամանց գրէրն ալ» (Գաբրիելեան, Սրբազան Պատարագամատուցք, հ. Ա, էջ 352):  
78 Տես Ակիմեան, «Յովսեփ Կոստանդնուպոլսեցի»:  
79 Տես Ակիմեան, «Յովսեփ Կոստանդնուպոլսեցի», էջ 12: Հմմտ. Мурадян, «Культурная деятельность», էջ 326-327:



Միմեոն Պղնձահանեցին  
Մանրանկար, հեղ. Գ. Նազարյան, 2015 թ.

Հավանաբար Կոստանդնուպոլսում է գործել նաև ոմն Կարապետ, որը XI կամ XIII դդ. մասնակի թարգմանել է Ամսական շարակնոցը<sup>80</sup>:

Հայտնի է, որ Մինաս Տրապիզոնցու և Միմեոն Պղնձահանեցու շնորհիվ հունարենից ու վրացերենից հայերենի է թարգմանել Ութնայն Շարակնոցը<sup>81</sup>: Չի բացառվում, որ այս աշխատանքի համար հիմք են ծառայել նախքան այդ գոյություն ունեցած հայերեն թարգմանական բնագրերը<sup>82</sup>: Անկասկած, այս թարգմանությունը կատարվել է գործնական կիրառության համար<sup>83</sup>:

Ուղղափառ հայոց մեջ ստեղծված ուշագրավ մատյան է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի թիվ 267 ձեռագիրը՝ գրված 1261-1275 թթ.: Այն վերնագրված է որպես «Եւսուրոգիոն», այսինքն՝ «Մաշտոց», սակայն հիմնականում բարոյախոսական-վարքաբանական բնագրեր է պարունակում: Այնուհանդերձ, այստեղ էլ կան ծիսական միավորներ, մասնավորապես բժկություն աղոթքներ<sup>84</sup>:

80 Հ. Դուկաս Իննիսյանը Կարապետի գործը հակված է քվադրելու 1081 թ. (տես Իննիսեան, Աշխարհագրութիւն, մ. Ա, հ. Ա, էջ 305): Մինչդեռ հ. Ներսես Ակիմյանն ավելի հավանական է համարում 1222 թ. (տես Ակիմեան, Միմէոն, էջ 196-197):

81 Տես Ակիմեան, Միմէոն, էջ 4: Աշխատանքը մեզ է հասել 1584 թ. ընդօրինակությամբ (Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, քիվ 630):

82 Ակիմյանը կարծում է, որ մինչև XIII դ. Բյուզանդիայում և Վիրում ուղղափառ հայերը պաշտամունքը կատարել են համապատասխանաբար հունարեն և վրացերեն, և որ «Յունական պաշտամանց գրքերը հայերենի թարգմանելու առաջին փորձը կ'ընէ Միմեոն Պղնձահանեցի» (Ակիմեան, Միմէոն, էջ 189): Սակայն Բյուզանդիայում հայերենով պաշտամունք գոյություն ունեւ ավելի վաղ ժամանակներից սկսած: Ինչ վերաբերում է Վիրին, ավելի ստույգ՝ դրան միացված Տային, ապա երևում է, որ այնտեղ իսկապես հայերեն ժամակարգություն չի եղել այն պատճառով, որ ըստ միջնադարյան վրաց պատկերացման՝ «Վրաստան» էր համարվում այն երկիրը, որտեղ պաշտամունքը վրացերեն էր կատարվում (տես Մարք, «Арканы», էջ 22): Այս համատեմատում պատահական չէ, որ հայերեն ժամակարգությունը թարգմանող Միմեոնը իր մի հիշատակարաններում շեշտում է Պղնձահանի տեղայնացումը՝ «յերկիրս Հայոց»: Երևում է, որ Զաֆարյանների ժամանակաշրջանում բեկում էր մտցվել վերոնշյալ վրացական մտայնության մեջ, և հայալեզու ուղղափառ ժամակարգությունը կիրառելի էր Վրաց թագավորությանը միացած Հայքում:

83 Հմմտ. Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 211-212:

84 Տես Մայր ցուցակ Վենետիկի, հ. Բ, սյ. 867-874: Նույն մատենադարանի քիվ 1661 ձեռագիրը բյուզանդական եկեղեցական




Պատմիկի գրչագրած և Մետոփանի ծաղկած Ավետարանը, 1276 թ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության մատենադարան, թիվ 223


Սույն ժամանակներից մեզ է հասել մի Ավետարան, որը գրվել է 1276 թ., Չմշկածագի տարածաշրջանում, Մբ. Օնոֆրիոսի ժղլիկ անագատում: Ծաղկողն է «ծագ» կրոնավոր թեոֆիլին, ծաղկողը արեղա Մետոփանն է, իսկ թանաքը արամադրել է «հավատավոր» (միանձնուհի) Թումարտին: Հիշատակարանում նշված է նաև թեոֆիլի եղբայր և հոգևոր հայր «մեծ ճգնավոր սուրբ քահանայ կրոնաւոր» պապա<sup>85</sup> նիկոս Ստացողն է թեոֆիլի որդի պապա Պավլե կրոնավոր քահանան<sup>86</sup>:

<sup>85</sup> Ստացողի հայերեն քարգանկությունն է (տես Մայր ցուցակ Կենտրոնի, հ. 2, սյ. 345-354): Ձեռագրի ստեղծման հանգամանքներն անհայտ են, միայն կարելի է ասել, որ այն գրվել է 1352 թ. առաջ (տես Ալիմեան, Սյունի, էջ 256-259. Բոզոյան, «Քաղկեդոնի»):  
<sup>86</sup> Հունարեն παπάς՝ «հայր»: Կիրառվում է «հահանա» իմաստով: Այս բառից ունենք «Պապայան» (Բարայան), «Պապազյան» ազգանունները:  
<sup>87</sup> Տես Դանիելեան, Մայր ցուցակ, էջ 545-546:  
<sup>88</sup> Տես Քիրտեան, «Քիրտեան հաափման»:

Իր տեսակի մեզ եզակի մատյան է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի Քյուրտյան հավաքածույի թիվ 99 Ավետարանը, որը ևս պատկանում է օրթոդոքս հայոց ավանդույթին<sup>87</sup>: Սույն ձեռագիրը գրվել է 1203 թ. գրիչ Հովհաննեսի ձեռքով: Ստացողներն են երկու եղբայրներ՝ կրոնավոր քահանաներ՝ միևնույն Կողմա անունով: Գրության վայրն անհայտ է: Բացի ճաշուրնթերցվածքներից (որոնք դասավորված են բյուզանդական ծիսակարգի համաձայն)



Հովհաննես գրչի հայերեն հիշատակարանը՝ հունարեն աղոթքով հանդերձ




Սբ. Սահակի և սբ. Մեսրոպի հիշատակությամբ հատվածը Կողմայի Սենաֆատում

և մի քանի այլ միավորներից, Ավետարանն ընդգրկում է նաև «Սենաքսառ» կոչված միավորը, որի «յարմարողը»՝ կազմող-խմբագիրը, ստացող եղբայրներից մեկն է: Կոզմայի այս Սենաքսառը սրբոց տոների ցուցակ է, որտեղ տոները դասված են ըստ օրերի՝ սկսած սեպտեմբերի 1-ով և ավարտած օգոստոսի 31-ով: Սրբերի անուններից բացի Սենաքսառը նշում է նաև յուրաքանչյուր օրվա ճաշուրնից բաղկացածները: Ըստ էության՝ Տոնացույց է, որն անշուշտ հետևում է պոլսյան ավանդույթին՝ ունենալով հանդերձ տեղական առանձնահատկություններ: Այսպես, Սենաքսառում առկա են Սահակ Պարթևի, Մաշտոցի (սեպտ. 17) և սրբոց Սուքիասյանց (հոկտ. 27) հիշատակները<sup>88</sup>:

Մեկ այլ արժեքավոր մասունք է Բրիտանական թանգարանի Օր 2611 ձեռագիրը, որտեղ անթեղված են Ութնաշն շարակնոցից ընտրված շարականների հայերեն թարգմանություններ: Ձեռագրից բավական թերթեր կորած են, ամբողջական մատյանը թերևս ընդգրկել է ողջ եկեղեցական տարին: Ձեռագրի թվագրությունն ու գրչության վայրն անհայտ են, միայն մաքուր բոլորագրի հիման վրա կարելի է ենթադրել, որ մատյանը գրվել է XIV դ.<sup>89</sup>:

Ուղղափառ հայոց այլ ծիսական թարգմանությունների վերհանումն ու համակողմանի հետազոտությունը միջնադարյան «ծայթ»

համայնքների պատմության վերաբերյալ ապահովաբար նոր ու կարևոր մանրամասնություններ պիտի բացահայտի:



Մեկ էջ Բրիտանական  
թանգարանի Շարակնոցից

88 Տես Ղազարյան, «Կոզմա»:

89 Տես Conybeare, *A Catalogue*, էջ 142-149. Ակիմեան, *Սիմէոն*, էջ 200-218:



Գլուխ Դ \_\_\_\_\_  
ՎՅՅԵՆԻՔԻՑ ԿԻՒՄ



ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՅԵՐԸ  
ՀՈՌՈՄՈՑ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ  
ՎԵՐՆԱԽԱՎՈՒՄ

IV-V դդ. սկսյալ, պատմական այլևայլ հանգամանքների բերմամբ բազմաթիվ հայեր, այդ թվում հայ նախարարական տների, ազնվականու-



Հուստինիանոս կայսեր փառապանծ զորավար Ներսեսը (478-573 թթ.)  
Խճանկար. Ռավեննայի Սբ. Վիտալիոս տաճար, VI դ.

նության ներկայացուցիչներ, զինվորականներ, Հայաստանից արտագաղթելով, բնակություն էին հաստատում կայսերական հողերում<sup>1</sup>: Իրենց ունակությունների շնորհիվ հայերից շատերը լուրջ հաջողությունների էին հասնում քաղաքական ասպարեզում, դառնում նշանավոր զորավարներ, առաջնորդներ՝ բազմելով նաև կայսրության գահին:

Բյուզանդական հողեր տեղափոխված նշանավոր տներից էր Մամիկոնյան տոհմը, որի մի շարք ներկայացուցիչներ IX դ. առանձնահատուկ դեր խաղացին կայսրության պատմության մեջ: Նրանցից մեկը Թեոդորա կայսրուհին է, որը զորավար Մանվել Մամիկոնյանի եղբոր դուստրն էր<sup>2</sup>: 831 թ. Բյուզանդիայի Թեոփիլոս կայսրն (829-842 թթ.) ամուսնացավ Թեոդորայի՝ իր տերության ամենագեղեցիկ օրիորդի հետ, և այդպիսով Թեոդորան կայսրուհի թագադրվեց: Պետական կառավարման սկանալոր ձիրքից բացի<sup>3</sup> Թեոդորան եկեղեցու երախտավորը դարձավ. 843 թ. մարտի 11-ին՝ Մեծ Պահքի առաջին կիրակին, Թեոդորայի շնորհիվ վերջնակա-



Սբ. Թեոդորան մանկահասակ որդու՝ Միխայել III կայսեր հետ Կրեստական սրբապատկեր, XVI դ., Բենակիսի թանգարան, Աթենք

1 «Հարևան Բիստունյա տերությունը վաղուց է, որ ապաստարան էր դառնել հայ ֆաղափական տարագիրների համար: Կյանքի դժնդակ պայմանները, անդադրում մահառումը արար բռնության դեմ և այս գետնի վրա բուսած ներքին տարածայնություններն ու կուսակցական բախումները հանախ դուրս էին նետում հայրենի ոլորտներից մարտական կարող ուժեր, անհատական խաշոր տիպարներ և նույնիսկ ժողովրդական մեծամեծ հատվածներ» (Աղոնց, «Մամիկոնյան իշխանուհին», էջ 287): Հայ մեծատոհմիկների արտագաղթը հանգեցեց նրան, որ VII-XI դդ. բյուզանդական արխատկրատական համարյա բոլոր մեծ ընտանիքները հայկական ծագում ունեին (տես Lillie, *Εισαγωγή*, էջ 307):

2 Տես Charanis, *The Armenians*, էջ 23:

3 Ն. Աղոնցն այսպես է բնութագրում Թեոդորային. «Զինվորական առաջնակարգ ընտանիքից էր: Մամիկոնյան արյուն ուներ և գուրկ չէր առնական գծերից: Ինքնուրույն շարժվածք, խիզախ ու հրամայական ոգին և իշխելու տենչը, հատկություններ, որ միայն ուղնանալ կարող էին նրա անբասիր գեղեցկության հովանու տակ: Կանացի արտակարգ հմայք, կնոջ այդ տիրական գեներ, մնաց ընտանեկան սրբության շրջանում և հրապապակ շհանվեց փառասիրական և ֆաղափական նպատակների սպասարկության համար: Թեոդորան առաջինի էր և այն ժողովրդական մեծ համարումը, որ վայելում էր, պարտական էր իր մահրության... Թեոդորան խնայող էր և տնտես: Ելմտական աշարուջ ֆաղափականությամբ նա կարողացավ լցնել պետական գանձարանը, որ իր ամուսնու օրով գրեթե դատարկված էր» (Աղոնց, «Մամիկոնյան իշխանուհին», էջ 354-355):

նապես դատապարտվեց պատկերամարտությունն ու հաստատվեց պատկերապատվությունը: Այդ իրադարձությունը, որպես զավանաբանական վիճաբանությունների ավարտ նշանավորվելով, «Ուղղափառության հաղթանակ» կոչվեց և առ այսօր ամեն տարի հանդիսավորությամբ տոնվում է Մեծ Պահջի առաջին կիրակի օրը: Տեղալ ժամանակաշրջանում կայսրության մեջ կարևոր դիրք էին զբաղեցնում Թեոդորայի ազգականները, հատկապես նրա եղբայրը՝ Վարդ կեսարը, որը 856-866 թթ. պետության իրական ղեկավարն էր: Վարդը գիտության և կրթության մեծ հովանավոր էր. մասնավորապես, նրա ջանքերով է Կոստանդնուպոլսում հիմնադրվել նշանավոր Մագնավրայի դպրանոցը, որտեղ էական էր հայկական ծագմամբ գիտնականների գործունեությունը<sup>4</sup>: Պետք է նշել նաև, որ այս ժամանակաշրջանից հասած սկզբնաղբյուրների համաձայն՝ բյուզանդացի հայ ազնավականներից շատերը պահպանում էին իրենց մայրենին ու ազգային դիմագիծը<sup>5</sup>:



Սբ. Թեոդորայի անապական աջը կերկիրա կղզու Մայր տաճար, Հունաստան

867 թ. բյուզանդիայում հաստատվեց մի նոր հարստություն, որը պատմության մեջ հայտնի է «Մակեդոնական» (երբեմն՝ «Հայկական») անվամբ<sup>6</sup>: Այս հարստության հիմնադիրն էր Վասիլ I կայսրը (867-886 թթ.): Նա Ադրիանուպոլսի (Մակեդոնիա) գաղթական հայերից էր, արժանանալով՝ Տարոնի Թիլգյուղից<sup>7</sup>: Վասիլի հիմնադրած հարստության դարաշրջանը՝ 867-1025 թթ., համարվում է բյուզանդիայի պատմության ամենափայլուն շրջաններից մեկը: Այն նշանավորվեց ոչ միայն քաղաքական, այլև գիտամշակութային վերելքով, որը հայտնի է որպես «մակեդոնական վերածնունդ»:



Վասիլ I Մակեդոնացի կայսրը Մանրանկար բյուզանդական ձեռագրից, XII-XIV դդ., Մադրիդի ազգային գրադարան

858-867 և 877-886 թթ. Կոստանդնուպոլսի պատրիարքն էր Փոտը (հունարեն՝ Փոտիոս)՝ փայլուն կրթությամբ ու հանրագիտարանային գիտելիքներով մի անձնավորություն<sup>8</sup>: Նրա մայրը Իրենեն էր՝ Արշավիր Կամսարականի քույրը, իսկ Արշավիրի կինը Թեոդորա կայսրուհու

4 Տե՛ս Ադոնց, «Վարդ», էջ 367-396. Charanis, *The Armenians*, էջ 23-24:  
 5 Տե՛ս Ադոնց, «Դեմիտր», էջ 48-80. Charanis, *The Armenians*, էջ 27-28:  
 6 Տե՛ս Բարթիկյան, «Կոստանդին Միրանաժինը», էջ XLIX-L:  
 7 Տե՛ս Charanis, *The Armenians*, էջ 35: Փ. Խառանխր, Հայկական հարստության մասին խոսելով, նկատում է. «Հարստությունն անընդունակեց անկախացնել իր (թեևս ավելի հարմար է «բյուզանդականացած» եզրը), սակայն այն կաղապարը, որն ստացել էր այդ անկախացումը, անտարակույս ազդված էր հարստության հայկական արմատներից: Թեև այդ ազդեցության ծավալը մի խնդիր է, որ պատմաբանն անկարող է ճշգրիտ սահմանել» (Charanis, *The Armenians*, էջ 35):  
 8 Տե՛ս Ադոնց, «Վասիլ Հայագն». Ադոնց, «Վասիլ I»:  
 9 Հ. Բարթիկյանի բնորոշմանը՝ «այս ժամանակաշրջանի, ապա և բյուզանդական բազմադարյան մշակույթի լուսապսակը



Սբ. Փոս պատրիարք  
Հունական սրբապատկեր, 1996 թ.

քույր Մարիամն էր<sup>10</sup>: Մինչև պատրիարք դառնալը Փոսը մանկավարժական գործունեություն էր ծավալել Մագնավրայի դպրանոցում, այնուհետ՝ զբաղեցրել կայսրության կարևորագույն պաշտոններից մեկը՝ կայսերական դիվանապետությունը:

Փոսի պատրիարքության տարիներին հաստատուն հիմքերի վրա դրվեց սլավոնների մեջ Քրիստոնեության քարոզչությանը. 862 թ. Մորավիայի Ռոստիսլավ իշխանի խնդրանքով պատրիարքը նրա մոտ ուղարկեց իր աշակերտ Կոստանդինին (Կյուրեղին) ու նրա եղբայր Մեթոդիոսին: Վերջիններս ստեղծեցին սլավոններեն լեզվի այբուբենը, թարգմանեցին սբ. Գիրքն ու անհրաժեշտ ծիսական գրքերը՝ սկիզբ դնելով սլավոն ժողովուրդների հոգևոր լուսավորմանն ու գիր-գրականությանը: 864 թ. դարձի եկան նաև բուլղարները,

և նրանց Բորիս թագավորը մկրտվեց Փոսի պատվիրակի ձեռամբ:

879-80 թթ. Վասիլ կայսեր և Փոսի ջանքերով Սբ. Սոփիայի տաճարում գումարվեց մի մեծ ժողով, որին մասնակցեցին Հռոմի պապի և արևելյան շորս պատրիարքությունների ներկայացուցիչները<sup>11</sup>, մոտ 383 եպիսկոպոսներ: Ժողովը տիեզերական հռչակեց 787 թ. Նիկիո ժողովը, որը դատապարտել էր պատկերամարտությունն ու հաստատել սրբապատկերներին մատուցվող պատիվը: Բացի այդ, ժողովում մի կողմ դրվեցին Հռոմի աթոռի իշխանատենչ հավակնությունները, իսկ պապի առաջնության գաղափարը վերահաստատվեց հինգ պատրիարքների հավասար իշխանության համակարգի (այսպես կոչված «հնգապետության») մեջ: Ժողովում վերահաստատվեց Հավատո հանգանակը՝ առանց *Filioque* («և յմրդույ») արևմտյան հավելման<sup>12</sup>:

Փոս հայրապետի մտահոգությունն էր նաև Հայոց Եկեղեցին. 858 թ. նամակագրական կապ էր հաստատվել պատրիարքի ու Զաքարիա Ա Չազեցի կաթողիկոսի (855-876 թթ.) հետ: Մավալված բանակցությունների արդյունքում 862 թ. Նիրակավանում (երազգավորս) մի ժողով գումարվեց, որին պատրիարքի կողմից մասնակցում էր Թրակիայի Նիկե քաղաքի արքեպիսկո-

պատրիարք Փոսն էր, բյուզանդական և համաշխարհային մշակույթի այդ ուսնվիրան...» (Բարթիկյան, «Կոստանդին Միքանածինը», էջ XI):


10 Տես Ադոնց, «Մամիկոնյան իշխանուհին», էջ 285: Հմմտ. Charanis, *The Armenians*, էջ 28:

11 Ժողովին Անտիոքի պատրիարքության ներկայացուցիչն էր Մարտիրոսուպոսի (Տիգրանակետի) եպիսկոպոս Վասիլը, որը հավանաբար նույնանուն է Վասիլ Հայի հետ՝ Չորրորդ Հայի Յալմբանեից: Վերջինս IX դ. երկրորդ կեսին խմբագրել է Գևորգ Կիլիկացու «Կարգագրությունը» (տես Νικόπουλος, «Βασίλειος»):

12 Տես Փեյծάς, *Ἐκκλησιαστική Ἱστορία Α'*, էջ 124-136:

պատ Հովհաննեսը<sup>13</sup>: Շիրակավանի ժողովում Հայ եկեղեցին ընդունեց չորրորդ, հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ Տիեզերածողովները և այդպիսով, վերականգնեց իր միությունը Տիեզերական եկեղեցու հետ, ինչի մասին Փոտն աթաղությամբ ազդարարում էր 867 թ. արևելյան պատրիարքների ուղղված իր շրջաբերականի մեջ<sup>14</sup>: Ցավոք, այս ձեռնարկը երկար կյանք չունեցավ և Զաքարիա կաթողիկոսի մահվամբ ի չիք դարձավ<sup>15</sup>:

Քննվող ժամանակաշրջանում տեղի ունեցավ ևս մեկ կարևորագույն իրադարձություն. կայսրության մայրաքաղաքում հրաշքով հայտնաբերված Գրիգոր Լուսավորչի, Հռիփսիմեի և Գայանեի մասունքներն ամփոփվեցին Սբ. Սոֆիայի տաճարում<sup>16</sup>: Փոսի օրոք Կոստանդնուպոլսի եկեղեցում տեղի ունեցավ Լուսավորչի սրբադատված ինչը հիմք հանդիսացավ Հայաստանյայց եկեղեցու ինքնազլխության (ավտոկեֆալիայի) նախաշման համար<sup>17</sup>:



Սբ. Գրիգոր Լուսավորչը  
Խճանկար, 4. Պոլսի Սբ. Սոֆիա, IX դ. (չի պահպանվել)

<sup>13</sup> Ազոնցի ենթադրությամբ՝ Հովհաննեսն սկզբնապես «Վահան» անունն է ունեցել և եղել է Տարոնի եպիսկոպոսը, սակայն հաջորդապես ընդունել և «Հովհաննես» անվամբ տեղափոխվել ու դարձել Նիկիի եպիսկոպոս (տես Աղոնց, «Վասիլ Ե», էջ 162): Այս ենթադրության օգտին է խոսում այն, որ հայկական աղբյուրներում Հովհաննես Նիկեցին կոչվում է «Վահան»: Սակայն երկու անձանց նույնացումը սխալ է, քանի որ Վահան Տարոնացին (կամ Մատրավանեցին) մասնակցել է 879 թ. ժողովին, մինչդեռ 867 թ. դրությամբ Հովհաննեսն արդեն մահացել էր և Նիկիի եպիսկոպոսն էր ոմն Նիկեփոր (տես Fedalto, *Patriarchatus Constantinopolitanus*, էջ 108): Համենայն դեպս, ամենից հավանական է, որ Հովհաննես Նիկեացին հաջորդուն է եղել և հայկական հարցերում Փոսի գլխավոր խորհրդատուն: Նրանից պահպանվել է Մենդյան և Մկրտության ամենի մասին գրությունը՝ հունարեն (տես PG 96, 1435-50) և հայերեն թարգմանությամբ (տես Յոհան Նիկիացի, *Քուլթ*), ինչպես նաև՝ Շիրակավանի ժողովում արտասանված հառը՝ կցված ժողովական կանոններին (տես Վահան Նիկիոյ, Բանֆ):

<sup>14</sup> Տես Փώտիոս Կոնստանտնուսպόλεως, *Եγκկլիոս Էπιστολή*, էջ 41:

<sup>15</sup> Փոսի և Զաքարիա կաթողիկոսի միաբարական ջանքերի, Շիրակավանի ժողովի հանգամանքների մասին տես մեր մագիստրոսական պարտահաղը՝ Kazaryan, *Օ Իերոս Փώտիոս*:

<sup>16</sup> Տես Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն*, էջ 13-14: Նկարագրված իրադարձությունների մասին հանգամանալից տես Lourie, «The Feast»:

<sup>17</sup> Տես Kazaryan, *Օ Իերոս Փώտիոս*, էջ 79-82:



Ատոն Իմաստուն կայսրը (°)  
Խճանկար, Կ. Պոլսի Սբ. Սոֆիա: IX դ.

Վասիլ կայսեր հաջորդեց նրա որդին՝ Ատոն VI Իմաստունը (886-912 թթ.), իսկ Կոստանդնուպոլսի աթոռին Փոտին հաջորդեց Վասիլ կայսեր 18-ամյա որդին՝ Ստեփանոս I պատրիարքը (886-893 թթ.), որը Փոտի աշակերտն ու քարտուղարն էր<sup>18</sup>: Բյուզանդիոս պատմության մեջ սա բացառիկ դեպք էր, երբ թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր իշխանությունները կենտրոնացան միևնույն ընտանիքի ձեռքում:

920-976 թթ. միջև կայսերական գահին բազմեցին երեք անձինք, որոնք Մակեդոնական հարստության հետ ուղղակի կապ չունեին: Դրանք էին Ռոմանոս I Լակապենոսը (920-944 թթ.), Նի-

կեփորոս II Փոկասը (963-969 թթ.) և Հովհաննես I Չմշկիկը (969-976 թթ.): Այս երեքն էլ հայկական կամ մասամբ հայկական ծագում ունեին<sup>19</sup>:

Ռոմանոսը ծնվել է Արմենիակոն («Հայկական») բանակաթեմում, կամ էլ՝ Մելիտենեից հարավ ընկած Լակապեն բնակավայրում: 920 թ. նա երիտասարդ Կոստանդին VII Ծիրանածնի (913-920, 944-959 թթ.) կայսերակից գահակալ պսակվեց և իր Հեղինե դստերը Կոստանդինին կնուցեց: Չեռքերում կենտրոնացնելով իրական իշխանությունը՝ Ռոմանոսն իր երեք որդիներին՝ որպես օգնականներ, պետության ղեկին բերեց, իսկ չորրորդ որդուն՝ 16-ամյա



Սբ. Ստեփանոս պատրիարք  
Մանրանկար,  
հեղ. Գ. Ղազարյան, 2014 թ.

18 Տակավին Միջնադարից սկսյալ կասկածանք է եղել, թե Վասիլի որդիներից երկուսը՝ Ատոն Իմաստունն ու Ստեփանոսն իրականում թեոդորա կայսրուհու որդու՝ Միխայել III-ի (842-867 թթ.) զավակներն էին, քանի որ Վասիլի կինը՝ Եվդոկիա Ինգերինեն, նախկինում Միխայելի սիրուհին էր: Փ. Խառանխան այս մասին գրում է. «Այդ համբավի ուշադիր բնութայունը ցույց է տվել, որ իրականում դա անհիմն է: Բայց եթե նույնիսկ ճիշտ լինեք այն, որ Միխայել III-ն է Վասիլի հաջորդի հայրը, ապա դա Ատոնին գեթ մասամբ հայ կղաթններ, քանի որ ... Միխայելի մայրը հայուհի թեոդորան էր» (Charanis, *The Armenians*, էջ 35):

19 Տես Charanis, *The Armenians*, էջ 35:



Պամանուկակապենուր համբուում է 944 թ. եղեսիայից  
 Պոլիս տեղափոխված Փրկչի անձեռագործ Դաստառակը  
 Մանրանկար րյուզանդական ձեռագրից, XII-XIV դդ.,  
 Մադրիդի ազգային գրադարան

Քեոփիլակտին Պոլսո պատրիարք դարձրեց (933-956 թթ.): Թեպետ Ռոմանոսի իշխանութունը տապալվեց, այնուհանդերձ Հեղինեն կայսրուհի մնաց՝ այսպիսով թարմացնելով իշխող հարստության հայկական արյունը<sup>20</sup>:

Նիկեփոր կայսրը սերում էր կապագոժկյան Փոկաս ընտանիքից, որը խառը՝ հայ-հունական ծագում ուներ<sup>21</sup>: Նիկեփորը կայսերական բանակի քաջարի զորավարն էր, որը փառավորվեց արաբների դեմ տարած իր փայլուն հաղթանակներով: 960 թ. նա արաբներից

ազատագրեց Կրեանն և այն բնակեցրեց հայերով ու սլավոններով:

963 թ. Նիկեփորն ամուսնացավ Թեոփանո կայսրուհու հետ և այդպես բազմեց Բյուզանդիայի գահին: Նիկեփոր կայսրը բարեպաշտ և ճգնակենցաղ մի անձնավորություն էր՝ «այր բարի, սուրբ և աստուածասէր,


լցեալ ամենայն առաքինութեամբ և արդարութեամբ, յազթող և քաջ ի վերայ ամենայն պատերազմաց, ողորմած ի վերայ ամենայն հաւատացելոց Քրիստոսի, այցելու այրեաց և գերեաց, դարմանիչ որբոց և տնանկաց»<sup>22</sup>:

969 թ. դավադրության հետևանքով Նիկեփորն սպանվեց, և գահ բարձրացավ նրա զարմիկը, դավադիրըն ու մարդասպանը՝ Հովհաննես Չմշկիկը: Մոր կողմից նա ծագում էր Փոկաս և Մալեինոս (Մլեհյա՞ն), իսկ հոր կողմից՝ Կուրկուաս (Գուրգեն) ընտանիքներից. նրա նախնիներից էր ռազմական քաջագործություններով փայլած Հովհաննես Կուրկուաս զորավար



Նիկեփոր Փոկաս կայսրը  
 Որմնանկար, Թեոփան Կրեաացի,  
 XVI դ., Աթոս կեռան  
 Մեծ լավրայի կաթողիկե

<sup>20</sup> Տես Charanis, *The Armenians*, էջ 36:  
<sup>21</sup> Ըստ Փ. Խառանխի՝ Փոկասների հայրակամ կողմը հավանաբար հունական արյուն ուներ, իսկ մայրականը՝ հայկական (տես Charanis, *The Armenians*, էջ 37-39):  
<sup>22</sup> Մատթեոս Ուռնայեցի, *Ժամանակագրություն*, էջ 5:



Հայկական արժատներով բյուզանդական Վարդանիս և Վարդաս ազնվական աների տոհմանշաններ

Վարդանիս ընտանիքը հայտնի է մինչև XVIII, իսկ Վարդաս սոհմը՝ մինչև XVII դդ.\*:

1219-1236 թթ. Կերկիրայի մետրոպոլիտն է եղել Գևորգ Վարդանիսը:

բը<sup>23</sup>: Մինչև կայսր դառնալը ինքը Չմշկիկը ևս հասցրել էր անուն հանել անօրինակ սխրագործություններով:

Հայազգի սպարապետ Վարդ Սիլերոսի հետ մեկտեղ նորած կայսրը վճռականապես ճնշեց բուլղարների ապստամբությունը, ապա արշավեց արարների դեմ որոնք, դաշինք կնքելով իրենց մահմեդական հավատակիցների՝ եգիպտացիների և պարսիկների հետ, գրավել էին Անտիոքը: Չմշկիկ կայսրը ջախջախեց մահմեդական 100 000-ոց բանակը և ազատագրեց Անտիոքը: Դրանից հետո Անտիոքի հայրապետ

տական գահին բազմեց Փոքր Հայքի Կոլոնիայից սերող Թեոդոս II պատրիարքը (970-976 թթ.)<sup>24</sup>:

Հայոց Աշոտ Գ Ողորմած արքայի հետ ռազմական դաշինք կնքելով՝ Չմշկիկը կայծակնային արագութեամբ գրավեց Ամիգը, Մարտիրոպոլիսը Մերզիներ, Մծբինը՝ տիրանալով Դամասկոսին, ամբողջ Ասորիքին, Կիբանանին ու Պաղեստինին:

XI-XII դդ. բյուզանդական ավագանիում են գործել հայկական ծագում ունեցող մի շարք տներ, որոնցից են Մոսիլե, Սկլերոս, Կուրկուաս, Քուրդիկ, Տարոնիտ (Տարոնացի), Կեկավմենոս ընտանիքները ևն<sup>25</sup>:

999-1019 թթ. տիեզարեկան հայրապետատության գահակալն էր Սերգիոս (Սարգիս) II պատրիարքը՝ Փոտի գարմիկը: Հայկական արմատերով այս հայրապետն աչքի է ընկել իր քաղցրաբարո բնավորությամբ ու կրթվածությամբ<sup>26</sup>:

Հետագայում XII դ. հայկական ծագումով երկու անձինք բազմեցին Կոստանդնուպոլսի հայրապետական աթոռին: Նրանցից մեկը Միքայել II Կուրկուասն էր, որն սկզբնապես Օքսիա կղզու Սբ. Միքայել Հրեշտակապետ վանքի վանահայրն էր: Կուրկուաս ընտանիքի այս ներկայացուցիչը հայտնի էր ոչ միայն իր ճգնակյաց

23 Տես Charanis, *The Armenians*, էջ 37:

\* Տես Λασκαράτος-Τυπάλδης, «Οικόσημα», էջ 152:

24 Տես Πρεμετίδης, *Η Μητρόπολις*, էջ 37:

25 Տես Каждан, *Армяне*: Թեմայի առնչությամբ պետք է նկատի ունենալ երկու հանգամանք. մախ՝ ավագանու ներկայացուցիչները հանախա միջդինաստիական խնամիրական կապեր են հաստատել օտար արիստոկրատների (մախսևառաջ հույների) հետ, այնպես որ դժվար է խոսել գաղաբյուն հայկական ընտանիքների մասին: Եվ երկրորդ՝ բյուզանդացի հայ ազնվական ընտանիքների մեջ եղել են թե՛ ուղղափառ և թե՛ առափելական տոհմեր (տես Каждан, *Армяне*, էջ 145, 167): Եվ ավելին՝ անգամ միևնույն ընտանիքի մեջ տարբեր դավանանքի հետևող անհատներ, ինչպես որ դա հայտնի է Բակուրյանների պարագայում:

26 Տես Γεδεών, *Πίνακες*, էջ 315-317:



Մարիա ղշխայի կնիքը

Վարքով, այլև կրթութ-  
յամբ: Միքայել Օքսիա-  
ցին պատրիարք դար-  
ձավ 1143 թ., սակայն  
երեք տարի անց նա  
կամովին թողեց գա-  
հը՝ վերագառնալով իր  
վանական կյանքին<sup>27</sup>:

Հայազգի մյուս հայ-  
րապետը Քեոզոս I Վառադիոնցին է (1178-  
1183 թթ.): Նա ծնվել է Անտիոքում, ճգնել Բյու-  
թանիայի Օլիմպոս լեռան մերձակա Վառադիոն  
վայրի Սբ. Քովմաս վանքում, որտեղից էլ առա-  
ջացել է նրա մակդիրը: Այս տիեզերական հայ-  
րապետն իր առաքինի վարքով ու իմաստութ-  
յամբ վայելել է մեծատոմիկների և հատկապես  
հասարակ ժողովրդի անսահման հարգանքը:  
Քեոզոս պատրիարքն սկզբունքային դիրք է ու-  
նեցել կանոնական հարցերում և, մի ապօրինի  
ամուսնություն արտոնություն տալու կապակ-  
ցությամբ բախվելով արքունիքի հետ, ստիպ-  
ված է եղել հրաժարվել գահից: Նա թողել է  
մայրաքաղաքը և հեռացել Տերեվինթոս կղզին,  
որտեղ և կնքել է իր մահկանացուն<sup>28</sup>:

Անդրադարձ կատարելով ուղղափառ հա-  
րությանը Կիլիկյան թագավորության և Հռո-  
մոց կայսրության փոխհարաբերությունների  
հարվույթում արժե հիշատակել Աեոն Գ արքա  
(1269-1289 թթ.) և Կեոան թագուհու դստերը՝



Անդրոնիկոս III կայսր  
(1328-1341 թթ.)

Մարիա կայսրուհու որդին  
Մանրանկար  
բյուզանդական ձեռագրից

հինների անցել է «Ուղղափառության Սինոդիկին»,  
որն ընթերցվում է ամեն տարի՝ Մեծ պահքի առա-  
ջին կիրակի օրը<sup>29</sup>:

Մտտավորապես նույն այս ժամանակներում  
շուրջ 1323-1334 թթ. տիեզերական պատ-  
րիարք Եսայու (1323-1334 թթ.) Հայոց կա-  
թողիկոս Կոստանդին Դ Լամբրոնացուն (1323-

<sup>27</sup> Տես Գեդեօն, *Πίνακες*, էջ 351-353:

<sup>28</sup> Տես Գեդեօն, *Πίνακες*, էջ 369-371:

<sup>29</sup> Տես *Τριώδιον*, էջ 165:



1326 թթ.) և Ասոն Ե թագավորին (1320-1341 թթ.) ուղարկած նամակներից տեղեկանում ենք, որ Կոստանդնուպոլսի հայերն ինքնակամ Ուղղափառություն են ընդունել<sup>30</sup>:

### ԳԱՎՈՒԱՍՆԵՐԻ ՏՈՀՄՐՆ<sup>31</sup>

Հայկական արմատներ ունեցող բյուզանդացի անվանի տոհմերից է Գավուաս (Ղավուաս) ընտանիքը, որի ներկայացուցիչները XI դ. կեսից Խաղտիա (Խաղտիք կամ Ճանիք) բանակաթեմի կառավարիչներն են եղել: Վերջիններից նշանավորը Թեոդորոս Գավուասն է, որը 1075 թ. սելջուկներից ազատագրեց բանակաթեմի կենտրոնը՝ Տրապիզոն քաղաքը, ողջ Խաղտիքը, Բաբերդը և Կոլոնիա բերդերն ու հարակից փոքրհայքյան տարածքները՝ հաջողությամբ պաշտպանելով գրանք սելջուկների ու վրացիների ոտնձգություններից:

Շուրջ 1081 թ. Թեոդորոսն իր տիրույթներն անկախ հռչակեց, բայց ի վերջո սելջուկներին գերի ընկավ և, իսլամ ընդունելու պահանջը մերժելով, տանջալից մահով նահատակվեց 1098 թ. հոկտեմբերի 2-ին, Կարին քաղաքում:

1103 թ. Խաղտիքի դուքս դարձավ Թեոդորոսի և նրա առաջին կնոջ՝ Իրենե Տարոնացու որդին՝ Գրիգոր Տարոնացին: Գրիգորը հռչակեց իր տիրույթների անկախությունը Կոստանդնուպոլսից, իսկ շուրջ 1126-1140 թթ. որպես ան-

կախ տիրակալ՝ կառավարեց Թեոդորոսի շառավիղ Կոստանդին Գավուասը: Չնայած նրան, որ Գավուասների քայլերը ճնշվում էին կայսեր կողմից, հենց այս տոհմը հող նախապատրաստեց նրա համար, որ 1261 թ. Պոնտոսում հիմնադրվի Տրապիզոնի կայսրությունը:



Օրենող Քրիստոսը և բարեխոսող Աստվածամայրը Թեոդորոս Գավուասի և նրա կնոջ՝ Իրենե Տարոնացու հետ Մանրանկար, 1067 թ., Պետերբուրգի հանրային գրադարան

Գավուաս գերդաստանի մի ճյուղը ծառայության էր մտել փոքրասիական և հայկական հողերի մի մասի վրա իշխած Իկոնիայի (Ռումի) սուլթանությունում՝ պահպանելով հանդերձ ուղղափառ դավանությունը:

XIII-XIV դդ. Ակնի և Չմշկածագի տարածքում ստեղծված հայկական ձեռագրերում գրիչները որպես «բարեպաշտ» և «քրիստոսասեր» հիշատակում են Ասոն և Կոստանդին Գավուաս-

30 Տես Բարթիկյան, «Նոր նյութեր», էջ 293-295:

31 Տես Бартикян, «Гаврас»:

ներին, ինչպես նաև «շահնշահ» կամ «իշխանաց իշխող» Վասիլ Գավուասին<sup>32</sup>:

XIII դ. սկզբին Գավուասների մի այլ ճյուղ էլ Դրիմուս էր հաստատվել: Քանի որ Բյուզանդիան այս ժամանակ արդեն կորցրել էր իր փոզեմի հզորությունը, Դրիմի Գավուասները փաստացի անկախ տիրակալներ էին: Ուշագրով է, որ 1410 թ. Մխիթար Ապարանեցին ի շարք այլոց՝ որպես «ծաղ» հայոց բնակավայր է նշում Դրիմի Թեոդոսիան (Կաֆան). «...Որպես յայտ է այժմ ի Հոռոմոց տանէն մինչև ի Յոյնք և ի Կաֆա և ի յայլ տեղիս, որք բազումք կան ի նոցունց յամենայն տեղջս»<sup>33</sup>:

1475 թ., երբ Դրիմը վերջնականապես նվաճեցին մահմեդականները, Գավուասների իշխանությունը մեկընդմիջա տապալվեց:

### ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ԵՎ ԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ<sup>34</sup>

1071 թ. Մանազկերտի պարտությունից հետո, երբ Բյուզանդական կայսրության իշխանությունն արևելյան տարածքներում թուլացավ, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին՝ այդ շրջաններում անկախ իշխանություններ հիմնելու համար: Դրանցից առաջինն էր հայ



Փիլարտոս Վարաժնունու կնիք՝  
սր. Թեոդոսու Զորավարի պատկերով  
Վատիկանի հավաքածու

ազնվական Փիլարտոս Վարաժնունու (հունարեն՝ Ֆիլարտոս Վրախամիոս)<sup>35</sup> տերությունը: Նա ծառայության էր մտել կայսերական բանակում, Ուղղափառություն ընդունել, կյուրապաղատի և դոմեստիկոսի բարձր տիտղոսներին հասել<sup>36</sup>: Մանազկերտի ճակատամարտից հետո Փիլարտոսն իր իշխանության տակ հավաքեց ընդարձակ մի տարածք՝ Գերմանիկե (Մարաշ) կենտրոնով: Նա իր շուրջը համախմբեց բյուզանդական հողեր տեղափոխված հայ արքայական տների շառավիղներին ու ազնվականության ներկայացուցիչներին:

Փաստորեն, Անիի անկումից հետո Փիլարտոսն առաջինն էր, որ հղացավ հայկական պե-

<sup>32</sup> Տե՛ս Բարտիկյան, «Гаврас», III, էջ 163-169:

<sup>33</sup> Ալիշան, *Հայապատում*, էջ 553: Դրիմեցի օրթոդոքս հայոց մասին կան նաև կողմնակի տեղեկություններ (տե՛ս Սարգսյան, «Տայրի», էջ 411-413. Байбуртский, «Цаты»):

<sup>34</sup> Տե՛ս Степаненко, «Государство»:

<sup>35</sup> Փիլարտոսի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս Dedeyan, *Les Armeniens*, v. 1, 5-358:

<sup>36</sup> Տե՛ս Каждан, *Армяне*, էջ 26-28:

տականություն վերաստեղծման միտքը<sup>37</sup>: Կոստանդնուպոլիսը հարկադրված ճանաչեց Փիլարտոսի իշխանապետության օրինականությունը՝ վերջինիս շնորհելով պրոտոսեբաստոսի աստիճան: Վարածնունդին գրավեց Եդեսիան, Անտիոքը և Կիլիկիայի ամրությունները: Նրան հաջողվեց դիվանագիտորեն իր շուրջը հավաքել նաև Փոքր Ասիայի մահմեդական իշխանությունները՝ հակասելջուկյան դաշնակցություն ստեղծելով: Այս ամենը շուրջ 20 տարով երկարաձգեց սելջուկ թուրքերի առաջխաղացումը դեպի Արևմուտք:

Հոգ տանելով իր պետության շահերին, Փիլարտոսը խտրություն չէր դնում միջոցների մեջ: Պատմիչները խոսում են նրա բախտախնդիր, փառասեր բնավորության մասին՝ շնոհալով նաև քաջությունը<sup>38</sup>: Հայ տիրակալներին իրեն ենթարկելուն հետամուտ՝ նա կովի բռնվեց Սասնա անկախ տիրոջ՝ Թոռնիկ Մամիկոնյանի հետ որը ևս ուղղափառ հավատքն էր դավանում և 1059 թ. ետ էր շարտել Տարոն և Սասուն արշավող սելջուկներին<sup>39</sup>: 1072 թ. Ալեյուա դաշտում Թոռնիկը պարտության մատնեց Փիլարտոս Վարածնունուն: Վերջինս, անհաջողության բախվելով, հաջորդ տարի դավադրաբար սպանել տվեց Թոռնիկին: Սելջուկյան օղակը գնալով սեղմվում էր Փիլարտոսի տիրույթների շուրջ:

1086 թ. փորձելով գոնե ինչ-որ կերպ փրկել իրադրությունը՝ Փիլարտոսը հպատակություն հայտնեց սելջուկներին և խլամ ընդունեց: Սակայն ապարդյուն. նրա իշխանությունը տապալվեց, իսկ երբեմնի տիրակալն իր վերջին օրերը անցկացրեց ինչ-որ վանքում, հավանաբար ապաշխարության մեջ...

### ՊԱՂԵՍՏԻՆԻ ԵՎ ԱՍՈՐԻՔԻ ՀԱՅ ՎԱՆԱԿԱՆՆԵՐԸ

IV դ. հայոց արքաներն ու նախարարներն սկսեցին վանքեր ու եկեղեցիներ կառուցել Սբ. Երկրում: Ժամանակի ընթացքում դրանց թիվը մոտ 70-ի հասավ:

Վաղ շրջանի պաղեստինցի հայ վանականների մասին անգնահատելի տեղեկություններ է հաղորդում նշանավոր վարքաբան, Կյուրեղ Ալյութապոլսեցին (524-560 թթ.)<sup>40</sup>:

Պաղեստինյան վանականության հիմնադիրներից է եվթիմիոս Մեծը (մոտ. 377-473 թթ.)՝ ծննդով Մելիտենեից: Փոքր հասակից նա դաստիարակվել էր Մելիտենեի Օտրիոս եպիսկոպոսի խնամածության ներքո: Օտրիոսը եվթիմիոսին մկրտեց և ընթերցանողի հերակտրության արժանացրեց: Իր աստվածաբանական կրթությունը եվթիմիոսն ստացավ Ակակ և Սինոդիոս

37 Տես Ալալոյանեան, *Սահմանները*, էջ 100:

38 Մատթեոս Ուռհայեցին չափազանց բացասական է վերաբերվում Փիլարտոսին (տես Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն*, էջ 206-210): Ն. Աղոնցը սակայն կարծում է, որ շրջահայաց ու քաջ Փիլարտոսն իրականում միջնադարյան անարգանքների ու զրպարտանքների զոհն է (տես Աղոնց, «Փիլարտոսի ընտանիքը», էջ 495):

39 Տես Ակիմեան, *Թոռնիկեանց*, էջ 53, 82-83:

40 Նրա մասին համառոտ տես Դազարեան, «Կիւրեղ Ալիւքապոլսեցու», էջ 47:

ընթացանոցներից, որոնք հետագայում Մելիտե-  
նի եպիսկոպոսներ դարձան: Շատ շանցած՝ Եվ-  
թիմիոսը քահանա ձեռնադրվեց ու վանքերի տե-  
տուշ կարգվեց: 406 թ. քահանանամյա Եվթիմիոսն  
ուխտի եկավ Երուսաղեմ և այստեղ անապատա-  
կան դարձավ: Նրա հարևանն ու ճգնակիցն էր  
Քեոկտիստոսը՝ ծնունդով Մոփքի Հերապոլիս  
(հետագայում Չմշկածագ) քաղաքից<sup>41</sup>: Հետզհե-  
տե Եվթիմիոսի շուրջը հավաքվեցին աշակերտ-  
ներ, և նրանց համար եկեղեցի և խցեր կառուց-  
վեցին: 427 թ. նրա վանքի եկեղեցին օծվեց Երու-  
սաղեմի Հորնաղ պատրարքի (422-458/61 թթ.)  
անամբ: Եվթիմիոսի վանքն իր սքանչելի գործ  
հիմնադրի շնորհիվ մեծ համբավ ձեռք բերեց<sup>42</sup>:

Մելիտենեում ստացած լուրջ աստվածաբա-  
նական կրթությունը Եվթիմիոսին թույլ էր տալիս  
գործուն մասնակցություն բերել ժամանակվա  
գավառաբանական հույզերին: Նա պայքարել է  
աբիտականների, սաբելականների, մանիքեցի-  
ների, որոգինեսականների, նեստորականների  
դեմ: Աբբա Եվթիմիոսը չորրորդ Տիեզերաժողո-  
վի եռանդուն պաշտպան էր: Քաղկեդոնի Տիե-  
զերաժողովին մասնակցեցին Մեծն Եվթիմիոսի  
աշակերտները՝ Համնիայի եպիսկոպոս Ստեփա-  
նոսը՝ ծնունդով Մելիտենեից, և Սարակինոսաց  
եպիսկոպոս Հովհաննեսը: Նրանք ժողովից ան-  
միջապես հետո շտապեցին հրապարակված հա-



Սբ. Եվթիմիոս Մեծն ու Սարբան  
Որմանկար, XX դ., Մխիթարիչ  
Սբ. Հոգու վանք, Հունաստան

մնացին: Եվթիմիոսի վիթխարի հեղինակույթ-  
յունը նկատի ունենալով՝ Քեոկոսն ամեն կերպ  
աշխատեց նրան իր կողմը գրավելու, սակայն  
ապարդյուն<sup>43</sup>:

Եվթիմիոսի կրտսեր աշակերտներից էր Սաբ-  
բա Սրբացյալը (439-532 թթ.), որը Հորդանա-  
նի անապատում մի քանի վանք հիմնեց: Նրա  
հիմնած առաջին և գլխավոր մենաստանը Մեծ  
մայրավանքը (Լավրան) էր, որի միաբանության  
մեջ մեծ թիվ էին կազմում հայերը. հյուրեղ Սկ-  
յուլիապոլսեցու վկայությամբ՝ «Այս ժամանակ<sup>44</sup>

<sup>41</sup> Տես Ղազարեան, «Կիւրեղ Սկիւքապոլսեցոս», էջ 48, 53:  
<sup>42</sup> Եվթիմիոսի բազմաթիվ հրաշխներից է 400 հայ ուխտավորների կերակրումը, երբ սրբի աղոթքով դատարկ հացատունը  
ընդամենը լցվեց հացով, իսկ դատարկ անոթները՝ ձեռքով ու գինով (տես Schwartz, *Kyriillos*, էջ 8. Ղազարեան, «Կիւրեղ Սկիւքապոլս-  
եցոս», էջ 48-49):  
<sup>43</sup> Տես Ղազարեան, «Կիւրեղ Սկիւքապոլսեցոս», էջ 49, 54:  
<sup>44</sup> Շուրջ 491 թ.:



Սբ. Սաբբայի մայրավանքը

մայրավանք ընդունվեց աստվածակիր և աստվածային շնորհներով պայծառացած մի այր՝ ազգությամբ հայ, Երեմիա անունով, որն իր հետ Պետրոս և Պողոս անուններով նույնակենցաղ և ճգնակից երկու աշակերտներ ուներ: Մեր հայր Սաբբան նրանց համար շատ ուրախացավ, քանզի բարեպաշտ էին, և նրանց տվեց այն քարանձավն ու փոքր խուցը, որն իր քարայրից հյուսիս էր ընկած և որտեղ սկզբում ինքն էր ապրում, երբ հեղեղատում գեռ միայնակ էր: Եվ նրանց թույլ տվեց շաբաթ և կիրակի օրերը սաղմոսերգության կարգը հայերեն լեզվով կատարել: Եվ այսպես շատ կարճ ժամանակում հայերը մայ-

րավանքում բազմացան: Իսկ երանելի Երեմիայի հիշատակյալ աշակերտներից աստվածախոս Պողոսը՝ Մեծ մայրավանքում մինչև այժմ աստվածային առաքինություններով է առանձնացած. նրա մասին սքանչելի շատ բաներ է պատմում, և այստեղ գրված բաներից շատերը ինձ հեղինակչս, նա է ավանդել»<sup>45</sup>:

Երբ մայրավանքի վանականների թիվն աճեց, Սաբբան Աստվածածնի անունով մի մեծ եկեղեցի կառուցեց: Այստեղ տեղափոխվեցին հունախոս միաբանները, իսկ հայերն «աստվածաշենն կոչված եկեղեցի»<sup>46</sup> փոխադրվեցին. «Արդ, այնժամ [Սաբբան] հայերին փոքր աղոթարանից փոխադրեց՝ աստվածաշեն եկեղեցում սաղմոսերգության կանոնը հայոց լեզվով կատարելու՝ թույլ տալով նրանց «մեծացուցէք»-ն ու մնացյալ ժամակարգությունը հավաքներում առանձին, հայերենով ասել, իսկ աստվածային առաջադրության ժամանակ գալ ու հունախոսների հետ աստվածային հորհուրդներին հաղորդվել: Բայց քանի որ նրանցից ոմանք ձեռնարկեցին Երեքսրբյան երգն»<sup>47</sup> ասել «Թափիչ» մականվանյալ Պետրոսի հորինած «որ խաչեցար վասն մեր» հավելվածով, աստվածագան ծերն արդարացիորեն դժգոհեց ու հրամայեց, որ նրանք այս երգը հունարեն երգեն՝ ըստ Ընդհանրական եկեղեցու հին ավանդության...»<sup>48</sup>:

45 Scwartz, *Kyrillos*, էջ 105:

46 Սա Բարանձավային եկեղեցի էր, որն ըստ Կյուրեղ Սկյուրապոլսեցու՝ Սաբբային էին ցույց տվել հրեշտակները: Այստեղից՝ «աստվածաշեն» անվանումը: Եկեղեցին՝ օծված սբ. Նիկողայոսի անվամբ, կա առ այսօր և ծառայում է որպես վանքի միաբանական ոսկրանոց:

47 Երեքսրբյանի խնդրի մասին տես Казарян, «Армянские», էջ 61-65:

48 Scwartz, *Kyrillos*, էջ 117-118:



Սբ. Երեմիա Հայր  
Մանրանկար, հեղ. Գ. Ղազարյան, 2014 թ.

Սաբբայի վանքի հայտնի ճգնավորներից էր Հովհան Լուսկյացը: Նա ծնվել է 454 թ. Փոքր Հայքի Նիկոպոլսում, անվանի հայ ընտանիքում: Ծնողների մահվանից հետո Հովհանը Նիկոպոլսում Տիրամոր պատվին մի եկեղեցի կառուցեց և դրա կողքին տասը հոգուց բաղկացած փոքրիկ միաբանություն հիմնեց: Տասը տարի անց Սեբաստիո մետրոպոլիտը ժողովրդի պահանջով Հովհանին Կոլոնիայի եպիսկոպոս ձեռնադրեց: Տարիներ անց ճգնակեցության փափազը Հովհա-


նին ստիպեց ծածուկ թողնել իր թեմը. նա Պաղեստին մեկնեց և 491 թ., իր ինքնությունը թաքցնելով, որպես պարզ մոնիստ աշակերտության մտավ Սաբբայի մոտ: Հովհանի հետագա կյանքն անցավ հոգևոր ճգնություններով ու լուսակեցությանը:

Առատորեն օժտված լինելով մարգարեության ու հրաշագործությունների շնորհով նա ի Տեր ննջեց 559 թ.՝ 104 տարեկան հասակում: Հենց Հովհան Լուսկյացն է իր հոգևոր զավակ Կյուրեղ Սկյութապոլսեցուն հորդորել՝ գրելու Մեծն Եվթիմիոսի ու Սաբբայի վարքերը և հենց ինքն էլ Կյուրեղին փոխանցել է տեղեկությունների մեծ մասը: Կյուրեղը հեղինակել է նաև նույն ինքն Հովհանի վարքը՝ նրան այսպես բնութագրելով. «...Ամենասուրբ Հոգու սրբագործյալ տաճար էր դարձել, աստվածային շնորհներով էր զարդարված ու լուսակիր էր: Նա մինչև այժմ հրեշտակների պես է ապրում և բառ Աստուծո մեր քայլերն է լուսավորում»<sup>49</sup>:



Սբ. Հովհաննես Լուսկյացը  
Մանրանկար Վասիլ կայսեր Հայսմավորքից, X դ., Վատիկանի գրադարան

49 Scwartz, Kyrillos, էջ 105:



Սբ. Թեոդոսի վանքի

Մեծ թվով հայ վանականներ կային Սաբբայի մտերիմ բարեկամ Թեոդոս Մեծի (շուրջ 423-529 թթ.) մայրավանքում, որի միաբանությունը կազմված էր հույներից (հունախոսներից), վեսսերից (թրակացի ժողովուրդ) ու հայերից (το τῶν Ἀρμενίων φύλον): Թեոդոսն այս երեք խմբերի համար կառուցեց առանձին եկեղեցիներ, որտեղ ամեն ազգ օրական յոթն անգամ ժամերգություն էր կատարում իր մայրենի լեզվով: Վեսսերն ու հայերը Պատարագը մատուցում էին իրենց եկեղեցիներում մինչև Ավետարանի ընթացանությունը ներառյալ, որից հետո անցնում էին հունաց եկեղեցին՝ վանահոր ու մնացյալ միաբանների հետ բոլորով միասին հաղորդվելու<sup>50</sup>:

529 թ. Թեոդոսի մահվանից հետո նրա իսկ վերջին կամքի համաձայն վանահայրությունն

ստանձնեց Սոփրոնիոսը: Ազգությունը նա հայ էր՝ Սեբաստիո շրջանի Զոմերի գյուղից: Երիտասարդ տարիքում նա եկել էր Պաղեստին և Մեծն Թեոդոսի աշակերտը դարձել: Սոփրոնիոսը քառակի մեծացրեց վանքի տարածքը, եռակի բազմացրեց միաբանների թիվը և կառուցեց Տիրամորը նվիրված կաթողիկեն: Նա մահացավ տանչորսամյա բազմավաստակ վանահայրությունից հետո՝ 542 թ.<sup>51</sup>:




Սբ. Սոփրոնիոսը

Մանրանկար, հեղ. Գ. Ղազարյան, 2014 թ.

50 Sĕu Usener, Vita, էջ 20-21: Սբ. Թեոդոսի ու շրջանի վարժագիր Սիմեոն Մետաֆրաստը նշում է, որ ժամերգությունների այդ կարգը կենդանի է եղել ընդհուպ իր ժամանակները, այսինքն՝ X դ. (տե՛ս PG 114, 508):

51 Sĕu Schwartz, Kyrillos, էջ 240-241:



Քոզիրա (Խուզիվա) վանքը

Այս մենաստանի քարանձավային դերեզմանոցում պահպանվել են հայ միաբանների գերեզմաններ՝ հայերեն արձանագրություններով՝:

Օրթոդոքս հայոց ներկայությունը Պաղեստինում վկայված է նաև ավելի ուշ շրջանում. Այսպես, XI դ. վերջում Պաղեստինում և Ասորիքում՝ մասնավորապես Սև Լեռան վրա բնակվող «ծայթ» վանականների դեմ շարժում սկսվեց. նրանց մեղադրում էին հերետիկոսության, ինչպես նաև պաշտամունքը հայոց լեզվով մատուցելու համար: Երուսաղեմի նվթիմիոս I (1084 թ.) հայրապետի առջև «ծայթ» վանականների ջերմ պաշտպանությամբ հանդես եկան Անտիոքի պատրիարքության բարձրաստիճան հոգևորականներն ու Սբ. Սիմեոն

Աբանչելի լեռան վանքի առաջնորդ Պետրոսը: Անտիոքի հոգևորականությունը դատապարտեց այն անձանց, որոնք սատանայական ազդեցությունից շարժված՝ հարձակվում ու վիրավորում են «ծայթ հայերի, այսինքն՝ հայոց կրոնի ճգնավորների վրա»՝ անիրավորեն կասկած հարուցելով նրանց հավատքի վերաբերյալ<sup>52</sup>:

Հայ վանականների պաշտպանության եռանդուն ոգևորողն ու կազակերպիչը դարձավ հայտնի կանոնագետ ու մատենագիր, Սև Լեռան Նուան Հատիկի Սբ. Աստվածածին վանքի առաջնորդ Նիկոնը<sup>53</sup>: Երուսաղեմացի Գերասիմոս վանականին գրված իր թղթում Նիկոնը հաստատում է «ծաղ» հայոց ուղղափառությունը և, հղում կատարելով Սաբբայի ու Թեոդոսի վարքերին, հիմնավորում մայրենիով պաշտամունք կատարելու նրանց իրավունքը: Նիկոնը վստահեցնում է, որ «ծաղ» կոչված եղբայրները, որտեղ էլ որ բնակվում են, Քրիստոսի շնորհով անթերի են հավատքի մեջ, իսկ նրանց քահանայությունն ու կարգերը՝ օրինավոր: Նա տեղեկացնում է, որ իր գլխավորած Սբ. Աստվածածին վանքում միևնույն եկեղեցում, բայց տարբեր դասերից հույ-

\* Տես Աղանունի, *Վանքեր*, էջ 374:

52 Տես Hannich, *Das Taktikon*, էջ 876. Бенешевич, *Описание*, էջ 584-585. Արմց, «Հայ-ժարտի», էջ 538: Հմմտ. Марр, «Аркауны», էջ 33-34: Ըստ Պ. Մուրադյանի՝ «հայ-ֆաղկեդոնյաները ծխամատյանների սեփական խմբագրությունները կազմելիս բազմամական հուշարձանների հետ մեկտեղ դիմում էին նաև ազգային հայ մատենագիրներին՝ համարելով, որ իրենք վերջիններիս լիիրավ ժառանգորդներն ու հայրենական մատենագրության զարգացման մեջ ազգային ավանդույթների կրողներն են»: «Պատահական չէ, - շարունակում է հետազոտողը, - որ հարակից երկրների հավատակիցները միշտ չէ, որ լիովին վստահում էին հայ-ֆաղկեդոնյաներին... Հայ-ֆաղկեդոնյաները չէին ցանկանում և չէին վճռում կտրվել ազգային գրական-մշակութային հողից, և նրանց գործունեության հանդեպ դա կասկածամտություն էր գրգռում» (Мурадян, «Культурная деятельность», էջ 327-328):

53 Նիկոնի մասին տես Գիւրջոս, *Νίκων*: Նշյալ վանքը եղել է «ծայթ» հայերի մենաստանը՝ գոյություն ունենալով XI դ. երկրորդ կեսից մինչև առավազն XII դ. առաջին կեսը: Սրանից բացի՝ հայ վանականներ եղել են նաև Անտիոքի տարածաշրջանի հունական, վրացական և ասորական վանքերի միաբանությունների մեջ (տես Брюн, *Ромеи*, т. 2, էջ 142-143):



ները հունարեն են երգում, հայերը՝ հայերեն<sup>54</sup>: Հեռաքրքրական է նշել, որ Ասորիքի Աքանչելի լեռան վրա հույն վանականների հետ միասին բնակվում էին «իվեր», այսինքն՝ վրացի վանականներ, որոնց մի մասն ըստ երևույթին տայեցի ուղղափառ հայեր էին: Տեղի հույն վանականներն Անտիոքի Քեոզոս III հայրապետի (1057-1079 թթ.) առաջ այս իվերներին մեղադրում էին հերետիկոսության համար, ընդ որում պատրիարքի հարցաքննության ժամանակ հույներն ի վերջո ասում են, որ իրենք էլ ճշգրիտ չգիտեն՝ մեղադրյալները վրացի՞ են, թե՞ հայ<sup>55</sup>: Երևում է, որ հայ վանականները վրացիների հետ ունեցած դավանակցության ու սերտ կապերի պատճառով «իվեր» են կոչվել՝ պահպանելով հանդերձ իրենց ազգային գծերը. մի բարդ հանգամանք, որ ի վերջո շփոթի է մատնել հույներին<sup>56</sup>:

Մեկ դար անց ուղղափառ ասորիների, հայերի

և առհասարակ ոչ հույների այդ նույն իրավունքի պաշտպանությունը զբաղվեց նշանավոր կանոնագետ, Անտիոքի պատրիարք Քեոզոս IV Բալսամոնը (1193-1199 թթ.): Նա հաստատում էր օտարների՝ մայրենի լեզվով ժամերգություն կատարելու իրավունքը՝ նախապայմանով, եթե օտարազգիները հունարեն բոլորովին չգիտեն, և եթե կան ծիսական բնագրերի ճշգրիտ թարգմանությունները<sup>57</sup>: Բնականաբար, Բալսամոնի այս նախապայմանաահմանափակումը վերաբերում էր միայն այն պարագային, երբ օտարազգի վանականները հունալեզու միաբանություններ էին մուտք գործում: Ինչ վերաբերում է ուղղափառ հայոց ներկայությունը Պաղեստինում, ապա այն շարունակվել է ընդհուպ XV դ.: Այսպես, 1455 թ. Սաբբայի մայրավանքում ոմն Քաղեսո սարկավագ ընդօրինակել է հայերեն Ավետարան, և դա միակ հայկական ձեռագիրը չէ, որ մեզ է հասել նշված սրբավայրից<sup>58</sup>:

54 Տես Hannich, *Das Taktikon*, էջ 884. Бенешевич, *Описание*, էջ 586-589: Հմմտ. Ադոնց, «Հայ-ժաթերի», էջ 539. Марр, «Аркауны», էջ 34-37. Герд, «Армяне и грузины», էջ 198-203:

55 Տես *Vita Georgii Hagioritae*, էջ 113. Арутюнова, «К вопросу», էջ 93:

56 Տես Арутюнова, «К вопросу», էջ 93: Պետք է նշել, որ էթնոնիմների միջնադարյան իմաստները շատ նրբին են, և պոռֆ. Գեորգիոս ավագ ֆին Մետալիևոսի պնդմամբ՝ «Կայսրության ժողովուրդների անունները և մանավանդ դրանց պատմական կիրառությունը գիտության ամենադժվարին խնդիրներից է» (*Μεταλληνός*, «*Ἡ αὐτοκρατορία*», էջ 44): Այսպես, Միջնադարում «հելլեն» նշանակում էր «հեթանոս», իսկ «գրեկ» էթնիկոնն Արևելք-Արևմուտք դավանաբանական առնակատման համատեքստում դարձավ «հերետիկոս», «գող», «խաբեբա» բառերի հոմանիշը՝ մի բան, որ առ այսօր մնացել է անգլերենում: Նույն հակամարտության շրջանակներում՝ Արևելքում «հերետիկոսի» հոմանիշները դարձան «լատին» և «ֆրանկ» էթնոնիմները: Հետևաբար զարմանալի չէ, որ «հայ» էթնիկոնն իր ուղիղ նշանակությունից բացի ձեռք էր բերել նաև կրոնական իմաստներ: Այսպես, բյուզանդական աղբյուրներում «հայը» կարող էր նշանակել «միաբնակ», «պավլիկյան», «բողոքի», նույնիսկ «անաստված» (տես *Τριώδιον*, էջ 342. ArchAth XVIII, էջ 135). «Հայ» էթնոնիմի իմաստների այս տհաճ բազմազանությունը մի գործոն էր, որը հերետիկոսությունների մեջ կասկածվող օրթոդոքս հայերին կարող էր մղել՝ ապավինելու «իվեր» անվանմանը: Այսպիսով, կարելի է փաստել, որ «Ք-ժԱ. դարերի սահմանազլխին արդեն «հայ» և «վրացի» էթնոնիմները ձեռք էին բերել դավանական իմաստավորում» (հմմտ. Մուրադյան, *Գոշի թուղթը*, էջ 10. Арутюнова-Фиданян, «Ивер», էջ 46-67:

57 Տես Ράλλης-Ποτλής, *Σύνταγμα*, τ. Δ', էջ 452-453:

58 Տես Աղանունի, *Վանքեր*, էջ 359-360:

## ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Եկեղեցու պատմության առաջին իսկ ժամանակներից քրիստոնյա աշխարհի կարևորագույն կենտրոններից մեկը դարձավ Հռոմեական կայսրության մայրաքաղաքը՝ Հռոմը, որի պատրիարքը (պապը), մեծ հեղինակություն վայելելով, համարվում էր հավասար եպիսկոպոսների մեջ առաջինը: Հավիտենական քաղաքի հեղինակությունը քրիստոնյա աշխարհում ամրագրվում էր Պետրոս և Պողոս առաքյալների գերեզմանով: Զարմանալի չէ ուրեմն, որ բավականին վաղ՝ VII դ. Հռոմում կար Հայոց վանք, որի վանահայր և երեց Թալասիոսը մասնակցել է 649 թ. Լատերանի ժողովին<sup>59</sup> և ստորագրել դրա որոշումների տակ<sup>60</sup>: Հռոմի Հայոց վանքը նվիրված է եղել Աստվածածնին և Անդրեաս առաքյալին: Այն հիշատակված է մոտավորապես մինչև IX դ. սկիզբը<sup>61</sup>:

X-XI դդ. նկատվում է հայ ճգնավորների ուխտագնացական ձգտումը դեպի Արևմտյան Եվրոպա: Այս ժամանակաշրջանից, երբ դեռևս տեղի չէր ունեցել Մեծ սխիզման (1054 թ.), հայտնի են մի քանի հայազգի ճգնավորներ, որոնք բնակություն են հաստատել Եվրոպայում և սրբադասվել Արևմտյան Եկեղեցու կողմից:

Այդ սրբերից ժամանակագրորեն առաջինն է Մակարը, որը ծնվել է 970 թ., Պիսիդիայի Ան-

տիոք քաղաք գաղթած հայ ազնվական ընտանիքում: Մանկանը մկրտել էր տեղի մետրոպոլիտը՝ նրան տալով իր անունը: Մեծանալով՝ Մակարը յուրացրեց մայրենին, հունարենն ու ասորերենը, իսկ հետագայում դարձավ Անտիոքի մետրոպոլիտ: Սրբակենցաղ ու հրաշագործ Մակարի համբավն արագ տարածվեց Փոքր Հայքում ու Ասորիքում, ինչից դժգոհելով՝ Մակարն իր շորս ազգականների հետ ծածուկ մեկնեց Երուսաղեմ, ապա ուղևորվեց Կերմանիա և Բավարիա: 1011 թ. Մակարը դադար առավ Ֆլանդրիայում, որտեղ բռնկված ժանտախտի ժամանակ դարմանում էր հիվանդներին՝ մարգարեանալով այն մասին, որ համաճարակը կղաղարի իր մահվանից հետո: Եվ իսկապես, Մակարն ինքը ևս մահացավ ժանտախտից, որից հետո համաճարակը դադարեց<sup>62</sup>:

Շուրջ 1012 թ. Պաղեստինից Հռոմ ժամանեց հայ միայնակյաց Սիմեոնը: Նա ծնվել էր 956 թ. հայ մեծատոհմիկի ընտանիքում: Հրաժարվելով իրեն պարտադրված ամուսնությունից՝ Սիմեոնը վանական էր դարձել Հայաստանում, ապա մեկնել էր Երուսաղեմ: Հռոմ գալով սքանչելագործ Սիմեոնն արժանացավ պապի ջերմ ընդունելությանն ու խնամածությունը, սակայն խուսափելով փառքից, շրջեց Իտալիայի տարբեր վայրերով, ապա մեկնեց Իսպանիա՝ խոնարհվե-

59 Ժողովը հրավիրվել էր Հռոմի պապ Մարտին I-ի (649-653 թթ.) և նշանավոր աստվածաբան, եկեղեցու Հայր Մահմանու Խոստովանողի ջանքերով՝ դատապարտելու համար Բիստոսաբանական մի մոլորություն՝ միակամությունը, որի համաձայն Քրիստոսն ունի մեկ կամք՝ միայն աստվածայինը (տես Փեյձազ, *Ἐκκλησιαστική Ἱστορία Α'*, էջ 747-748):

60 Տես Mansi 10, 903-904.

61 Տես Leclercq, «Rome», col. 2985: Հռոմի Հայոց վանքի մասի առավել մանրամասն տես Казарян, «К вопросу».

62 Տես Չամչեանց, *Պատմություն*, հ. Բ, էջ 858-860:


լու Հակոբոս Զեբեդյան առաքյալի մասունքներին: Դրանից հետո Սիմեոնը եղավ նաև Բրիտանիայում ու Ֆրանսիայում: Ի վերջո նա հանգրվանեց Իտալիայի Մանտովա քաղաքում՝ մուտք գործելով բենեդիկտյան Պադուլիոն վանքի միաբանություն: Սիմեոնը կնքեց մահկանացուն 1016 թ. և թաղվեց նույն վանքում<sup>63</sup>:

XI դ. սկզբում ապրած սրբերից է Փոքր Հայքի Նիկոպոլսի եպիսկոպոս Գրիգորը: Անհայտ պատճառներով նա թողեց իր եպիսկոպոսական աթոռը և, օտարականի ճգնությունը հանձն առնելով, գնաց Հյուսիսային Ֆրանսիա: Այստեղ նա բնակություն հաստատեց Օրլեանի մերձակայքում, որտեղ և մահացավ յոթնամյա ճգնությունից հետո<sup>64</sup>:

Գրիգորի ժամանակակիցն է հայաստանցի Դավիթը (լատ. Դավինուս) որը, իր ունեցվածքը տնանկերին բաժանելով, կամավոր աղքատ էր դարձել: Հայաստանից նա ուխտի գնաց Հռոմ, հավանաբար նաև՝ Իսպանիա, ապա եկավ Տոսկանա՝ Լուկկա քաղաքը, որտեղ և հոգին առ Աստված ավանդեց 1050 թ.<sup>65</sup>:

## ՀԱՅ ՎԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՍԲ. ԼԵՌԱԹՈՍՈՒՄ

«Աստվածամոր պարտեզ» կոչվող Աթոսում, որն առ այսօր ուղղափառ վանականության



Սբ. Հովսեփ Մյուտոնարոյսը  
Մանրանկար, հեղ. Գ. Ղազարյան, 2014 թ.

կարևորագույն կենտրոնն է, վանականներն սկսել են բնակություն հաստատել VII դ.: 830 թ. արաբական սպառնալիքի պատճառով Աթոսն ամայացավ: Այդ ամայացումից քիչ անց Սբ. Լեռ վերադարձած վանականներից էր Հովսեփը:

Նրա մասին մեզ տեղեկություններ է հաղորդում նրան տեսած Թեսաղոնիկեի արքեպիսկոպոս Վա-

63 Տես Չամչեանց, Պատմություն, հ. Բ, էջ 860-866:

64 Տես Πρεμετίδης, *Ἡ Μητρόπολις*, էջ 99:


65 Տես Աւգերեան, *Կիսկատար*, հ. ԺԳ, էջ 120-128: Bacci, «An Armenian», էջ 548-558: 2018 թ. սբ. Դավինուսի անապական մարմինը ենթարկվել է բժշկական հետազոտության, որը հետաքրքիր մանրամասնություններ է բացահայտել նրա կյանքի վերաբերյալ (տես Αγαπατιάδ, «*Ο Αρμένιος Άγιος*», էջ 54-55):

սիրը, որի համաձայն՝ Հովսեփը «ծածուկ ու գաղտնի մեկը չէր, թեպետև հայոց ազգից էր սերում, այլ անշար էր, բարբոժ պարզ ու աննենգ»<sup>66</sup>:

Շուրջ 859 թ. Աթոս եկավ Եվթիմիոս Նորը (823-898 թթ.), որը Հովսեփի ճգնակիցը գարձավ, իսկ 866 թ. Հովսեփը, Եվթիմիոսն ու վերջինիս աշակերտներն արաբների հերթական սպառնալիքի պատճառով հեռացան Աթոսից՝ բնակություն հաստատելով ոչ շատ հեռու գտնվող Վուսստամա (այժմ՝ Վուսստա) վայրում: Շուրջ 875 թ. Հովսեփն այս նոր տեղում մահացավ, իսկ նրա մարմինն անապական մնաց: Վասիլ Թեսաղոնիկեցին՝ որպես ակնաատես վկայում է. «Պատվական ու բազում ճգնությունք լի մարմինը տեսանք ու մեր իսկ ձեռքերով շոշափելով՝ սքանչացանք անապականության համար: Եվ ոչ միայն դա, այլ երբ մենք դեռ ներկա էինք այնտեղ, մեր Աստվածը սրբի քունքերից անուշաբույր մյուռոն հոսեցրեց՝ սրբի գլխից մինչև սրբագույն ոտքերը գետակի պես թափվելու աստիճան»<sup>67</sup>:

Այսպիսով, Հովսեփ Մյուռոնաբույսն աթոսացի առաջին վանականն է, որի մասին մեզ են հասել պատմական ստույգ տեղեկություններ:

Աթոսը վերջնականապես վերաբնակեցվեց 870-ական թթ., երբ Վասիլ I կայսրը հատուկ



Սբ. Հովսեփի ճգնարանը Վուսստայում

հրամանագրով պաշտպանեց վանականներին աթոսաբնակ աշխարհականներից և վերջիններիս արգելեց Աթոսում խաշնարածությունը զբաղվել: Վասիլ Մակեդոնացի, Առն Իմաստուն և Ռոմանոս Լակապենոս կայսրերի հրովարտակներով Աթոսը հռչակվեց որպես բացառապես վանական ճգնանքի վայր:

Աթոսյան վանականության բուռն զարգացումն անբակտերիորեն կապված է Աթանաս Աթոսացու (920/30-1004 թթ.) փառավոր անվան հետ: Աթանասը վանական հերակտրություն էր ընդունել

66 Petit, «Vie», էջ 29-30: Հայոց հանդեպ Վասիլի վերաբերմունքը բառացի ազդված է Գրիգոր Աստվածաբանի հետևյալ խոսքից. «Գանում եմ, որ հայերը պարզ ազգ չեն, այլ հույժ ծածուկ ու գաղտնի» (PG 36, 517): Այս օրինակը լավագույնս ցույց է տալիս, թե ինչ պատահական գործոններ կարող էին ազդել հայերի հանդեպ Բյուզանդիայում շրջանավոր կարծիքների վրա: Եվ մեկ խոսույն օրինակ է շարականագիր Կասիա միանձնուհին (IX դ.). նա կապաղովկիացիներին հասցեագրված մի էին վիրավորական արտահայտություն մեհենայաբար վերագրել է հայերին, քանի որ իր ժամանակներում, երբ հայության հոծ գանգվածներ էին գաղթել Կապաղովկիա, «կապաղովկիացի» և «հայ» էթնոնիմներն արդեն հոմանիշ էին դարձել (տես Աղոնց, «Կասիա միանձնուհին», էջ 43-47):

67 Petit, «Vie», էջ 37:




Արարի Պոռտասի եկեղեցին՝  
կառուցված 965 թ. Աթանաս Աթոսացու կողմից և Լևոն Փոկաս  
մագիստրոսի հովանավորությամբ

953 թ. Բյուզանդիայի Կիմինաս լեռան վանքի վանահայր Միքայել Մալեինոսի (Մլեհյա՛ն, 894-962 թթ.) ձեռամբ: Վերջինս նիկեփոր Փոկասի քեռին էր և Ռոմանոս Լակապենոսի ազգականը: Շուտով Աթանասը Փոկաս եղբայրների՝ նիկեփորի և Լևոնի խոստովանահայրը դարձավ:

958 թ. Աթանասը տեղափոխվեց Աթոս, իսկ 963 թ. նիկեփոր Փոկասի հորդորով ու հովանավորությամբ նա կառուցեց աթոսյան առաջին մայրավանքը՝ Մեծ լավրան, որը կարճ միջոցում համաշխարհային հռչակ ստացավ. աշխարհի տարբեր ծայրերից՝ «Հոռմից, Կալաբրիայից, Ամալֆիայից, Իվերիայից, Հայաստանից»<sup>68</sup> և այլ երկրներից Աթանասի մոտ միաբաններ ժամանեցին:

Աթանասի մայրավանք ընդունվեց նաև Դավիթ Կյուրապաղատի պալատական Աբուլհե-

րիթը (շուրջ 930-1005 թթ.): Աբուլհերիթը ծնվել էր Արտանուշում, աչքի ընկել զինվորական ասպարեզում, սակայն հրաժարվել էր աշխարհիկ կյանքից և վանական հերակտրություն ընդունել Տայոց Չորդվանում՝ ստանալով «Հովհաննես» անունը: Հետագայում նա մեկնել էր Բյուզանդիայի Օլիմպոս լեռը, որը հայտնի էր իր վանքերով, իսկ մոտ. 972 թ. եկավ Մեծ լավրա՝ դառնալով Աթանասի գործունյա օգնականն ու ընկերը: Շուրջ 980 թ. Աթոս ժամանեց տայեցի մեկ այլ ազնվական՝ Թոռնիկ գորավարն իր



Սբ. Աթանասի Մեծ Լավրան


եղբոր՝ Վարազվաչեի հետ միասին: Հայտնի է, որ Թոռնիկը ծնվել է Կարնո շրջանում և Աբուլհերիթի ազգականն էր՝ կնոջ եղբայրը և կամ քեռորդին<sup>69</sup>: Թոռնիկն ու Վարազվաչեն, հրաժարվելով զինվորական ասպարեզից, վանա-

68 Noret, *Vitae Duo*, էջ 74-75, նաև՝ 176: *Ἰβηρία* ասելով՝ հույն վարժագիրն այստեղ նկատի ունի Տայքը:

69 Թոռնիկի տոհմի վերաբերյալ հայագետների կարծիքները միանշանակ չեն: Այսպես, ըստ Արոնցի՝ Թոռնիկյանների (հունարեն՝

կանություն էին ընդունել Օշկի Սբ. Հովհաննես Մկրտիչ վանքում՝ երկուսն էլ ստանալով «Հովհաննես» անունը: Ուշագրավ է, որ մինչև Աթոս փոխադրվելը, 976-979 թթ. Թոռնիկը հայերեն արձանագրությամբ մի խաչքար էր կանգնեցրել Արծնում (հետագայում՝ Կարնո Ղարարզ գյուղը)<sup>70</sup>: Մեկ այլ հայատառ խաչքար էլ նա կանգնեցրել էր Անիի Սբ. Աստվածածին մատուռում, որի տեղում հետագայում Տիգրան Հոնենցը կառուցել է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին<sup>71</sup>:

Ժամանակի ընթացքում Հովհաննես Իվերը, Թոռնիկն ու յուրայինները՝ իտալացի վանականների հուշմամբ, առանձին վանք ստեղծելու միտք հղացան: Աթանաս Աթոսացու արտոնությունը նրանք հեռացան Մեծ լավրայից և 979-984 թթ. հիմնեցին մի նոր վանք, որն ստացավ «Իվերների վանք» (հունարեն՝ Μονή Ἰβήρων) անվանումը: Այս մենաստանի բուն կոտորուն է համարվում զորավար Թոռնիկը (մահ. 984 թ.):



Հատված՝ Թոռնիկի գրչագրած ձեռագրից՝ վրացերեն տեխսից հետո հայերեն երկարագրով ՏԲ ԱՅ գրույթյամբ Աթոս, Իվերոն վանքի թիվ 9 վրացերեն ձեռագիր՝

Իվերոնի սկզբնական միաբանությունը կազմված էր ընդամենը 6-7 հոգուց, քանի որ Աթանասի պատվերի համաձայն, դրա թիվը 8-ից չպիտի անցներ: Հեռզհետե, սակայն, միաբանությունն ընդլայնվեց՝ իր շարքերն ընդունելով ոչ միայն «Իվերների»՝ ուղափառ վրացիների և հայերի, այլև հույների, անգամ՝ իտալացիների: 1005 թ., երբ վանահայր դարձավ Հովհաննես

Թոռնիկյոսների) տոհմը սերում էր Տարոնի Բագրատունիներից (տես Ադոնց, «Թոռնիկ վանական»): Իսկ Ալիկյանը կարծում է որ Թոռնիկյանները Մամիկոնյանների նյուտն էին (տես Ալիկեան, *Թոռնիկեանց*, էջ 64): Վերջերս Վ. Ստեպանենկոն համոզիչ կերպով ցույց է տվել, որ Թոռնիկն իրականում կապ չունի Թոռնիկյանների հետ, իսկ նրա ազգային պատկանելության մասին, հետազոտողը գրում է, որ Թոռնիկի «Ընտանիքը, ամենից հավանական է որ հայկական ծագում ուներ, իսկ նրա ժամանակակից Ստեփանոս Տարոնացու կաթմբն այն մասին, որ Թոռնիկն ինքն իրեն արդեն վրացի էր համարում, հաստատվում է ինքն Թոռնիկի և նրա ազգականների մշակութային գործունեությանը» (Степаненко, «Чортванели», էջ 147): Պետք է սակայն նշել, որ Ստեփանոս Ասողիկն ինքն էլ Թոռնիկին վրացագազի համարում (միթոս ոչ դավանամաթի պատճառով)՝ ոչինչ չասելով զորավար-վանականի ինքնագիտակցության մասին: Հարկավ, ազնվական ընտանիքներում ընդունված էին միջազգային ամուսնությունները, ինչի պատճառով էլ չի կարելի միանշանակ ու կտրուկ բացառել տայեցի մեծատոհմիկների ոչ հայկական, ոչ էլ վրացական արմատները: Սակայն եթե այս կամ այն ընտանիքը գիտեք իր տոհմաձուրը, ապա կարող էր արդյոք հեշտությամբ հրաժարվել դրանից, անգամ եթե դավանամաթի խնդիր կար: Տեղին է մեջբերել հ. Ներսես Ալիկեյանի դիտողությունը. «Ինչպես խաչարի արձանագրութիւնը կը վկայէ, Թոռնիկ հայ էր, գիտեք իր մայրենի լեզուն. բայց ծէսով պատկանելով Վրաց եկեղեցոյն՝ ընտելացած էր նաեւ վրացերէնի. այս պարագան առիթ տուած է Ստ. Ասողկան նկատելու զինքը «յազգէն Վրաց»» (Ալիկեան, *Թոռնիկեանց*, էջ 64-65):

\* Տես Gipper, *Holy Monastery*, էջ 108:

70 Տես Ալիկեան, *Թոռնիկեանց*, էջ 62, 65-66:

71 Տես ԴՉՎ, պր. I, էջ 64: Սույն արձանագրությունը նախկինում վերագրվում էր Վարազվաշեին, սակայն Ս. Բարխուդարյանի կողմից վերձանվելուց հետո պարզ է, որ հեղինակը միևնույն «Չորովանեկի» որդի Թոռնիկն է:



Սբ. Եվթիմիոս և Վևորդ Իվերները  
Որմնանկար, Պոնտական Սբ. Աստվածածին վանքի կաթողիկոս, XIII դ.

Իվերի որդին՝ Եվթիմիոսը (955-1028 թթ.)<sup>72</sup>, Իվերոն վանքն արդեն ուներ ավելի քան 200 միաբան: Եվթիմիոս Իվերն առավել հայտնի է որպես աստվածաբանական գրականության անխոնջ թարգմանիչ հունարենից վրացերենի: Այսպես, Ավետարանի նոր վրացերեն թարգմանութ-

յունը նա ուղարկեց Գավրիթ Կյուրապաղատին, որի հրավերքով էլ եկավ ու շորս տարի մնաց Տայքում ու Վիրքում: Իվերոնի գարթոնքը շարունակվեց հաջորդ վանահոր՝ Վևորդ Իվերի օրոք (1044-1065 թթ.): Վերջինս վանական հերակտրություն էր ստացել Տայքի Խախու վանքում:

Իվերոնի վանքում հետագայում էլ ըստ երևույթին, վրացի և հույն միաբանների հետ մեկտեղ եղել են նաև որոշ հայ միաբաններ<sup>73</sup>:

971 թ. Հովհաննես Չմշկիկը հաստատեց Աթոսի առաջին կանոնադրությունը՝ նշանավոր «Տրագոսը»: Սբ. Լեոան հետագայի կանոնադրությունները հիմնված են Չմշկիկյան դրույթների վրա: Բացի այդ, Չմշկիկը մեծ բարերարություններ արեց լավրային, այնպես որ ցարդ պատվվում է որպես մենաստանի երկրորդ կոտոր՝ Նիկեփոր Փոկասից հետո:

Հավանաբար X դ. երկրորդ կեսին է հիմնվել Հայի (Μονή Ἀρμενίου) կամ Հայոց (Μονή Ἀρμενίων) վանքը՝ Քսիթոկաստրոն վայրում<sup>74</sup>: Մի ենթադրության համաձայն՝ Ողորմած Տիրամորը նվիրված այս մենաստանը հիմնվել է 967 թ. հետո տարոնացի վանականների կող-

72 Հովհաննես և Եվթիմիոս Իվերների վրացական երկու վարժերից մեկում հետաքրքիր մի մանրամասնություն է հաղորդվում. երբ մանուկ Եվթիմիոսին Տայքից Կոստանդնուպոլիս են բերում, երեխան չի իմանում ո՛չ վրացերեն, ո՛չ էլ բնականաբար հունարեն: Ավելին, նույն վարժի համաձայն՝ Եվթիմիոսը կարողանում է ազատ խոսել վրացերեն միայն Աստվածամոր կողմից հրաշքով բժշկությունից հետո (տես *Vita Iohannis atque Euthymii*, էջ 32-33): Այն, որ Եվթիմիոսը վրացերեն չի իմացել նույնսիկ խոսակցական մակարդակով, թույլ է տալիս ընդունել, որ նրա մայրենին հայերենն է եղել: Ոստի, եթե բացառվի այն, որ Եվթիմիոսի հայրը՝ Աբուպիտիթը, հայկական ծագում ուներ, այսպես գոնե հայ էր նրա կինը, քանի որ Թռոնիկն էլ Աբուպիտիթին ազգական էր հենց կնոջ կողմից:

73 Այսպես, Իվերոնի մատենադարան թիվ 8 ձեռագիրը, որ գրվել է X դ. վերջում և կամ XI դ., VII-VIII դդ. հայերենից վրացերենի թարգմանված վարժեր է պարունակում, ընդ որում այստեղ են անթեղված այնպիսի հայ սրբերի վարժեր, որոնք Բյուզանդիայում անձանք էին՝ սբ. Ոսկյան, Սանդուխտ կույսը, Ներսես Մեծը ևն (տես Մուրադյան, *Հայոց*): Հավանաբար, այս ընդօրինակումը կատարվել է բավարարումն արդեն վրացախոս հայ վանականների հոգևոր պահանջի: Իվերոնի մատենադարանի թիվ 66 ձեռագրում էլ՝ ստեղծված XII-XIII դդ., էջահամարները նշված են հայերեն (տես Gipper, *Holy Monastery*, էջ 77-99, 586):

74 Քսիթոկաստրոնի կամ Հայոց վանքը չպետք է շփոթել միևնույն վայրի Սբ. Առաքելոց վանքի հետ:



Քսիրոկաստրոն տեղանքը  
Հեռվում Աթոսի գագաթն է

միջ<sup>75</sup>: Աթոսյան մնացյալ վանքերի պես (բացի Մեծ լավրայից) այս վանքը ևս պարզ շինվածք է եղել՝ մի քանի խցերով և հավանաբար մատուռով: 980 թ. վանքի ներկայացուցիչ Թեոդորոսը ստորագրել է մի փաստաթղթի տակ<sup>76</sup>: X դ. վերջում կամ հաջորդ դարի սկզբներին ամայացած վանքում բնակություն հաստատեց Մեծ լավրայի միաբան Սաբբան, որի ազգականը գնել էր Հայոց վանքի կեսը, իսկ մնացյալ կեսը Սաբբային նվիրել էր ոմն Վասիլ: Սաբբան իր միջոցներով կառուցեց եկեղեցի և բնակելի շինություններ, խաղողի այգի տնկեց ու մշակեց իր երկու մոնթերի՝ Իգնատիոսի և Գևորգի հետ

միասին: 1008 թ. կամ էլ 1023-1038 թթ. միջև ընկած ժամանակամիջոցում արդեն հիվանդ Սաբբան հատուկ ընծայագրով Հայոց վանքը նվիրաբերեց Մեծ լավրային՝ մի բան, որ երաշխավորեց վանքի հետագա գոյությունը<sup>77</sup>: Այսպես, 1020 թ. աթոսյան մի վավերագիր



Հայոց վանքի տեղում կառուցված կիսավեր աշտարակը

ստորագրել է ոմն Նիկետաս՝ վանական և քահանա *τον Αρμενηον* (*sic!* Պետք է լինի *τῶν Ἀρμενίων*՝ Հայոց)<sup>78</sup>:

XI դ. վերջում Քսիրոկաստրոնի կամ Հայոց վանքը արդեն բավականին հայտնի էր, քանի որ 1045 թ. դրա վանահայր Նիկեփորն այլ վանահայրերի հետ մեկտեղ ստորագրել է Աթոսի նոր կանոնադրության տակ, իսկ 1087 թ. Քսիրոկաստրոնի մեկ այլ վանահայր՝ Սաբբան, Աթոսի պառտոսն էր՝ հոգևոր գլուխը<sup>79</sup>: 1169-1259 թթ. միջև Հայոց վանքը նորից անցավ Մեծ լավրային, իսկ մինչև 1513 թ. հանձնվեց բուլղարների Զոգրաֆու վանքի տեսչությանը<sup>80</sup>: Այլ տեղեկություն-

75 Տե՛ս Nastase, «Les dnbut», էջ 280:

76 Տե՛ս ArchAth, XIV, էջ 7. Χρήστου, *Το Άγιον Όρος*, էջ 68:

77 Տե՛ս Actes de l' Athos, IV, էջ 4-7:

78 Տե՛ս ArchAth, XIV, էջ 232:

79 Տե՛ս Παπαχρυσάνθου, *Ο Αθωνικός*, էջ 351:

80 Տե՛ս Χρήστου, *Το Άγιον Όρος*, էջ 68:



ների համաձայն՝ XIII դ. հետո Քսիրոկաստրոնի վանքը լուծարվել է և անցել Կոստայավանքի տիրապետությանը, որը և դրա տեղում հսկա մի աշտարակ է կառուցել<sup>81</sup>: Այսօր այդ աշտարակի մնացորդները՝ Կոստայավանքի և Զոգրաֆու վանքի նավամատուցների միջև, տեսանելի են յուրաքանչյուր ուխտավորի, որ Աթոս է ժամանում:

Աթոսում հայկական ներկայությունը չէր սահմանափակվում միայն Իվերոն և Արմենիոն վանքերով<sup>82</sup>: Այսպես, էսֆազմենու (այժմ՝ էսֆիզմենու) վանքի մեզ հասած հնագույն՝ 1001 թ. վավերագիրն ստորագրել է վանքի առաջնորդ Թեոկտիստոսը: Ըստ երևույթին, նա եղել է գործույա և հեղինակավոր անձնավորություն, քանի որ 1035-1040 թթ. զբաղեցրել է պոռտոսի պաշտոնը: 1035 թ. մի փաստաթուղթ նա ստորագրել է հունարեն ու հայերեն. հունարեն՝ «†Θεόκτηστος μ[ο]ν[α]χ[ὸ]ς [ἵ]» («†Թեոկտիստոս վանական»), իսկ դրանից ներքև՝ «Իմ ձեռքս գրեցի Թեոկտիստոս մ[ո]ն[ա]ղ[ի]ն[ի]»: Թեոկտիստոսը վախճանվել է շուրջ 1040-1041 թ.:

†ΘΕΟΚΤΗΣΤΟΣ ΜΟΝΑΧΟΣ  
 Իմ ձեռքս գրեցի Թեոկտիստոս

Թեոկտիստոսի ստորագրությունը՝ հունարեն և հայերեն՝

81 Տե՛ս Δωρόθεος μοναχός, *Το Άγιον Όρος*, էջ 431:

82 Տե՛ս Казарян, «Исторические», էջ 18, 20:

\*Տե՛ս Բարթիկյան, «Մեծ լավրայի» էջ 68-71: Պետք է նշել, որ այս հոդվածում էսֆիզմենի վանահայր ու աթոսյան պոռտոս Թեոկտիստոսը շփոթված է Մեծ լավրայի նույնանուն վանահոր հետ. վերջինս ընդամենը մեկ տարի է վանահայր եղել՝ 1010 թ. (տե՛ս Казарян, «Исторические», էջ 19-20):

## ԹՐԱԿԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԸ

Թրակիայում և Մակեդոնիայում առաջին հայ համայնքները ձևավորվել են VIII դ.՝ կարնեցի ու մելիտենեցի գաղթականների կողմից: Երկրամասի հայաշատ քաղաքներից էր Ադրիանուպոլիսը: 1007 թ. Կիրակոս երեցի ձեռամբ այստեղ է ստեղծվել մի Ավետարան, որը հայ ձեռագրային արվեստի ընտիր նմուշներից է:



Աստվածամայր Մանուկ Հիսուսի հետ և Ավետարանի նվիրատու Հովհաննես պոռտոսպարսը Մանրանկարներ Ադրիանուպոլսի Ավետարանից, Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, թիվ 887/116

Ձեռագիրը պատվիրել է ոմն պոռտոսպարսը (ավագ սուսերակիր) Հովհաննեսը: Ադրիանուպոլսի Ավետարանն ունի հիանալի մանրանկարներ (մի քանիսը՝ հունարեն և հայերեն



Նուկաս և Հովհաննես Ավետարանիչները  
Մանրանկար Ադրիանուպոլսի Ավետարանից

զուգահեռ գրություններով), որոնց մեջ է նաև Ավետարանն Աստվածածնին նվիրաբերող Հովհաննեսի դիմանկարը<sup>83</sup>:

Թրակիայի Վիզիի (Բիզյուե) քաղաքի հետ է կապված Մարիամ Նորի կյանքը: Վերջինիս «Վարքի» համաձայն՝ սրբուհու հայրը Մեծ Հայքի այլ մեծամեծների հետ Կոստանդնուպոլսում էր հաստատվել Վասիլ I կայսեր օժանդակությամբ: Երիտասարդ Մարիամն ամուսնացել էր ոմն Նիկեփորի հետ, որը հետագայում Վիզիի քաղաքի կառավարիչ նշանակվեց: Մարիամը

հույժ առաքինի և աստվածանվեր կյանք էր վարում՝ բացառիկ ողորմածություն ունենալով բոլոր կարոտյալների հանդեպ:

Վաղամեռիկ երանուհու մարմինը երկար տարիներ շարունակ անապական էր մնում, անուշահոտություն բուրում ու բժշկություն շնորհում մանավանդ հոգեկան հիվանդություններից տառապողներին: Մարիամի երկու որդիները՝ վանական Ստեփանոս-Սիմեոնն ու զինվորական Վահան-Մարինոսը ևս աչքի են ընկել հոգևոր սխրանքով<sup>84</sup>:



Սբ. Մարիամ Նորը  
Մանրանկար, հեղ. Գ. Ղազարյան, 2015 թ.

83 Տես Ճանաչեան, Հայկական, էջ 33-37. Акопян, Византийское. Акопян, «Портрет»:

84 Տես Բարթիկյան, «Մամիկոնյան»:

**ՊԵՏՐԻՑՈՍԻ (ԲԱԶԿՈՎՈՅԻ)  
ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԸ**

Թրակիայում հայաշատ բնակավայր էր Փիլիպպուպոլիս (այժմ՝ Պլովդիվ) քաղաքը, որտեղ ստվարաթիվ էին հայ պավլիկյաններն ու թոնդրակեցիները: 1083 թ. ահա այս միջավայրում<sup>85</sup>, Պետրիչ կամ Պետրիցոս վայրում (այժմ՝ Բաշկովո) ծագումով տայեցի զորավար Գրիգոր Բակուրյանը Սբ. Աստվածածինն նվիրված նշանավոր մի վանք հիմնեց:



Բաշկովոյի վանքը

Գրիգորը ծնվել է մոտավորապես XI դ. 20-ական թթ.: Աննա Կոմնենեի վկայությամբ՝ «Նա սերում էր հայկական փառահեղ տոհմից» (γενους λαμπρού ἐξ Ἀρμενίων ὀρμώμενος)<sup>86</sup>: Մանուկ հասակում որբանալով ու առանց ժառանգ



Գրիգոր Բակուրյանի կառուցած բազիլիկ եկեղեցին

գուխյան մնալով՝ Գրիգորն իր եղբայր Աբասի (հունարեն՝ Ἀπάσιος) հետ ծառայության մտավ բյուզանդական զորքերում: Երկարամյա ծանր ծառայությամբ եղբայրները բարձր դիրքի հասան ու պետությունից հարուստ վարձատրություն ստացան: 1064 թ. Գրիգոր Բակուրյանը կայսեր կողմից ուղարկվեց Անի՝ սելջուկյան վտանգից այն պաշտպանելու նպատակով, սակայն մայրաքաղաքը փրկել չհաջողվեց: Գրիգորը հեռացավ Բալկաններ, որտեղ մինչ այդ Անտիոքից եկել հաստատվել էր Աբասը:

1071 թ. հետո Գրիգորը նշանակվեց Իվերիա բանակաթեմի կառավարիչ՝ Կարին աթոռանիստով, և Արևելքի դոմեստիկոս, այսինքն՝ կայսրության արևելյան զորքերի գլխավոր հրամանատար: Շուրջ 1073-74 թթ. սելջուկյան սպառանկիքի պատճառով Իվերիա բանակաթեմի տա-


85 Տես Բարթիկյան, «Գրիգոր Բակուրյանի»:

86 Anne Comnène, *Alexiade*, t. II, էջ 184: Հմմտ. Բարթիկյան, «Բյուզանդիա», էջ 28:

բածքները (հարավային Տաչքը, Կարան ու Կարինը) վրաց թագավորին հանձնվեցին: Գրիգոր Բակուրյանը Բաղկաններ վերադարձավ և Արևմուտքի դոմեստիկոս նշանակվեց (Ազրիանուպոլիս կենտրոնով): Այս ժամանակ Բակուրյան եղբայրները մտահղացան վանք հիմնելու ծրագիրը, որն իրականացվեց 1083 թ.: Վանքի կանոնադրությունը կազմեց անձամբ Գրիգորը<sup>87</sup>: Մեզ են հասել այդ վավերագրի հունարենն ու վրացերեն խմբագրությունները, սակայն հունարեն տեքստը տեղեկացնում է, որ ի սկզբանե այն գրված է եղել երեք՝ հունարեն, վրացերեն և հայերեն լեզուներով (ἐγγράφη ῥωμαϊκόν, ἰβηρικόν τε καὶ ἄρμενικόν): Բացի այդ, Գրիգորը վանքի կանոնադրությունն ստորագրել է «իւր ձեռամբ... հայերէն գրովք» (οἰκεία χειρὶ ... διὰ ἄρμενικῶν γραμμῶτων), իսկ վավերացրել է երուսաղեմի եվթիմիոս պատրիարքը:

Կանոնադրության համաձայն՝ Պետրիցոսի վանքը հիմնվել է Բակուրյանի ազգականների ու մարտակիցների համար: Միաբանության անդամ կարող էին դառնալ բացառապես «իվերները», այն է՝ ուղղափառ վրացիներն ու հայերը, համապատասխանաբար, պաշտամունքն էլ կատարվել է այդ լեզուներով<sup>88</sup>: Մենաստանի առաջին վանահայրն է եղել Գրիգոր Բանակցին:

Բաղկովոյի վանքը, լինելով իր ժամանակի ամենամեծ ու նշանավոր բյուզանդական մենաստաններից մեկը, եղել է միսիոներական



Գրիգոր և Աբաս Բակուրյանները  
Որմնանկար, XIV դ., Բաղկովոյի վանք

կենտրոն՝ պավլիկյանների մեջ քարոզչություն իրականացնելու նպատակով: Բացի դրանից, վանքն իրականացրել է մարդասիրական առաքելություն: Պետրիցոսի վանքը եղել է նաև վրաց դպրության կենտրոն, որը գրական-մշակութային կապեր է ունեցել Վրաց թագավորության հետ<sup>89</sup>: Երևում է, որ սերտ են եղել վան-

<sup>87</sup> Կանոնադրության ռուսերեն թարգմանությունը՝ հարակից հարցերի լուսաբանմամբ տես Арутюнова-Фиданян, *Топик*.

<sup>88</sup> Տես Մուրադյան, «Գրիգոր Բակուրյանի», էջ 115-116:

\* Տես Островский, *Захарий Зограф*, էջ 88:



Աստվածածնի Բաշկովյան սրբապատկերը

1310 թ. Տալբից Բաշկովոյի վանք են բերել ոմն Բզնատիոսի որդի Ամանան ու Արրուպիրը: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ սրբապատկերը պոլսեցի վարպետների գործ է և նույնիսկ Քրիզոստոմ Բաղուրյանի նվերը վանքին, իսկ 1311 թ. վերը նշված եղբայրների նվիրաբերումովսրբապատկերը է արձանի զարդաշապիկով, որն ունի վրացերեն արձանագրություն\*\*

քի կապերը նաև Հայաստանի, մասնավորապես Ակնի շրջանի «ծայթերի» հետ<sup>90</sup>: Ինչ վերաբերում է վանքի հայազգի միաբաններին, ապա կարծես թե նրանց ներկայությունը Պետրիցոսի վանքում առկա է եղել և ավելի ուշ շրջանում, ինչի մասին վկայում է կանոնագրությունների վրա-

ցերեն ձեռագրում արված հայերեն մի արձանագրություն<sup>91</sup>:

Փիլիպպուպոլսի հայություն մեջ Ուղղափառության տարածումը զանգվածային բնույթ է կրել Քրիզոստոմ Գ Տղա կաթողիկոսի (1173-1193 թթ.) և Իսահակ Անգելոս կայսեր (1185-1186 թթ.) օրոք, սակայն դրան զրգած պատճառները հստակ չեն. կաթողիկոսը խոսում է հալածանքների մասին, իսկ կայսրը՝ կամավոր ընտրություն<sup>92</sup>: Բայց երևում է, որ հետապնդումներ եղել են և դրանք զաղարել են հաջորդ կայսեր՝ Ալեքս Անգելոսի (1195-1203 թթ.) շնորհիվ<sup>93</sup>:



Հայերեն Ավետարան

Բաշկովոյի վանքի մատենադարանից, 966 թ., Առֆիայի ազգային գրադարան, թիվ 1 հայկ. ձեռագիր

\*\* Տես Παπαγιωτίδη, «Η εικόνα»:

89 Տես Bakalova, *The Ossuary*, էջ 21-22

90 Տես Бартикян, «О связях»:

91 Տես Бартикян, «Об армянской»:

92 Տես Բարթիկյան, «Բյուզանդիա», էջ 38-39: Բարթիկյան, «Իսահակ Անգելոս», էջ 54-55:

93 Տես Бозоян, «Новый памятник»:



Գլուխ Ե \_\_\_\_\_

ՀԱՅԻ ՌԻՂԱՓԱԹ  
ԹԵՄԵՐԸ III-XV ԴԴ.

Ա. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ  
ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐ ՀԱՅՔԻ

ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոքր Հայքի նշանավոր քաղաքներից մեկը՝ Մելիտենեն, եպիսկոպոսանիստ էր արդեն III դ. կեսերից<sup>1</sup>, իսկ մյուսը՝ Սերաստիան, որպես եպիսկոպոսական աթոռ հայտնի է IV դ. սկզբից<sup>2</sup>:

372 թ. Փոքր Հայքի ներեկեղացական վիճակի կարգավորմանն իր գործուն մասնակցությունը բերեց հարևան Կապադոկիայի առաջնորդ Բարսեղ Կեսարացին: Նա ժամանեց Փոքր Հայք՝ մի կողմից ունենալով կայսեր հանձնարարականը, մյուս կողմից՝ նիկոպոլսի Թեոդոտոս եպիսկոպոսի († 375 թ.) և Սերաստիո Գետաս գյուղն աքսորված Մելետիոս Անտիոքացու հորդորները: Բարսեղը շրջեց նիկոպոլսում, Սերաստիայում, Գետասում, Կոլոնիայում և Սատաղում<sup>3</sup>, որտեղ եպիսկոպոս ձեռնադրեց իր ազգական Պիմենին: Մեծն հայրապետի հատուկ մտահոգությունն էր, որ երկրամասի հովիվները լինեն «բարեպաշտ, հեղ և տեղի լեզվին գիտակ և այդ



Սր. Հովհան Ռսկերեթանը և Բարսեղ Կեսարացին  
Մանրանկար Ձիկրակի Ավետարանից, Բարձր Հայք, XIV դ.,  
Մանչեստրի Ջ. Ռիլանդս գրադարան<sup>4</sup>

ազգի (հայերի- Գ. Ղ.) զանազան սովորություններին տեղյակ անձինք»<sup>4</sup>:

379 թ. Սերաստիո արքեպիսկոպոս ընտրվեց Բարսեղի եղբայրը՝ Գրիգոր Նյուսացին, իսկ ավելի ուշ նույն գահին բազմեց մեծն հայրապետի մյուս եղբայրը՝ Պետրոսը<sup>5</sup>:

1 Sté Fedalto, *Patriarchatus Constantinopolitanus*, էջ 39:

2 Sté Fedalto, *Patriarchatus Constantinopolitanus*, էջ 50:

3 Sté Παπαδόπουλος, *Μέγας Βασίλειος*, էջ 65-67. Φιλυπίδης, *Ἡ Ἐκκλησία*, էջ 150-151:

\* Ձեռագիրն ստեղծվել է 1313 թ, Տայի Ձիկրակ գյուղում, հայ առաքելական ֆահանս Հովհաննեսի ձեռամբ: Հետագայում, հավանաբար XIV դ. երկրորդ կեսին, Բարձր Հայքի ձեռագրատներից մեկում Ավետարանի մեջ են ավելացվել բյուզանդական իննը մանրանկարներ, որոնց մեջ են Աբգար և Տղաատ թագավորների, Գրիգոր Լուսավորչի պատկերները: Այս մանրանկարներն ստեղծվել են ուղղափառ հայոց շրջանակներում: Առավել մանրամասն տես Казарян, «Миниатюры»:

4 Պապանդրեու, *Հայ եկեղեցու*, էջ 108:

5 Sté Χρήστου, *Ἐκκλησιαστική Γραμματολογία*, τ. Α', էջ 188:



Կոլոնիայի (այժմ՝ Կոլոպիսար) մերձակայքի Սբ. Աստվածածին վանքը  
ըստ ավանդության՝  
հիմնված 481-490 թթ.  
Հովհաննես Լուսկյացի կողմից՝

տանդնուպոլսի հայրապետության գերագույն իշխանությունը: V դ. երկրորդ կեսից հասած մի վավերագրի համաձայն՝ այս ժամանակամշրջանում Սերաստիայի մետրոպոլիտության եպիսկոպոսանիստ քաղաքներն էին Նիկոպոլիսը, Կոլոնիան, Սատաղը, Սերաստուպոլիսն ու Վերիսսան, իսկ Մելիտենեի մետրոպոլիտին էին ենթարկվում

Թեոդոս I կայսեր օրոք (379-395 թթ.) Փոքր Հայքը բաժանվեց «Առաջին» և «Երկրորդ» Հայքերի, համապատասխանաբար Սերաստիա և Մելիտենե մայրաքաղաքներով<sup>6</sup>:

451 թ. ի թիվս Թրակիայի, Պոնտոսի և Ասիայի թեմերի, Փոքր Հայքի նվիրապետական աթոռներն ընդունեցին Կոստանդնուպոլսի հայրապետության գերագույն իշխանությունը: V դ. երկրորդ կեսից հասած մի վավերագրի համաձայն՝ այս ժամանակամշրջանում Սերաստիայի մետրոպոլիտության եպիսկոպոսանիստ քաղաքներն էին Նիկոպոլիսը, Կոլոնիան, Սատաղը, Սերաստուպոլիսն ու Վերիսսան, իսկ Մելիտենեի մետրոպոլիտին էին ենթարկվում



Սբ. Գովետիանոս Մելիտենեցին  
Որմնանկար, XII դ., Ներեդիցայի Սբ. Փրկիչ տաճար

Գովետիանոսն զբաղեցրել է Մելիտենեի աթոռը VI դ. երկրորդ կեսին և կարևոր դիվանագիտական առաքելություններ է իրականացրել կայսրության ու պարսից արքունիքի միջև: Եղել է Մավրիկ կայսեր ազգականն ու խորհրդականը:<sup>\*\*</sup>

Արկա, Արաբիսոս, Կուկուս<sup>7</sup>, Կոմանա<sup>8</sup> և Արիարաթիա քաղաքների եպիսկոպոսությունները<sup>9</sup>: Այս կազմով Փոքր Հայքի մետրոպոլիտությունները գրեթե անփոփոխ հանդես եկան հետագա դարերում: 751 թ. Մելիտենեն զբաղվեց արաբներից ու հայաթափվեց, ընդ որում մելիտենցի հայերի ու ասորիների մի մասը գաղթեցվեց Թրակիա: Հավանաբար դա է պատճառը, որ VIII դ. որոշ եպիսկոպոսական ցուցակներից՝ Կարգագրություններից այս մետրոպոլիտությունը բացակա-

6 Տես Աղոնց, Հայաստանը, էջ 105:

\* Տես Μηλλάς, Τραπεζός, τ. Β', էջ 477-485:

7 IV-V դդ. Կուկուսը հայտնի էր որպես աֆսուրավայր: Այսպես, 350 թ. Կուկուս աֆսուրվեց և արիոսականների ձեռքով այստեղ նահատակվեց Պոլսի Պողոս Խոստովանող պատրիարքը (340-341, 342-344, 348-350 թթ.), իսկ 404 թ. Կուկուս աֆսուրվեց նաև գահընկեց արված Հովհան Ոսկեբերանը: Այստեղ Պոլսի նախկին արեպիսկոպոսն ապրեց երկու տարի՝ շրջապատված անթափ Աղեթիոս եպիսկոպոսի, ոմն մեծահարուստ Գիոսկորոսի, Արաբիսոսի Օտրիոս եպիսկոպոսի և հասարակ ժողովրդի ակնածանքով (տես Thierry Amédée, Άγιος Γωάννης էջ 322-336):

8 Այս Կոմանան չպետք է շփոթել պոնտոսյան Կոմանայի հետ:

\*\* Տես Грацианский, «Дометиян»:

9 Տես Աղոնց, Հայաստանը, էջ 106:





Աստվածամոր Մելիտենեի կամ Միասենի պատկերը  
Ռուսական սրբապատկերներ, XIX-XX դդ.

Ըստ ավանդության՝ Աստվածամոր այս պատկերի բնօրինակը պահվել է Մելիտենեի մոտակայքի Միասեն վանքում: VIII դ. սկզբում պատկերամարտների վախից վանականները պատկերը նետել են Գաղութու լիճը, սակայն այն թան հարյուր տարի անց պատկերն անվնաս դուրս է եկել ջրի մակերես: Միասենի հրաշագործ պատկերի տոնն՝ Ուղղափառ եկեղեցում նշվում է դրա գյուտի օրը՝ սեպտեմբերի 1-ին:

յում է<sup>10</sup>: Սա թույլ է տալիս համարելու, որ արաբական տիրապետության շրջանում Մելիտենեի աթոռի բնականոն գոյությունը խաթարված էր:

Մելիտենեն արաբներից ազատագրվեց 934 թ., Հովհաննես Կուրկուաս և Մլեհ (Մելիաս) զորավարների մղած մարտերի արդյունքում: Դրանից հետո քաղաքը վերստացավ քրիստոնեական դեմքը՝ վերագտնելով իր տեղը Կարգազրույթյունների մեջ<sup>11</sup>:

Սելջուկյան արշավանքները հարկավ, ազդեցին Փոքր Հայքի բնականոն կյանքի վրա: Երևում է, որ բնակչության տեղաշարժին զուգահեռ որոշակի փոփոխություններ տեղի ունեցան նաև եկղց. աշխարհագրության մեջ: Այսպես, XII-XIII դդ. մի



Սեբաստուպոլսի Զովե (հուն. Ζώβη, միգուցե Մովե) վանքի 36 մարտիրոս վանականները՝ վանահայր Միխայելի գլխավորությամբ՝ Մանրանկար, հեղ. Գ. Ղազարյան, 2015 թ.

Այս սրբերը նահատակվել են արաբ նվաճողների ձեռքով 780 թ. հոկտեմբերի 1-ին:<sup>\*\*</sup>

\* Տես Delehaye, *Sinaxarium*, էջ 6. *Μηναίον τοῦ Σεπτεμβρίου*, էջ 27-28. Турилов. «Азуровская икона».

10 Խոսքը մասնավորապես վերաբերում է մի Կարգագրության, որն ըստ Գ. Կոնիդարիսի՝ գրվել է պատկերամարտության ժամանակաշրջանում՝ 733-746 թթ. (տես Κονιδάρης, *Αἱ μητροπόλεις*, էջ 42-43): Քացի այդ ի տարբերություն Սեբաստիայի մետրոպոլիտության՝ Մելիտենեն բացակայում է Նիկողայոս Միստիկոսի (X դ.) օրոք կազմված Կարգագրությունից, ինչը վկայում է այն մասին, որ X դ. սկզբներին Մելիտենեի մետրոպոլիտությունը դեռևս վերականգնված չէր:


11 Տես Κονιδάρης, «Τακτικά», էջ 757: Զույգ մետրոպոլիտությունների՝ Սեբաստիայի և Մելիտենեի պատմության մասին մինչև XI դ. ավելի մանրամասն տես Kazaryan, *Οι Αρμενοβυζαντινές*, էջ 207-210:

\*\* Տես Delehaye, *Sinaxarium*, էջ 98. *Μηναίον τοῦ Ὀκτωβρίου*, էջ 17-18:


Կարգագրություն Մելիտենների ավանդական հինգ եպիսկոպոսություններին հավելում է չորսը՝ Տարանտի, Զերվեի, Առոմանեի և Իվորայի<sup>12</sup>:

XIII դ. աղբյուրներից հայտնի է, որ Մելիտենեն ուներ հոծ և ինքնակա օրթոդոքս բնակչություն, ավելին՝ նույն դարի 30-40-ական թթ. Մելիտենների առաջորդները՝ որպես պատրիարքական բանագնաց-միջնորդներ, իրենց մասնակցությունն են բերել Տիեզերական հայրապետության և Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցու (1221-1267 թթ.) միջև ծավալված եկեղեցական բանակցություններին<sup>13</sup>:

XIII դ. Հայաստանն ու Փոքր Ասիան ենթարկվեցին վայրագ ցեղերի ասպատակություններին ու նվաճումներին, քրիստոնյա բնակչությունն զգալիորեն նվազեց, իսկ թեմերն ամայացան: Արդյունքում սկսվեց մանր թեմերի միավորումը կամ հանձնումը ավելի ուժեղ աթոռներին: Ահա այդպես 1365 թ. Մելիտենների մետրոպոլիտությունը հանձնվեց Ալանիայի և Սոտերիուպոլսի եպիսկոպոսի խնամքին: Ու թեպետ XIV դ. Սեբաստիայի առաջնորդը կրում էր «համայն Հայքի գերապատիվ և էքսարքոս (հայրապետական փո-



Մելիտենի մետրոպոլիտության ֆարտեզը



Սեբաստիոն մետրոպոլիտության և Պեղաֆրոյեի արքեպիսկոպոսության ֆարտեզը

խանորդ)» իսկ Մելիտենեն՝ «երկրորդ Հայքի գերապատիվ և էքսարքոս» տիտղոսները<sup>14</sup>, այդուհանդերձ, XIV-XV դ. հայկական ու փոքրասիական բազմաթիվ թեմեր դադարեցին գոյություն ունենալուց: Դրանց թվում էր երբեմնի փառապանծ Մելիտենեն<sup>15</sup>:

12 Տե՛ս Darruzès, *Notitiae*, էջ 357: Այս Կարգագրությանը մասամբ համաձայն է Կեղծ-Եպիփանի Կարգագրության XII դ. հայերեն թարգմանությունը, որը Սեբաստիոն թեմեր է նշում Սեբաստուպոլիս, Նիկոպոլիս, Սատաղ, Բերիսա և «Ատեյոյգայ» ֆաղաֆները, իսկ Մելիտենների թեմերն էին Կոկիսոն (Կոկոս), Տարնդա, Արաբխոս («Արաբխոս»), Ապլասթա, Ռոման, Ճեմէն ու Հոնի բնակավայրերը (տես Եպիփան Կիպրացի, *Ἐκθεσις*, էջ 26): Սեբաստիայի և Մելիտենների մետրոպոլիտությունների մասին տարբեր տեղեկություններ են հանդիպում XII դ. այլ Կարգագրություններում ևս: Այսպես, Նեղոս Գոնսապատիսը (XII դ.) և դրա հայերեն թարգմանիչը հաղորդում են, որ Սեբաստիան ունի 7 / 4 եպիսկոպոս, Մելիտենեն՝ 9 / 5՝ առանց դրանց անունները տալու՝ բացառությամբ Կոկոսի (տես Darruzès, *Notitiae*, էջ 374. Նեղոս Գոնսապատիոն, *Կարգագրութիւն*, էջ 30):

13 Տե՛ս Բարթիկեան, «Հայ-բիզանդական», էջ 54-56. Korobeinikov, «A Greek», էջ 719-720.

14 Տե՛ս Darruzès, *Notitiae*, էջ 416:

15 Տե՛ս Ακριτιδής, *Η Ιστορική γεωγραφία*, էջ 345, 351, 354:

Մելիտենեի ուղղափառ հայոց հետ կապված արժեքավոր նշխարներից է 1226 թ. հունարեն մեծարժեք Ավետարանը՝ գրված Կեսարիայում: Գրիչն է գպրապետ Վասիլ Մելիտենեցին՝ Ուլրեստես (Առեստ) քահանայի և երեցկին Սոֆիայի որդին: Վասիլ Մելիտենեցին իմացել է հունարեն լեզուն ու տիրապետել գրչության արվեստին՝ ձեռագրի մեջ թողնելով հունարեն և հայերեն հիշատակարաններ<sup>16</sup>:



Մարկոս Ավետարանիչը  
1226 թ. Կեսարիա, ծաղկող՝ Վասիլ Մելիտենեցի  
Աթենք, Փեննագիտսի գրադարան, թիվ 1.5



Հատված Վասիլ գպրապետի հիշատակարանից

## ԿՈՒՆԻԱՅԻ ԱԹՈՒՐ

Սերաստիայի մետրոպոլիտոսության Կոլոնիայի եպիսկոպոսական աթոռը IX դ. երկրորդ կեսին-X դ. սկզբին բարձրացվեց արքեպիսկոպոսության (առանց ստորակա թեմերի)<sup>17</sup>, իսկ XI դ. դարձավ մետրոպոլիտոսություն: Այս փոփոխությունը թերևս պայմանավորված էր այնու, որ Կոլոնիան դարձել էր նույնանուն բանակաթեմի կենտրոնը<sup>18</sup>: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ Կոլոնիայի կարգավիճակի բարձրացումը՝ Կեսարիայի մետրոպոլիտոսության 10 նոր եպիսկոպոսական աթոռների ու Կամախի մետրոպոլիտոսության հիմնադրման հետ մեկտեղ մաս էր կազմում միսիոներական մի մեծ ծրագրի, որն ուղղված էր տարածաշրջանի պալիկյաններին դարձի բերելուն<sup>19</sup>:

Ուշ բյուզանդական շրջանում 1318 թ. դրուսյամբ Կոլոնիան նորից իջեցված էր արքեպիսկոպոսության կարգավիճակի և խղճուկ վիճակում էր,

16 Տես Zomarides, *Die Dumba'sche*. Ակինեան, «Հայերէն յիշատակարան». Korobeinikov, "A Greek".

17 Ուրպես արքեպիսկոպոսություն՝ Կոլոնիան առաջին անգամ հիշատակվում է Նիկողայոս Միստիկոսի Կարգաբարձության մեջ (տես Darruzès, *Notitiae*, էջ 273):

18 Տես Πρεμετίδης, *Η Μητρόπολις*, էջ 51, 59, 96:

19 Տես Ακριτίδης, *Ιστορική γεωγραφία*, էջ 118-119:

քանի որ այդ թվականին Կոստանդնուպոլիսը Կոլոնիայի արքեպիսկոպոսութեան, Նեոկեսարիայի և Կամախի մետրոպոլիտութեան խնամքն ու վերատեսչությունը հանձնեց Մելիտենեի առաջնորդին<sup>20</sup>:

**ՊԵՂԱՔԹՈՅԵՒ ԵՎ ՀՈՌԵՒ  
(ԿԱՄ ՀՈՌՅԱՆԻ) ԻՆՔՆԱԳԼՈՒԽ  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանի հնագույն աթոռներից էր Սեբաստիայի շրջանի Պեղաքթոյե քաղաքի եպիսկոպոսությունը, որը հայտնի է դեռևս III դ. վերջից, երբ այստեղի առաջնորդն էր Աթենոգենես (Աթանագինես) եպիսկոպոսը<sup>21</sup>:

Պահպանված հնագույն Կարգագրության մեջ («Կեղծ եպիփան Կիպրացի»), որը թվագրվում է VII դ. սկզբով, Պեղաքթոյեն նշված է որպես ինքնագլուխ (ավտոկեֆալ), այսինքն՝ Պեղաքթոյեի (Հերակլուպոլսի) արքեպիսկոպոսն ուղղակիորեն ենթարկվում էր տիեզերական պատրիարքին<sup>22</sup>: Սույն աթոռի հետագա պատմությունից հայտնի է, որ Պեղաքթոյեի Հովհաննես եպիսկոպոսը մասնակցել է վեցերորդ, իսկ Թեոդորոս եպիսկոպոսը՝ յոթերորդ Տիեզերաժողովին<sup>23</sup>:

Պեղաքթոյեի նույն կարգավիճակն է ունե-



Սր. Աթանագինեսը  
Որմնակար Բաշկովոյի վանքի ոսկրանոցից,  
Հովհան Իվերոպոլսու, XII դ.

ցել *Ἐπαρχίας Ἀρμενίας ὁ Ῥοῖνων (Ῥοῖνοι, Ἐρωῖνη)* արքեպիսկոպոսական աթոռը: Հավանաբար այն հիմնվել է VIII դ. երկրորդ կեսին կամ IX դ. սկզբին, համենայն դեպս առաջին անգամ հիշատակվում է այդ ժամանակահատվածում կազմված մի Կարգագրության մեջ<sup>24</sup>: Այս տեղանունը հնարավոր է նույնացնել կամ Մոփսի Հոռե բերդին (Խարբերդին), կամ Պալունյաց գավառի Հոռյան ավանին (Տարոն աշխարհում): Այս երկու արքեպիսկոպոսությունները որոշ ընդհատումներով առկա են Կարգագրություններում ընդհուպ XIV դ., երբ

20 Տե՛ս Πρεμετίδης, *Ἡ Μητρόπολις*, էջ 97-98:

21 Հայկական վարձաբանական աղբյուրների համաձայն՝ Աթանագինեսը եղել է Լուսավորչի աներձազը (տե՛ս Ազեբեան, *Վաղատար*, Բ. Գ, էջ 319): Հայտնի է, որ Լուսավորչիը Աթանագինեսի և Հովհաննես Մկրտչի մասունքները Կեսարիայից բերել ու ամփոփել է Տարոնի Իննականյա վայրում, որտեղ և կառուցվել է Մշո Սբ. Կարապետ վանքը:

22 Տե՛ս Darruzès, *Notitiae*, էջ 806:

23 Տե՛ս Fedalto, *Patriarchatus Constantinopolitamus*, էջ 52:

24 Տե՛ս Darruzès, *Notitiae*, էջ 251:

արդեն բարձրացվել էին մետրոպոլիտոսիան աստիճանի<sup>25</sup> :

## ԵԿԵՂՅԱՅ ԳԱՎԱՌԻ ԱԹՈՒՆԵՐԸ

Բարձր Հայքի Դարանաղյաց, Գերջանի, Մանանաղյաց, Եկեղյաց գավառները բավական վաղ էին լուսավորվել Ավետարանի քարոզչությամբ: Սրանցից Եկեղիք գավառը տակավին հեթանոսության շրջանում երկրի կարևորագույն կրոնական կենտրոնն էր, իսկ 301 թ. հետո այն դարձավ քրիստոնյա Հայաստանի հոգևոր օջախներից մեկը<sup>26</sup> :

Հայաստանի առաջին բաժանումից հետո Մեծ Հայքի այս տարածաշրջանն անցավ Արևելահռոմեական կայսրությանը, ինչի պատճառով այստեղ հետզհետե տարածվեց Կոստանդնուպոլսի պատրիարքի հոգևոր իշխանությունը: Եկեղյաց գավառի հայտնի առաջին օրթոդոքս եպիսկոպոսն է Հովհաննեսը՝ պաշտոնավարած շուրջ 458 թ.<sup>27</sup>: VI դ. Եկեղյաց թեմի առաջնորդանիստը դարձավ Հուստինիանուպոլիս (Մումինա կամ Ճիմին) քաղաքը<sup>28</sup> : Նույն ժամանակաշրջանում հինգերորդ Տիեզերաժողովին (553



Եկեղյաց Սեպուն սարը, որտեղ ճգնել ու վախճանվել է Գրիգոր Լուսավորիչը

թ.) մասնակցեց Հուստինիանուպոլսի Գևորգ (Գրիգոր), իսկ վեցերորդ Տիեզերաժողովին (681 թ.)՝ նույնի թեոդորոս եպիսկոպոսները<sup>29</sup> :

Դարանաղյաց կամ Կամախի աթոռի մասին հնագույն տեղեկությունը վերաբերում է 681 թ., երբ վեցերորդ Տիեզերաժողովին մասնակցում էր Կամախի Գևորգ եպիսկոպոսը: Նա ներկա էր նաև 692 թ. Տրուլլոսի ժողովին<sup>30</sup> :

Առոն VI կայսեր օրոք՝ 911 թ., Կամախը, որը նախապես Կոլոնիա բանակաթեմի մասն էր, միավորվեց Երզնկայի հետ՝ կազմելով այսպես

25 Տե՛ս Darruzès, *Notitiae*, էջ 408, 410:

26 Նշյալ տարածքների եկեղեցական անցյալի մասին կարևոր դիտարկումներ ունի Ն. Ադոնցը. «Փոքր Հայքից եկող քրիստոնեությունը նախ և առաջ անմիջապես տարածվեց նրան հարող շրջաններում, այսինքն՝ Դարանաղիում, Եկեղյաց գավառում, Գերջանում և այլն: Փավստոսը հանախ շեշտում է, որ Դարանաղի և Եկեղյաց գավառները պատկանում էին Լուսավորչի տոհմին. Գրիգորը և Վրթանեսը թաղվեցին թորդանում, Արիստակեսը՝ Թիլում, Հուսիկը՝ քեև վախճանվեց Շոփնում, բայց նրա մարմինը քեովեց և թաղվեց թորդանի տոհմական դամբարանում» (Ադոնց, *Հայաստանը*, էջ 389):

27 Տե՛ս Fedalto, *Patriarchatus Alexandrinus*, էջ 845:

28 Տե՛ս Ադոնց, *Հայաստանը*, էջ 167:

29 Տե՛ս Ադոնց, *Հայաստանը*, էջ 167:

30 Տե՛ս Ադոնց, *Հայաստանը*, էջ 404:



Սր. Եվստրատիոսի վանքը Արավրակում  
(այժմ Չաֆիրբայա-ֆոյու)

կոչված «Միջագետք» բանակաթեմը<sup>31</sup>:

Հենց այդ ժամանակ էլ կազմավորվեց Կամախի մետրոպոլիտոսթյունը, որն առաջին անգամ հիշատակվում է Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի (901-907, 912-925 թթ.) Կարգազրույթյան մեջ: Վերջինիս համաձայն՝ Կամախի մետրոպոլիտոսթյունն ուներ ստորակա 8 եպիսկոպոստոսթյուն. Կելձենեի, Արավրակի, Վարդանիսսայի, Մելոսի (Մելոժ) և «մյուս Մելոսի» (Մելոժ էտերոս),

Ռոմանուպոլսի, Թիլի (Տուտլեյոս) և Վարդանիսսա-Քալուսեի (Բարձանիստիս իտու Յալուսայոս)<sup>32</sup>:

Վերոնշյալներից Կելձենեն Եկեղյաց գավառի կենտրոն Երիգ-Երզնկան է, Տուտլեյոս-ն՝ նշանավոր Թիլը, իսկ Արավրակը հայտնի է դեռ IV դարից՝ որպես սր. Եվստրատիոսի ծննդավայր:

Բարձանիստիս Ն. Արոնցի համաձայն նույնական է Գարձանիստիս-Գերջանիստիս (Կերճանիստիս)<sup>33</sup>: Ավելի հավանական է սակայն, որ այստեղ նշված է Վարդենիքը (արար.՝ «Վարդանիքս»)՝<sup>34</sup>:

Ռոմանուպոլիս քաղաքը Չորրորդ Հայքի Բալուն է, որը Անձիտ գավառով միավորվեց Միջագետք բանակաթեմին Ռոմանոս I կայսեր օրոք<sup>35</sup>:

Բարձանիստիս իտու Յալուսայոս (Վարդանիսսայի կամ Քալուսեի) միավորը հնարավոր է, որ առաջացել է գրչագրական կրկնություն պատճառով, կամ էլ առաջին Վարդանիսսայի տեղը ճշգրտելու ցանկությունով: Սակայն եթե ընդունենք, որ սա իսկապես առանձին թեմ է, ապա այն թերևս կարելի է նույնացնել Կղոտ գավառի Տալաշի հետ, որը գտնվել է Արավրակից հյուսիս, Նիկոպոլսի մոտ և Արոնցի մասնանշած Կերճանիստիսից ոչ շատ հեռու<sup>36</sup>:

\* Տես Միլլաս, *Τραπεζούς*, τ. Β', էջ 467-476:

31 Տես Աκριտիժ, *Η Ιστορική*, էջ 110, 118:

32 Տես Darrouzès, *Notitiae*, էջ 287: Կարգազրույթյուններից մեկը Կամախին հատկացնում է 5 թեմ՝ վերոնշյալներից չնշելով Թիլի, Ռոմանուպոլսի և Քալուսեի արքունները, իսկ մյուսը չնշում է միայն վերջինը (տես Darrouzès, *Notitiae*, էջ 375. հմմտ. Եղոս Գոֆսապատիո, *Կարգազրույթիւն*, էջ 32):

33 Տես Արոնց, *Հայաստանը*, էջ 167:

34 Տես Քելեան, *Ակն*, էջ 614:

35 Տես Бартикан, «Гаврас», II, էջ 191: Ի դեպ՝ նկատի ունենալով այս հանգամանքը՝ Կամախի վերոնշյալ թեմերից Թիլը կարելի է նույնացնել նաև Անձիտի նույնանուն բնակավայրի հետ:

36 Տես Kazaryan, *Օր Արմեոբոճանտիւնէս*, էջ 213:

†•Արավրակ

Թիլ (')†• †•Երեզ (Երզնկա)

†•

ՅՈՒՍՏԻՆԻԱՆՈՒԴՈՒԼԻՍ

†•Կամախ

Վարդենիք (')†•

ՅՈՒՆ (')†•

Ռումանուպոլիս†•

Թիլ Անձիտի (')†•



Եոյգ լիճ

†•Գալասա (')

Հուստինիանուպոլիսի և Հոռեի ինֆնագլոպիս արևելյանկուպուսություններն ու Կամախի մետրոպոլիտոսյան մոտավոր ֆարտեզը

Չի բացառվում, որ նույնանուն երկու եպիսկոպոսությունների՝ *Μέλου* և *Μέλου* ἕτερος հիշատակությունը կրկնագրություն հետևանք է: *Μέλου* տեղանունը թերևս կապ ունի Մելոս (Մելաս) գետի, կամ էլ՝ Երզնկայի գավառի Մեղուս և Մեղուցիկ գյուղերի հետ<sup>37</sup>:

Բացի վերոնշյալ Գևորգ Կամախեցուց, պահպանվել են Կամախի մետրոպոլիտներ Թեոդորոսի (շուրջ 1028-1032 թթ.) Լևոնի (1082 թ.) և Գանիելի (1294 թ.) անունները<sup>38</sup>: Բացի այդ, մեզ են հասել երիզի (Կելցենեի) եպիսկոպոսների՝ Գևորգի (IX դ.), Միքայելի (XI դ. սկիզբ), Սիսինիոսի (մոտ. 1028-1032 թթ.), Վասիլի (մոտ. 1071-1072 թթ.) և Անթիմոսի (1082 թթ.) անունները<sup>39</sup>:

Ուշ բյուզանդական ժամանակաշրջանում Կամախի աթոռը ևս անկում էր ապրում. 1318 թ. պատրիարքական մի վավերագրից տեղեկանում ենք, որ այդ ժամանակ Կամախի «նախաթոռը», այսինքն՝ առաջնորդն էր Մելիտենեի Թեոդոս մետրոպոլիտը. Թեոդոսին՝ որպես հայրապետական փոխանորդի, սինոդական որոշմամբ հանձնվում էր Կոլոնիայի արքեպիսկոպոսության, Նեոկեսարիայի և Կամախի մետրոպոլիտությունների վերատեսչությունը<sup>40</sup>:


Այս միջոցին պատրիարքությունը դիմել էր՝ սատար կանգնելու համար այդ եկեղեցական աթոռներին, սակայն երևում է, որ Մելիտենեի

37 Երզնկայի երբեմնի ուղղափառ բնակչության մասին են վկայում գավառի Մաթ, Մաթգեղ, Հոռմաց, Հոռոմագուրակ, Մանդրա (հուն. μάντρα՝ «փարախ») տեղանունները:

38 Տես Fedalto, *Patriarchatus Alexandrinus*, էջ 845:

39 Տես Kazaryan, *Օր Արմենոօսթանթնէզ*, էջ 212:

40 Տես Πρεμετίδης, *Η Μητρόπολις*, էջ 97-98:



Գերշանի Գյալրենջի (Օղուվերեն)  
գյուղի վեցխորան եկեղեցին\*  
Լուսանկարը՝ ՀՃՈՒՀ

հովանավորությունը արդյունավետ չեղավ, քանի որ 1391 թ. ամայացած չորս այլ թեմերի՝ Նեոկեսարիայի, Կոլոնիայի, Սոսերիուպոլսի և Ալանիայի աթոռների հետ եկեղյաց աթոռը

հանձնվեց հզորացած Տրապիզոնի մետրոպոլիտոսի խնամքին<sup>41</sup>:

## ԽՈՐՉՅԱՆԻ ԵՎ ՏԱՐՈՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Տարոնի ուղղափառ համայնքը կազմավորվել է Փոս պատրիարքի օրոք, որը Հովհաննես Նիկեցու միջոցով բանակցություններ է վարել տարոնացիների հետ, և նրանց որոշ մասն Ուղղափառություն է ընդունել<sup>42</sup>:

X դ., հավանաբար Տարոնի՝ 968 թ. կայսրությանն անցնելուց հետո, այստեղ հիմնվեց Խորձյանի և Տարոնի (ὁ Κελτζινοῦ ἦτοι Κορτζινοῦ ὁ τοῦ Ταρόν)<sup>43</sup> մետրոպոլիտոսությունը: Նվիրապետական այս աթոռի տարածքը հետագայում ընդլայնվեց Հայաստանի տարբեր մասերի՝ Հոռոմոց կայսրությանն անցնելուն զուգընթաց<sup>44</sup>, այնպես որ XI դ. կեսերին Խորձյանի և Տարո-

\* Ըստ հուշարձանն ուսումնասիրած Ա. Հակոբյանի եզրակացության՝ եկեղեցին «Ժ-ԺԱ դարերի հայ ֆաղկեղանական կառույց է» (Հակոբյան, «Գյալրենջի», էջ 47):

41 Տես Փիլալուսի, *Ἡ Ἐκκλησία*, էջ 171-172: Πρεμετίδης, *Ἡ Μητρόπολις*, էջ 98: Եկեղյաց եպիսկոպոսաների ոչ լրիվ գավազանագիրքը հասնում է մինչև XIV դ. վերջը (տես Fedalto, *Patriarchatus Alexandrinus*, էջ 845):

42 Տես Φώτιος Κωνσταντινουπόλεως, *Κατὰ τῆς Θεοπασχιδῶν αἰρέσεως*, էջ 4, 94:

43 Տես Darrouzès, *Notitiae*, էջ 292: Հանդիպում են նաև թեմի այլ անվանումներ. «ὁ Τζιμένου ἦτοι Κορτζένης καὶ Κελτζηνῆς», «ὁ Κελτζηνῆς σὺν τῇ Κορτζενῆ καὶ Ταρόν» (տես Darrouzès, *Notitiae*, էջ 334, 335): Այս վերնագրերում առկա Կելձենի նույնականացումը Խորձյանի հետ սխալ է և առաջ է եկել երկու տեղանունների նմանությունից: Մյուս կողմից արդեն գիտենք, որ Կելձենեն Եկեղյաց (Երիզի) եպիսկոպոսական արքուն է Ուրեմն, խոսքը միայն Խորձյանի մասին է: Τζιμένου-ն Հուստինիանուպոլիսն է:

44 Ն. Ալբրիդիսի կարծիքով՝ հայկական հողերում Կոստանդնուպոլսի պատրիարքության թեմերի հիմնադրումը տրամաբանական հետևանքն էր կայսրության կողմից այս տարածքների նվաճման, քանի որ Բյուզանդիայի համար պետության ու եկեղեցու աշխարհագրական սահմանները հասընկնում էին: Հետագոտողը կարծում է, որ այդ թեմերը հիմնվել են՝ երկրամասի պավլիկյան մնացորդների, հակաֆաղկեղանական հայերի և ասորիների մեջ ֆարոզություն ծավալելու նպատակներով: Մյուս կողմից մատնանշվում է այն, որ X-XI դդ. եկեղեցական կանոնների համաձայն՝ եպիսկոպոսական արքուն չէր կարող հիմնվել այնտեղ, որտեղ չկար բավականաչափ ուղղափառ բնակչություն (տես Ακριτιδης, *Ἡ Ἱστορική*, էջ 57, 125-127):



նի մետրոպոլիտոսթյունը Կոստանդնուպոլսի պատրիարքութեան խոշորագույն մետրոպոլիտոսթյուններից մեկն էր՝ ունենալով 21 եպիսկոպոսութիւն: Դրանք էին Մուշի, Խաճուռի (Պարսիսի) (Χατζοῦν), Գալլ գետի (Λυκοποταμίας), Կորաքի (ὁ [ἐγ]Κορτζενῆ (ὁ Κορτζενῆς)), Մատրաբաթի (Մատրաբաթի) (Ματραβάτζ, Μαστραβάτζ), Խուսի (Χουίτ), Պարսիսի (ὁ Παρχοῦ), Ամիրիի (Ἀμβρηῆς), Արմեդիզուրի կամ Մարմեդիզուրի (ὁ Ἀρμεντιτζοῦερ (Μαρμεντιτζοῦερ) ἦτοι Λειμωνοδόαξ), Մաճիերտի (Ματζίερτε), Մբ. նիկողայոսի (τοῦ Αγίου Νικολάου), Եվալի Աստվածածնի (τὸ Εὐὰ ἡ θεοτόκος), Արճեշի Մբ. նիկողայոսի (τὸ Ἀρτζέσιον ὁ Άγιος Νικόλαος), Արճիեի (τὸ Ἀρτζίκε ἦτοι Ἀκεράβου)<sup>45</sup> Ամյուկի, Բերկրիի, Մբ. Գևորգի, Ոստանի, Մբ. Եղիսեի և Սեդրակի Աստվածածնի (τὸ Σεδράκ ἡ θεοτόκος) թեմերը<sup>46</sup>:

Վերսնշյալ տեղանուններից մետրոպոլիտոսթյան աթոռանիստ Մուշը, Խուս, Արճեշ, Արճիե, Բերկրի, Ոստան տեղանունները հստակ են, իսկ մնացյալները՝ հունարեն աղճատված ձևերի պատճառով քննության կարիքն ունեն:

Այսպես, *Χατζοῦν* թեմը է. Հոնիգմանը տեղադրում է Տարոնում<sup>47</sup>, իսկ Վ. Հարությունո-

վա-Ֆիդանյանը՝ կամ Հաշտյանքում, կամ էլ սբ. Մաշտոցի ծննդավայր Հացեկում<sup>48</sup>: Սակայն ավելի հավանական է, որ խոսքը Վասպուրականի Հացյուների մասին է, որը հայտնի է եղել այնտեղ պահվող Խաչափայտի մասունքով<sup>49</sup>: Նույն նահանգում են նաև Խաչան լիճը (Թոնդրակից հարավ) և Խաչան բնակավայրը (Բերկրիից հյուսիսարևելք). չի բացառվում, որ *Χατζοῦν*-ը գրչական սխալի հետևանքով *Χατζοῦν* է դարձել, թեպետ ըստ մեզ՝ նախընտրելի տարբերակը Հացյունն է:

Կիկոպոտամիայի թեմը գտնվել է Կամախի շրջանում, որտեղ և հոսում է արևելյան եփրատի վտակ Գալլ գետը, սակայն այս թեմի աթոռանիստը անհայտ է մնում:

Խնդրահարույց է ὁ [ἐγ]Κορτζενῆ (ὁ Κορτζενῆς) թեմը որը թերևս առաջացել է մետրոպոլիտոսթյան անվանման կրկնազրույթյունից: Հնարավոր է նաև, որ այստեղ խոսքը Տարոնի Կորո Չոր գավառի մասին է: Այն սկզբնապես պատկանում էր Մանազկերտի կայսրիկներին, սակայն ազատագրվեց Սմբատ Ա Բագրատունու ջանքերով<sup>50</sup>: Այս գավառի աթոռանիստի հարցը ևս բաց է մնում:

*Μαστραβάτζ* տեղանունը Ն. Ադոնցի կարծիքով Տարոնի հայտնի Մատրաբաթ մենաստանն է<sup>51</sup>, և *Μαστραβάτζ*-ը ծագում է գրաբար «Մատ-

45 1303 թ. դրությամբ Արևելք քաղաքում դեռևս գոյություն ուներ Հոռոմվանի բաղամասը (տես Խաչիկյան, *Հայերեն*, մասն Ա, էջ 45):

46 Տես Dargouzes, *Notitiae*, էջ 336:

47 Տես Honigmann, *Die Ostgrenze*, էջ 204:

48 Տես Арутюнова-Фиданян, *Армяно-византийская*, էջ 29:

49 Տես «Պատմութիւն Խաչին»:

50 Տես Եղիազարյան, *Աշոտ Երկաթ*, էջ 59:

51 Այս վանի մասին տես Ոսկեան, *Տարոնի վանքերը*, էջ 251-254:

բավանից» ձևից<sup>52</sup>: Տվյալ թեմը գոյություն ուներ արդեն Փոստ պատրիարքի օրոք, քանի որ Վահան «Մաստրավոնի» (*Βαάνης Μαστράβων*) Տարոնացի եպիսկոպոսը մասնակցել է 879-880 թ. Կոստանդնուպոլսի ժողովին<sup>53</sup>:

Բացի վերոնշյալ Մատնավանքից, Տարոն աշխարհում Մարաթուկ լեռան մոտ գտնվել է մեկ այլ Մատնեվանք, որն այնտեղ պահպանված Պետրոս առաքյալի մատի պատճառով է այսպես կոչվել<sup>54</sup>: Բացի այդ, համանուն մի վանք էլ գոյություն է ունեցել Խլաթում<sup>55</sup>, իսկ Վանա լճի հյուսիսում՝ Արճեշից հարավ, գոյություն է ունեցել Մատղավանքը: Նույնանուն այսպիսի մի բազմությունը *Μαστραβάτζ-Մատրավանք* թեմի ճշգրիտ ու միանշանակ տեղայնացնումն անշուշտ բարդացնում է: Այսուհանդերձ, նախընտրելի է Ադոնցի նշած Մատրավանքի տարբերակը:

*Παρχοῦ* թեմի հստակ տեղայնացումն անհնարին է. ըստ երևույթին այն կապ ունի Մանանաղի գավառի Պախր (Գայլախազուտ) լեռան հետ, որի ստորոտում գտնված Բազմաղբյուր գյուղը



Սբ. Սահակ Պարև հայրապետի դամբարանը՝  
Մշո Մատնավանքից ոչ հեռու  
Կոստանկարը՝ ՀՃՈՒՀ

X դ. թոնդրակեցիների կենտրոն էր<sup>56</sup>: Հնարավոր է նաև, որ այս թեմը աղերսվում է Տարոնի Պարեխ գյուղի հետ: *Ἀμβρῆς* թեմը, կարծում ենք նույնական է Բաղեշի Ամպ (Համբ) գյուղի հետ, որը հայտնի է եղել մոտակայքի Խնդրա-կատար Աստվածածին հնամենի վանքով<sup>57</sup>, իսկ *Μαρμεντιτζούρ* թեմն ըստ երևույթին Վանա ծովի արևելյան ափին գտնված Մարմետն է<sup>58</sup>:

52 Վանքը նաև կոչվել է «Մանրավանք», «Մարգարեանոց», «Մատնավանք». դրանք բացատրվում են այնու, որ Գրիգոր Կասավորիչն այստեղի մատուտում Հովհաննես Մկրտչի մատուցներից մանր կտորներ կամ մատն է ամփոփել: «Մասնա ծուր» էպոսի մի տարբերակում, սակայն, «Մատնավանք» անվանումը մատնության հետ է կապվում. իբր թե վանահայրը Մատղավանքում ապաստանած Փոհր Մհերի, Քեռի Քոռոսի ու Չենով Օհանի վրա է կանչում յոթ քաղավորների զորհերը: Մասնա ղյուղագումները շարդում են թշնամիներին, իսկ վանքի անունը «Մատղավանքից» «Մատնավանքի» են փոխում (տես Մելիք-Օհանջանյան, *Սասնա ծռեր*, հ. ԲII, էջ 64-66, 207-209): Այս մանրամասնությունը կարող է խոսել այն մասին, որ հնում վանքն օրբոդոսն է եղել և որպես այդպիսին՝ թշնամական դիտվել հակաբաղկեղծունական միջավայրում:

53 Տես Καζαριάν, *Ο Ιερός Φώτιος*, էջ 58-59:

54 Տես Ոսկեան, *Տարոնի վանքերը*, էջ 247-251:

55 Տես Պալեան, *Հայ վանորայք*, էջ 266, 378-379. Ոսկեան, *Տարոնի վանքերը*, էջ 254-258:

56 Տես Honigmann, *Die Ostgrenze*, էջ 206:

57 Տես Պալեան, *Հայ վանորայք*, էջ 266, 239-240:

58 Տես Арутюнова-Фиданян, *Армяно-византийская*, էջ 63:



Խորհյանի և Մուշի մետրոպոլիտոսիայան մոտավոր Բարսեղը

*Ματζιερτε*-ն հնարավոր է, որ Մեծկերտն է (հետագայում՝ Չարսանճագ), կամ էլ Մանազկերտը<sup>59</sup>: Այս վերջինում օրթոդոքս եպիսկոպոսության հիմնումը հնարավոր էր միայն 968 թ. հետո, երբ բյուզանդական զորքերը քաղաքը նվաճեցին կայսրիկներից, իսկ ավելի ուշ այստեղ առանձին բանակաթեմ հիմնվեց: «Եվայի Աստվածածնի» թեմի պարագայում կարծում ենք, որ այն կապ չունի Վանի հետ<sup>60</sup>, և տարօրինակ *Εὐῶ*-ն իրականում Բալուրի Հավավ գյուղն է, որը հայտնի է եղել Քաղցրահայաց Աստվածածին վանքով<sup>61</sup>: Ինչ վերաբերում է Սր. Նիկողայոս թեմին, ապա դրա տեղա-

նացումն ըստ երևույթին պետք է կապել Ապահունիքի Սր. Նիկողայոս վանքին, որի ճշգրիտ տեղը հայտնի չէ<sup>62</sup>:

Սր. Գևորգի թեմն ամենայն հավանականությամբ Ակնի Վանք գյուղն է<sup>63</sup>:

Սր. Եղիսեի թեմը մեր կարծիքով կապ չունի Վասպուրականի Սր. Նղիշե վանքի հետ<sup>64</sup>, այլ ինչպես *Εὐῶ*-Հավավի թեմի պարագայում, այստեղ էլ տեղանունն անձնանվան հետ է շփոթվել: Այս դեպքում թերևս հնարավոր է *Ἐλισσαίου*-ն նույնացնել Տարոն աշխարհի Արշամունիք գավառի



Կոլսի Ամրոցը  
Լուսանկարը՝ ՀՃՈՒՀ

59 Տես Honigmann, *Die Ostgrenze*, էջ 207:

60 Տես Honigmann, *Die Ostgrenze*, էջ 207:

61 Վերջինիս կաթողիկոսն ունի հարուստավետական մի առանձնահատկություն, որը հիմնականում ուղղափառ տանահներին է յուրահատուկ. խոսքն ավանդատներից խորան բացվող դռների մասին է:

62 Տես Պալեան, *Հայ վանորայք*, էջ 258, 371: Վ. Հարությունովա-Ֆիդանյանի համաձայն՝ Արևելի կամ Սր. Նիկողայոսի թեմի արժանիատուն է եղել Վասպուրականի Նիկողայոս Մհանչեղագործ վանքը (տես Арутюнова-Фиданян, *Армяно-византийская*, էջ 63): Սակայն հետազոտողի մատնանշած վանքն իրականում ոչ թե սր. Նիկողայոսին, այլ Մհանչեղագործ սր. Նշանին է նվիրված եղել (տես Պալեան, *Հայ վանորայք*, էջ 266, 379):

63 Տեղական ավանդազրոյցների համաձայն՝ վանքիցները մինչև XV դ. բնակվելիս են եղել «Կոլսի ամրոցում»՝ Վան գյուղից քիչ հեռու գտնվող բարձունքում: Այնտեղ ցարդ պահպանվել են միջնադարյան ամրոցի և այլ կառույցների ավերակներ (տես Ղազարյան, «Ակնի», էջ 21): Ըստ երևույթին, Սր. Գևորգ թեմի առաջնորդանիստն հենց այս ամրոցում է գտնվել:

64 Տես Арутюнова-Фиданян, *Армяно-византийская*, էջ 63:



Սր. Բարսեղ Կեսարացին,

Հարցողաց գրքի գրիչն ու պատմիրատուն, մանրանկար, 1243 թ.,  
Երուսաղեմ, Հայոց պատրիարքարանի մատենադարան, թ. 336\*

**Երիզայի հետ: Ինչ վերաբերում է Սեդրակի Աստվածածին թեմին, ապա այն միանշանակ նույնական է Չմշկածագի Սեդրկա (Սեթրկա) գյուղին:**

Նկատելի է, որ Խորձյանի և Տարոնի մետրոպոլիտոսությունն ընդգրկում էր հսկայական տարածք. այն սկսվում էր հին Չորրորդ Հայքի հյուսիսային ծայրամասից, անցնում Նկեղյաց գավառի միջով, հասնում Տարոն և ավարտվում Վանա լճի ավազանում: Մետրոպոլիտոսության այս տարածքը ձևավորվել է X-XI դդ. ընթացքում, աստիճանաբար,



Սր. Մարինոս կամ Սեխու Սր. Նշան վանքը  
Հայոց Չոր, Վասպուրական\*\*

**Հայաստանի տարբեր գավառների կայսրությանն անցնելուն զուգահեռ: Այդ գործընթացում հանգուցային են եղել 968 թ. Տարոնի և Խուսի նվաճումը, 1021 թ. Վասպուրականի հանձնումը, XI դ. սկզբին բյուզանդական զորքերի արաբների դեմ մղած մարտերը, որոնց արդյունքում նվաճվեցին Վանա լիճը եզերող Արճեշ, Արծկե, Ամյուկ և Բերկրի ամրոցները: Ավելի ուշ Տարոնն ու Վասպուրականը միավորվեցին մեկ բանակաթեմի մեջ, և հավանաբար այս ժամանակ է, որ Խորձյանի ու Տարոնի թեմը ձևավորեց իր վերջնական թեմական կազմը: Այս ժամանակվանից հայտնի է Խորձյանի Վեոն մետրոպոլիտի անունը, որն ապրել է XI կեսերին<sup>65</sup>:**

\* Սույն ձեռագիր մատյանը, որը պարունակում է Բարսեղ Կեսարացու որոշ գրվածքներ ու Հաւանց վարքը, Ակնի ուղղափառ հայերից մեզ հայտնի հնագույն գրավոր հուշարձանն է (տես Պողարեան, Մայր ցուցակ, հ. Բ, էջ 217-221. Бартикян, «Гаврас», III, էջ 163-166:

\*\* Նկատի ունենալով անվան եզակիությունը հայ եկեղեցական ավանդույթի համար, վանքի տեղադրությունը և ումնանկարների հետեւի առկայությունը, կարելի է ենթադրել, որ սկզբում սա ուղղափառ մենաստան է եղել: Վանքի պատմության պահպանված էջերի մասին տես Կարապետյան, Հայոց ձոր, էջ 114-123:

65 Տես Kazaryan, *Οι Αρμενοβυζαντινές*, էջ 219:



Տրապիզոնի Սր. Եվգենիոս տաճարը, XX դ. սկիզբ

Այս տաճարի հովանու ներքո գործած Տյուրիկոս հույն գիտնականի մոտ է աշակերտել Անանիա Նիրակացին:

## ՏՐԱՊԻԶՈՆԻ

### ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԵՐԸ

Մոտավորապես X դ. սկզբում Տրապիզոնի<sup>66</sup> աթոռը բարձրացվեց մետրոպոլիտոսության՝ ունենալով 7 եպիսկոպոսություն՝ Խերիանը

(Օ Վերիանոն), Խամաձուրը (Օ Վամաթզուր), Խախենը (Օ Վախաիս), Բաբերդը (Օ Վաբարդ), Կերամենը (Օ Վերամենոն), Լերիոնը (Օ Վերիոն) ու Վիզանը (Օ Վիզանոն)<sup>67</sup>:

Տրապիզոնի մետրոպոլիտոսության այս յոթ եպիսկոպոսությունների մեջ առաջին տեղը գրավող Խերիանը կամ Շերիանն ընկած էր Սատաղից հյուսիս-արևմուտք և սահմանային կես էր Տրապիզոնի և Սերաստիո մետրոպոլիտոսությունների միջև: Թեմի հոգևոր կենտրոնն էր Խենու (Վաիս) Սր. Գևորգ վանքը<sup>68</sup>:

Վամաթզուր-ը թերևս պետք է ուղղել [Վար] Վամաթզուր, որի դեպքում կունենանք Սարգամ բնակավայրը: Այն ընկած էր Կարինից մոտ 30 կմ հյուսիս-արևմուտք<sup>69</sup>: Պահպանվել է այս եպիսկոպոսության երկու առաջնորդի անուն՝ Թեոդորոս (X դ. կես) և Հովհաննես (XI դ. կես)<sup>70</sup>:

Վախաիս եպիսկոպոսությունն ըստ երևույթին նույնական պետք է համարել Եկեղյաց գավառի նշանավոր Խախաիս ավանին:

Բաբերդ տեղանունը բնականաբար որևէ դժվարություն չի առաջացնում<sup>71</sup>, իսկ Կերամենն ըստ երևույթին հետագայում թուրքե-

66 Տրապիզոն քաղաքը հիմնադրվել է Ք. ա. 750 թ.: Ստրաբոնի վկայության համաձայն՝ Փոքր Հայքի հայերի իշխանությունը մինչև Տրապիզոն և Փառնակիա է տարածվել (տես Տաշեան, *Հայ բնակչությունը*, էջ 13): 536 թ. Հուստինիանոս կայսրը, Առաջին Հայքն ու Պոլեոնոնիական Պոնտոսն իրար կցելով, ստեղծեց «Առաջին Հայք» վարչական միավորը, որի մայրաքաղաքը դարձավ Տրապիզոնը: Հետագայում քաղաքը մտավ Արմենիական բանակաթեմի մեջ, իսկ IX դ. դարձավ Խաղիա բանակաթեմի կենտրոնը: 1261 թ. հիմնվեց Տրապիզոնի Մեծն Կոմնենոսների կայսրությունը, որը գոյատևեց մինչև 1461 թ.:

67 Տես Darrouzès, *Notitiae*, էջ 284:

68 Տես Փլապիդոս, *Η Εκκλησία*, էջ 163: Շերիանի բերդի մասին տես Հակոբ Կարնեցի, *Շինուած*, էջ 552:

69 Տես Դանիելյան, «Վասիլ», էջ 65:

70 Տես Fedalto, *Patriarchatus Constantinopolitanus*, էջ 401:

71 Հայտնի են Բաբերդի եպիսկոպոսներ Նիկողայոսի, Գրիգորի (IX դ.), Գավթի (XI դ.) և Հովհաննեսի (1023-1027 թթ.) անունները (տես Fedalto, *Patriarchatus Constantinopolitanus*, էջ 403):




Վարզահանի եկեղեցական համալիրի ավերակները

րից «Կիրեմիտլի» վերանվանված պոնտոսյան տեղանքն է Մաճուկա (Մաշկա) գավառում<sup>72</sup>: Աերիոնի եպիսկոպոսութունն ընկած էր հետագայի Արգիրուպոլիս (Գյումուշխանե) քաղաքից հյուսիս-արևելք<sup>73</sup>: Եվ վերջապես, **ՅԻՇՁԱՆՈՎ** տեղանունն կարելի էր նույնացնել Վժանին, սակայն ավելի հավանական տարբերակ է Բաբերդից հյուսիս-արևմուտք գտնված Վարզահանը, որը հայտնի է իր շքեղ եկեղեցական համալիրով<sup>74</sup>:

**X դ. վերջում կամ XI դ. կեսերին Տրապիզոնի մետրոպոլիտոսության թեմերի թիվն զգալիորեն աճեց՝ տարածվելով դեպի հայ-**

կական տարածքներ: Նորահիմն թեմերն էին Մանանաղիի (*Μανανάλεως*), Զարինակի (*Ζαρινάκου (Ζαριμάκων)*), Անդակի (*Ανδάκων, (Ανδάκων, Ανδάκτων)*), Մեսունիի (*Μεσουνη*), Խալխեոնի (*Χαλχαιού, (Χαχαιού)*), Սակավի (*Σακάβου*), Խալձիձինի (տ՝ *Χαβτζίτζιν (Χαβτζίτζου)*), Խանդիերդի (տ՝ *Χαντιέρζ, (Χαντζιέρζ Χαντζιέρζ)*), Օղնուտիի (տ՝ *Όλνούτιν, (Ούλνούτου)*), Բասենի (Օ *Φασιανής*) և Սերմանձոնի (Օ *τὸ Σερμάντζου (Σερμάτζου)*) եպիսկոպոսական աթոռները<sup>75</sup>:



Աերինի (այժմ Կարախյոյ) Սբ. Սոֆիա եկեղեցին՝ վերածված մզկիթի

72 Տես Φιλίππιδης, *Ἡ Ἐκκλησία*, էջ 168:

73 Ուսումնասիրողները միակարծիք են, որ «Աերիոն» անվանումը հայտնի «լերին» (գրաբար ուղղ. հույվն է «լեան»), իսկ սեռ. հույվը՝ «լերին») բառի աղավաղումն է, քանի որ գյուղը հայտնի է եղել նաև այդ անունով: Աերինը նշանավոր է մինչ օրս կանգուն վաղրյուզանդական (հավանաբար Հուստինիանոսի օրոք կառուցված) Սբ. Սոֆիա եռանավ բազիլիկով, որն իր վրա հայկական ճարտարապետության վառ կնիքն է կրում: Աերինի քրիստոնյա բնակչությունը 1730-ական թթ. բռնի իսլամացվել է, իսկ Սբ. Սոֆիան մզկիթի է վերածվել (տես Κορομηλιά, *Οἱ Ἑλληνοί*, էջ 278. Μηλλάς, *Τραπεζούς*, τ. Β', էջ 388-389. Սուրբ Սոֆիա, էջ 90-93):

74 Տես Казарян, «Епархии», էջ 89:

75 Տես Parthey, *Hieroclis*, էջ 120: Քանի որ Տրապիզոնի թեմերի քննվող անվանումները միանշանակ հունական չեն, ապա դրանց նշգրտումն ու տեղագրությունը բավականին բարդ խնդիր է, որն զբաղեցրել է հետազոտողներին: Խնդրն առավել բարդանում է այնու, որ 1461 թ. Տրապիզոնի կայսրության անկումից հետո Պոնտոսի քրիստոնյաների մեծ մասը

Վերոնշյալներից Մանանաղիի թեմի աթոռանիստն ամենայն հավանականությամբ գավառի կենտրոն Վժանն էր: Հավանաբար, XI դ. սկզբում հենց այստեղի եպիսկոպոսն էր եպիսառատը<sup>76</sup>: Մեկ այլ եպիսկոպոս՝ Միքայելը, հիշված է որպես Մանանաղիի առաջնորդ X-XI դդ. միջակայքում<sup>77</sup>:

*Ζαρινάκου* եպիսկոպոսության տեղադրության մասին կան մի քանի վարկածներ<sup>78</sup>, որոնցից առավել հավանական է թվում Հարք գավառի Չեռնակ բնակավայրը<sup>79</sup>:

*Ανδράκων* թեմը կարելի է նույնացնել կա՛մ Հավնունիքի Անդակին<sup>80</sup>, կա՛մ Դարույնքի Անդապ (Այնթապ) գյուղին:

*Μεσσουνή* տեղանունը չի կարելի նույնացնել Մծուռն քաղաքի հետ, քանի որ այն ավերվել է պարսիկներից դեռևս IV դ.<sup>81</sup>: Հավանական տարբերակ է Վանա լճից հարավ-արևելք ընկած Մեծնունիք (Վարաժնունիք) գավառը<sup>82</sup>: Այս պարագայում աթոռանիստ քաղաքի հարցը բաց է մնում:

Ինչ վերաբերում է մնացյալ տեղանուններին, ապա *Χαλχάιον* տեղանունն ըստ երևույթին

առաջացել է *Χαχαίον*-ի սխալագիր կրկնությունից, և հետևաբար խոսքը միևնույն խախի եպիսկոպոսության մասին է: Մյուս կողմից, այս տեղանունը հիշեցնում է խախու (վրաց. խախուլի) վանքի անվանումը: Եթե նշված թեմի ու այս վանքի նույնացումը ճիշտ է, ապա պետք է ընդունել, որ Տայքի՝ 1022 թ. վերջնականապես կայսրությանն անցնելուց հետո խախուի թեմը Վրաց եկեղեցուց անցել է Տրապիզոնի մետրոպոլիտոսությանը: Այս տեսությունը հավանական է դառնում, եթե նկատի ունենանք, որ Պոլսի պատրիարքության մի Կարգագրության մեջ հիշատակված է *ή Ίσχανίου*<sup>83</sup> թեմը, որը անհնարին է շնույնացնել Տայցոց Իշխանի հետ:

*Σακάβου* տեղանունը հիշեցնում է սբ. Սուքչասյանց նահատակությամբ հայտնի Սուկավետյաց լեռը, որն ընկած է Վաղարշակերտից հյուսիս<sup>84</sup>:

*Χαβτζίτζιν* և *Χαντίερζ* տեղանունները հավանաբար գտնվելիս են եղել Կարնո աշխարհում և նույնական են տարածաշրջանի երկու կարևոր ամրոցներին՝ Հավճիճին ու Խաղտոյառիճին<sup>85</sup>:

*Օլնոստի* տեղանունը թերևս անվերապահ

---

բնաջնջվել է, ինչի պատճառով երկրամասի ֆիստոնեական անցյալի մասին հիշողությունները վերացել են, իսկ մետրոպոլիտոսյան մեծարժեք արխիվը թուրքերը լիովին ոչնչացրել են 1665 թ.:

76 Տես Արիստակես Լաստիվերցի, *Պատմութիւն*, էջ 621:

77 Տես Fedalto, *Patriarchatus Constantinopolitanus*, էջ 402:

78 Տես Փիլիպիժիս, *Η Εκκλησία*, էջ 167-168. Honigmann, *Die Ostgrenze*, էջ 193:

79 Տես Դանիելյան, «Վասիլ», էջ 65:

80 Տես Honigmann, *Die Ostgrenze*, էջ 193:


81 Հմմտ. Դանիելյան, «Վասիլ», էջ 65:

82 Տես Փիլիպիժիս, *Η Εκκλησία*, էջ 167:

83 Տես Darrouzès, *Notitiae*, էջ 420:

84 Տես Դանիելյան, «Վասիլ», էջ 65:

85 Տես Honigmann, *Die Ostgrenze*, էջ 194-195. Դանիելյան, «Վասիլ», էջ 65:



Տրապիզոնի մետրոպոլիտոսիան մոտավոր փառաբեր

կարելի է նույնացնել Տարոն աշխարհի Ողնուտ (եղնուտ) ամրոցի հետ<sup>86</sup>, թեպետ ավելի նվազ հավանականություններ կա նաև Տայքի Օլթիի տարբերակը<sup>87</sup>: Հետաքրքրական տարբերակ է Համշենի եղնովիտ բնակավայրը, որտեղ մինչև XVI դ. կային «հոռոմներ», իսկ այս բնակավայրից 7-8 կմ. հեռավորության վրա ընկած է Չաթ գյուղը, որը չի բացառվում, «Ծաթի» աղավաղված (թուրքացված) տարբերակն է<sup>88</sup>:

Բասենի թեմի աթոռանիստի հարցը բաց է մնում, քանի որ այդ անունով քաղաք հիշատակվում է բյուզանդական աղբյուրներում, մինչդեռ

հայկական աղբյուրները գիտեն միայն նույնանուն գավառի մասին<sup>89</sup>:

Σερμάντζου տեղանունն ըստ հետազատողների՝ Սրմանց (Բյուրակն) լեռն է, կամ դրա հյուսիս-արևելյան կողմում գտնված Ջերմանց բերդը<sup>90</sup>: Այլ տարբերակ է Մոկաց Ջերմաձոր (Շատախ) գավառը: Ամենահավանական տարբերակը սակայն, Մանանաղիի Ջերմ (Ջերմա) գյուղաքաղաքն է, որը XI դ. թոնդրակյան շարժման կենտրոնն էր, և ուղղափառ եպիսկոպոսության հիմնումն այստեղ միանգամայն սպասելի է:

## Բ. ԱՆՏԻՈՔԻ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԹԵՈՒՆՍՈՒՊՈՒՊՈՒՄ-ԿԱՐԻՆԻ ԱԹՈՒԸ

Կարինը եպիսկոպոսանիստ դարձավ հավանաբար 421 թ. հետո, երբ Թեոդոս II կայսեր (408-450 թթ.) հրամանով կառուցապատվեց՝ նրա իսկ պատվին վերանվանվելով «Թեոդոսուպոլիս»: Այդ ժամանակը շրջանում Կարին-Թեոդոսուպոլիսը բյուզանդահայատակ Հայքի գլխավոր քաղաքն էր, և դա էր պատճառը, որ Կարինը քաղկեդոնյանների առաջատար կենտրոնն էր<sup>91</sup>:

86 Տես Honigmann, *Die Ostgrenze*, էջ 196. Դանիելյան, «Վասիլ», էջ 65:

87 Տես Φιλίππιδης, *Η Εκκλησία*, էջ 163-164:

88 Հմմտ. Սահակյան, «եղնովիտ», էջ 305, 311:

89 Բասենի և Բաբերդի՝ Տրապիզոնի Սբ. Եվգենիոս վանքի հետ ունեցած հետադիմական կապերի մասին տես Բարթիկյան, «Նորեր», էջ 131-133:

90 Տես Honigmann, *Die Ostgrenze*, էջ 197. Φιλίππιδης, *Η Εκκλησία*, էջ 167. Դանիելյան, «Վասիլ», էջ 65. Арутюнова-Фиданян, *Армяно-византийская*, էջ 29:

91 Անա այս համատեքստում հասկանալի է դառնում, թե «Պատմութեան» անանուն հեղինակն ինչու է շեշտում Բարթուղիմեոս առաքյալի՝ Կարինում փառոզելու պարագան. «...Թեոդոսուպոլիսը... նախկինում գյուղ էր և կոչվում էր Կալե Արիսե այն պատճառով»:





Քրիստոսի Մկրտությունը  
Մանրանկար XI դ. Տրապիզոնի ավետարանից,  
Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան,  
թիվ 1400/108

Արաբական արշավանքների շրջանում Թեոդոսուպոլիսը գրավվեց և ազատագրվեց միայն 949 թ., Հովհաննես Կուրկուասի եղբայր Թեոփիլոսի և նրա երիտասարդ թոռան՝ Հովհաննես Չմշկիկի քաջարի մարտերի արդյունքում: Այդ ժամանակ տարածաշրջանում հիմնվեց Թեոդոսուպոլիսի բանակաթեմը՝ Կարին կենտրոնով<sup>92</sup>:

որ երբ մեծ առաջյալ Բարբուղիմեոսը Պարթևստան գնալիս եփրատ գետում մկրտեց Պարսից արքայի եղբորդուն և նրա հետ միասին ետե՛մ նագար մարդ, այնտեղ նա կառուցեց ամենաբարձրն Ստավաճաճնի անվան (նվիրված) տաճար, և այդ վայրում գանվաղ գյուղն անվանեց Կալե Արխե (Բարի սկիզբ)» (Բարթիկյան, «Narratio», էջ 461):

92 Ընդհանրապես X դ. Բյուզանդիայի նվաճումների ժամանակաշրջանն էր, երբ արաբներից վերանվաճված արևմտահայոց տարածքներում ստեղծվեցին մի շարք բանակաթեմեր՝ Միջագետքի, Արշամուշատի, Հանձիտի, Թեոդոսուպոլիսի, Կերշանի, Ջիլաբերդի, Լեոնտակոմնի (Տերիկի) բանակաթեմերը: Դրանք հայտնի են «հայկական փոքր բանակաթեմեր» անվանումով:  
93 Տես Παπαδόπουλος, *Ιστορία*, էջ 876-878: Թեոդոսուպոլիսը որպես Դարայի աթոռ նշվում է Անտիոքի պատրիարքության մի Կարգագրության մեջ, որը թվագրվում է VI դ. կեսով: Եթե Կարինն այսօրվա վաղ է անցել Անտիոքին, ապա այդ դեպքում Կ. Պոլսի Կարգագրություններն ավանդույթի ուժով են հայտնում, թե այն Կեսարիո մետրոպոլիտոսության թեմ է եղել: Հավանական է նաև, որ Անտիոքի վերոնշյալ Կարգագրությունն է ենթարկվել հետագա ընդմիջարկության:



Մատթեոսի և Դուկասի ավետարանների սկզբնաբերքերը  
Մանրանկարներ Թեոդոսուպոլիսի ավետարանից,  
գրիչ և ծաղկող՝ Գրիգոր, 1232 թ.  
Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, թիվ 129  
Հավանաբար ձեռագիրն ստեղծվել է կարնեցի օրթոդոքս հայոց  
միջավայրում (տես Լազարյան, «Անտիոքի» էջ 402):

VII-X դ. սկզբի Կարգագրություններում Թեոդոսուպոլիսը նշված է որպես Կեսարիայի մետրոպոլիտոսության աթոռներից մեկը: Մոտավորապես X դ. քաղաքն անցավ Անտիոքի պատրիարքությանը՝ սկզբում դառնալով Դարայի մետրոպոլիտոսության երեք եպիսկոպոսություններից մեկը, ապա և գրավելով այդ մետրոպոլիտոսության տեղը<sup>93</sup>: Դարա-Թեո-

գոսուպոլիս մետրոպոլիտոսիջունն ուներ երկու եպիսկոպոսուսիջուն, որոնցից մեկը կոչվում էր *Ραμδία (Ράνδος)* և *Μνασσοβίω*, իսկ մյուսը՝ *Βάνας Ύψών*<sup>94</sup>: Սրանցից առաջին տեղանունը գտնվել է Միջագետքում: Եթե կարելի է մյուս երկու տեղանունները հայկական տարածքներում փնտրել, ապա *Μνασσοβίω*-ն միգուցե հնաբազոր է նույնացնել Բաբերդի Մնաս գյուղին: Ինչ վերաբերում է երկրորդին, ապա *Βάνας*-ի մեջ նկատելի է հայերեն «Վան» կամ «Վանք» տեղանունը:

Տեղանվան երկրորդ բաղադրիչը՝ *Ύψών*-ը նշանակում է «բարձունքի»: Թերևս չի կարելի բացատրել, որ խոսքը Բարձր Հայքի ինչ որ բնակավայրի մասին է<sup>95</sup>:

Հետագայում՝ մոտավորապես XI դ. վերջում Թեոդոսուպոլիս մետրոպոլիտոսիջան եպիսկոպոսական թեմերն էին արդեն հիշատակված *Ράνδος*-ը, *Νασάλων*, «Օրարոս» (*Օրτρος*, *Օրτου*), «Մազնուվի» (*Μαζνούβη*, *Μαζούνη*), «Մավրոկաստրոն» (*Μαυρικίου*, *Μαυρόκαστρον*, թրգմ. «Սև բերդ»), «Ագիա Մարիա» (*Αγία Μαρία*, թրգմ. «Սուրբ Մարիամ»), «Աբրիեբրի» (*Αξιέξη*), «Տարուձա» (*Ταρούτζα*,

*Ταροῦν*), «Պոլիտիմոս» (*Πολύτιμος*), եպիսկոպոսական աթոռները<sup>96</sup>: Վերոնշյալներից *Νασάλων* տեղանունը դժվար է տեղայնացնել: Հնաբազոր է, որ սա չորրորդհալքյան կամ միջագետքյան մի բնակավայր է: *Օրτρος* կամ *Օրτου*-ն Բասենի Օրթուն (Որդորուն) է<sup>97</sup>: «Ագիա Մարիան» (Սուրբ Մարիամ) ոչ թե Սուրմալուն է<sup>98</sup>, այլ ավելի մոտիկ մի բնակավայր, հավանաբար՝ Դարույնքի Մարիամ (Մարիամ Անա) գյուղը:

«Մավրոկաստրոն» դժվար թե նույնական լինի Շիրակի Մավրակ բնակավայրին<sup>99</sup>: Շատ ավելի հավանական է Սևուկ բերդակի տարբերակը<sup>100</sup>: Կարծում ենք նաև, «Մաձնուվին» ոչ թե Մեծնուևիքն է<sup>101</sup>, այլ Մժնկերտը:

*Ταρούτζα*-ն ըստ է. Հոնիգմանի, հավանաբար «Արուձի» աղավաղումն է<sup>102</sup>: Հավանաբար, խոսքը Բասենի Դարունք (Բայազետ) ամրոցի մասին է:

*Πολύτιμος* հունարենից թարգմանաբար նշանակում է «Բազմագին», սակայն նման տեղանուն այսօր մեզ հայտնի չէ: Ելնելով տեղանվան առաջին բաղադրյալից՝ Վ. Հարուսիջունովա-Ֆիդանյանն «Պոլիտիմոսը» նույնացնում է Մանանաղի Բազմաղբյուրին<sup>103</sup>: XI դ. սա թոնդրակ-

94 Տե՛ս Παπαδόπουλος-Κεραμεύς, *Ανέκδοτα*, էջ 67:

95 Տե՛ս Kazaryan, *Օի ԱրմեոսոՅճանտնէճ*, էջ 226-227:

96 Տե՛ս Gelzer, «Ungedruckte und wenig», էջ 249: Παπαδόπουλος-Κεραμεύς, *Ανέκδοτα*, էջ 70:

97 Տե՛ս Honigmann, *Die Ostgrenze*, էջ 214:

98 Տե՛ս Honigmann, *Die Ostgrenze*, էջ 216:


99 Տե՛ս Honigmann, *Die Ostgrenze*, էջ 215:

100 Տե՛ս Арутюнова-Фиданян, *Армяно-византийская*, էջ 31:

101 Տե՛ս Honigmann, *Die Ostgrenze*, էջ 215:

102 Տե՛ս Honigmann, *Die Ostgrenze*, էջ 217:

103 Տե՛ս Арутюнова-Фиданян, *Армяно-византийская*, էջ 31:



Թեոդոսուպոլսի մետրոպոլիտոսի  
մոտավոր ֆառանգը

յան կենտրոններից մեկն էր և տրամաբանական է, որ այնտեղ թեմ հիմնվեր՝ աղանդավորներին դարձի բերելու համար: Կա ևս մեկ բնակավայր, որ թերևս կարելի է նույնացնել «Պոլիտիմոսին»՝ Դարույնքի Բազմաշեն գյուղը:

Ինչ վերաբերում է ԱՇԽՇՊ տեղանվանը, ապա թերևս ենթադրելի է, որ դա Սպերի Աղսկե գյուղն է: Հավանական տարբերակ է նաև Կարնո շրջանի Ակսիկոմս գյուղը, որը հայտնի է եղել իր Աբ. Հովհաննես վանքով:

**ԶՈՐՐՈՐԴ ԼԱՅՔԻ ԵՎ  
«ՄՅՈՒՍ» ԶՈՐՐՈՐԴ ԼԱՅՔԻ  
ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Մեծ Հայքի հարավ-արևմտյան շրջանները, որոնք երկրի հնագույն քրիստոնեական օջախ-**

ներից էին և ունեին խառը՝ հայ-ասորական բնակչություն, սկզբնապես Վաղարշապատի կաթողիկոսության իշխանության տակ էին: Քաղաքական առումով այդ հողերը մերթ անցնում էին Հռոմին, մերթ՝ պարսիկներին, բայց 387 վերջնականապես անցան առաջինին:

V դ. Ամիդի մետրոպոլիտության կազմի մեջ էին մտնում Տիգրանակերտ-Մարտիրոսուպոլսի<sup>104</sup>, Ծոփքի, Անձիտի, որոշ վերապահությանը նաև՝ Մարոնուպոլսի և Վաղարշակուպոլսի եպիսկոպոսությունները:

Նշյալ տարածքները վարչական կարևոր փոփոխությունների ենթարկվեցին 536 թ., երբ Հուստինիանոս կայսրը կազմավորվեց «Չոր-



Գրիգոր Լուսավորիչը, եփեմ Ասուրին, Արգառ և Տղատ արքաները՝ Մանրանկարներ Չիկրակի Ավետարանից, Բարձր Հայք, XIV դ., Մանչեստրի Ջ. Ռիլանդս գրադարան

104 Ոմանք հուշակավոր Տիգրանակերտը սխալմամբ նույնացրել են Ամիդին, սակայն իրականում Տիգրանակերտը նույնական է Մարտիրոսուպոլսին (տե՛ս Հակոբյան, Պատմական, էջ 241):  
\* Արգառի ու Տղատի վնասված մանրանկարի վերականգնումը՝ Գ. Ղազարյանի:

բորդ Հայք» նահանգը: Այն բաղկացած էր Մեծ ու Փոքր Մոփքերից, Հանձիտ, Հաշտյանք, Բալահովիտ գավառներից՝ Մարտիրոսուպոլիս (Տիգրանակերտ) մայրաքաղաքով<sup>105</sup>:

553 թ. հինգերորդ Տիեզերածողովին Չորբորդ Հայքից մասնակցեցին Ամիդի Կիրակոս, Դադիմի Կյուրիոն և Անգեղի («Ինգելոնի») Քեոզորոս եպիսկոպոսները<sup>106</sup>: 692 թ. Տրուլոսի ժողովին մասնակցեցին Դադիմի Եղիա և Կիթառիճի Մարիանոս եպիսկոպոսները<sup>107</sup>:

591 թ., Փոքր (Շահունյաց) Մոփքն ու Ամիդի շրջանն իրար միավորվելով, կազմեցին նոր՝ «Վերին Միջագետք» կամ պարզապես «Չորրորդ Հայք» նահանգը՝ Ամիդ մայրաքաղաքով<sup>108</sup>: Նույն ժամանակ նախկին՝ հուստինիանոսյան «Չորրորդ Հայքը» Խորձյան ու Մուզուր գավառների հետ մեկտեղ կազմեց այսպես կոչված «Մյուս Չորրորդ Հայքը»՝ Դադիմ (Δαδίμων) մայրաքաղաքով<sup>109</sup>:

Շուրջ VI դ. կեսերին կազմված Անտիոքի պատրիարքության մի Կարգազրույթյան մեջ նշված են Ամիդի մետրոպոլիտոսի թեմերը, որոնք են Մարտիրոսուպոլիս, Անգեղի (Ιγγιληνής ήτοι ό Τγγίλων), Բալահովիտի (Βιλαβητινής), Արշամուշատի, Մոփքի, Կիթառիճի աթոռները, ինչպես



Սր. Մարուպա Մարտիրոսուպոլսեցին  
Որմնանկար, Քեոփանես Կրետացի,  
Աթոսի Ստավրոնիկիտա վանքի կաթողիկե, 1546 թ.

Սր. Մարուֆան (IV-V դդ.) եղել է Տիգրանակերտի եպիսկոպոսը և քաղաքում է հավաքել սր. վկաների բազմաթիվ մասունքներ, ինչի շնորհիվ քաղաքն ստացել է Մարտիրոսուպոլիս՝ «Մարտիրոսաց քաղաք» անվանումը:

նաև միջագետքյան Կիֆասը և Զեզման<sup>110</sup>:

Արաբական արշավանքներն ու նվաճումները ծանր հարված հասցրեցին տարածաշրջանին, ինչի հետևանքով այդ ժամանակաշրջանի եկեղեցական դրույթյան մասին տվյալները բացակայում են:

X դ. Բյուզանդիան արաբներից ազատեց այս հողերը և նոր վարչական ձևափոխումների

105 Տե՛ս Աղոնց, Հայաստանը, էջ 189-197:


106 Տե՛ս ACO.SS. Vol. 1, էջ 21, 23:

107 Տե՛ս Mansi, XI, էջ 992, 1005: Տարածաշրջանում հովվապետած այլ եպիսկոպոսների անուններ տես Kazaryan, *Օր Արմենոօստանտինէս*, էջ 225:

108 Տե՛ս Աղոնց, Հայաստանը, էջ 264-265: Իսկանյան, Հայ-բյուզանդական, էջ 358-359: Չորրորդ Հայքին նվիրված մեկ այլ արժեքավոր ուսումնասիրություն տես Մելիխեթ-Բեկ, «Չորրորդ Հայքի»:

109 Տե՛ս Աղոնց, Հայաստանը, էջ 264-265:

110 Տե՛ս Παπαδόπουλος, *Ιστορία*, էջ 876:



Ամիդի մետրոպոլիտոսիայի  
մոտավոր բարեպատկեր

ենթարկեց: Փոփոխություններ մտցվեցին նաև նվիրապետական համակարգի մեջ, սակայն մեզ հասած կցկտուր տվյալները թույլ չեն տալիս բավարար պատկերացում կազմել դրանց մասին: Կարելի է նկատել միայն, որ Անտիոքի հայրապետության նախկին որոշ բնակավայրեր X դ. անցան Կոստանդնուպոլսի աթոռին՝ մտնելով Կամախի մետրոպոլիտոսիայի կազմի մեջ:

X-XI դդ. Կոստանդնուպոլսի պատրիարքության կազմի մեջ որպես առանձին մետրոպոլիտոսիայուն հանդես է գալիս Արշամուշատը,

որն արաբական նվաճումներից առաջ Անտիոքի պատրիարքության վիճակն էր<sup>111</sup>: Արշամուշատի այդ նվիրապետական փոփոխությունը հարկավ պայմանավորված էր տարածաշրջանում նույնանուն բանակաթեմի հիմնադրման հետ:

XI դ. վերջում հիշատակվում են Ամիդի մետրոպոլիտոսիայան 7 եպիսկոպոսությունները, որոնցից 3-ը՝ Արշամուշատը, Մոփքը և Կիթառիճը հայկական հողերում էին: Նույն Կարգագրության մեջ որպես ինքնազուլիս մետրոպոլիտոսիայուն նշված է Մարտիրոսուպոլիսը<sup>112</sup>, որն Ամիդի աթոռից անջատվել էր դեռևս VI դ. կեսերին<sup>113</sup>:

Ըստ Նեղոս Դոքսապատրիսի՝ XII դ. Ամիդի մետրոպոլիտին ենթակա էին 8 եպիսկոպոսներ, իսկ Դարայի մետրոպոլիտոսիայանը՝ 10: Նեղոսը սակայն, չի նշում այդ եպիսկոպոսությունների անունները<sup>114</sup>: Շուրջ XII դ. մեկ այլ ցուցակ որպես Ամիդի եպիսկոպոսություններ է նշում նրանից առանձնացած Մարտիրոսուպոլիսը, որը միավորված էր Կյուրոս քաղաքի աթոռի հետ, ապա՝ Անգեղը, Բալահովիտը, Արշամուշատը (որը նույն ցուցակի համաձայն միավորված էր Ամիդի մետրոպոլիտոսիայանը), Մոփքը, Կիթառիճը, ինչպես նաև միջագետքյան Կիֆասը և Զևգման<sup>115</sup>:

111 Տե՛ս Darrouzès, *Notitiae*, էջ 292, 306, 370. հմմտ. Ακριτίδης, *Ιστορική γεωγραφία*, էջ 123:

112 Տե՛ս Gelzer, «Undegradke», էջ 250:

113 Տե՛ս Παπαδόπουλος, *Ιστορία*, էջ 877:

114 Տե՛ս Parthey, *Hieroclis*, էջ 272: Ըստ Խրիսոստոմոս արքեպիսկոպոսի՝ Նեղոսի տվյալները չեն արտահայտում XII դ. իրականությունը, երբ Անտիոքի արքեպիսկոպոսը անկում էր ապրում, այլ վերաբաղում են ավելի հին ժամանակների պատկեր (տե՛ս Παπαδόπουλος, *Ιστορία*, էջ 959): Ուշագրավ է, որ Նեղոսի հայ թարգմանչի համաձայն՝ Ամիդն ուներ 8, իսկ Դարսան՝ 3 եպիսկոպոսություն, ինչն ավելի իրատեսական է (տե՛ս Նեղոս Դոքսապատրիս, *Կարգագրություն*, էջ 6):

115 Տե՛ս Παπαδόπουλος-Κεραμεύς, *Ανέκδοτα*, էջ 65, 66-67:

XII դ. նախկին շորորդհայքյան տարածքներում դեռ ուժեղ էին ուղղափառ հայերի դիրքերը, ինչպես որ դրա մասին վկայում է Պողոս Տարոնացին՝ Թեոպիստոս Փիլիսոփային ուղղված իր հակաճառության մեջ<sup>116</sup>:

Անտիոքի պատրիարքության տարածք էր Կիլիկիան, որտեղ 1198 թ. հայկական թագավորություն հիմնելուց հետո էլ Անտիոքին ենթակա թեմերը շարունակեցին իրենց գոյությունը: Այսպես, Նեղոս Դոքսապատրիսի համաձայն՝ Անտիոքն ուղղափառ մետրոպոլիտություններ ուներ Տարսոնում (ենթակա 6 եպիսկոպոսություններով), Անազարբայում (ենթակա 9 եպիսկոպոսություններով), Մսիսում և Ադանայում<sup>117</sup>: Ընդ որում, Անտիոքի ուղղափառ պատրիարքները, հալածված լինելով խաչակիրներից, հիմնականում բնակվում էին կամ Պոլսում, կամ էլ Կիլիկյան Հայաստանում: Ավելին, XII դ. հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ժամանակ հայկական կողմը ցանկանում էր իրականացնել Հայոց կաթողիկոսության և Անտիոքի պատրիարքության միաձուլումը, ինչի արդյունքում Հայոց կաթողիկոսը կզբաղեցներ Անտիոքի պատրիարքի գահը, իսկ ուղղափառ եկեղեցուն վիրապետական համակարգի մեջ՝ երրորդ տե-

ղը (Կոստանդնուպոլսի և Ալեքսանդրիայի պատրիարքություններից հետո): Այդ ծրագիրը, սակայն, երբեք իրականություն չդարձավ<sup>118</sup>:

#### Գ. ՔԱՐԹԼԻԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ՏԱՅՔԻ ԵՎ ԿՂԱՐՋՔԻ ԹԵՄԵՐԸ

Տայոց եպիսկոպոսությունների մեջ առաջին տեղն էր զբաղեցնում Իշխանի առաջնորդը: Այս թեմը, որի նշանավոր առաջնորդն էր եղել Ներսես Շինողը՝ մինչև Հայոց կաթողիկոս դառնալը, Իշխանի տաճարի հետ մեկտեղ վերականգնվեց IX դ.: Նորոգյալ թեմն այս անգամ արդեն անցավ Քարթլիի՝ Արևելյան Վրաց (Մծխեթի) կաթողիկոսի հոգևոր իրավասությանը, և դրա առաջին թեմակալը դարձավ Սաբանը՝ Գրիգոր Խանձտացու աշակերտը<sup>119</sup>:

Իշխանի աթոռը ծաղկում էր ապրում ընդհուպ XI դ. սկիզբը, երբ Տայոց թագավորությունը նվաճվեց Բյուզանդական կայսրության կողմից: Հավանաբար, թեմը որոշ ժամանակով անցավ Տիեզերական պատրիարքությանը, քանի որ վերջինիս մի Կարգագրության մեջ նշված է ԽժՁԱՆՈՍՍ եպիսկոպոսությունը<sup>120</sup>:

Իշխանի եպիսկոպոսի դերը նորից բարձրա-

116 Տես Պաղոս Տարանացի, Թուղթ, էջ 273: Հոռոմ «Փիլիսոփա» (այսինքն՝ բարձրագույն ուսումնական հաստատության ուսուցիչ) Թեոպիստոսն իր երկը գրել է 1101 թ. Խոզնազավաթի և Մեծկերտի ուղղափառ իշխան Ահարոնի հանձնարարությամբ:


117 Տես Parthey, Hieroclis, էջ 272-273: Հմմտ. Նեղոս Դոքսապատրիս, Կարգագրություն, էջ 6:

118 Տես Բոզոյան, Վավերագրերը, էջ 204-205: Անտիոքի պատրիարքության և Կիլիկիո Հայոց թագավորության փոխհարաբերությունների կարևոր մանրամասնություններ տես БрЮН, Ромеи, к. 2, էջ 368-374, 390-392, 422-426, 448-452, 469-470. Ղազարյան, «Անտիոքի», էջ 397-399. Ավետիսյան, «Հույն»:

119 Տես Մարոսյան, Խորագույն Հայք, էջ 17:

120 Տես Darrouzès, Notitiae, էջ 420:

ցավ Զաքարյանների շրջանում. այսպես, XIII դ. Իշխանի եպիսկոպոսը կարևոր գործառույթ ուներ վրաց թագավորի գահակալության արարողակարգում. Արևմտյան Վրաց՝ Ափխազիայի կաթողիկոսի բացակայության դեպքում նա Մծխեթի կաթողիկոսի հետ կատարում էր նորած



Իշխանի ներսեսաշեն տաճարը՝ վերակառուցված X դ.:  
Հուշարձանը լիովին վերանորոգվել է 2014 թ.

**թագավորի գահին բազմեցնելու կարգը<sup>121</sup>:**  
**Սկզբնապես Իշխանի թեմի մեջ էր մտնում Տայքն ու հարավային Կղարջքը, բայց XVI դ.**



Ագարակի (եգրեկի) տաճարը, X դ.

*Մինչև եկեղեցու ավերվելը՝ դրա պատին եղել է հունարեն արձանագրություն, որը 1007 թ. թողել է Տայքից և հարակից շրջաններից կազմված Իվերիա բանակաթեմի (1001-1072 թթ.) առաջին կառավարիչ, նախկինում Լարխսայի և Մակեդոնիայի զորավար Գրիգոր Տարոնացին:<sup>\*</sup>*

**սկզբում, երբ վրացիները գրավեցին Սպերը մահմեդականներից, թեմի սահմաններն ընդարձակվեցին. այս ժամանակաշրջանում Իշխանի եպիսկոպոսության մեջ էին մտնում Գուրջի-Բողազից հյուսիս ընկած շրջանները, Թորթումը, Տասիկարիի (Տայոց Քարի), Արտանուջի, Սակավկասի-ձոյի, Որդոխ և Խապիր լեռների շրջանները<sup>122</sup>:**


**Արևելյան Վրաց եկեղեցու<sup>123</sup> հնագույն թեմերից մեկն էր Ախիզայի (Ալյուսույի) աթոռը, որը**

121 Տե՛ս Անանուն, *Թագավորների*, էջ 48. Силогава, «Ишханская», էջ 670-671:

\* Տե՛ս Մարության, *Խորագույն Հայք*, էջ 115-116:

122 Տե՛ս Պաշտոնականը, էջ 74: Հմմտ. Վախուշտի Բագրատիոն, *Վրաստանի թագավորության*, էջ 84. Силогава, «Ишханская», էջ 666:

123 Վրաց ավանդական պատմագրության համաձայն՝ Քարթլիի եկեղեցին ինգնագլխություն (աֆտոկեֆալիա) է ձեռք բերել դեռևս V դ.՝ Վախթանգ I Գուրգասալի քագավորի օրոք: Սակայն ըստ պրոֆ. Վ. Ֆիդասի հետազոտության՝ Վրաց եկեղեցին Վախթանգի օրոք իրականում դրվել է Անտիոքի պատրիարքության ենթակայության ներքո, իսկ VIII դ. կեսերին՝ արաբական տիրապետության ժամանակ, պատմական հանգամանքներից ելնելով, Անտիոքն արտոնել է միայն, որ Վրաց կաթողիկոսն ընտրվի և ձեռնադրվի Վիրհում, և ոչ թե Անտիոքում: Այդ արտոնությունը թարմացվել է XI դ. կեսերին: Մնացած բոլոր առումներով Քարթլիի եկեղեցին de jure շարունակել է մնալ Անտիոքի պատրիարքության գերիշխանության ներքո ընդհուպ Ռուս եկեղեցու



Ջավախքի Կուսուրդո գյուղի  
Սր. Համբարձում տաճարը, X դ.\*

գտնվում էր պատմական Գուգարք նահանգի Կղարջք գավառի Արտանուշ ամրոցից ոչ հեռու՝ նույնանուն բերդում: VII դ., արաբական արշավանքի պատճառով այս թեմը միձուլվեց Անշիի թեմին, որը գտնվում էր նույն երկրամասում՝ Արտանուշ ամրոցից հյուսիս<sup>124</sup>:

Անշիի թեմը IX դ. դարձավ Կղարջքի ամենաազդեցիկ աթոռը: Անշիի եպիսկոպոսի գործունեությունը սերտորեն կապված էր Գրիգոր Խանձտացու հիմնած վանական հաստատությունների վերածվելը (1811 թ.), թեպետ Վրաց Բագրատունիների ծաղկման շրջանից սկսած de facto անկախ էր (տե՛ս Φειδάς, «Τὸ πῶτοςκέφαλον»): Ուշագրավ է, որ Անտիոքի պատրիարքի տիտղոսաշարի մեջ առ այսօր պահված է «Վրաց պատրիարք» տիտղոսը: Տայֆում պատրիարքի կալվածքներն են եղել Պորտանոսն ու Կաղամախի ամրոցը (տե՛ս Honigmann, *Die Ostgrenze*, էջ 218-222):

\* Եկեղեցու նախնական տարածքային և վրացերեն արձանագրությունների մասին տե՛ս Северов, *Кумурдо*, էջ 5-16.

124 Տե՛ս Хоштария, «Ахизская»:

125 Տե՛ս Картвелишвили, «Анчийская», էջ 14-16:

126 Տե՛ս Силогава, «Банская», էջ 304: Հմմտ. Վախուշտի Բագրատինոն, *Վրաստանի թագավորության*, էջ 85:

127 Տե՛ս Պաշտոնականք, էջ 74:


128 Տե՛ս Ченшвили, «Кумурдойская»:

յունների հետ, այդ իսկ պատճառով նա հռչակվեց Կղարջքի 12 վանքերի ընդհանուր վանահայր (արքիմանդրիտ)<sup>125</sup>: Անշիի առաջնորդը Տայքի եպիսկոպոսությունների մեջ զբաղեցնում էր երրորդ տեղը՝ Իշխանից ու Ածկուրիից հետո:

IX-X դդ. սահմանագծում վերականգնվեց ներսեսաշեն Բանակի տաճարը: Նորոգյալ թեմի առաջին եպիսկոպոս ձեռնադրվեց Կիրակոս Բանակցին (վրացերեն՝ Կվիրիկե Բանելի): Այս եպիսկոպոսության իշխանությունը տարածվում էր Տայոց քարի, Փանասկերտի, Խարիզի ձորի, Օլթիի ու Նամուրականի (Մամրվանի) վրա<sup>126</sup>:

Տայոց թագավորության մեկ այլ աթոռն էլ Արտահանի (Երուշնելիի) եպիսկոպոսությունն էր, որի իշխանությունը տարածվում էր Արտահանի, Տալաշոյի հյուսիսի և մինչև Կող ընկած տարածքի վրա<sup>127</sup>: Տայքի և Կղարջքի թագավորության («կյուրապաղատության»), զբաղեցրած հայկական և վրացական ընդարձակ տարածքների այլ թեմերն են եղել Խախուի, Դաղաշենի (Կողի), Տբեթիի (Շավշեթի), Կուսուրդոյի<sup>128</sup>, Ածկուրիի, Մկարոսթավիի, Մուրձկաբիի եպիսկոպոսությունները:





Տայոց եպիսկոպոսությունների,  
հայտնի վանե՛րն ու բնակավայրերի ֆառտեզը

## ԱՆԻԻ, ԿԱՐՍԻ, ՎԱՂԱՐՇԱԿԵՐՏԻ ԵՎ ԴԿԱՆԻՍԻ ԱԹՈՒՆԵՐԸ

*XI-XIII դդ. կենտրոնական Հայաստանի կարևոր ուղղափառ օջախներն էին Անիի, Կարսի և Վաղարշակերտի աթոռները, որոնք Քարթլիի կաթողիկոսին են ենթարկվել:*

*Անիի աթոռը ենթադրաբար հիմնվել է XII*

դ., և նրա կազմի մեջ են մտել Շիրակավանքը, Ջարիշատն ու Մաղասբերդը<sup>129</sup>:

1218 թ. Անի է այցելել Քարթլիի կաթողիկոս Ետիփանը (1210-1220 թթ.), որը քաղաքի «վրացական» եկեղեցու պատին արժեքավոր վիմագիր մի արձանագրություն է թողել: Այստեղ կաթողիկոսն ի միջի այլոց տեղեկացնում է, որ ինքն Անիում եկեղեցիներ է օծել<sup>130</sup>:

1215 թ. մեծահարուստ և բարերար Տիգրան Հոնենցն Անիում կառուցել է Սբ. Գրիգոր Լուսավորիչ հայ առաքելական եկեղեցին, որը XIII դ. կեսերին՝ Ջաքարյանների օրոք, անցնել է Անիի օրթոդոքս համայնքին, եկեղեցու արևմտյան մասում նախասարահ է կառուցվել, որը տաճարի հետ մեկտեղ նկարազարդվել է<sup>131</sup>: Բուն տաճարի որմնանկարների մեջ հիմնական տեղ են զբաղեցնում Հայոց Լուսավորչի վարքի դրվագները<sup>132</sup>:

Անիի եպիսկոպոսությունը վերջին անգամ հիշատակվում է XVI դ. սկզբին՝ Սամցխե-Սաաթաբադո երկրամասի երեք եպիսկոպոսների շարքում՝ ենթակա Քարթլիի կաթողիկոսին<sup>133</sup>:

Վաղարշակերտի և Կարսի թեմերի մասին պատմական տեղեկությունները գրեթե բացա-

129 Տես Պաշտոնականք, էջ 74: Силогава, «Анисская»:

130 Տես Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 43: «Հազար ու մի եկեղեցիների ֆաղափ» Անիի ուղղափառ եկեղեցիներից հայտնի են ընդամենը երեքը: Դրանցից մեկը վերոհիշյալ «վրացականն» է, որ հավանաբար առաջնորդախոս եկեղեցին է, իսկ մյուսներն են Սբ. Մինաս ու Հոնենցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները: Սբ. Մինասն ըստ երևույթին կառուցվել է XII դ. որպես առաքելական սրբատեղի, հետագայում անցել է ուղղափառներին ու որմնանկարներով զարդարվել: Այսօր, սակայն, հայտնի չէ, թե որտեղ է գտնվել այդ եկեղեցին (տես Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 61-62):

131 Հոնենցի եկեղեցու դավանական պատկանելիության մասին հանգամանալից տես Мурадян, «Проблема»:

132 Տես Каковкин, «Заметки». Հակոբյան, «Հայ-ֆաղկեղոնական»:

133 Տես Силогава, «Анисская епархия», էջ 444:



Տիգրան Հոնենցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ տաճարը  
(վերակազմությունը՝ Պ. Ֆրանկյանի, ՀՃՈՒՀ)  
և դրա որմնանկարագրող ներքը

կայում են<sup>134</sup>: Նշվածներից առաջինը կար արդեն XI դ., երբ հայտնի էր Վաղարշակերտի առաջնորդ Զաքարիա Բանակցին<sup>135</sup>: Կարսի թեմը հիմնվել է XIII դ. սկզբում, երբ Զաքարյանների օրոք Կարսի շրջանը ազատագրվեց սելջուկներից: Կարսի եպիսկոպոսներից հայտնի է միայն XIII դ. 30-ականներին ապրած Սաբբա Սինկելոսի անունը<sup>136</sup>: Այս երկու թեմերը հիշատակվում են ընդհուպ XV դ., երբ առաջինի կազմի մեջ էին մտնում Կարսն ու Կաղզվանը, Տաչքի Կողը, Օլթին, իսկ երկրորդի մեջ՝ Վաղարշակերտի շրջանը, Կաղզվանի վերին շրջանները, Խնուան ու Դեվա-Բոինը<sup>137</sup>:

Ինչ վերաբերում է Հյուսիսային Հայաստանի ուղղափառ բնակավայրերին, ապա դրանք ենթակա էին Մեծ Հայքի (Մեծ Սոմխիթի) մետրոպոլիտությանը, որի աթոռանիստը Պղնձահանքի Սբ. Աստվածածին վանքն էր: Հայքի մետրոպոլիտը Վրաց եկեղեցու նվիրապետության մեջ զբաղեցնում էր երրորդ տեղը՝ կաթողիկոսից ու ճղոնդիդիի արքեպիսկոպոս-գիվանապետից հետո<sup>138</sup>, իսկ նրա իշխանությունը տարածվել է Խունանի, Գարդաբանի և Բերդուջ (Դեբեդ) գետի ձորի վրա<sup>139</sup>:

134 Հավանաբար Կարսի օրթոդոս սրբավայրերից է եղել Բաղաբից հարավ-արևելք ընկած Կարմիր վանքը, որը չի պահպանվել (տես Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 83-86):



135 Նուա մասին տես Силогава, «Захария»:

136 Տես Чеишвили, «Карийская»:

137 Տես Պաշտոնականք, էջ 74-75:

138 Տես Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները, էջ 63: Պ. Մուրադյանը կարծում է, թե Մեծ Հայքի մետրոպոլիտի արժույթը հավանաբար գտնվելիս է եղել Անիում, սակայն այդ կարծիքը սխալ է, քանի որ Անիի մետրոպոլիտն ու Սոմխիթի մետրոպոլիտը իրարից տարբեր են եղել:

139 Տես Վախուշտի Բագրատիոն, Վրաստանի թագավորության, էջ 80:



Աննամոռի (եղևնամոռի կամ Ջանգլիի) տաճարը, X դ. (\*)  
 Լուսանկարը՝ ՀՃՄԻՀ

Հավանաբար եղել է Վաղարշակերտի թեմի առաջնորդանիստը։\*

**Դմանիսը Տաշիր-Չորագետի հայոց թագավորության ժամանակ մտնում էր վերջինիս կազմի մեջ, սակայն դրա եպիսկոպոսական աթոռի մասին տեղեկությունները հիմնականում սկսում են երևան գալ XIII դ.: Հայտնի է, որ ընդհուպ XVIII դ. այս աթոռի իշխանությունը տարածվել է Դմանիսի և Տաշիր ուղղափառ բնակչության վրա<sup>140</sup>:**

\* Տես Մարտիրոսյան, *Խորագույն Հայք*, էջ 118: Մուրադյան, *Վրացերեն արձանագրությունները*, էջ 79:

140 Տես Зенон, «Дманисская»: Ըստ Վախուշտիի՝ XVIII դ. այս տեղերի բնակչության մեծագույն մասը Հայ Առաքելական եկեղեցու անդամներ էին, փոքրամասնությունը՝ ուղղափառ (տես Վախուշտի Բագրատիոն, *Վրաստանի թագավորության*, էջ 81):



Գլուխ 2 \_\_\_\_\_

ԿԵՆՏ ՈՒ ԸՆԿՈՒ ԸՆԶԵՎ

ՕՍՄԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ  
ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀՊԱՏԱԿՆԵՐԸ


1071 թ. Մանազկերտի պարտության արդյունքում Բյուզանդական կայսրության արևելյան տարածքներում սելջուկ թուրքերի բնագրվելուց հետո սկսվեց քրիստոնյա տարրի անհետացման աստիճանական, բայց կայուն գործընթացը<sup>1</sup>: Սելջուկներին հաջորդած մոնղոլական, թուրքմենական արշավանքներն աղետաբեր հետևանքներ ունեցան քրիստոնյաների համար. ավերվում էին բնակավայրերը, բնակչությունը բնաջնջվում էր, գերվում, գաղթում կամ բռնագաղթվում: Զանգվածային երևույթ էր բռնի կամ կամավոր կերպով իսլամ ընդունելը:

1453 թ. մայիսի 29-ին օսման թուրքերի հարվածների տակ ընկավ երբեմնի գերհզոր Բյուզանդական կայսրության մնացորդը՝ արքայազազ Կոստանդնուպոլիսը, իսկ 1461 թ. Տրապիզոնի կայսրությունը:

Օսմանյան տերությունն օրթոդոքս քրիստոնյաներին սկզբնապես ճանաչում էր որպես «անհավատներ» (*kefere*) իսկ XVIII դարից՝ որպես *Rum millet*, որի ընդհանուր գլուխն էր ճանաչվում տիեզերական պատրիարքը<sup>2</sup>: Օս-

մանյան տերությունը ճանաչում էր նաև *Ermeni millet*-ը, որի գլուխն էր Կոստանդնուպոլսո հայոց պատրիարքը<sup>3</sup>:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Օսմանյան կայսրության մեջ քրիստոնյաների հանդեպ ճնշումներն ու սահմանափակումները, հաճախ նաև բացահայտ հետապնդումներն ու հալածանքները պետական քաղաքականության մակարդակի էին բարձրացվել: Տարածված էր ծածուկ քրիստոնեությունը, երբ առերես իսլամացածները գաղտնի դավանում էին իրենց նախկին հավատքը: Քրիստոնյա ազգերի տարրալուծման քաղաքականության մաս էր կազմում թուրքերենի պարտադրումը՝ մայրենի լեզվի հաշվին: Այս պայմաններում Օսմանյան տերության մեջ բնակվող թե՛ հայ, թե՛ հույն ժողովրդի



«Արեայուն» քրիստոնյաների նեխտրյանը՝ հայաստան թուրքերենով, գրիչ Թովմա Մեծոփեցի, ժե դ., ՄՄ, թիվ 7117

1 Հայ հոռոմ մետրոպոլիտ Հովակիմ Ապոստոլիդիսի նշգրիտ մտնով ու պատկերավոր արտահայտությամբ՝ «Հայաստանը բյուզանդական պետության համար վահան էր ընդդեմ Արևելից եկող վտանգների: Դրա համար էլ, երբ վերջին դարերում Բյուզանդիայի վաղ ֆաղափականության հետևանքով Հայաստանն ընկավ քուրթերի ձեռք, Արևելքում մայր մտավ և բյուզանդական երկգլխանի արժիվը» (Բարթիկյան, «Հայ-հոռոմները», էջ 259):

2 Տես Κονόρτας, *Οθωμανικές*, էջ 301-302:

3 Տես Բաում, *Թուրքիան*, էջ 25-26:

\* Տես Mapp, «К вопросу».

մի մեծ մասը թուրքախոս դարձավ: Առաջ եկան այնպիսի աղճատ երևույթներ, ինչպիսիք էին հայատառ ու հունատառ թուրքերենը:

Մահմեդական կառավարիչները հաճախ էին «զտվում տարբեր դավանությունների պատկանող քրիստոնյաների միջև ծագած խնդիրներին՝ նրանց թափը թուլացնելու և կամ առավելագույնս դրամական շահ կորզելու նպատակով: Բուն քրիստոնեական հողերում բնակություն էին հաստատվում մահմեդական նորեկները, մինչ իրավագուրկ և հողազուրկ քրիստոնյաները բռնում էին գաղթի ճանապարհը: Դրան գումարած բնական աղետները, համաճարակները, սովը ևն կարող էին շատ կարճ ժամանակում անճանաչելիորեն փոխել այս կամ այն տարածքի ժողովրդագրական պատկերը:

## ՏԱՅՔԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄԸ

1473 թ. օսմանները տիրեցին Բարձր Հայքին ու Տայքին, սակայն այս երկրամասերում իրական իշխանություն նրանք չունեցան: Սուլթանի իշխանությունն այստեղ ամրապնդելու նպատակով 1578 թ. ենիչերիների զորքով արշավանք սկսեց Լալա Մուստաֆա փաշան, որը երեք ամսում հրետանու օգնությամբ կործանեց Ճորոխի ավազանի անառիկ ամրոցներն ու բերդերը, ինչպես նաև՝ տաճարները: Ամբողջությամբ

յամբ գրավվեց նախկին Սաաթաբագոյի տարածքը<sup>4</sup>: Տեղի հայ բնակչությունը, հատկապես սպերցիները, բաբերդցիներն ու օլթեցիները բնաջնջվեցին, նրանց միայն մոտ 20% փրկվեց՝ իսլամ ընդունելով<sup>5</sup>:



Խախու վանքը

Սակայն Տայքի ուղղափառ հայություն մի մեծ մասը կարողացավ իր գոյությունը պահպանել մինչև XVII դ. կեսերը. «Եւ կայ ի մէջ ձորոյն մեծամեծ վանորայք Վրացի գուղն Խախու, Ողկ և Իշխան, որ յար եւ նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն սուրբն Սոփի ի Կոստանտնուպօլիս: Եւ էին բնակիչք երկրիս կէսն Հայք ազգաւ և կէսն ազգաւ և կրօնիւք վրացի, բայց Հայի լեզուա խօսէին»<sup>6</sup>:

1643 թ. ծանր հարկապահանջության ու

4 Տես Ակոպով, *Տայք*, էջ 55:

5 Տես Ասրպետ, *Ճորոխի առաջինը*, էջ 108-109:

6 Հակոբ Կարնեցի, *Շինուած*, էջ 554: Կարնեցու տեղեկությունը ճշգրտման կարիքն ունի, մեզ հայտնի է, որ XVI դ. վերջի դրությամբ վրացիների թիվը նշված տարաշարժանում կազմում էր մոտ 6%, և այդ թիվն էլ թեևս չափազանցված է: Եվ հետևաբար, «վրացիները» ոչ բնակչության կեսն էին, ոչ էլ ազգությամբ էին վրացի: XVI դ. վերջում երկրամասի ազգային



Բանակի տաճարի ավերակները

բռնությունների պատճառով Տայքի ուղղափառ հայությունը մահմեդականություն ընդունեց<sup>7</sup>: XVII-XVIII դդ. Տայքի հայությունը՝ օրթոդոքս և առաքելական, որ երկրամասի մոտ երկու երրորդն էր կազմում, մահմեդականացման ու բռնագաղթների պատճառով խիստ նվազեց<sup>8</sup>: Երկրամասի նվիրապետական աթոռները վերացան: Այսպես, XV-XVIII դդ միջև ընկած ժամանակաշրջանում Բանակի թեմը լուծարվեց<sup>9</sup>:

XVII դ. երկրորդ կեսին իր գոյությունը դադարեց Անշիի թեմը<sup>10</sup>, իսկ 1687 թ. հիշատակվում է Իշխանի վերջին մետրոպոլիտ Նիկողոզը<sup>11</sup>:

Բայց նոր կրոնը երկար ժամանակ չէր կարողանում արմատներ գցել տայեցիների մեջ. նրանք չուզելով էին մզկիթ հաճախում, մահմեդական պահքերը չէին պահում, խորշում էին բազմակնությունից ևն, իսկ մյուս մասն էլ, իսլամից խուսափելով «գյորան» աղանդին էր հարել:

Իսլամացած տայեցիք պահպանել էին իրենց ազգանունները (Տերտերանց, Քավորանց, Սանահերանց ևն), առօրյա սովորությունները, հայկական նիստուկացը, տարազը: Թեպետև թրքախոս էին, սակայն՝ հայկական արտասանությամբ, շարահյուսությամբ և բազմաթիվ հայկաբանություններով, այնպես որ ականատեսների վկայությամբ տայեցիները նույն այն հին ժողովուրդն էր «որոց բարձն ու վարքը չի տարբերում Հայ ժողովրդի վարքից ու բարքից. միակ տարբերությունը կրօնն է...»<sup>12</sup>:

և դավանական պատկերի մասին հանգամանալից տես Բաղայան, «Տայքի»:

7 Հակոբ Կարնեցի, *Նինուած*, էջ 554: Տայքի հայության իսլամացումը որոշ հետազոտողներ կապում են նրա՝ ուղղափառ լինելու հանգամանին (տես Մաթևոսեան, «Տայքի» էջ 89): Սակայն այդ մտաեցումն անհիմն է, քանի որ իսլամացմանը զոն են գնացել ոչ միայն օրթոդոքս հայերը. այսպես, 1611 թ. սկսվեց հույների ու լազերի բռնի մահմեդականացումը, ինչն իր գագաթնակետին հասավ 1681 թ. (տես Κανδηλάπτης-Κάνις, *Έλληνομνημόνων*, էջ 38-39, 48, 53): Հետագայում՝ 1723 թ. մահմեդականացել են առաքելական համայնականները և պոնտահայերի մի մեծ մասը (հմմտ. Մանանդեան, *Հայոց*, էջ 702-709, 710-713): Ավելի հանդիշ է թվում այն տեսակետը, որ տայեցիները պատրաստի զոն էին իսլամացման համար, քանի որ շունեին եկեղեցական ամուսնվորապետություն (տես Ակոբով, «Administrativ», էջ 443):


8 Տես Ակոբով, *Տայք*, էջ 141: XVII-XVIII դդ. բռնի մահմեդականացվեցին նաև Ջավախքի վրացի և հայ ուղղափառ բնակչության զանգվածներ (տես Կարապետյան, *Ջավախք*, էջ 16):

9 Տես *Պաշտոնականք*, էջ 74. Силогава, «Банская», էջ 304:

10 Տես Картвелишвили, «Анчийская», էջ 16:

11 Տես Силогава, «Ишханская», էջ 673: Նույն տեղում տես Իշխանի եպիսկոպոսների գավազանագիրքը:

12 Առաքետ, *Ճորոխի աւազանք*, էջ 196: Այս ամենի լույսի տակ հասկանալի է դառնում, թե որքան երեւում է տարածված այն կարծիքը, թե ուղղափառ տայեցիները վրացիացել էին դեռևս Միջնադարում:



Օշկ վանքը

Եվ միայն 1880-1914 թթ. «կեսկես» կոչված այս տայեցիները, արտաքին ազդեցությամբ, իրենք իրենց սկսեցին առանձին թուրքական ցեղախումբ համարել, ինչով և սրվեցին նրանց ու քրիստոնյա ազգակիցների հարաբերությունները<sup>13</sup>:

### ԹԵՄԵՐԻ ԱՄԱՅԱՅՈՒՄԸ

Կենաց ու մահվան արանքում հայտնված քրիստոնյա ազգաբնակչության նոսրացման պայմաններում բնականաբար քայքայվում էր նախկին թեմական-նվիրապետական համակարգը: Այսպես,

XVII դ. մի Կարգագրություն, ներկայացնելով օսմանցիների օրոք ստեղծված վիճակը, տեղեկացնում է, որ մետրոպոլիտությունների մեծագույն մասն ամայացած է, ենթակա թեմերը՝ անհետացած: Ահա այդ տխուր վիճակի մեջ են նշվում Սեբաստիայի, Մելիտենեի, Խորձյանի և Տարոնի մետրոպոլիտությունները<sup>14</sup>: Կարգագրության հեղինակն ավազում է. «Ո՛չ մետրոպոլիտություններում մետրոպոլիտ կա, ո՛չ արքեպիսկոպոս՝ արքեպիսկոպոսություններում, ո՛չ քահանա՝ եկեղեցում, ո՛չ վանական՝ վանքում ... ոչ էլ ուրիշ քրիստոնյա աշխարհական՝ ամրոցում կամ գյուղում... 51 մետրոպոլիտություն, 18 արքեպիսկոպոսություն և 478 եպիսկոպոսություն ամայացած են... Ոչ միայն այդ մետրոպոլիտությունները, արքեպիսկոպոսություններն ու եպիսկոպոսությունները, այլև վանքերն ու եկեղեցիներն են անհետացել... Քրիստոսի ժողովուրդը, այսինքն՝ քրիստոնյաները բնաջնջվել են»<sup>15</sup>:

### ԱՄԻԴԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Նոր ժամանակներում իր գոյությունը շարունակում էր պահպանել Ամիդի (Դիարբեքիր) մետրոպոլիտությունը՝ «Միջագետքի, Բաբելոնի և Չորրորդ Հալքի գերապատիվ էքսարքոս» տիտղոսով: XVII դ. երկրորդ տասնամյակում Ամիդի մետրոպոլիտ դարձավ Նպիփան Թեսաղոնիկեցին, որը սակայն գժտվեց իր հոտի հետ և, Կոստանդնուպոլիս հեռանալով, կապաղովկ-

13 Տե՛ս Ասուրյան, *Ճորոխի առաջանը*, էջ 197:

14 Տե՛ս Gelzer, «Ungedruckte», էջ 639, 640:

15 Gelzer, «Ungedruckte», էջ 631:



յան Կեսարիայի մետրոպոլիտ դարձավ: 1635-1647 թթ. Ամիրի առաջնորդն էր ոմն Փրիլիպպոս, իսկ նրա մահից հետո՝ 1649 թ., նոր մետրոպոլիտ ձեռնադրվեց արաբ քահանա («խուրի») Աթթալը՝ վերանվանվելով «Թեոդոս»<sup>16</sup>:



Ամիրի Սր. Անարծաթե Կոզմա և Դամիանոս եկեղեցու Մկրտություն տվագանը, Ամիր, 1686 թ.  
Բնակիսի թանգարան, Աթենք

## ՏՐԱՊԻԶՈՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹՅԱՆ ԱԹՈՒՆԵՐԸ

Տրապիզոնի գրավման ժամանակաշրջանում Խերիանի (Շերիանի)<sup>17</sup> եպիսկոպոսն էր Վասիլը, որը 1466 թ. Առյուծի դաշտում շուրջ 400 քաջերով ճակատամարտեց թուրքական զորքի դեմ և հերոսաբար ընկավ մարտի ընթացքում: Նրա մարմինն ամփոփվեց Մացեֆա գյուղում նույն թվականի մայիսի 17-ին: Վասիլ Խերիանցու գերեզմանը համարվել է լուսնոտաներին բժշկող սրբավայր<sup>18</sup>:

Տրապիզոնի անկումից հետո ծանր հարվածի տակ դրվեց տեղի Նկեղեցու կյանքը<sup>19</sup>: Աստիճանական անկման պատճառով մետրոպոլիտուլյան թեմերի մասին կցկաուր տեղեկություններ են պահպանվել: Այսպես, հայտնի է, որ Թեոլիպտոս II (1585-1586 թթ.) տիեզերական պատերազրը, հանգանակություն համար ժամանելով Վրաստան, վրաց թագավորի (կամ իշխանի) կամքով Բասենի եպիսկոպոսությունը բարձրացրեց մետրոպոլիտություն<sup>20</sup>:

Տրապիզոնի աթոռի Բաբերդի եպիսկոպո-

16 Տես Панченко, «Митрополиты», էջ 132-133, 149:

17 Հստ հույն ուսումնասիրողները՝ առաջնորդն էր արաբներն «սելյուկ» բառից, որ նշանակում է «գեղեցիկ», իսկ «Խերիանը» դրա հեղինակը տարբերակն է: Ինչ վերաբերում է Խերիանի տարածքին, ապա այն զգալիցնում էր Խաղաթի փոփոխության մի մասը, ուներ 72 գյուղ՝ Կարաշա շրջանում, իսկ եպիսկոպոսանիստը եղել է Կորցաֆ գյուղը: Բացի այդ, XIX դ. կեսերին մի բանի գյուղ միավորվել էին ու կազել Խերիանա անունով ավանը՝ բաղկացած թուրքերից, ֆրիստոնյաներից և ծածուկ ֆրիստոնյաներից: Նույն դարի ընթացքում գաղթերի պատճառով ֆրիստոնյաների թիվը Խերիանի շրջանում զգալիորեն նվազել էր, այնպես որ 1924 թ. դրությամբ այնտեղ կային ընդամենը 14 հունական գյուղեր (տես Կանդիլապտի-Կանյ, *Λεξικόν*, էջ 186, 190. Ελισαίος, «Χερροίανα»):

18 Տես Կանդիլապտի-Կանյ, *Λεξικόν*, էջ 112, 189: Կանդիլապտի-Կանյ, *Ελληνομνήμων*, էջ 23:

19 Տրապիզոն ֆաղափ իսլամացման և թուրքացման գործընթացի մասին տես Lowry, *The Islamization*.

20 Տես Γεδεών, *Πίνακες*, էջ 405:



Սր Վասիլ Խերխանցին  
Սրբապատկեր, հեղ. Գ. Ղազարյան, 2017 թ.

ություն մասին վերջին հիշատակությունը վերաբերում է 1624 թ., երբ տեղի եպիսկոպոսն էր լինում Խրիստոս<sup>21</sup>: Լերինը որպես եպիսկոպոսություն վերջին անգամ հիշատակվում է ավելի ուշ՝ 1733-1734 թթ.<sup>22</sup>:

1550 թ. որպես անկախ աթոռ Տրապիզոնի մետրոպոլիտությունից անջատվեց Կանը (Արգի-

րուպոլիս-Գյումուշխանեն), որի իշխանությունը 1650 թ. անցավ Շերիանը, և նորահաստատ մոտրոպոլիտությունը կոչվեց «Խաղտիքի, Խերիանի և Կերասունտի»<sup>23</sup>: 1645 թ. արքեպիսկոպոսության բարձրացված այս նվիրապետական աթոռը, իր գոյությունը պահպանելու համար պայքարի մեջ մտավ ինչպես Տրապիզոնի, այնպես էլ Ամիդի աթոռների հետ<sup>24</sup>: 1765-67 թթ. Խաղտիքի աթոռը դարձավ մետրոպոլիտություն<sup>25</sup>:

### ԱԽԹԱԼԱՅԻ ԱԹՈՒՐ

1461 թ. Տրապիզոնի կայսրության անկումից հետո պոնտացի հույները, խուսափելով թուրքական իշխանությունների դաժանություններից, սկսեցին տեղաշարժվել դեպի հարավ և արևելք՝ հայկական տարածքներ: Այսպես գոյացան կամ ուժեղացան Սեբաստիայի, Նիկոպոլսի, Կարսի, Կարինի, Ախթալայի, Ալավերդի, Խարբերդի, Արղանա Մադենի, Ամիդի և այլ բնակավայրերի հունական համայնքները, որոնք հիմնականում բաղկացած էին հանքափոր-մետաղագործներից: Արևմտյան Հայաստանի հույն մետաղագործների գաղութների հոգևոր գերատեսչությունը 1710 թ. պաշտոնապես հանձնվեց Խաղտիքի և Խերիանի մետրոպոլիտությանը<sup>26</sup>:

21 Տե՛ս Փիլապիդոս, «Կ'Էկկլիսիա», էջ 162:

22 Տե՛ս Կորոմիլա, *Օի Էլլիսիս*, էջ 258:

23 Տե՛ս Կանդալպտիս-Կանիս, *Էլլիսոմոնիս*, էջ 32, 45-46. Կանդալպտիս-Կանիս, *Լեզիկոն*, էջ 187:

24 Տե՛ս Կանդալպտիս-Կանիս, *Էլլիսոմոնիս*, էջ 45-47. *Սոնտոս*, տ. Բ', էջ 747:

25 Տե՛ս Կանդալպտիս-Կանիս, *Էլլիսոմոնիս*, էջ 109, 111:

26 Տե՛ս Սաթաթոս, «Օ Կալժիսիս. Լալմիժիս», «Կ Կոստանտինոպոլիս», էջ 152, 157:

1490 թ. Ախթալայում և շրջակայքում հաստատված հույներին հովվում էր Պղնձահանքի Սբ. Աստվածածին վանքը<sup>27</sup>: Այդ աթոռին ենթակա տարածքների մեջ էին մտնում ոչ միայն Հաստանի հյուսիսային շրջանները, այլև Մարկայի, Բոլնիսի և Դմանիսի թեմերի տարածքները<sup>28</sup>: Շուրջ 1500 թ. հանգանակություն հավաքելու նպատակով տարածաշրջան այցելեցին Կոստանդնուպոլսի Հովակիմ I (1498-1502 թթ.), իսկ 1585 թ.՝ Քեոկլիտոս II (1585-1586 թթ.) պատրիարքները<sup>29</sup>:

1636 թ. Կովկասի հույն քրիստոնյաների հովվությունը Բարձր Դուան կողմից հանձնվեց Տրապիզոնի մետրոպոլիտոսիանը, իսկ 1653 թ. տարածաշրջան այցելեց Խաղտիքի արքեպիսկոպոս Սեղբեստրոսը, որը մահացավ ու թաղվեց Պղնձահանքի Սբ. Աստվածածին վանքում<sup>30</sup>:

1763 թ. Արգիրուպոլսից և էրզրումից հույն գաղթականների նոր ալիք հասավ Պղնձահանք, և 1770 թ. Ախթալայի եպիսկոպոս ձեռնադրվեց արգիրուպոլսեցի արեղա Դորոթեոս Խալինարիոտիսը<sup>31</sup>: 1777 թ. մահացած Դորոթեոսին հաջորդեց Սոփրոնիոսը, որին ձեռնադրեց Կարիայի (Կոստանդնուպոլսի պատրիարքութայան թեմերից) մետրոպոլիտ Անտոնը<sup>32</sup>: Սոփրոնիոսը գերվեց 1784 թ. լեզգիների ավերիչ արշա-



Սր. Սոփրոնիոս Ախթալացին  
Մանրանկար, հեղ. Գ. Ղազարյան, 2010 թ.

վանքի ժամանակ և, ազատվելով, հեռացավ Տրապիզոն<sup>33</sup>:

Սոփրոնիոսին հաջորդեց Դորոթեոս եպիսկոպոսը (1786-1790 թթ.), ապա՝ Գեղեոն Արգի-

27 Տես Կանդլապտիս-Կանիս, *Έλληνομνημόνων*, էջ 27:

28 Տես Зенон, «Дманисская епархия»:

29 Տես Λαμπρίδης, «Η Τουρκοκρατία», էջ 157. Γεδεών, *Πίνακες*, էջ 494, 528:

30 Տես Կանդլապտիս-Կանիս, *Έλληνομνημόνων*, էջ 43, 46:

31 Տես Կանդլապտիս-Կանիս, *Έλληνομνημόνων*, էջ 113:

32 Տես Կանդլապտիս-Կանիս, *Έλληνομνημόνων*, էջ 115:

33 Տես Սուրբ Սոփրոնիոս, էջ 15-16:

բուպոլսեցին՝ ուղարկված Կոստանդնուպոլսից (1790-1792 թթ.)<sup>34</sup>: 1792 թ. Ախթալայի նոր առաջնորդ դարձավ Իգնատիոսը, որին 1796 թ. թուրքերն Ալ Խաչիկ գյուղում կախաղան բարձրացրեցին՝ ռուս զենեակ Ի. Գուրովիչի հետ նաձակագրական կապ ունենալու համար<sup>35</sup>: Նույն թվականին Ախթալայի եպիսկոպոս ձեռնադրվեց հուշակավոր Սուվեյա վանքի միաբան Հովհաննեսը (1796-1798 թթ.), որին 1798-1802 թթ. հաջորդեց Վառլամը՝ վրաց էրիսթավի ազնվական տոհմից<sup>36</sup>: Քարթլիի՝ 1801 թ. Ռուսական կայսրությանը միացվելուց հետո, 1811 թ. Վրաց կաթողիկոսությունը վերացվեց, և Վրաց եկեղեցին վերածվեց Ռուսիո եկեղեցու թեմի՝ փոխանորդության (էքսարքուսթյան) կարգավիճակով: Ախթալայի Վառլամ եպիսկոպոսը նշանակվեց Վրաց առաջին փոխանորդ (1811-1817 թթ.), իսկ 1802 թ. Ախթալայի վերջին եպիսկոպոս դարձավ Հովակիմ Կիպրացին (1802-1827 թթ.), որը նշանակվեց նաև Վարձիայի (Վարձենիքի) վանահայր<sup>37</sup>:

1827 թ. ցարական իշխանությունները լուծարեցին Ախթալայի եպիսկոպոսությունը, որից

հետո Պղնձահանքի վանահայր դարձավ Ազարիան: Նա ծնունդով Պոնտոսի Ֆիտիանա գյուղից էր և Խուտուրա վանքի վանահայր Սերաֆիմ Ալեքսիմասի ազգականը: Ազարիան Զավախք էր գաղթել 1829 թ. և Ախթալայի վանահայր էր ընդհուպ 1872 թ.<sup>38</sup>: Հետագայում, XIX դ. վերջում վանքում հաստատվեցին հիմնականում ռուս վանականներ...<sup>39</sup>

### ԳԱՂԹ ՍԵԲԱՍՏԻԱՅԻՅ ԲՅՈՒԹԱՆԻԱ

1400 թ. Աենկ-Թեմուրի հարվածների տակ ընկավ Սեբաստիան: 400 հայ ընտանիքներ, փրկելով իրենց կյանքը, գաղթեցին դեպի արևմուտք և հաստատվեցին պատմական Բյուլթանիա նահանգում՝ հիմնելով Տոնիկաշեն (Ադաբազար) բնակավայրը: Ապա այստեղ հաստատվեցին մարաշցիները՝ հիմնելով Արմաշը<sup>40</sup>: 1409 թ. Բյուլթանիա հասան նաև ուղղափառ հայերը. «... եկին առ մեզ Չալթիկ<sup>41</sup> Հայք ... նոքա էին ՌՇԶ (1506) ընտանիք բաժանեալ ի խումբս խումբս բնակեցան ի լերին Կէյվէու եւ ի լերինս Սէկիրթլիու ապառաժուտ լերին... Նոքա եւս չար ախամբ

34 Տես Χαρατσιδης, «Πέντε», էջ 445-446:

35 Տես Χαρατσιδης, «Πέντε», էջ 446: Ըստ Կանդիլապախ-Կանիսի, սակայն, կախաղան է բարձրացվել Գեղեոն եպիսկոպոսը (տես Κανδηλάπτης-Κάνις, *Ελληνομνημων*, էջ 121):

36 Տես Χαρατσιδης, «Πέντε», էջ 446: Ըստ այլ տեղեկության՝ Վառլամն Ախթալայի եպիսկոպոսն է եղել 1788-1794 թթ. (տես Бугулавишили, «Варлаам»), ինչը սակայն սխալ է, քանի որ այդ ընթացքում Ախթալայում գահակալել են հույն եպիսկոպոսներ:

37 Տես Кирион, *Ахталъский*, էջ 112:

38 Տես Κανδηλάπτης-Κάνις, *Τα Φυτίανα*, էջ 20-21: Μηλλάς, *Τραπεζούς*, τ. Β', էջ 442:

39 Տես Кирион, *Ахталъский*, էջ 74:

40 Տես Պիպերեան, *Պատմագիրք*, էջ 29-31:

41 Այլ ընթերցմամբ՝ «Չալթիկ» (տես Մուրադեան, *Արմաշի*, էջ 18): Խոսքը նույն «ժայթերի» մասին է:

հայէին առ մեզ: Իսկ Յոյնք նոքա եւս ատէին վասն բարբառելոյ ի հայ լեզուի արտասանութեան կոչէին ի Յունաց Արմէնոս էփտիխոս. զմեզ կոչէին Արմէնոս Արիոս<sup>42</sup> ինչ ինչ բարուրանս բարդէին ի վերայ ազգին Հայոց, մինչ զի աղքատ որ մուրացիկ լինէին ոչ գային առ մեզ եւ զհաց մեր ոչ կամէին ուտել բազումք»<sup>43</sup>:

Այս ժամանակ օսմանները դեռ չէին գրավել Պոլիսը և հայերին մենաշնորհներ տալով, նրանց օժանդակելով, որ հաստատվեն Բյուզանդայում, նախադրյալներ ստեղծեցին հույներին ճնշելու և արտաքսելու համար: Հետո նվաճողներն արգելեցին հույներին ու հայերին խոսել մայրենի լեզուներով: Հայերը կարողացան պահել իրենց լեզուն միայն թուրք Փեյզլի-ազայի շնորհիվ<sup>44</sup>:

## ԳԱՂԹ ԿԱՄԱԵԻՅ ՌՈՂՈՍՈՍ

Մինչև XVII դ. սկիզբն իր գոյությունը պահպանում էր Կամախի աթոռը: Այսպես, XVI դ. վերջերին հավանաբար հենց Կամախի մետրոպոլիտն էր ոմն Իզնատիոս, որին հիշատակում է Ակնի Աթմա (Աղամա) գյուղի քահանա պապա Իաննին: Վերջինս 1584 թ. գրազգրել է մի ձեռագիր, որը պարունակում է Միմեոն Պղնձահանեցու և Մինաս Տրապիզոնցու թարգմանած Ութձայն Շարակնոցը, Ամսական շարակնոցից Կարապետի թարգմանած հատընտիր շարականները<sup>45</sup>:



Մեկ էջ պապա Իաննիի գրազգրած Շարակնոցից Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, թիվ 630

Այս ձեռագրի հիշատակարանում գրիչը տեղեկացնում է. «Սուրբ հայրն մեր պապա Մինասի. եւ պապա Միմոնի թարգմանեալ էր ի Վրաց լեզուէ ի մեր լեզու»:

Մեզ է հասել 1590 թ. պատմական մի փաստաթուղթ, որտեղ հիշատակված է Կամախի աթոռը: Խոսքն Արևելքի շորս պատրիարքությունների ժողովական որոշման մասին է, համաձայն որի հիմնվում էր նոր պատրիարքություն՝ Մոսկվայի և համայն Ռուսիո: Այդ վավերագիրն

42 Այսինքն հույներն օրթոդոքս հայերին քյուրաբար համարել են եպիֆեսական, իսկ առաքելականներին՝ արիոսական:

43 Մուրադեան, Արմաշի, էջ 31-32:

44 Տես Մուրադեան, Արմաշի, էջ 37:

45 Տես Ակիմեան, Միմէոն, էջ 190-194:

\* Տես Ակիմեան, Միմէոն, էջ 193:

ի թիվս այլ առաջնորդների ստորագրել է Կամախի Մեթոդիոս մետրոպոլիտը<sup>46</sup>: Նույն փաստաթղթում, ի դեպ, կա Իշխանի (*Εἰσχανίου*) Արսեն եպիսկոպոսի ստորագրությունը<sup>47</sup>:

Արևմտյան Հայաստանում ջելալիների ապստամբության, 1599 թ. սահմուկեցուցիչ սովի, պարսկա-թուրքական պատերազմի հետևանք առաջացած քաոսային վիճակից մազապուրծ՝ 1605-1606 թթ., արևմտահայության հոծ բազմություններ՝ գաղթեցին Պոլիս և Ռումելի (Թրակիա): «Հայաստանի Կամախն ուներ 8 եպիսկոպոսություն, բայց ամայացան և՛ մետրոպոլիտությունը, և՛ եպիսկոպոսությունները»<sup>48</sup>: Ավելի քան 300 հայեր՝ մեծավ մասամբ Կամախից, նվազ շափով Երզնկայից, Սեբաստիայից ու Կեսարիայից ապաստան գտան Ռոդոստոյում (Թեբիրդաղ)՝ հյուրընկալվելով տեղացի թուրքերի ու հույների տներում<sup>49</sup>: Նրանց առաջնորդը դարձավ Գրիգոր վարդապետ Կամախեցին (Դարանաղեցի, 1576-1643 թթ.) որը, նկարագրելով 1634 թ. Մազապուրծի պատճառով հայերի ու հույների միջև ծագած անախորժությունները, գրում է. «Եւ մանաւանդ մեր երկրի ընդ մեզ եկեալ նժդէհ եւ պանդուխտք

եղեալ առաւել քան զմեզ հայազրուց հոռոմքն, որ մեր երկիրն իքան բնաւ խտրութիւն չէաք առներ ընդ միմեանս, որ խնամութիւն առնելով եւ քահանայութիւն նոցա կատարելով, որ շատքն մեր քահանայից կնքեալք: Այլ յորժամ այս երկիր հոռոմոց եկին, նոքա առաւել ևս կատաղիք եղեն ի վերայ հայոց քան զայս երկրի բուն հոռոմքն եւ առաւել հայհոյէին զայր եւ զկին եւ զմանկունսն. զայս վասն յայն սակա առնէին, զի հաճոյ թուեսցին յաչս բուն հոռոմոցն որ նոքա խուէին զնոսա վասն լեզուին հայոց, ասելով թէ՛ դուք ոչ երմանի էք եւ ոչ հոռոմք. վասն այնորիկ ջանային զինքեանս հաճոյացուցանել յաչս նոցա վասն զհայք անարգաբար հայհոյելովն»<sup>50</sup>:

Կամախեցու տեղեկություններից պարզ է դառնում, որ հայ հոռոմների արտագաղթը մեծ չափերի էր՝ «առաւել քան զմեր»: Հատկանշական է նաև հունական՝ «բուն հոռոմների» միջավայրում հայ հոռոմներին հայախոսություն համար ներկայացված մեղադրանքը: Բացի այդ, ուշագրավ է, որ հայրենի հողում հայերն իրար հետ խաղաղ են ապրել՝ դավանական խտրությունն անտեսելու աստիճան<sup>51</sup>:

46 Stn Regel, *Analecta*, էջ 89:

47 Stn Regel, *Analecta*, էջ 90:

48 Stn Gelzer, «Ungedruckte», էջ 641: Գրիգոր Կամախեցու վկայությամբ՝ ժամանակին ուղղափառ բնակավայր է եղել Երզնկայի Մարեֆ գյուղը (Կամախից 1 ժ. հեռու). «Եւ ելեալ ի գեղջն գովս՝ հոռոմի վանք կայր Սուրբ Անարծաթ անուն, որ երեք տուն հայ-հոռոմ կային...» (Գրիգոր Կամախեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 161): XIX դ. վերջի դրությամբ Մարեֆի Սբ. Կոզմաս և Գամիանոս Անարծաթների վանքը «ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ հայ վանորէից» (Պալեան, *Հայ վանորայք*, էջ 183):

49 Stn Փաշաեան, *Յուշամատեն*, էջ 21-26:

50 Գրիգոր Կամախեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 237: Ըստ Կամախեցու, երբ Ռոդոստոյում հաստատված հայ հոռոմները առաքելական հայոց հանդէպ ոտնձգություններ են արել, նրանց պախարակել ու բանադրել է տեղի հույն եպիսկոպոսը (տես Գրիգոր Կամախեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 238):

51 Կամախեցու այս տեղեկությունը հավաստում է նրա ժամանակակիցը՝ Սիմեոն Լեհացին. 1613 թ. լինելով Խարբերդում,

## ՉՄՇԿԱԾԱԳԻ ՄԵԾ ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆԸ

XVI դ. վերջին տասնամյակում, Չմշկածագի ու Կամախի անտերունչ վիճակը պարարտ հող դարձավ բախտախնդիրների համար. երկու արաբներ՝ մեկը մետրոպոլիտ, մյուսը սարկավագ ձեռնալույծ, ժամանեցին Չմշկածագ ու Կամախ, որտեղ ուղղափառ ստվար ազգաբնակչություն կար: Հովվի կարոտ հավատացյալները մեծ ուրախությամբ ու պատիվներով ընդունեցին «եպիսկոպոսին»: Խաբեբաները, ձեռնադրություններ և այլ ծիսակատարություններ անելով, մեծ գումար հավաքեցին հավատացյալներից: Խաբեությունը ժամանակի ընթացքում բացահայտվեց, և սուլթանի արքունիք կանչված «մետրոպոլիտը» կյանքը փրկելու համար իսլամ ընդունեց: Նրա կողմից «ձեռնադրված» անձինք եկեղեցական իշխանությունների որոշմամբ, նորից ձեռնադրվեցին: Այս ամենն այնպիսի գայթակղություն ու հիասթափություն առաջացրեց կամախեցի և չմշկածագեցի ուղղափառների մեջ, որ նրանց մեծ մասն ուրացավ



Անտիոքի պատրիարք Մակար III իրն ազ-Չանիմը  
Մանրանկար ուսական ձեռագրից, 1672 թ.

բրիստոնեական հավատքը և իսլամ ընդունեց<sup>52</sup>:  
1647 թ. դրությամբ Անտիոքի պատրիարքությունն ուներ ընդամենը ինը մետրոպոլիտություն, որոնցից մեկն էր Չմշկածագինը, և դրա առաջնորդն էր Մակար Կամախեցին<sup>53</sup>:

նա այսպես է նկարագրում այնտեղի բրիստոնեյանների փոխհարաբերությունները. «Եւ էին սիրով Հայք ընդ Ասորիս. զի աղջիկ տային և առնուին. և թէ ոք Հայոց մեռանէ՝ զԱսորոց ետէցն կոչէին ի թաղումն և Ասորոցն՝ զՀայոց քահանայս. և ամէնքն հայ լեզու գրուցէին: Կայր ի միջի նոցա եւ Հռոմի գեղօրայք, որ եւ նոքա աղջիկ տային եւ առնուին եւ նոքա մեծ սէր ունէին ընդ Հայս և միաբանութիւն և Հայոց լեզու խօսին. և չես ճանաչել, հայ է թէ հռոմ է ո՛րն Ասորի. զի չիք խտիր առ նոսա և ոչ մի ինչ» (Սիմէոն Լեհացի, *Ուղեգրութիւն*, էջ 192): Լեհացու վկայությամբ՝ նույն մթնոլորտն է տիրել նաև Երուսաղեմում. «Այլ և Հռոմք, և պաղիք, Ասորիք և Հայք սէր ու միաբան են. աղջիկ տան և առնուն. այլ և նոցա մեր պսակն, թաղումն գան և հոգոյ հացն. և մերն նոցա գնան. և այսպէս կային միաբանութեամբ խաղաղ» (Սիմէոն Լեհացի, *Ուղեգրութիւն*, էջ 266):

52 Տես Панченко, «Митрополиты», էջ 131, 147-148:

53 Տես Панченко, «Митрополиты» էջ 130: Այս ժամանակ արդեն մարած էին Հայոց Միջագետքի արքունիքը: Այսպես, ըստ երևույթին Մարտիրոսապոլսի վերջին առաջնորդն է եղել Դանիելը՝ ձեռնադրված Անտիոքի պատրիարք Միխայել IV իրն ալ Մավարդիի կողմից (1522-1540 թթ.): Դանիելի օրոք Մծրիմի առաջնորդն էր Աստեն մետրոպոլիտը (Панченко, «Митрополиты», էջ 143):

## ԿԱՐԻՆ-ԹԵՌՈՒՍՈՒՊՈՒՍԻ ՄԵՏՐՈՊՈՒՆՏՈՒԹՅՈՒՆԸ



Քրիստոս՝ Եկեղեցու Փեսան և յոթ սերով խոցված Տիրամայրը XVII-XVII դդ. մանրանկարներ՝ ստանձված 1276 թ., Չմշկաձագուս Թեոֆիլե կրոնավորի գրչագրած Ավետարանի մեջ:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության մատենադարան, թիվ 223

1665-66 թթ. Չմշկաձագի շրջան այցելեց Անտիոքի պատրիարք Մակար III-ը (1647-1672 թթ.), որը հակիրճ նկարագրել է տեղի ուղղափառ բնակչության ողբալի վիճակը: Հայրապետին առաջնորդած տեղացի մի ծեր քահանայի պատմածով՝ նրա երիտասարդ տարիներին միայն Չմշկաձագի շրջանում եղել է շուրջ 50 քահանա, մինչդեռ պատրիարքի այցելության ժամանակ այնտեղ կար ընդամենը 12 ուղղափառ ընտանիք: Մնացյալները հովիվ շունենալու պատճառով դարձել էին հայ առաքելական, ասորի-հակոբիտ, նեստորական ևն<sup>54</sup>:

Նոր ժամանակներում Թեոդոսուպոլսի առաջնորդներից հայտնի են Պոնտոսի Պերիստեոս վանքի միաբան Անանիան (1520-1532 թթ.), որին հաջորդել է Երեմիան՝ նախկինում Վազելոն վանքի միաբան, ապա և՛ Պերիստեոս վանքի վանահայր, և Գերասիմոսը (1545-1580 թթ.)՝ Պոնտոսի Ֆիտիանա գյուղից<sup>55</sup>: Հաջորդ առաջնորդներն են եղել Սոփրոնիոսը, Նիկողայոսը, Դավիթը (1593/1603-<sup>o</sup>) և Մակար Կամախեցին (1635/47-1658 թթ.), որոնք բնութագրվում են այսպես. «Եվ այս չորս հովվապետները այն երկրի մարդկանցից էին, և շունեին ձգտում՝ իրենց հոգիների, նմանապես և իրենց համայնքի փրկության համար»<sup>56</sup>:

1665-66 թթ. Արևմտյան Հայաստան և Վրաստան այցելած Մակար III պատրիարքը Կարինի մետրոպոլիտ ձեռնադրեց Ղևոնդ արեղային՝ ծնունդով Չմշկաձագի Հողուս գյուղից<sup>57</sup>: Հայտնի չէ, թե երբ է նա մահացել, սակայն 1670 թ. դրությամբ Կարինի աթոռը հանձնված էր Կամախի կավրենտիոս մետրոպոլիտի խնամքին<sup>58</sup>: Գործունյա կավրենտիոսը (՝-1680 թ.) ձգտում էր իր իշխանությունը տարածել Տրապիզոնի աթոռին ենթակա որոշ տարածքների վրա:

54 Տես Панченко, «Митрополиты», էջ 141:



55 Տես Πόντος, τ. Β', էջ 747:

56 Տես Панченко, «Митрополиты», էջ 142:

57 Տես Панченко, «Митрополиты» էջ 142:

58 Հավանական է, որ Ղևոնդ արեղան եպիսկոպոսական ձեռնադրության ժամանակ ստացել է «կավրենտիոս» անունը, և հետևաբար, խոսքը միևնույն անձնավորության մասին է, որը հուլվել է Կամախն ու Կարինը (տես Ղազարյան, «Անտիոքի», էջ 405):





Կարինի Սբ. Թեոդոս բազիլիկը՝ կառուցված շուրջ 420 թ. Թեոդոս կայսեր կողմից և վերակառուցված 1179 թ.: Այժմ «նույն ջամի» մզկիթի\*:

**1670 թ. Տիեզերական պատրիարքն ու Սինոդը հատուկ նամակով տեղեկացրեցին Լավրենտիո-**

**սին, որ խնդրո առարկա տարածքներն իսկզբանե Տրապիզոնի թեմերն են եղել<sup>59</sup>:**

Հետագայում Անտիոքի Կյուրեղ V պատրիարքը (1672-1720 թթ.) Կարինի մետրոպոլիտ ձեռնադրեց ոմն արաբ քահանայի՝ վերանվանելով նրան «Գրիգոր»: Հակառակ թեմից չբացակայելու իր երդմանը՝ Գրիգորը երկու ամիս հետո լքեց այն ու հեռացավ Վրաստան «ըմպելիքի ու ձիավարության համար»<sup>60</sup>: Ապարդյուն ողորդումներից հետո պատրիարքը աթոռազուրկ արեց Գրիգորին և 1690 թ. էրզրումի առաջնորդ ձեռնադրեց Սումելա վանքի մի աբեղայի՝ վերանվանելով նրան «Եվգենիոս»: Վերջինս աթոռին մնաց 18 տարի: 1708 թ. Եվգենիոսի մահվանից հետո ժողովրդի կամոք նրան հաջորդեց ոմն արժանավոր քահանա Ամբակում, որը հովվեց թեմը 4 տարի: 1712 թ. կրկին ժողովրդի ընտրությամբ, նոր առաջնորդ դարձավ արգիրուպոլսեցի ուսյալ քահանա Ազարիա (Նսայի) Գրիգորանտիսը՝ Վազելոն վանքի միաբան<sup>61</sup>: Նույն թվականին նա մահացավ, և նոր առաջ-

\* Տես Տրյալոզ, 'Ερζερούμ, էջ 96:

59 Տես Τριανταφυλλίδης, *Οι Φρυγάδες*, էջ 140: Սինոդական այս վավերագրում նշվում են յոթը տեղանուններ, որոնց համար ասվում է, որ թեև նոր ժամանակներում դրանք անվանափոխվել են, այնուամենայնիվ նույնական են միջնադարյան տեղանուններին: Այսպես, Խախը նույնացվում է Կելկիթին, Վիզանը՝ Կերչանին, Խանդիերձը՝ Էրզինչանին, Սակավը՝ Ջինխին, Ֆասիանեն՝ Բասենին, Պայպերը՝ Բայբուրդին, Արիոնը՝ Կուազին: Սրանցից ճիշտ են միայն Ֆասիանե-Բասեն ու Պայպեր-Բայբուրդ (Բարերդ) նույնացումները: Սխալն առաջացել է ըստ երևույթին նրանից, որ Բիստոնյա բնակչության տեղաշարժերի պատճառով այս կամ այն նվիրապետական աթոռը տեղափոխվել է՝ պահպանելով հանդերձ ինն աթոռանիստի անվանումը:

60 Տես Панченко, «Митрополиты», էջ 142: 1682 թ. Անտիոքի պատրիարքը Ախալցխյեի (Ախսխայի) առաջնորդ ձեռնադրեց ոմն Պարթենիոսի, և այս ժամանակից ի վեր Ախալցխյեի աթոռը գտնվում էր Էրզրումի մետրոպոլիտության իշխանության ներքո: 1737 թ. Սեդրեստոս պատրիարքը Խաղտիի ու Տրապիզոնի մետրոպոլիտների հետ ձեռնադրեց Ախալցխյեի հաջորդ եպիսկոպոսին: 1829 թ., երբ Ջավախը միացվեց Ռուսական կայսրությանը, Ախալցխյեի թեմը անցավ Սինոդին, իսկ կայսրությունը Էրզրումի մետրոպոլիտությանը դրա փոխարեն որոշ ժամանակ դրամական փոխհատուցում էր վճարում (Панченко, «Митрополиты», էջ 142, 156, Κανδηλάπτης-Κάνις, *Ελληνομνημύων*, էջ 90):

61 Տես Панченко, «Митрополиты», էջ 142, 156:

Նորդն դարձավ Հակոբոս Խրիստոլիդիսը (1712-1749 թթ.): Նրանից հետո Կարնո թեմակալներն են Մակար (1749-1772 թթ.), Պարթենիոս (1772-1792 թթ.) և Ֆիլարետոս (1798-1802 թթ.) մետրոպոլիտները<sup>62</sup>:

XIX դ. սկզբին Թեոդոսուպոլսի աթոռին հաջորդաբար բազմեցին Բառնաբաս (1802-1819 թթ.)<sup>63</sup> և Թեոդոս (1819-1824 թթ.) մետրոպոլիտները<sup>64</sup>:

1829 թ., երբ Կարապետ եպս Բագրատունու զլխավորությամբ բազմահազար<sup>65</sup> կարնեցիներ «ռուսական հող»՝ Ջավախք գաղթեցին, նրանց հետ իրենց բնակավայրերը լքեցին նաև ուղղափառ հայերն ու հույները: Հավանաբար, Կարինի այս ամայացումը պատճառ եղավ, որ հաջորդ մետրոպոլիտն ընտրվեց միայն 1848 թ.: Դա Տիմոթեոս մետրոպոլիտն էր, որը մահացել է 1876 թ. հետո: Նրա առաջնորդության

օրոք՝ 1860 թ. մեծացվել է և վերակառուցվել քաղաքի Սբ. Գևորգ հին եկեղեցին (այժմ՝ «Ֆաթիհ ջամի») մզկիթ): Այս ժամանակ Թեոդոսուպոլսի մետրոպոլիտը շարունակում էր կրել «Մեծ Հայքի գերապատիվ և էքսարխոս» տիտղոսը<sup>66</sup>:

1829 թ. մեծ գաղթից տարիներ անց Կարինում հաստատվեցին պոնտացի հույներ, սակայն 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո էլ նրանց մեծ մասը Ջավախք գաղթեց<sup>67</sup>: 1900 թ. սակավամարդույն պատճառով Թեոդոսուպոլսի դարավոր թեմը կազմալուծվեց, իսկ քաղաքի փոքրաթիվ հունական համայնքը ենթարկվեց Խալդիայի և Խերիանի մետրոպոլիտոսությանը<sup>68</sup>: Կարինի վերջին մետրոպոլիտ Պաիսիոս Գերասիմիդիսը հեռացավ իր հայրենիքը՝ Արգիրուպոլսի Մանդրիա գյուղը:

62 Տես *Πόντος*, տ. B', էջ 747:

63 Մեկ այլ տեղեկության համաձայն՝ 1811 թ. Թեոդոսուպոլսի եպիսկոպոսն էր Անթիմոսը (տես Φορόπουλος, «Πίναξ», B', էջ 52):

64 Տես *Πόντος*, տ. B', էջ 747: Ջավախքի և ընդհանրապես Կովկասի հույները լեզվական տեսանկյունից բաժանվում են հունախոսների և թուրքախոսների: Առաջինները ծագում են Պոնտոսից, իսկ երկրորդները հայտնի են «ռուսում» անվամբ: Գարծում են, որ ռուսումների մեջ փնտրելի է հայ հոռոմների հետքը:

65 Կարինի բնակչության, մասնավորապես հայերի ու հույների թվի մասին տեղեկություններն իրարից խիստ տարբեր են. տես Ղազարյան, «Անտիոֆի», էջ 407:

66 Տես *Πάλλης-Ποτλής, Σύσταγμα*, տ. 5, էջ 523:

67 Այս գաղթական հեղեղի մեջ, սակայն, դժվար է գտնել ուղղափառների հետքը: Հայտնի է, որ գաղթողների մեջ են եղել Հասանկալայի (Բասեն) Հոռոմ գյուղի «ճաղկեղձական» հայերը (տես ՀՀՇՏԲ, հ. Գ, էջ 437): Կարելի է ենթադրել, օրինակ քե ջավախեցի Ռուսույան գերդաստանը սերում է «ռուսում» հայերից: Ջավախքում հայ հոռոմների հնարավոր այլ հետքերի մասին տես Ղազարյան, «Անտիոֆի» էջ 408: Հնարավոր է նաև, որ կարնեցի ուղղափառներից կազմված լինեն Ծիրակի Հոռոմ, Առնակետա և Քայանդուր գյուղերը: Վերջինիս մասին հայտնի է, որ բաղկացած է եղել հայերից և «հոռոմներից»: Քայանդուրի «հոռոմոց» եկեղեցին գտնվելիս է եղել հին գյուղում մինչև 1926 թ. երկրաշարժը: Ենթադրությունը հաստատելու կամ ժխտելու համար հարցը պետք է ֆնվի արխիվային տվյալներով:

68 Տես *Σιγαλός, Έρζερούμ*, էջ 62, 72:

## ՍԵՔԱՍՏԻԱ, ՆԻԿՈՊՈԼԻՍ ԵՎ ԿՈՂՈՆԻԱ

Սերաստիո մետրոպոլիտոսի ղեկավարած է 1483-1525 թթ. վավերագրերով, սակայն հետադաշում թեմն ամայացել է: 1617 թ. Սերաստիայի մետրոպոլիտոսն էր Սերաֆիմը, իսկ 1629 թ.՝ Հովսեփը: Ապա հայտնի են Սերաստիո մետրոպոլիտոսներ Նեոֆիտոսը (1696 թ.), Դանիելը (1784 թ.) և Հովսեփը (1793 թ.)<sup>69</sup>:

Ընդհանուր առմամբ սակայն, Սերաստիայի աթոռը վատթար վիճակում էր, այդ իսկ պատճառով թեմի տարածքներն ի վերջո անցել են հարևան նեոկեսարիայի մետրոպոլիտոսիանը<sup>70</sup>: Վերջինիս աթոռանիստը փոխադրվել էր Եվդոկիա (Թոխաթ) քաղաքը<sup>71</sup>: Նույն մետրոպոլիտոսն էին ենթարկվում նաև Նիկոպոլիսն ու Կոլոնիան<sup>72</sup>: XVII դ. Կոլոնիան ու Նիկոպոլիսը շրջակայքով ապօրինաբար վաճառվեցին Խաղաթի աթոռին, ինչը աղմուկի պատճառ դարձավ<sup>73</sup>:

Փոքր Հայքի Կոլոնիան պատրիարքական վճռով

Նեոկեսարիային հանձնվեց 1775 թ.՝ տնտեսապես սատար կանգնելու համար այդ աթոռին:

1815 թ. Նեոկեսարիայի մետրոպոլիտոսիան կազմում վերականգնվեց Նիկոպոլիսի եպիսկոպոսական աթոռը, որի առաջնորդը դարձավ Հովհաննիկիոսը (1815-1819 թթ)<sup>74</sup>: Ի դեպ, 1819-1820 թթ. Նիկոպոլիս այցելած վրացի դիվանագետ Գ. Ավալիշվիլին նշում է, որ այնտեղ կային 30 ծուխ հույներ, որոնք թրքախառն հայերեն էին խոսում, չունեին եկեղեցի ու քահանա<sup>75</sup>: Չի բացառվում, որ ճամփորդի տեսած «հույներն» իրականում հայ հոռոմներ են եղել. թերևս դրա մասին է վկայում թրքախառն հայերենի առկայությունը:

1833-1860/64 թթ. Նիկոպոլիսի առաջնորդն էր Քրիստափորը՝ ծնունդով Ֆիտիանա գյուղից և Արգիրուպոլիսի Խուստուրա վանքի վանահայրը (մահ. 1864 թ.)<sup>76</sup>: 1864 թ. Նիկոպոլիսի առաջնորդ ընտրվեց Երեմիա Գեորգիադիսը (1864-1876 թթ., մահ.՝ 1887 թ.), որը հակառակ թուր-

69 Φορόπουλος «Πίναξ», Α', էջ 31-32:

70 Τερεζάκης, «Κολωνείας».

71 1878 թ. Թոխաթ այցելած Գաբեգին եպս Սրվանձայանցի տեղեկացմամբ՝ ֆաղափ «Յոյներու մէկ մասն Հայ-հոռոմ էին, և հայերէն կը խօսէին ու կը կարդային» (Սրուանձտեանց, *Թորոս Աղբար*, մասն Ա, էջ 95): Ըստ Գաբեգին սրբազանի՝ հույների ու հայ հոռոմների ընդհանուր թիվը 2600 հոգի էր կազմում: Այլուր, սակայն, Սրվանձայանցի տեղեկությունն անստույգ է համարվում՝ հետևյալ ճշգրտմամբ. «Յոյները կը բնակէին առանձին քաղի մը մէջ... և թրքախօս էին... Իրենցմէ մէկ կարևոր մասն ալ հայախօս էր ոչ թէ Հայ-Հոռոմ ըլլալու համար, այլ անոր համար, որ Թոգասցի հայերը ֆաղափը իրենց կարևորութեամբ և տնտեսական տիրապետութեամբ հայ ֆաղափի մը վերածած էին» (Ալաօյանեան, *Պատմութիւն Եւրոպիոյ*, էջ 493): Հարկավ խնդիրն ավելի խորը բնութայն կարիքն ունի:

72 Տե՛ս Πόντος, τ. Β', էջ 740:

73 Տե՛ս Πρεμετίδης, *Η Μητρόπολις*, էջ 114:

74 Տե՛ս Εμμανουηλίδης, *Η Νικόπολη*, էջ 27:

75 Տե՛ս Чобанян, «Армяне», էջ 102:

76 Տե՛ս Κανδηλάπτης-Κάνις, *Τα Φυτίανα*, էջ 40. Πρεμετίδης, *Η Μητρόπολις*, էջ 121-122. Εμμανουηλίδης, *Η Νικόπολη*, էջ 27-28:

քերի ու քրդերի հակազդեցութեանը, փորձեց զարկ տալ տարածաշրջանի հույների հոգևոր և մտավոր զարգացմանը<sup>77</sup>: Երեմիային հաջորդեց Պեննադիոս եպիսկոպոս Գեորգիադիսը, իսկ 1889 թ. նիկոպոլսի եպիսկոպոսութունը լուծարվեց, և դրա փոխարեն հիմնվեց Կոլոնիայի և նիկոպոլսի մետրոպոլիտութունը: Նորակազմ աթոռի գահակալը դարձավ Հալեպի նախկին մետրոպոլիտ Դորոթեոսը (1889-1894 թթ.)<sup>78</sup>: Նրան հաջորդեց Լեոնտիոսը (1894-1899 թթ.)<sup>79</sup>:

XIX դ. եկեղեցական փաստաթղթերից հայտնի են մի շարք եպիսկոպոսների անուններ, որոնք պատմական Հայքի նվիրապետական աթոռների փոտղոսակիր (անվանական) առաջնորդներ էին: Ալզախիք էին Մելխտենեի Հովսեփ (1806 թ.), Անանիա (1817 թ.) և Մելետիոս (1850 թ.), Կելձենեի (Նկեղաց) Հովակիմ (1817 թ.), Կոմանայի եվգենիոս (1818 թ.), Սեբաստիայի Ամբրոսիոս (1825 թ.), Սոփրոնիոս (1826 թ.), Գրիգոր (1836 թ.) և Պաիսիոս (1840 թ.) մետրոպոլիտաները<sup>80</sup>:

## ՌԻՂՂԱՓԱՌ ՀԱՅ ԳՈՐԾԻԶՆԵՐ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ

XVII դ. երկրորդ կեսին ակտիվացան հայաստանի առևտրաօրհանները, որոնք հիմնականում վերաբերում էին առևտրական ոլորտին: Պարսկահայ առևտրականների՝ ցարական ար-

քունիքի հետ ստեղծված կապերի շրջանակներում 1666 թ. Նոր Զուղայից արքունի հրավերով Մոսկվա ժամանեց երիտասարդ նկարիչ Աստվածատուր Սալթանյանը<sup>81</sup>: Նա ծառայության մտավ Զինապալատում (Оружейная палата)՝ դառնալով վերջինիս չորրորդ օտարազգի վարպետը:



Ռուսաց Ֆյոդոր III ցարի դիմանկարը (հատված)  
Աստվածատուր Սալթանյան, 1666 թ., Մոսկվայի Զինապալատ

Աստվածատուրին շնորհվեց այն ժամանակների համար բացառիկ մի արտոնություն. օրթոգոքս շինելով հանդերձ՝ նա կարող էր սրբապատկերներ նկարել: Միայն տարիներ անց

77 Տես Էմմանուղիձիս, *Η Νικόπολη*, էջ 28-29:

78 Տես Փրեմեթիձիս, *Η Μητρόπολις*, էջ 130-134:

79 Տես Էմմանուղիձիս, *Η Νικόπολη*, էջ 29:

80 Տես Փորոպուլոս, «Πίναξ», Β', էջ 51-53, Γ', էջ 67-68:

81 Նկարչի կյանքի ու ստեղծագործական վաստակի մասին տես Ղազարյան, *Բողոք*:

1674 թ., մեծ դիրքի հասած նկարիչը վճռեց մկրտվել Ռուսաց եկեղեցում՝ վերցնելով «Իվան Իկյեվիչ Սալտանով» անուն-ազգանունը: Հետագայում նա դարձավ Զինապալատի գեղանկարչական արվեստանոցի ղեկավարը և այնտեղ աշխատեց մինչև իր մահը 1703 թ.<sup>82</sup>: Սալտանովի եղբայրը՝ մկրտության անվամբ Ստեփան Յակովլևը, դարձավ Սալտանով ազնվական տոհմի հիմնադիրը: Սալտանովի գործը շարունակեցին նրա աշակերտները, որոնցից էր արքունական նկարիչ և պատկերագիր հայազգի Լազար Բելյսկին իր երեք որդիներով<sup>83</sup>: Միննույն ժամանակներում աշխուժացան հայ-ռուսական քաղաքական կապերը՝ Սյունիքում և Արցախում սկզբնավորվող հայկական ազատագրական պայքարի համատեքստում: Այս շփումներում ակնառու էր Իսրայել Օրիի և նրա գործը շարունակող Մինաս վարդապետ Տիգրանյանի դերը:

Մինասը ծնվել է շուրջ 1658 թ. Տիգրանա-կերտում (Ամիրտում), այստեղից էլ՝ նրա ազգանունը: 1684 թ. արեղա ձեռնադրվելով և ապա վարդապետական գավազան ստանալով, նա դարձավ Արցախի Մեծիրանց Սբ. Հակոբ վանքի վանահայրը: Հաստատվելով Ռուսաստա-



Մինաս արք Տիգրանյանը  
Մանրանկար, հեղ. Գ. Լազարյան, 2015 թ.

նում՝ 1716 թ. Մինաս վարդապետը Գանձասարի Եսայի Հասան-Ջալալյան կաթողիոսի կողմից ձեռնադրվեց ռուսահայոց (Աստրախանի) արքեպիսկոպոս: Մինաս սրբազանը երկար տարիներ ղեկավար դեր է խաղացել հայ-ռուսական կա-

82 Հայագրի պատկերահանի վաստակը գնահատելով՝ Ն. Կոմաշկոն գրում է «...Ռուսաստանում գեղանկարչության կայացման գործում Բոգդան Սալտանովի նշանակությունը չափազանց մեծ է: Մոսկվայում աշխատած օտարերկրացի մյուս վարպետների համեմատ նրա գործունեությունն ամենատարրյունավետն էր ռուսական գեղարվեստական պրակտիկայի համար: Մոսկովյան արհունիքում իր երկարամյա ծառայության ընթացքում հսկայաբանակ ու զանազան գեղարվեստական գործեր կատարած և բազմաթիվ ռուս աշակերտներ դաստիարակած վարպետը միայն կտավի վրա յուղանկարի տեխնիկան չէ, որ հաջողությամբ ներմուծում էր ռուսական գեղարվեստական պրակտիկա. նա առաջինն էր, որ սրբապատկերի մեջ կիրառեց գեղանկարչության միջոցները՝ պատկերագրության ու գեղանկարչության սահմանագիծը ջնջելով. մի բան, որ իր տեսանկյունի պտուղները բերեց արդեն հաջորդ հարյուրամյակում» (Комашко, «Живописец», էջ 54):

83 Տե՛ս Айвазян, *История*, էջ 135-136:



Մոսկվայի Սբ. Նիկողայոս հունական վանքի գանգակատունը

նում, որ պատկանել է Աթոսի Իվերոն վանքին<sup>84</sup> :

## ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԹՈՆՔԸ XVII-XIX ԴԴ.

XVII դ վերջից, Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Ակնի հայ հոռոմների միջավայրում (Վանք, Զորակ, Շրգու և Մուշեղկա գյուղերում) հոգևոր մշակույթի յուրօրինակ մի վերելք նկատվեց: Այսպես, նշված ժամանակահատ-

պերում: Մահվանից երկու շաբաթ առաջ՝ 1740 թ. ապրիլի 28-ին 82-ամյա Մինաս արքեպիսկոպոսը Կրեմլի Սբ. Աստվածածնի ննջման տաճարում Ուղղափառություն ընդունեց: Իր ցանկության համաձայն՝ արքեպիսկոպոսը թաղվեց Մոսկվայի Սբ. Նիկողայոս հունական մենաստա-

վածում թարգմանչական գործունեությունն է ծավալել Ապավի դպիր Մարգարիտյանը<sup>85</sup>: Հունարեն ժամագրքի հայերեն մի հին տարբերակ հիմք ընդունելով՝ 1679 թ. Ապավի դպիրն այն հարստացրել է նոր թարգմանություններով: Նրա աշխատանքի պատվիրատուն է եղել Ակնի Զորակ գյուղի «բարեպաշտօն եւ աստուածասէր» բնակիչ Լազարիոսն ու Մատթեոս Կիպրացի երեցը<sup>86</sup>: Մարգարիտյանի այդ աշխատանքը պահպանվել է 1716 թ. ընդօրինակությանմբ, որի հեղինակն է Վանքի Սբ. Գևորգ եկեղեցու սարկավագ (հետագայում բահանա) Ֆիլոթեոսը<sup>87</sup>:

Ա. Մարգարիտյանի աշխատասիրած գործերից է մի ժողովածու, որտեղ անթեղված են թարգմանություններ ժամագրքից, «Իրմուղգիոն» Շարակնոցից և այլ միավորներ<sup>88</sup>:



Քյուրտյան հավաքածուի թիվ 99 Ավետարանի կազմի արձաքե զարդը՝ «էջ դժխս» պատկերով, XVII դ.


84 Տես Меликсет-Бек, «К биографии», էջ 75-88: Հովհաննիսյան, Պատմագիտական, էջ 152-153: Մինաս արքեպիսկոպոսի կտակի համաձայն՝ իր ունեցվածքի մեկ երկրորդը արվել է Սբ. Նիկողայոս վանքին, մի մասը՝ աղբատներին և չափոր հոգևորականներին, իսկ մի մասը հատկացվել է Տվերի հոգևոր նեմարանի շինությանը (Հովհաննիսյան, Պատմագիտական, էջ 152-153):

85 Տես Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, էջ 1034:

86 Տես Ակինեան, Միմլոն, էջ 243-244:


87 Տես Ակինեան, Միմլոն, էջ 237-245. Դանիելեան, Մայր ցուցակ, էջ 190-191:

88 Տես Ակինեան, Միմլոն 245-247. Քելիչեան, Ցուցակ էջ 734-738:




Ողղափառ ժամագիրք. XVII դ.

Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան, թիվ 942\*



Մեկ էջ Ֆիլոթոս սարկավազի գրչագրած ժամագրքից, 1716 թ.  
Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մատենադարան, թիվ 28




Մեկ էջ Ա. Մարգարիտյանի գրչագրած ժողովածուից  
Զմմառի կաթողիկոսության մատենադարան, թիվ 410

1701-1702 թթ. մահտեսի Սավայի և նրա կնոջ՝ մահտեսի Զինանի հովանավորությամբ Ապուչեխ գյուղի առաքելական քահանա տեր Իգնատիոսը ընդօրինակել է ստվարածավալ երկու Հայամավուրքներ, որոնցից մեկը պահվել է Վանքի Սբ. Գևորգ, իսկ մյուսը՝ Զորակի Սբ. Նիկողայոս եկեղեցիներում՝ ամեն օր ընթերցվելով<sup>89</sup> :

XVIII դ. հունարենից հայերեն թարգմանված ծիսական գրականության ընտիր նմուշներից է անվանի եկեղեցական մատենագիր

\* Տես Ոսկեան, Մայր ցուցակ Վիեննայի, հ. Ա, գիրք Գ, էջ 526-527:

89 Տես Ճանիկեան, Հնուիթւնք, էջ 100-102: Ցավոք, այս մատյանների ճակատագիրն այսօր անհայտ է:



Պատգ վրդ Հովհաննիսյանի թարգմանության տիտղոսաբերը՝ 1811 թ. ընդօրինակությանը Նրուսաղեմի Արքոպ Հակոբյանց մատենադարան, թիվ 1021

Պատգ վրդ Հովհաննիսյանի (Մխլայիժողու, 1981-1758 թթ.) հեղինակած Բարսեղ Կեսաբացու, Ոսկեբերանի և Նախասրբեցելոց Պատաբազաատույցների, նաև Առավոտյան և Երեկոյան ժամերգությունների թարգմանությունները<sup>90</sup>։ Անտարակույս, այս աշխատանքը վարդապետը կատարել է հայ հոռոմների համար։

1746 թ. ոմն Հեննե գրչազրել է մի մատյան, որտեղ բովանդակված են օրթոդոքս ծիսական միավորներ՝ Աստվածամոր մաղթանքը, կանոնն ու Ակաթիստոսը, Անդրեաս Կրետացու Մեծ կանոնը, Ավագ Շաբաթվա և Զատիկի շարականները։

XVIII դ. հունարենից ու լատիներենից գրականության, ինչպես նաև իմաստասիրական և բարոյախոսական երկեր է թարգմանել դպիր

Մեկ էջ Հեննեի գրչազրած ծիսամատյանից Նրուսաղեմի Հունաց Պատրիարքարանի մատենադարան, «Georgian», թիվ 147

Հակոբ Ճամհիողուն։ Նրա թարգմանությունների թվին են պատկանում առաջին չորս Տիեզերածողովների «Գործքը»<sup>91</sup>։ 1749-1757 թթ. Հակոբ դպիրը հունարենից նորովի թարգմանել է Մեծ Ժամագիրքը։ Աշխատանքի պատվիրատուն է եղել Վանք գյուղի բնակիչ հաջի Մուրադ Կազարիսը։ Այս աշխատանքի մի ընդօրինակություն գրվել է 1762-1767 թթ. Աթոս Կեռան Դիոնի-

90 Տես Պողաբեան, Մայր ցուցակ, հ. Գ, էջ 34-35. հ. Թ, էջ 150-151։

91 Տես Ակիմեան, Սիմեոն, էջ 248։ Առաջին երեք Տիեզերածողովների գործը՝ «Պատմութիւն երից Տիեզերական ժողովոցն» վերատառությամբ պահվում է Մատենադարանում (1750 թ., թիվ 2620), իսկ չորրորդ Տիեզերածողովինը՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում (թիվ 721)։





Արոսի Ար. Գիտնիսիոսի վանքը



Օրոլոգիոնի տխաղոսաթերթը

կուսության հիմք է հանդիսացել աթոսյան վերոնշյալ ձեռագիրը<sup>92</sup>:

1787 թ. վանքցի մահտեսի Նիկոլ Բալյանի<sup>93</sup> հովանավորությամբ Կամարակապ գյուղի

սիրոսի վանքում: Գրիչներն են եղել երկու հայ հոռոմ վանականներ՝ Վանք գյուղի քահանա Մարկոսի որդի Արսենը և ոմն Ասլանի որդի Մարգարը:

Հակոբ Ճամբիողլուի կատարած ժամագրքի թարգմանությունը լույս է տեսել 1800 թ. Պոլսում՝ «Գիրք Յունաց որ կոչի Օրոլոկիոն Մեծ» վերտառությամբ: Հրատարակության հիմք է հանդիսացել աթոսյան վերոնշյալ ձեռագիրը<sup>92</sup>:

92 Տես Ակինեան, Սիմէոն, էջ 249-252:

93 Նիկոլ Բալյանի մասնակի հովանավորությամբ է կառուցվել Վանք գյուղի՝ առ օրս կանգուն աղբյուրը: Դրա մասին վկայում է աղբյուրի երկու վիմագիր արձանագրություններից մեկը: Մյուս արձանագրությունը պատմում է 1817 թ. աղբյուրի վերականգնման մասին. (տես Ղազարյան, «Ակնի հայ հոռոմները», էջ 23-24):



Վանքի Ավետարանի հակառակ երեսը (հատված)՝ Տիրամոր Ննջման տեսարանով Բենակիսի թանգարան, Աթենք

առաքելական քահանա տեր Հովհաննես Տեր-Հարությունյանը գրչագրել և ծաղկել է շքեզ մի Ավետարան, որի խմբագրական-թարգմանչական աշխատանքներին օժանդակել է Ակնա ուղղափառ հայ հոգևորականությունը, մանավանդ՝ Հովհան քահանան: Ավետարանը զարգարվել է արծաթյա ոսկեգօծ կազմով, որն ար-




Հովհաննես առաքյալն ու նրա Ավետարանի տիտղոսաբերը՝  
Վանքի Ավետարանից

գիրուպոլսեցի հույն վարպետների գործն է<sup>94</sup>:  
նույն թվականին Շրգուի գյուղացիների համատեղ  
ջանքերով ոմն Պողոս Փափազօղլի արծաթապատ  
կազմով է զարդարել գյուղի եկեղեցու հունարեն  
տպագիր Ավետարանը (Վենետիկ, 1785 թ.)<sup>95</sup>:



Շրգուի Ավետարանը  
Հունաստան, մասնավոր հավաքածու

1831 թ. տիեզերա-  
կան Ազաթանգեղոս  
պատրիարքի (1826-  
1830 թթ.) վավերաց-  
մամբ և օրհնությամբ  
Կոստանդնուպոլսում  
հրատարակվեց Ուղ-  
ղափառ եկեղեցու  
Մաշտոցի հայերեն  
թարգմանությունը,  
որն իրականացրել  
էին հույն վարժա-




Մեկ էջ Ուղղափառ Մաշտոցից  
Հայաստանի ազգային գրադարան

պետ Անաստասն ու պոլսահայ անվանի մտա-  
վորական և մանկավարժ Գրիգոր դպիր Փեշտի-  
մալճյանը:

Միսամատյանի թարգմանությունն ու հրա-  
տարակումը հովանավորել է ազգային բարերար  
Անաստաս աղան, որը ծննդով Վանք գյուղից էր:  
1779 թ. նա հովանավորել էր էտոլիայի մետրո-  
պոլիտ Նեոֆիտոսի «Մաղկաքաղ քրիստոնէական  
հաւատոյ» երկի հայերեն թարգմանությունը, որը  
կատարել էր պոլսեցի հայտնի թարգմանիչ Գևորգ  
Պալատեցին (1737-1812 թթ.):

94 Այս կարևորագույն ձեռագիր մատյանի նկարագրությունը տես Ղազարյան, «Ավետարանը»:

95 Պողոս Փափազօղլու հիշատակարանը տես Ղազարյան, «Ակնի հայ հոռոմները», էջ 25:




Հատված Նեոֆիտոս Էտոլիացու երկրի հայերեն  
քարգմանությունից

Վիեննայի Միսիթարյան միաբանության մատենադարան, թիվ 731\*

**Բարոյախրատական ևս մի գրվածք, որ թարգմանվել է հայ հոռոմների միջավայրում կոչվում է «Քարոզք ի սուրբ և ի մեծ քառասնորդականն»:** Այս թարգմանությունը պարունակող ձեռագիրն ստեղծվել է 1778 թ. Պատմոս կղզում և պահվել Զորակի եկեղեցում<sup>96</sup>:

Նույն ժամանակաշրջանում Ակնի հայ հոռոմ գյուղերում եկեղեցաշինություն, կամ ավելի ճիշտ եկեղեցիների վերաշինություն է ծավալվել: Հետաքրքրական է նշել, որ երբ ուղղափառ հայերը փորձել են Բարձր Դոնից արտոնություն ստանալ՝ շինարարական աշխատանքներն սկսելու, մերժում են ստացել այնպատճառաբանություններ, թե պետությունը «հայ հոռոմ» համայնք չի ճանաչում: Երբ բոլոր ջանքերը, այդ



Հունաստանի Պատմոս կղզու  
Սր. Հովհաննես Աստվածաբան վանքը



Վիշապասպան Սր. Գևորգ Զորավար  
Սրբապատկեր

Արգիրուպոլիս քաղաքի արձաթագործ  
վարպետների նվերը Վանքի եկեղեցուն, 1713 թ.:\*\*  
Բենակիսի թանգարան, Աթենք

\* Տես Ակիմեան, Սիմէոն, էջ 261-262: Ոսկեան, Մայր ցուցակ Վիեննայի, հ. Ա, գիրք Գ, էջ 271:

96 Տես Ակիմեան, Սիմէոն, էջ 262: Հմմտ. Ճանիկեան, Հնութիւնք, էջ 102:

\*\* Պատկերիս մասին հիշատակում է նաև Հ. Ճանիկյանը (տես Ճանիկեան, Հնութիւնք, էջ 101):



Պատառակալ

հեղ. Դեսպինա Արգիրեա, Կ. Պոլիս, 1723 թ.

Պատկանել է Վանքի Սր. Գևորգ եկեղեցուն (՝  
Բենակիսի թանգարան, Աթենք՝

թվում նաև տիեզերական պատրիարքություն միջամտությունն ապարդյուն են անցել, հայ հոռոմները դիմել են ակնցի ամիրաներին: Մինաս վրդ Ակնեցու (Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ 1751-1753 թթ.) հնարամիտ խորհրդով, ամբասներ Սեղբոս Երևանյանի ու Միսաք Միսաքյանի օգնությամբ ու մեծ զոհողություններով հաջողվել է արտոնություն ստանալ. վերջինս արվել է՝ առաքելական եկեղեցիներ կառուցելու համար, բայց կառուցվել են ուղղափառ եկեղեցիներ, որտեղ բուն տաճարներին կից առաքելական փոքրիկ մատուռներ են հավելվել՝ տարին մեկ անգամ պատարագելու և ազատ ուխտագնացության պայմաններով: Ահա այս հանգամանքներում է, որ Վանքի, Զորակի և Մուշեղկայի եկեղեցիներում հայ առաքելական խորաններ են գոյություն ունեցել<sup>97</sup>:

97 Այս տեղեկությունը գրանցված է եղել Վանքի եկեղեցու ծխամատյաններից մեկում (տես Քեչեան, Ակն, էջ 128):

\* Տես Ballian, *Relics*, 45:

\*\* Տես Ballian, *Relics*, 20:

Վանքի Սր. Գևորգ եկեղեցին կառուցվել է 1722 թ., և հաջորդ տարի օծվել Խաղտիքի և Խերիանի արքեպիսկոպոս Իգնատիոսի ձեռամբ (1717-1734 թթ.): Ի հիշատակ դրա՝ եպիսկոպոսը եկեղեցուն է նվիրել հունարեն տպագիր մի Ավետարան՝ արծաթապատ կազմով, հիշատակարանում սեփական



Վանքի եկեղեցու հունարեն տպագիր Ավետարանի արծաթյա կազմը Արգիրուպոլիս 1713 թ., Բենակիսի թանգարան, Աթենք<sup>\*\*</sup>



Շրգուի եկեղեցին  
Լուսանկարը՝ ՀՃՈՒՀ



Սբ. Հովհանն Ոսկերեսանը  
Սրբապատկեր Շրջուրի եկեղեցուց XVIII դ.

ձեռքով դրա մասին արձանագրություն թողնելով<sup>98</sup>: Եկեղեցին վերակառուցվել է 1823 թ. Անաստաս աղայի հովանավորությամբ:

Շրջու գյուղի եկեղեցին՝ նվիրված Սբ. Հովհաննես Ոսկերեսան հայրապետին, 1831 թ. վերակառուցվել է Անաստաս աղայի հովանավորությամբ, ինչի մասին տեղեկացրել է համապատասխան արձանագրությունը (այժմ հողմակոծ վիճակում է)<sup>99</sup>:

XVII-XVIII դդ. սահմանագլխին պոլսահայ կյանքը մեծապես փոթորկվում էր կրոնական հակամարտությունների պատճառով. Հայ Առաքելական Եկեղեցու հոգևորականության մի մասը՝ եփրեմ Կապանցու (պատրիարք՝ 1684-86, 1694-98, 1701-1702 թթ.) գլխավորությամբ խիստ միջոցների դիմեց՝ հայոց մեջ կաթոլիկության տարածմանը խոչընդոտելու համար: Այսպես, 1700 թ. Կոստանդնուպոլսում հավատաքննչական մի ժողով գումարվեց, որի առջև պատասխանավորության կոչվեցին պոլսահայ երևելիները: Նրանք, որոնք հանձն շառան նզովել շորորոգ Տիեզերաժողովը, հետապնդվեցին և նրանց նկատմամբ կիրառվեցին Օսմանյան պետության պատժիչ միջոցները:

Ինչպես տեղեկացնում է հ. Միքայել Չամչյանը, ժողովից հետո «երիցուկք ոմանք յնիրեմեանց անտի մտեալ ի տունս տունս ստիպէին զամենեսին յայլ և յայլ բանս նզովից. և յորժամ գային առ նոսա ժողովուրդք ի խոստովանիլ, հարցանէին զնոսա, նզովէ՞ք զժողովն Քաղկեդոնի, ասէ՞ք մի բնութիւն ևն. և անկաւ շշուկ աղմկի ի մէջ ժողովրդեան»<sup>100</sup>: Հուզումների արդյունքն այն եղավ, որ «բազումք ի հայոց ի յերիցանց եւ յաշխարհականաց գրգռեալ անկան առ յոյնս և առ լատինս ... սկսան յաճախել բազումք յեկեղեցիս յունաց և լատինացոց և խորշիլ ամենայն իրօք յեկեղեցեացն հայոց»<sup>101</sup>: Ահա այս պայ-

98 Տես Ballian, «Argana», էջ 20:

99 Արձանագրության վերձանությունը տես Քէլեան, *Ակն*, էջ 125. Դազարյան, «Ակնի հայ հոռոմները», էջ 24:

100 Չամչեանց, *Պատմութիւն*, հ. Գ, էջ 730:

101 Չամչեանց, *Պատմութիւն*, հ. Գ, էջ 730-731:



Բարբողոմեոս տիեզերական պատրիարքը,  
Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ու  
Պոլսո Մեսրոպ պատրիարքը հալկիի ջրհորի առաջ, 2008 թ.

մաններում է, որ պոլսահայոց մի մասն Ուղղա-  
փառություն ընդունեց<sup>102</sup>: Մեզ հասած մի քանի  
արձանագրություններից երևում է, որ ուղղա-  
փառ պոլսահայության մեջ նշանավոր են եղել  
ակնցիները, որոնք իրենց ներդրումն են ունեցել  
ինչպես հայ, այնպես էլ հույն միջավայրի բարգա-  
վաճմանը:

Այսպես, հալկիի Սբ. Երրորդություն վանքի  
(1844 թվականից՝ Աստվածաբանական ճե-  
մարան) պարտեզում գտնվող մի ջրհորի վրա

առկա է այս արձանագրությունը. «ՅԱկնայ գէ-  
ղէն Զօրէցի լուսհոգի Մահտեսի Միխայիլի որ-  
դի Մահտեսի Նիգօլային յիշայտակն է յ1792)  
սէբտեմբերի 25»<sup>103</sup>: Հավանաբար այս նիկո-  
լայի և նրա կին մահտեսի Մարիամի անուն-  
ներն են գրված եղել<sup>104</sup> նաև Սբ. Երրորդու-  
թյուն վանքի կաթողիկէի 1779 թ. Աստվածած-  
նի մի պատկերի վրա: Նույն եկեղեցում Սբ.  
Երրորդության մի պատկեր էլ կրել է ձորակցի  
հաջի Միքայելի, հաջի Սահակի և հաջի Մելի-  
քի անունները (ՌՄԻԷ՝ 1778 թ. ), իսկ խորանի  
մեծ մոմոկալներին մեկի վրա եղել է հետևյալ  
արձանագրությունը. «Յիշատակ է այս քարեայ  
աշտանակա Մահտեսի եղիայի որդի Յակօբին  
1772=ՌՄԻԱ»<sup>105</sup>:

Պոլսահայ երևելիներից էր արդեն հիշված  
հայ հոռոմ Անաստաս աղան, որը Գյուղատն-  
տեսական դրամատան («Զիրաթ Բանքասը»)՝  
վերատեսուչն է եղել: 1830-ական թթ. նա ուրիշ  
մեծահարուստների հետ միասին հովանավորել  
է Պոլսո Սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի շի-  
նարարությունը, ինչպես նաև նվիրատվություն-  
ներ արել Կոստանդնուպոլսո հայ առաքելական  
Մայր եկեղեցուն<sup>106</sup>:

102 Ռոշ տեղեկությունների համաձայն՝ պոլսեցի հայ հոռոմների բնակության թաղերն են եղել Քաղըրյոյը (նախկին Քաղկեդոնը) և Խասիյոյը:

103 Քեչեան, Ակն, էջ 641: Հմմտ. Մկրտիչեան, «Հայ արձանագրութիւնք», էջ 247:

104 Այս և հաջորդող արձանագրությունների մասին խոսում ենք անցյալ ժամանակով, քանի որ մեզ անհայտ է, թե այդ արքայատկերներն ու մոմակալն այսօր պահպանվել են արդյոք, թե ոչ:

105 Քեչեան, Ակն, էջ 641: Ուշագրավ է, որ «Յունական կեդրոնի մը մէջ ու յունական եկեղեցիի շուրհն տակ Ակնցի Հայ-  
Հոռոմներ հոն ալ կը հետեւին արեան ձայնին եւ չեն ուրանար իրենց հայկական ծագումը, ընդունիլ տալով, որ իրենց բրած  
բարեարութիւններուն յիշատակարանները գրուին հայատառ, եւ թուագրուին Հայոց տոմարական թուականով» (Քեչեան,  
Ակն, էջ 640-641):

106 Տես Ազատեան, Ակն, էջ 50:

## ԱՐԻՍՏԱՐԽԻՍ ԳԵՐԳԱՍՏԱՆԸ<sup>107</sup>

Գրեթե մեկ ամբողջ դար հայ հոռոմ Արիստարխիս ընտանիքի ձեռքում էր Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքության գլխավոր պաշտոններից մեկը՝ «մեծ լոգոթեատուսթյունը», որն իրականացնում էր եկեղեցիպետություն կապը՝ լինելով պատրիարքարանի թարգմանիչն ու գլխանապետը: Սա միակ բյուզանդական քաղաքացիական պաշտոնն էր, որ Պոլսի գրավումից հետո էլ պահպանեց իր գոյությունը:

Ընտանեկան կասկածելի ավանդության համաձայն՝ Արիստարխիս գերդաստանը սերում էր Հովհաննես Չճշկիկ կայսրից, իսկ ընտանիքի հայրենի գյուղն էր Ակնի Զորակը<sup>108</sup>: Այս տոհմի առաջին հայտնի ներկայացուցիչը պոլսեցի սեղանավոր (բանկիր) Նիկոլ Հաջի-Նիկոլյանն էր<sup>109</sup>, որը մայրաքաղաք էր գաղթել Չճշկածագից ու մեծ ազդեցություն ձեռք բերել Բարձր Դոնում: Նիկոլի որդին էր Ստավրակիսը (հա-

յերեն՝ Խաչիկ) (1770-1822 թթ.), որն իր ունակությունների համար դարոցում ստացել էր *αριστάρχης* (հուն. գերազանցիկ) մականունը, որը և մնացել էր որպես ազգանուն: Պոլիգլոտ Ստավրակիսը եղել է Բարձր Դոնան թարգմանիչ կառավարական կարևոր պաշտոններ զբաղեցրել Մոլդավիայում և Վալախիայում (հարավային Ռումինիա): 1821 թ. նա ընտրվել է պատրիարքարանի մեծ լոգոթետ: Հայազգաի անձի ընտրությունը պատահական չէր, քանի որ այս ժամանակ՝ 1821 թ. Հունաստանի ազատագրական ապստամբության անցքերի պատճառով հույները դիտվում էին որպես դավաճաններ<sup>110</sup>: Շատ շանցած սակայն Ստավրակիսն աքսորվեց Բոլու, որտեղ և Դոնան գաղտնի հրամանով սպանվեց 1822 թ.<sup>111</sup>:

Ստավրակիսի երեք որդիները շարունակեցին ընտանիքի ավանդույթը. կրտսերը՝ Հովհաննեսը (1811-1897 թթ.), երկար տարիներ Բեռլինում Օսմանյան կայսրության դեսպանն էր, միջնեկը՝ վարչական տաղանդով ու առաքի-

107 Տես Ἀρβανιτάκης, «Ἀριστάρχαις. Βαλσαμίδης, «Ἀριστάρχης». «Ἀριστάρχης»:

108 Տես Ճանիկեան, *Հնութիւնք*, էջ 59:

109 Շատ հավանական է, որ սա նույն մահտեսի Նիկոլն է, որը հիշատակված է Խաչիկի ջրհորի արձանագրության մեջ:

110 Պետք է նշել, որ այս ժամանակ, երբ հույների ապստամբությունից կատաղած բուրժեռն սկսել են կոտորել Պոլսի հույներին, նրանց պաշտպան են կանգնել հայերը՝ քե առաջնական, քե ուղղափառ: Կ. Պոլսի պատրիարքարանի պաշտոնյա և աստվածաբան Դ. Ցոլակիդիսն այս մասին գրում է. «Երչանկահիշատակ Չանիկը և այն ժամանակվա շատ ուրիշ նշանավոր հայեր՝ ազդեցության և դրականական մեծ զոհերի գնով փրկագնեցին ... Կոստանդնուպոլսում վաճառվող հույն կանանց ու մեռնոց վերադարձրեցին նրանց: Որքան և որպիսի՝ երախտագիտություն է պարտք մեր ազգը հայհոռոմ մեր հայ եղբայրերին. մեր Սեոի (τοῦ Γένους) հալածանքի ճգնաժամային այն օրերին դրամական շուայլ նվիրատվություններով նրանք նեցուկ կանգնեցին պատրիարքարաններին, հաստատա կործանումից եկեղեցիներ փրկեցին և ընտանիքի տեր բազմաթիվ անմեղ մարդկանց կյանքեր փրկագնեցին» (Χασιώτης, *Ἀδελφά έθνη*, էջ 552):

111 Տես Σταματιάδης, *Βιογραφίαι*, էջ 184-189: Քիոսի Գրիգոր մեառոպոլիսը (1860-1877 թթ.) բնութագրում է Ստավրակիսին որպես «բարեպաշտությամբ ու ազգասիրությամբ (φιλολογεύει) ամենահայտնի մի այրի, որի մարտիրոսական արյունը ներկում է եկեղեցվո և Հայրենյաց սրբազան հողը» (Βυζάντιος, *Περί ένώσεως*, էջ 61):



Վիլախադիս Արիստարխիսը  
(1809-1893 թթ.)

նությամբ հռչակված Միլտիադիսը, 1859-1866 թթ. եղել է Սամոս կղզու կառավարիչը: Սակայն առավել փայլուն էր Ստամբուլի սիւրբապատի ազգային դպրոցի տնօրենի պաշտոնը: Բացառիկ ունակություններով օժտված երիտասարդը Մահմուդ II սուլթանի<sup>112</sup>

(1808-1839 թթ.) հրամանով 1824 թ. նշանակվեց մեծ լոգոթետ և մեծ ազդեցություն ձեռք բերեց սուլթանական պալատում՝ դառնալով Օսմանյան կայսրության գերագույն խորհրդի անդամ: Նիկոլը Մահմուդի որդիների՝ ապագա սուլթաններ Աբդուլ Մեջիդի (1839-1861) և Արդուլ Ազիզի (1861-1876 թթ.) մասնավոր ուսուցիչն էր: Որպես քաղաքական գործիչ՝ մեծ լոգոթետն ակտիվ դեր էր խաղում իր ժամանակվա պատմական իրադարձություններին:

Այսպես, նա իր մասնակցությունը բերեց 1829 թ. Ադրիանուպոլիսի պայմանագրի կնքմանը, որից հետո նա պարզեցվեց թե՛ Օսմանյան, թե՛ Ռուսական կայսրությունների կողմից և

նշանակվեց Վալախիայի ներկայացուցիչ Կ. Պոլսում: Այդ պաշտոնը նա վարեց 25 տարի: Նիկոլ Արիստարխիսը պարզեցվեց է նաև Ֆրանսիայի պատվավոր լեգեոնի խաչով: 1853 թ. Մեծ լոգոթետը փորձեց կասեցնել Ղրիմյան պատերազմը, սակայն ապարդյուն: 1858-1860 թթ. Արիստարխիսը մասնակցեց «Ընդհանուր կանոնադրության» կազմությանը, որի շնորհիվ Օսմանյան պետության կրոնական փոքրամասնությունները՝ առաջին հերթին քրիստոնյաները, ինքնակառավարման իրավունք ստացան: Կյանքի վերջին տարիներին սակայն, Նիկոլ Արիստարխիսը հե-



Նիկոլ Արիստարխիսը  
(1799-1866 թթ.)

ռացվեց պետական գործերից և արտոլվեց Կահիրե, որտեղ և կնքեց մահկանացուն: Ժամանակակիցները Նիկոլին համեմատել են Աբրահամ Նահապետի հետ, քանի որ յուրաքանչյուր մեկը՝ անկախ ազդությունից ու կրոնից, կարող էր ազատ գիմել ազդեցիկ լոգոթետի օգնությանն ու պաշտպանությունը: «Իրա համար քրիս-

<sup>112</sup> Սուլթան Մահմուդը հայտնի է Օսմանյան կայսրության բարեփոխումներով, որոնցից կարևոր էին ենիչերիների գործի վերացումն ու քրիստոնյաներին ընձեռած ազատությունները, ինչը պարզ ժողովրդի մեջ առիթ է տվել կարծելու, իբր թե սուլթանը ծածուկ քրիստոնյա է դարձել, ինչի համար էլ սպանվել է պալատականների կողմից (Տես Παΐσιος Αγιορείτης, Χατζή-Γεώργης, էջ 18-19):





Մեծ լոգոթևա  
Ստավրակիս Արիստարխիսը  
(1835-1925 թթ)

տոնյաները, մահ-  
մեղականներն ու  
հրեաներն անխտիր  
սիրում էին նրան,  
հարգում և խորհր-  
դակցում, և միա-  
բան ողբացին Նիկոլ  
Արիստարխիս բեյի  
մահը՝ որպես ընդ-  
հանուր ու ազգային  
աղետ»<sup>113</sup>։

1867 թ. մեծ  
լոգոթևաի պաշ-  
տոնում հորը հա-  
ջորդեց Ստավրա-  
կիս Արիստարխիսը

(ծնվ. 1835 թ.): նա լայն կրթություն տեր էր  
և բացի քաղաքական գործերից զբաղվում էր  
նաև գիտական-բանասիրական աշխատան-  
քով: Այսպես, նա հայտնի է Փոտ պատրիարքի  
ճառերի գիտական հրատարակությունները: Ան-  
վանի գերդաստանի այս վերջին մեծ ներկայա-  
ցուցիչը մահացել է 1925 թ.<sup>114</sup>։

113 Παπαδόπουλος-Βρετός, «Βιογραφικά», էջ 357:

114 Ս. Արիստարխիսը բաղված է Խամբոյի Սբ. Պառասկևե եկեղեցու գերեզմանատանը, որտեղ կան այլ հայ հոռոմների շիրմներ ևս:



# Գլուխ է \_\_\_\_\_ ԿԱՐԻՒՄ ԵՆՅՐԱՄՈՒՏԸ

## ԱՄԻԴԻ ՀԱՄԱՅՆՔԸ

1821 թ. Հունական ապստամբությունից հետո Օսմանյան կայսրությունում սաստկացավ ուղղափառների, հատկապես հույների դեմ հալածանքները, ինչից խուսափելու համար շատեր կաթոլիկ դարձան: Այդպես, 1827 թ. Ամիգում ուղղափառների մի մասն առանձնացավ՝ ձևավորելով հոռոմ-կաթոլիկ համայնքը, ինչից սրվեցին դավանափոխների ու նրանց նախկին դավանակիցների հարաբերությունները: Մակայն 1846 թ. Ամիգի կաթոլիկ Մակար եպիսկոպոսն Ուղղափառություն ընդունեց՝ դառնալով թեմի օրթոդոքս առաջնորդը: Նրան հետևեցին այլ հոռոմ-կաթոլիկներ<sup>1</sup>: Մակարը կառավարեց մոտավորապես մինչև 1857 թ.:

Ամիգի քրիստոնյաների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Փարեզին եպոս Սրվանձտյանցը (1840-1892 թթ.), նշելով, որ 1878 թ. դրությամբ քաղաքում բնակվում էին ամենատարբեր քրիստոնյաներ՝ հայեր «ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ», տարբեր խմբավորումների կաթոլիկ և բողոքական հայեր, ասորիներ՝ հակոբիտ, կաթոլիկ ու բողոքական, քիլդանիներ (նեստորականներ), հույներ ու հայ հոռոմներ. «Բոլոր այդ Քրիստոնեայ տարր հայերէն կը խօսին, եւ գիրենք Հայ կ'անուանեն. եթէ հարկ լինի ցեղի մը կամ ազգի մը վրայ խօ-

սիլ, կ'ըսեն՝ Ասորի Հայ, Քիլտանի Հայ, էրմանի Հայ եւ այլն: Եւ ամէն անգամ եթէ Քրիստոնէից հանուրին վերաբերեալ խնդիր մը ծագէր, միւսները կը հաւաքուէին Հայոց Առաջնորդարանն. հոն կը խորհէին, որոշումն կուտային եւ անոր միջոցաւ կը բանակցէին կառավարութեան: Իսկ հոգեւոր պէտքեր եւ պաշտամունքներ իւրաքանչիւրին հովիւն ըստ իւր ծիսի կը կատարէր: Թէպէտ այսքան բաժին բաժանեալ էին ի կրօնս, բայց գրեթէ չկար հակառակութիւն կամ շարախօսութիւն իրարու դէմ»<sup>2</sup>:

XIX դ. վերջում-XX դ. սկզբում Ամիգում կային ընդամենը 60 օրթոդոքս ընտանիքներ, որոնցից 40-ը հին բնիկներն էին՝ հայ հոռոմներ (այդ թվում՝ ակնցիներ) և տարբեր տեղերից քսոսոված հույներ: Սրանք զուգահեռ խոսել են թուրքերեն, հայերեն ու արաբերեն: Մնացյալ 20 ընտանիքը եղել են XIX դ. 60-70 թթ. Արղանա-Մաղենից Ամիգ տեղափոխված պոնտացի հույն մետաղագործներ: Սրանց տան խոսակցական լեզուն պոնտական բարբառն է եղել, իսկ դրսում խոսել են թուրքերեն կամ արաբերեն, բայց հայերեն չեն խմացել<sup>3</sup>: Հոռոմները բնակվելիս են եղել քաղաքի Հոռոմնուց թաղամասում, որը Սբ. Կիրակոս եկեղեցու շրջակայքում է<sup>4</sup>:

Ամիգում եղել են երկու օրթոդոքս եկեղեցիներ՝ Սբ. Կոզմաս և Գամիանոս Անարծաթ բժիշկների և Սբ. Գևորգի անունով: Առաջինը XV դ.

1 Տե՛ս Δελικάνης, Έγγραφα, էջ 281-281:

2 Սրուանձտեանց, Քորոս Աղբար, մ. Բ, էջ 213:

3 Տե՛ս ΚΜΣ/ΑΠΠ, φάκελος ΧΤ-2:

4 Տե՛ս ΚΜΣ/ΑΠΠ, φάκελος ΧΤ-2:

ցնություն է եղել, ունեցել է հնամենի խճանկարների մնացորդներ, բազմաթիվ ռուսական սրբապատկերներ: Այստեղ է պահվել Անարծաթ եղբայրներից մեկի գլուխը: Սբ. Գևորգ եկեղեցին սկսել են կառուցել 1912 թ., սակայն կառույցն անավարտ է մնացել<sup>5</sup>:

Ամիգի վերջին մետրոպոլիտան է եղել Խաչկիր անձարանի շրջանավարտ Մելետիոսը, որը հիմնականում ապրել է Անտիոքում: Նա Ամիգ է այցելել սբ. Ծննդյան ու Զատիկի տոներին, ինչպես նաև սբ. Անարծաթների տոնին (հուլիսի 1)<sup>6</sup>:

## ՀՈՂՈՒՍ ԳՅՈՒՂԸ

Հողիս կամ Հողուս գյուղը գտնվում էր Կաթիկից 30 կմ, Երզնկայից՝ 90 կմ հեռու, հարավ-արևմտյան ուղղությամբ, Մնձուր (Մովուկ) տարի լանջերին, Եփրատից ոչ հեռու: Գյուղը շրջապատված է եղել թուրքական ու քրդական գյուղերով, ավելի հեռվում ընկած են եղել առաքելական հայերի գյուղերը<sup>7</sup>: Հողուսը եղել է զուտ հայ հոռոմների գյուղ և XIX դ. դրությամբ Արևմտյան Հայաստանի՝ նրանցով բնակեցված ամենամեծ բնակավայրն էր:

Հողիսի մասին առաջին գրավոր վկայությունները գալիս են XVII դ.<sup>8</sup>: Ճշգրիտ հայտնի չէ, թե ե՞րբ, սակայն ամենայն հավանականությամբ

յամբ նույն XVII դ. սկզբին՝ ջելալիների ապստամբության տարիներին, գրեթե բոլոր հողուցիներ՝ 300 ընտանիք, Իզմիթի (Բյուլթանիայի) Գեյվե ավանն են գաղթել, և 7 թաղ ունեցած գյուղում ընդամենը 7 ընտանիք է մնացել: Ահա այս թիվստորից են գոյացել հողուցիների հաջորդ սերունդները, որոնք XIX դ. վերջում-XX դ. սկզբին կազմել շուրջ 1300-1500 հոգի<sup>9</sup>:

Մինչև 1900 թ. Հողուսը ենթարկվել է Կարինի մետրոպոլիտոսությանը, իսկ դրա կազմալուծումից հետո անցել է Ամիգին: Հողուսի քահանայացուներն իրենց կրթությունն ստացել են Ակնում: XIX-XX դդ. Հողուսում հաջորդաբար ծառայած քահանաներից հայտնի են. պապա Սիմեոն Փափազողլին, նրա եղբայր պապա Խարալամպոսը, պապա Վասիլ Սպիրողլին, որի մահվանից հետո քահանա ձեռնադրվեց նրա փեսա Նիկոլ Փափազողլին<sup>10</sup>:

Գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին քարաշեն է եղել, շատ ցածր գոնով, որպեսզի, ինչպես բացատրել են, ձիավոր թուրքերը չկարողանան ներս մտնել: Ունեցել է պատկերներ ու որմնանկարներ: Եկեղեցու տոնը նշվել է օգոստոսի 15-ին՝ Աստվածամոր Նշմանը: Այդ օրը մեծ տոնախմբություն է կատարվել, զուռնա-դհոլով ու մատաղի արարողությամբ: Եկեղեցական պաշտամունքը հունարեն է կատարվել, իսկ Ավե-

5 Տե՛ս ԿՄՏ/ԱՅՍ, φάκελος ΧΤ-2:

6 Տե՛ս ԿՄՏ/ԱՅՍ, φάκελος ΧΤ-2:

7 Տե՛ս Ղազարեան, «Բարձր Հայքի», ս. 366, 371-372:

8 Տե՛ս Ղազարեան, «Բարձր Հայքի», ս. 362-363:

9 Տե՛ս Ղազարեան, «Բարձր Հայքի», ս. 363-364, 366, 373:

10 Տե՛ս Ղազարեան, «Բարձր Հայքի», ս. 377:



Սորապատկերի մետաղե լուսապատկ  
Ամենակալ Քրիստոսի պատկերով և «Յիշատակես Վալիմ ե»  
արձանագրությամբ, Ակն, XVIII-XIX դդ.


տարանն ու առաքելական թղթերը թուրքերեն  
են ընթերցվել: Մյուս հայ հոռոմների պես հո-  
ղուցյինները Տերունական ազոթքը հունարեն են  
իմացել՝ առանց իմաստը հասկանալու<sup>11</sup>:

Հողիսի շրջակայքում եղել են խոնարհված  
սրբավայրեր՝ նվիրված տարբեր սրբերի, որոնք  
հողուցյինների կրոնական ջերմեռանդության  
առարկան են եղել<sup>12</sup>:

Հողուցյինների մեջ տարածված է եղել արևմ-  
տահայության կյանքի ցավալի երևույթը՝  
պանդիստությունը (արտագնա աշխատանքը):  
Գյուղացիներն աշխատանքի են մեկնել Պոլիս՝ այ-  
գեգործության, Բուլղարիա, որաեղ սրճի առևտ-  
րով ու բանվորությամբ են զբաղվել, ինչպես նաև՝  
Ռումինիա և Ռուսական կայսրություն<sup>13</sup>:

## ԱԿՆԻ ՀԱՅ ՀՈՌՈՄՆԵՐԻ ԳՅՈՒՂԵՐԸ<sup>14</sup>

Կոստանդ I տիեզերական պատրիարքի  
(1830-1834 թթ.) հաղորդմամբ՝ Ակնի ուղղա-  
փառ գյուղերը թվով տասներկուսն են եղել<sup>15</sup>:  
Հավանաբար, սույն թիվը վերցված է ավելի հին  
ժամանակների աղբյուրներից, քանի որ XIX  
դ. դրությամբ Ակնի հայ հոռոմոց գյուղերն ըն-  
դամենը չորսն էին՝ Վանքը, Զորակը, Շրգուն ու  
Մուշեղկան<sup>16</sup>:



Վանք գյուղը (այժմ Ցակա)՝ Եփրատի ափին  
Գյուղի Սր. Գեորգ եկեղեցին XX դ. անցել է գետի ջրերի տակ:

11 Տես ԿՄԵ/ԱՈՍՈ, φάκελος ΧΕ9. Ղազարեան, «Բարձր Հայքի», ս. 377:

12 Տես Ղազարեան, «Բարձր Հայքի», ս. 376-377. Ղազարյան, «Արևմտյան», էջ 218-219:

13 Տես Ղազարեան, «Բարձր Հայքի», ս. 369:

14 Թեմայի շուրջ հանգամանալից տես Ղազարյան, «Ակնի հայ հոռոմները»:

15 Տես Կωνσταντίνος Կωνσταντινουπόλεως, Βιογραφία, էջ 87-88:

16 XVII-XVIII դդ. ակնահայության մեջ լայն տարածում ստացավ իրամացումը, և բազմաթիվ հայկական գյուղեր «տան-  
կացան»: Այդ գյուղերի երբեմնի հայկական ինքնության մասին էին վկայում միայն անվանումները՝ Խաչուկգիլ, Վարդանգիլ,  
Կնեհայրգիլ ևն: Ակնի մահմեդականացած հայ հոռոմ գյուղերից են եղել Միջինգեղն ու Արման (Աղաման), իսկ տանկացած  
գերդաստաններից՝ Ապրստոլոյլու տոհմը (տես Իննիհեան, Աշխարհագրութիւն, էջ 303. Ճանիկեան, Հնութիւնք, էջ 14-15):

1887 թ. Ակնով է անցել Գարեգին եպս Սրբանձառյանցը, որը սակավ, բայց արժեքավոր առգեր է թողել այդ գյուղերի մասին. «Քանի մը գեղեր կան Հայ-հոռոմոց, որք են Զորակ, Մուշեղկայ, Վանք, Շրգու, որոց բնակիչք գրեթէ երբէք տարբերութիւն չունին Հայոցմէն, իրենց ընտանեկան և վարժարանի լեզուն Հայերէն է նամակներ և տումարներ Հայերէն, վարժագետ Հայ, քահանայք անգամ Յունարէն չգիտեն խօսիլ, և շարունակ յարաբերութեանց մէջ են Հայոց ժողովքներու և առաջնորդարանին հետ, միայն քահանայից գլխարկը, եկեղեցեաց զգեստները<sup>17</sup> և ձէսերը Յունական են. եկեղեցական ընթերցուածքները մաս մը Հայերէն են, գորօրինակ, Աւետարան, Ճաշու գիրք, Ժամագիրք, բայց պատարագն Յունարենէ Հայերէնի թարգմանելով կ'ընեն: Հաւատամքն և Սուրբ Աստուածն Յունարէն<sup>18</sup>: Իրենց անունները արգարև Հայ ու Հոռոմէն խառն<sup>19</sup>: Յունարէն լեզու կամ գիր գիտցող խիստ հազվագիւտ է»<sup>20</sup>:

Վերոնշյալ չորս գյուղերի մեջ Վանքն ամենահայտնին էր: Իր ծաղկուն շրջանում այն ունեցել է 90 տուն, ընդ որում ընտանիքը որպես

կանոն բաղկացած է եղել 10-12 հոգուց<sup>21</sup>: XIX դ. 60-70-ական թթ. ունեցել է 80 տուն հայ հոռոմ և 10 տուն թուրք, սակայն կրկնակի հրդեհից հետո գյուղն արտագաղթի պատճառով ամայացել է. 90-ականներին այն ուներ միայն 40-50 տուն հայ հոռոմ և 10 տուն թուրք<sup>22</sup>:



Վանքի եկեղեցին և սր. Գևորգ Զորավարը  
փորագրութիւն Վանքի Ավետարանի կազմից, 1787 թ.,  
Բենակիսի թանգարան, Աթենք

Վանքցիների բարբառի մասին հայտնի է, որ «Գիւղին մէկուսացման հետեւանքով, գիւղացիները անվթար եւ անաղարտ պահած էին հայերէն լեզուն, իր հայկական բառամթերքով, եւ ունէին մասնաւոր շեշտաւորում մը՝ ձայնաւորները եր-

17 Մինչև XIX դ սկզբները օրթոդոքս հայոց եկեղեցական զգեստները նույնական են եղել առաքելական հայերի զգեստներին: Դա մեզ թույլ է տալիս ենթադրել, որ շուրջ XVI-XVII դդ. ծայրերի հին համայնքին Ուղղափառություն ընդունած հայորդիների մի նոր ալիք է ավելացել (տես Ղազարյան, «Հայ հոռոմների», էջ 192-193):

18 Հայ հոռոմ տատերն ու մայրերը երեխային հունարեն Երեմիայանն ու Տերունական աղոթքը սովորեցրել են խոսելն սկսելուն պես, սակայն մեծանալուց հետո էլ բառերի իմաստը չեն հասկացել (տես ԿՄՏ/ԱՍՍ, φάκελος ΧΕ1):

19 Ակնցի հայ հոռոմների անձնանունների խայտաբղետության մասին տես Ղազարյան, «Ակնի», էջ 229. Ղազարյան, «Հայ հոռոմների», էջ 198:

20 Սրուանձառեանց, Թորոս Աղրար, մ. Ա, էջ 252-253:

21 Տես ԿՄՏ/ԱՍՍ, φάκελος ΧΕ1:

22 Տես Ճանիկեան, Հնութիւնք, էջ 57-58:



Հայ հոռոմ կանայք տարագրված Հայ հոռոմների տարազը եղել է հարևան մյուս ակնեցիների, միայն կանայք աչքի են բնկել պճասիրությամբ:

նակին այն ունեցել է 100 տուն բնակիչ, որոնցից 80-ը քրիստոնյա, մնացածը՝ թուրք<sup>26</sup>:

կարելով: Ակնեցիները շունչին այս եղանակաւորումը...»<sup>23</sup>: Հենց Վանքում է, որ «ամէնէն աւելի հարազատորէն եւ մաքուր լեզուով գոյութիւն ունէին Ակնայ օրօրները եւ անտունիները»<sup>24</sup>: Վանքի բնակիչներն առանձնացել են իրենց հյուրասիրութեամբ և ազնվաբարոյութեամբ<sup>25</sup>:

Ձորակ գյուղն ընկած էր Ակնից 1,5-2 կմ հեռավորության վրա՝ հյուսիս-արևելք ուղղութեամբ: Ժամա-

Հավանաբար 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո սկսվել է գյուղի ամալացումը. 55 ընտանիք Իզմիթի նահանգի Օրթաքոյ ու Գեյվե ավաններն են գաղթել<sup>27</sup>: Գաղթը շարունակվել է հետագայում, այնպես որ նույն դարի 90-ականներին Ձորակում մնացել էին ընդամենը 10 տուն հայ հոռոմներ, և ավելացել էին 10 տուն թուրքեր<sup>28</sup>:

Շրգու<sup>29</sup> գյուղը XIX դ. 90-ականներին ուներ 30 տուն հայ հոռոմ և 20 տուն թուրք<sup>30</sup>: Այլ տեղեկության համաձայն՝ XX դ. սկզբին գյուղն ունեցել է 60 տուն (350 հոգի), որոնցից կեսը՝ հայ հոռոմներ (160-180 հոգի), կեսը՝ թուրքեր<sup>31</sup>:

Մուշեղկա գյուղն ընկած է Ձորակից հյուսիս-արևելք, մոտ 1 ժ. հեռավորության վրա: Մոտավորապես XIX դ. կեսերին շուրջ 50 ընտանիքներ Մուշեղկայից Գեյվե են գաղթել, և գյուղում մնացել է շուրջ 50 տուն, որոնցից 20-ը՝ թուրքեր: 1908 թ. հետո մոտ 10 հայ հոռոմ ընտանիքներ գաղթել են Օրթաքոյ, Գեյվե, Պոլիս՝ Քաղբքոյ (Քաղկեդոն) արվարձան<sup>32</sup>:

23 Ագատեան, Ակն, էջ 122:

24 Ագատեան, Ակն, էջ 123. Քլէեան, Ակն, էջ 407-412: Ակնցի հայ հոռոմներից մեզ են հասել բանահյուսական ընտիր միավորներ, որոնց մեջ առանձնանում են սբ. Փնորգի ու սբ. Նիկողայոսի մասին հրաշալիատումները (տես Ղազարյան, «Արևմտյան»):

25 Տես Ագատեան, Ակն, էջ 123:

\* Տես Ճանիկեան, Հնութիւնք, էջ 57:

26 Տես ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος ΧΕ4:

27 Տես ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος ΧΕ4:

28 Տես ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος ΧΕ4. Ճանիկեան, Հնութիւնք, էջ 59:

29 Ըստ Հ. Բարթիկյանի՝ գյուղի անվանումը ծագում է Σέργιος (Մարգիս) անվան սեռ. հոլովի Տերգիոս ձևափոխությունից: Ըստ հետազոտողի՝ գյուղն այսպես է կոչվել տեղի Սբ. Սերգիոս-Քաֆոս վանի անունով (տես Бартикаян, «Гаврас», III, էջ 166):

30 Տես Ճանիկեան, Հնութիւնք, էջ 59:

31 Տես ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος Χ3:

32 Տես ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος ΧΕ2: Այս բլերից տարբերվում են Հ. Ճանիկյանի տվյալները, ըստ որոնց՝ XIX դ. վերջում Մուշեղկայում կար 15 տուն հայ հոռոմ, նույնքան թուրքեր, և մեկ հայ առաքելական ընտանիք (տես Ճանիկեան, Հնութիւնք, էջ 60):




**Միֆայել Հրեշտակապետը**

*Սրբապատկեր (հատված) Ակնի հայ հոռոմներից, XVIII դ.*



**Քրիստոս Ամենակալը**

*Սրբապատկեր (հատված) Ջորակի եկեղեցու պատկերակալից, XVIII դ.*



**Սբ. Նիկողայոսը և Տիրամայրը Մանկան հետ**


*Սրբապատկերներ Ջորակի եկեղեցու պատկերակալից, XVIII դ.*



**Սբ. Գրիգոր Լուսավորիչը**

*Սրբապատկեր (հատված) Ակնի հայ հոռոմներից, XIX դ.*





Ջորաբեկ վերջին  
Բահանան՝ պապա  
Գրիգոր Փափագողլին  
(1866-1951 թթ.)

Եկեղեցական առումով  
Վանքն ու մնացյալ երեք  
գյուղերը ենթարկվել են  
Ամիրգի մեարրոպոլիտին, որը  
3-4 տարին մեկ հովվապե-  
տական այցելություն է կա-  
տարել ակնցիներին և 7-10  
օրով հյուրընկալվել յու-  
րաքանչյուր գյուղում: Այս-  
պիսով՝ ողջ այցը մոտ մեկ  
ամիս է տևել: Գյուղացիները  
չերմուխյամբ են հիշել  
Ամիրգի Մեղբեսարոս մեար-  
րոպոլիտին, և մանավանդ  
նրա հաջորդ Մելետիոսին:



Խաչաբեր Շրգույից  
Լուսանկարները՝ ՀՃՈԻԶ



Շրգույի (այժմ՝ Էսերբեկե) Սբ. Ոսկեբերան եկեղեցին այսօր  
Լուսանկարը ՀՃՈԻԶ

Վերջինս հականե-  
հանվանե ճանաչել  
է գյուղացիներին,  
իմացել հունարեն,  
հայերեն և թուրքե-  
րեն, բայց արարերեն  
է պատարագել: Դրա  
համար տղա երեխա-  
ները դպրոցում որոշ  
շարականներ արա-  
բերեն են սովորել՝  
հատուկ եպիսկոպո-  
սական Պատարագին  
երգելու համար<sup>33</sup>:

Ակնագետ Հ.  
Ճանիկյանի համա-  
ձայն՝ «Վանքի եկե-  
ղեցույն մէջ ծէսերը  
յունական են, սա-  
կայն ընթերցուա-  
ծոց բոլորն ալ յայս-  
մաւորք, մաշտոց,  
ժամագիրք, պատա-  
րագի խորհրդա-



տետր յունականէն ի Հայ թարգմանեալ են... Այս-  
պէս, երբ ընթերցողն յունարէն գիտէ, յունարէն  
մատենաքն, և եթէ չգիտէ՝ հայերէնն կ'ըն-  
թեռնու: Եկեղեցույ մէջ հայերէն ընթերցանու-  
թիւնքն այնպիսի արտասանութեամբ և եղա-  
նակաւ մ' է որ յունարէնի կը նմանի, և անվարժ

33 Տես ԿՄՏ/ԱՊՍ, φάκελος ΧΕ1:



Շրգունեցիք, XX դ. սկիզբ




Մուշեղկա գյուղը  
(այժմ՝ Քոջաշիմե)

անձինք դժուարապես կը հասկանան»<sup>34</sup>: Ինչ վերաբերում է սույն գյուղերի կրթությանը, ապա Վանքն ունեցել է մեկ տարրական դպրոց՝ ընդհանուր թե՛ տղաների, թե՛ աղջիկների համար: Հստակ կրթական ծրագիր գոյություն չի ունեցել, երեխաներն ամենաշատը շորս տարի են հաճախել: Սովորել են հայոց այբուբե-

նը, գրել-կարդալ, ինչպես նաև՝ եկեղեցում սպասավորելու համար անհրաժեշտ աղոթքներն ու սաղմոսները: Սովորել են նաև թուրքերեն, սակայն գերակշիռը հայոց լեզուն է եղել<sup>35</sup>: Իսկ հունարեն սովորելու փորձերն արհեստական ու անիմաստ բան են եղել, քանի որ դպրոցից դուրս գալուն պես երեխաներն իրենց սովորած չնչին հունարենը (այբուբեն, գրել-կարդալ, մի քանի աղոթքներ) իսպառ մոռացել են. նրանց առօրյա լեզուն բացառապես հայերենն է եղել: Յանկության դեպքում կրթությունը շարունակել են Ակնի թուրքական գիմնազիայում<sup>36</sup>:

Զորակ գյուղում դպրոցի շենք չի եղել: Գասատուն՝ քահանան կամ որևէ աշխարհական, դասերը տանն է անցկացրել: Աշակերտները բացառապես տղաներ են եղել՝ մոտ 15 հոգի: Պուսեցիներն ինչ-որ հունարեն տարրական



Մուշեղկայի Սբ. Գևորգ եկեղեցին՝ վերածված մզկիթի  
Լուսանկարները՝ ՀՃՄԻՀ

34 Ճանիկեան, Հնութիւնք, էջ 56: Խոսքն այստեղ իհարկե բյուզանդական երաժշտության մասին է, որն առ օրս գործածական է հունալեզու Օրբորդոս եկեղեցիներում:

35 Հ. Ճանիկյանի վկայությամբ՝ հայ հոռոմոց դպրոցներում «հայերենն՝ իբրև մայրենի լեզու կուսուցուի, սովորաբար հայ գասատուններ է որք ֆաղաֆէն կ'երթան» (Ճանիկեան, Հնութիւնք, էջ 57):

36 Տես ԿՄՏ, φάκελος ΧΕΙ:



Սուրբ Գևորգ Չորավարը  
Սրբազատիկեր (հատված) Վանքի եկեղեցուց, XVIII դ.



Խաչքար Մուշեղկայի  
եկեղեցու պատին  
Լուսանկարը՝ ՀՃՈՒՀ

այբենարաններ են  
գյուղ ուղարկել:  
Սովորածը գծվա-  
րությամբ հունա-  
րեն գրել-կարդալն  
է եղել՝ «չնչին բա-  
ներ»<sup>37</sup>:

Նույն վիճակն է  
եղել նաև Մուշեղ-  
կայում ու Շրջու-  
յում: Ըստ Մ. Գա-  
սապյանի հաղոր-  
դած տվյալների՝  
1910 թ. դրությամբ  
չորս գյուղերի սանե-  
րի մոտավոր թիվը

եղել է 245 հոգի, որոնցից 145՝ տղաներ, մնաց-  
յալը՝ աղջիկներ<sup>38</sup>:

Ակնի հայ հոռոմները կապերի (հիմնակա-  
նում ուխտագնացական ու խնամհական) մեջ  
են եղել Չմշկածագի շրջանի իրենց դավանա-  
կիցների հետ:

## ՉՄՇԿԱԾԱԳԻ ՀԱՅ ՀՈՌՈՄ ԳՅՈՒԼԵՐԸ

Չմշկածագի շրջանի հայ հոռոմ գյուղերն էին  
Մամսան, Սեղրկան ու Խնդրկիկը (Խնդվկիկը):

Մամսան ընկած է եղել Չմշկածագ քաղա-  
քից հյուսիս-արևելք<sup>39</sup>: Չմշկածագի հայկական  
գյուղերի մեջ Մամսան իր բնակչության թվով  
երկրորդն էր. 1915 թ. այստեղ կար 40 տուն  
առաքելականներ՝ 171 շնչով, և հայ հոռոմների  
38 տուն՝ 168 շնչով<sup>40</sup>: Մամսայի հայ հոռոմնե-  
րի մեծ մասը որմնադիր-քարտաշ վարպետներ  
էին: Գյուղի առաջին՝ Սբ. Թեոդորոս (Թորոս)  
ուղղափառ եկեղեցին կառուցվել է 1830 թ.:  
Շինարարության ծախսի մեկ շորրորդը հոգացել  
են առաքելական հայերը՝ պայմանով, որ եկե-  
ղեցում իրենց համար խորան հատկացվի, սա-  
կայն հետագայում նախնական պայմանավոր-  
վածությունը հայ հոռոմների կողմից չի հարգ-  
վել, և առաքելականները 1834 թ. Սբ. Թորոսի  
դեմառդեմ կառուցել են Սբ. Գևորգ եկեղեցին:

37 Տես ԿՄՏ/ԱՍՍ, φάκελος ΧΕ4:

38 Տես Ֆարհատ, «Հայ-հոռոմները», Բ, էջ 2:

39 Գյուղի անվանումն առաջացել է «Մամաս» արական անվան գրաբար սեռական հոլովից՝ «Մամասայ»:

40 Տես Գասպարեան, Չմշկածագ, էջ 265. Ղազարեան, Պատմագիրք, էջ 247-248:

Շեղհանուր առմամբ Մամսայում երկու եկեղեցիներին պատկանող հայերի հարաբերությունները հարթ ու հանգիստ շեն եղել<sup>41</sup>: Առհասարակ, մամսացի հայ հոռոմներն աչքի են ընկել իրենց ցածր բարոյական նկարագրով<sup>42</sup>: Մամսայի օրթոդոքս քահանաներից հայտնի են միաժամանակ սպասավորած պապա Լազար (մահ. 1889 թ.) և պապա Ղազար (մահ. 1894 թ.) թումոյանները: Վերջինիս մահվանից հետո մի քանի ամիս քահանայագործել է նորոք ձեռնադրյալ պապա Յորդանը, որի մահվանից հետո ձեռնադրվել է ուսուցիչ Անդրեասը<sup>43</sup>:

Մամսայի երկու եկեղեցիներին կից գործել են նաև համապատասխան դպրոցները: Հայ հոռոմների դասագրքերը հունատառ թուրքերեն են եղել, դպրոցում սովորել են հայերեն ու թուրքերեն գրել-կարդալ, սակայն հիմնական նպատակն է եղել սաներին եկեղեցու սպասավորություն համար նախապատրաստելը<sup>44</sup>:

Սեդրկա գյուղը գտնվելիս է եղել Չմշկածափից մոտ. 15 կմ հյուսիս-արևմուտք: Միջնադարում սա եպիսկոպոսանիստ բնակավայր էր, սակայն նոր ժամանակներում առանց եկեղեցի էր: 1878 թ. գյուղն ուներ 2 տուն

առաքելական և այդքան էլ ուղղափառ հայ, իսկ 1915 թ. գյուղում բնակվում էին 8 առաքելական ընտանիք (21-24 հոգի), 1 տուն հայ հոռոմ (3 հոգի) և արդեն 24 տուն թուրք (93 հոգի)<sup>45</sup>:

Մինչև 1895 թ. 8 հայ հոռոմ ընտանիքներ կային նաև Խնդրկիկ գյուղում<sup>46</sup>:

## ԻԶՄԻԹԻ

### ՀԱՅ ՀՈՌՈՄՆԵՐԸ

Դեռևս XV և XVII դդ. Իզմիթի նահանգ (պատմական Բյութանիա) գաղթած ուղղափառ հայերի բնակավայրերն էին Գեյվե սանջակուսյան Միջինգյուղ (Օրթագյուղ կամ Օրթաքոյ, նախական անվանումը՝ Ագրակ կամ Աղբերակ) և Խուզի գյուղերը, որոնց բնակիչները գաղթել էին այստեղ համապատասխանաբար՝ Ակնա Միջինգյուղ (կամ Աղբերակ՝ Շրգուի մոտ)<sup>47</sup> և Կամախի Խուզի<sup>48</sup> գյուղերից<sup>49</sup>:

Օրթագյուղը (չշփոթել Պուսի նույնանուն ավանի հետ) ընկած էր Իզմիթ քաղաքից (պատմական Նիկոմեդիա) 75 կմ հարավ-արևելք: XX դ. սկզբներին այս մեծ գյուղում կար շուրջ

41 Տե՛ս Գասպարեան, *Չմշկածափ*, էջ 203-213:

42 Տե՛ս Ղազարյան, «Հայ հոռոմները», էջ 129:

43 Տե՛ս Գասպարեան, *Չմշկածափ*, էջ 210-211:

44 Տե՛ս Գասպարեան, *Չմշկածափ*, էջ 208-209:


45 Տե՛ս Գասպարեան, *Չմշկածափ*, էջ 660: 282-283:

46 Տե՛ս Գասպարեան, *Չմշկածափ*, էջ 282-283. Ղազարեան, *Պատմագիրք*, էջ 280:

47 Տե՛ս ՀՀՇՏԲ, հ. Գ, էջ 827:

48 Տե՛ս ՀՀՇՏԲ, հ. Բ, էջ 826:

49 Տե՛ս Բարթիկյան, «Հայ-հոռոմները», էջ 251:



Օրթագյուղի Սբ. Գևորգ եկեղեցու ներսը  
XX դ. սկզբին

6000 շունչ ուղղափառ և 2000 հոգի առաքելական հայեր (համապատասխանաբար՝ մոտ 500 և 200 ընտանիքներ)<sup>50</sup>:

Գյուղի օրթոդոքս եկեղեցին էր Սբ. Գևորգը՝ կառուցված 1626 թ., և վերակառուցված 1865 կամ 1875 թ.: Գյուղից դուրս կային մի քանի մատուռներ՝ Սբ. Նիկողայոս, Սբ. Մինաս, Սբ. Գևորգ<sup>51</sup>:

Օրթագյուղում գործում էր մեկ դպրոց՝ 300 տղա աշակերտներով (8-16 տարեկան) և հինգ ուսուցիչներով, աղջիկների դպրոց՝ 70 սաներով և երկու ուսուցչուհիներով, երեք մանկա-

պարտեզ, որոնցից յուրաքանչյուրն ուներ 4-8 տարեկան 150 երեխա՝ վեց դաստիարակչուհիներով<sup>52</sup>:

Խուզի գյուղն ընկած էր Օրթագյուղից 3 կմ արևելք, Իգմիթից՝ 48 կմ հարավ-արևելք: XX դ. սկզբում Խուզիի ուղղափառները կազմում էին մոտ 1200-2000 (250-300 ընտանիքի) շունչ, իսկ թուրքերը՝ 500-800 (70 ծուխ): Վերջիններս ապրում էին առանձին թաղում<sup>53</sup>:

Գյուղի Սբ. Գևորգ եկեղեցում (վերակառուցված 1868 թ.) Պատարագը մատուցվում էր հունարեն, սակայն անգամ քահանաները լեզուն չէին հասկա-



Օրթագյուղի օրթոդոքս վարժարանի սաները և հույն ուսուցչուհիները, 1910 թ.

50 Տես Բարթիկյան, «Հայ-հոռոմները», էջ 247: Հմմտ. Կիտրոմիլիդու, «Πασχαλίδης», էջ 247: Օրթագյուղի և տարածաշրջանի հայ բնակչության քվերը փոքր-ինչ տատանվում են ըստ տարբեր տարիների և հեղինակների: Այդ տվյալների համեմատական տախտակը տես Kazaryan, «The Hay Horoms», էջ 175-180:

51 Տես ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος Β34:

52 Տես Ֆարհատ, «Հայ-Հոռոմները», Գ, էջ 2:

53 Տես Կիտրոմիլիդու, «Πασχαλίδης», էջ 244-245:



Օրթոդոքսի հայ հոռոմ բանահավաք և երաժշտագետ Գևորգ Պախախկոսը (Բաղդիկյան, 1869-1916 թթ.)՝ հունական ժողովրդական երգեր գրի առնելիս՝

նուս՝<sup>54</sup>: Խուղիից դուրս գոյություն են ունեցել Սբ. Վառվառա, Սբ. Եղիա և Սբ. Գևորգ մատուռները, որոնցից վերջինը թուրքերը հրկիզել են՝<sup>55</sup>:

Խուղիի քրիստոնյա դպրոցն ուներ մոտ 130-160 աշակերտ, օրիորդաց վարժարանը՝ 100 սան՝<sup>56</sup>: Այլ ավյալներով՝ այդ դպրոցը խառն էր և ուներ 7-15 տարեկան սաներ՝ 160 տղա, 170 աղջիկ: Խառն էր նաև մանկապարտեզը՝ շուրջ 40 երեխաներով՝<sup>57</sup>:

Օրթոդոքսյն ու Խուղիին գտնվում էին Նիկիայի մետրոպոլիտոսիան կազմի մեջ:

Այս երկու գյուղերի բնակիչներից գոյացել էին տարածաշրջանի մի քանի այլ հայ հոռոմ բնակավայրեր: Խուղիից առաջացած մի գյուղն

էր Բուրխանիեն, որը 1850 թ. հիմնել է հայ հոռոմ հաջի Անաստաս Միրաքոլին (1820-1903 թթ.): Նրա որդին՝ պապա Հակոբը (1854-1920 թթ.) եղել է գյուղի քահանան: Բուրխանիեն սկզբնապես ունեցել է 65 ծուխ, որոնք ժամանակի ընթացքում հասել են 100-ի:



Խուղիի բաճանները՝ պապա Գիմիտրիոսը (ձախից) և պապա Կիրիակոսը՝ երկուսն էլ նահատակված 1920 թ.

Վերևում գյուղի մանկավարժները (ձախից աջ)՝ Թ. Պապադոպոսը, Պ. Պախալիդիսը, Ի. Պապակիրիակոսը, 1912 թ.

\* Գ. Պախախկոսի մասին հակիրճ տես Ղազարյան, «Հայ հոռոմներ», էջ 184:

54 Տես Բարթիկյան, «Հայ-հոռոմները», էջ 245: Ըստ Մ. Գասապյանի՝ Իզմիրի հայ հոռոմների եկղզ. պաշտամունքը ժամակարգություն ժամանակին կատարվել է հայտնեն (տես Ֆարհատ, «Հայ-Հոռոմներ», Գ, էջ 1):

55 Տես КМЭ/АПП, фάκελος В39:

56 Տես Китроμηλίδου, «Πασχαλίδης», էջ 244-245, 251:

57 Տես Ֆարհատ, «Հայ-Հոռոմներ», Գ, էջ 2:



Խուղիի Սբ. Փնորգ եկեղեցու ներսը

Բուրխանիեյի եկեղեցին նվիրված է եղել Սբ. Աստվածածնի ննջմանը: Եկեղեցու կառուցման համար հանգանակության մեջ շրջել է Խուղիի քահանա պապա եղիան: Նրան գումար է հատկացրել նաև Հայ Առաքելական Եկեղեցու Նիկոմեդիայի առաջնորդը, որն ի դեպ զարմանքով է տեղեկացել «հայախոս հույների» գոյության մասին: Եկեղեցում պաշտամունքը կատարվել է հունարեն՝ առանց հասկանալու, իսկ Ավետարանն ու առաքելական թղթերը թուրքերեն են ընթերցվել: Գյուղացիներն օգտվել են նաև կարամանլերեն հոգևոր գրականությունից:

Բուրխանիեյիների հայերենը՝ տարածաշրջանի մյուս հայ հոռոմների պես, Ակնի բարբառն է եղել, սակայն հայերեն գրել-կարդալ չեն իմացել, իսկ հունարենը միայն դպրոցում են սովորել<sup>58</sup>:

58 Տե՛ս ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος Β37:

59 Տե՛ս ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος Β33:

60 Տե՛ս Ֆարհատ, «Հայ-Հոռոմները», Գ, էջ 2:

61 Տե՛ս ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος Β13: Նույն այս ծրարում ֆնդիկեցի տեղեկատուները պատմել են, թե Ֆնդիկին հիմնել են

Սակավաթիվ հայություն գոյություն է ունեցել նաև Փեյվեում: Հնում այստեղ բնակվելիս են եղել կրետացի հույներ, սակայն մոտավորապես XVIII դ. կեսերին, Սանգարիոս գետի հեղեղման ժամանակ շատերը խեղդվել են, և բնակավայրն անկում է ապրել: Դրանից ինչ-որ ժամանակ անց Փեյվե են եկել նորեկները՝ Կոստանդնուպոլսից, Օրթագյուղից, Ադաբազարից, Հոդուսից, որոնք նոր շունչ են տվել բնակավայրին: XX դ. սկզբին 5000-ոց թուրք բնակչություն ունեցող ավանում կար մոտ 10-15 հայ հոռոմ ընտանիք՝ 70 շնչով, և գրեթե նույն թվով՝ առաքելական հայեր: Փեյվեն ոչ մի եկեղեցի չունեի<sup>59</sup>:

Իզմիթի նահանգի մյուս հայ հոռոմ գյուղերից էին Քյուպը (շուրջ 60-80 ծուխ) և Շաշլին (40 ծուխ), որոնք ունեցել են իրենց եկեղեցիները: Բացի դրանից, օրթագյուղցիներն առանձին թաղամաս են ունեցել Ադաբազարում: Ինչ վերաբերում է կրթական իրավիճակին, ապա XX դ. սկզբին Բուրխանիեյի դպրոցն ուներ 40 աշակերտ, Քյուպինը՝ 50, Շաշլինը՝ 35, իսկ Փեյվեյինը՝ մոտ 20 երկու սեռի սաներ<sup>60</sup>:

Շուրջ 1744-1753 թթ. Իզմիթի նահանգի Կանդրա սանջակությունում՝ Ադաբազարից չորս ժամ հեռավորությամբ, դեպի հյուսիս-արևելք, հիմնվել էր Ֆնդիկի գյուղախումբը՝ բաղկացած չորս գյուղերից: Դրանք էին Փափազ, Աենդ, Կադար և Աշաա (Վարի գյուղ կամ Ներքին Ֆնդիկի) գյուղերը<sup>61</sup>: XX դ. սկզբին

Ֆնդկլեցիների թիվը հասնում էր շուրջ 300 ընտանիքի<sup>62</sup>: Մասնավորապես, Ալեքսանդր ու Փափազը միասին ունեին 170 ընտանիք, Կաղարը՝ 90, Վարի Գյուղը՝ 63, ընդհանուր՝ 323 հայ հոռոմ տուն, հետևաբար, շուրջ 1615 հոգի: Վարի Գյուղում կար նաև 15 առաքելական հայերի տուն<sup>63</sup>:

Ֆնդկլին մտել է Քաղկեդոնի մետրոպոլիտոսի կազմի մեջ: Փափազն ու Ալեքսանդր մոսկովիթյան պատճառով ունեցել են մեկ ընդհանուր եկեղեցի՝ Սբ. Գևորգը: Կաղարի եկեղեցին նվիրված է եղել Սբ. Գեմետրիոսին, իսկ Վարի Գյուղին՝ Սբ. Աստվածածնի ննջմանը:

Պաշտամունքը կատարվել է հունարեն կամ կարամանլերեն: Հարսանեկան երգերը հայերեն են եղել<sup>64</sup>: Ֆնդկլիի հայ հոռոմները սերտ կապեր են ունեցել Աղարազարի հայության հետ, ինչն ապահովել է նրանց հայերենի պահպանությունը<sup>65</sup>:

Ֆնդկլիի շրջանում են գոյություն ունեցել Սբ. Կոստանդին և Սբ. Խարալամպոս մատուռները: Սբ. Խարալամպոսի տոնը ուղղափառ և առաքե-

լական հայերը նշել են ամռանը, համատեղ տոնակատարությունը<sup>66</sup>:



Օրթազյուղի «Ուղղափառություն» ընկերությունը, 1910 թ.  
Կենտրոնում Օրթազյուղի Բահան պապա Անգելոսն է

## ԻԶՄԻԹԻ ՀԱՅ ՀՈՌՈՄՆԵՐԻ ՀԵԼԼԵՆԱԿԱՆԱՅՈՒՄԸ

XVIII դ. սկզբից Օսմանյան տերությունն ուղղափառ քրիստոնյաներին ճանաչում էր որ-

ինն ընտանիքներ՝ այբանացի, բուլղար և լազ: Այս սրանց են միացել Ակնից եկած առաքելական հայերը: Նրանք կառուցել են հայկական եկեղեցի և տեղացիները, շունեմալով սեփական աղոթատունը, հանախել են այդ եկեղեցին, որտեղ և յուրացրել են հայերենը: Հետագայում հայերը, բացառությամբ 17 ընտանիքների, լել են Ֆնդկլին, և այնտեղ մնացել են միայն բնիկները: Քանի որ Ֆնդկլիում կանանց պակաս է եղել, նրանք կնության են առել օրթազյուղցի աղջիկների: Այս տեղեկությունները սակայն, դժվար թե համապատասխանեն իրականությանը և ամենայն հավանականությամբ՝ հերթական փորձ են՝ կոծկելու հայ հոռոմների հայկական ինֆնությունը, հատկապես այն պարագայում, երբ շարժելից մազապուրծ եղած հայ հոռոմները հաստատվել էին Հունաստանում:

62 Տես Κλέωντος, Βιθυνικά, էջ 155:

63 Տես Ֆարհատ, «Հայ-Հոռոմները», Զ, էջ 1:

64 Տես ΚΜΣ/ΑΠΠ, φάκελος Β13:

65 Տես Ֆարհատ, «Հայ-Հոռոմները», Զ, էջ 1:

66 Տես ΚΜΣ/ΑΠΠ, φάκελος Β13:



պես «հոռոմներ» (*Rumlar*). այդ տերմինը կիրառվում էր զուտ որպես կրոնական ինքնութ-  
յան ցուցիչ՝ այս կամ այն օրթոդոքս անձի ազ-  
գությունից անկախ<sup>67</sup>:

XIX դ. կեսերից կայսրությունը որդեգրեց  
օսմանականության գաղափարախոսությունը,  
համաձայն որի՝ իր բոլոր քաղաքացիները,  
անկախ ազգութունից, լեզվից ու կրոնից,  
կազմում են մեկ ազգ՝ օսմանցի<sup>68</sup>: Օսմանակա-  
նությանը գրգռեց ազգայնական շարժումները  
Բալկաններում, Միջին Արևելքում և Արևմտյան  
Հայաստանում<sup>69</sup>:

Այս գործընթացները զուգորդվում էին գա-  
ղափարախոսական մեկ այլ շարժմամբ՝ «Հու-  
նական մեծ գաղափարով»: Վերջինս ծնվել էր  
1821 թ. Հունական ազատագրական ապստամ-  
բությունից հետո, որով հիմնվեց Հունաստանի  
թագավորությունը և սկիզբ դրվեց Հունաստա-  
նի աստիճանական ազատագրմանը օսմանկան  
լծից: Այդ հաջողությունները հույս էին տալիս  
առ այն, որ ապագայում հնարավոր կլինի իս-  
պառ վերացնել թուրքական բռնապետու-  
թյունն ու վերականգնել երբեմնի Բյուզանդիան:  
Սակայն առանց թուրքահպատակ ուղղափառ  
բնակչության հոգևոր, մտավոր մակարդակը  
բարձրացնելու և ազգային միասնական ինք-  
նագիտակցության բերելու դա հնարավոր չէր:  
«Հունական մեծ գաղափարը» XIX դ. երկրորդ

կեսերից գնալով տարածում գտավ հույն մտա-  
վորականության ու հոգևորականության մեջ,  
ընդ որում այդ ժամանակահատվածի գործըն-  
թացների համատեքստում, երբ «հոռոմն» ու  
«հույնը» նույնացվում էին, ուղղափառ քրիս-  
տոնյաներին սպասվում էր մեկ բան՝ հելլենա-  
կանացում: Այդ գործին լծվեցին ոչ միայն մտա-  
վորականները, այլև բարձրաստիճան հոգևո-  
րականներ:

Ազգայնական տրամադրությունները հատկա-  
պես ուժգին էին Բալկաններում՝ ուղղված լինե-  
լով նաև հույն հոգևորականության և ազնվակա-  
նության դեմ. այսպես, 1870 թ. բուլղարացիները,  
ստանալով սուլթանի արտոնությունը, անջատվե-  
ցին Պոլսի պատրիարքությունից («Բուլղարական  
հերձված») և առանձին անկախ ազգային-եկե-  
ղեցական միավոր ստեղծեցին այսպիսով հիմք  
գնելով բուլղարական պետության ստեղծմանը  
(1878 թ.): Սրանով ստեղծվեց ուղղափառ դավա-  
նանքով մեկ այլ համայնք՝ «բուլղար միլլեթ», որն  
անջատվում էր «հոռոմ միլլեթը». ըստ այսմ՝ այն  
բուլղարները, որոնք շարունակում էին ճանաչել  
Պոլսի պատրիարքի իշխանությունը, չէին համար-  
վում «բուլղար», և ընդհակառակը, այն հույները,  
որոնք ընդունեցին Բուլղար եկեղեցու իշխանու-  
թյունը, համարվեցին ոչ թե «հոռոմ» այլ՝ «բուլղար-  
ներ»<sup>70</sup>: Սա իր հերթին հանգեցրեց ազգայնամո-  
լությունն ուր դրսևորման. եթե բուլղարացիները

67 Տե՛ս Κονόρτας, *Οθωμανικές*, էջ 303:

68 Տե՛ս Сафрастьян, *Доктрина османизма*:

69 Տե՛ս Κονόρτας, *Οθωμανικές*, էջ 304:

70 Տե՛ս Κονόρτας, *Οθωμανικές*, էջ 307:



Խուլի գյուղը XX դ. սկզբին

Բալկանների բոլոր սլավոններին սկսեցին բուլղար համարել, ապա հույները Պուլսին ենթակա բոլոր «հոռոմներին» հույն համարեցին<sup>71</sup>: Առաջ եկավ «հոռոմի» և «հույնի» թյուր նույնացումը, որն արտահայտվում էր նաև եվրոպական պաշտոնական փաստաթղթերում, որտեղ թուրքերեն *Rum*-ի դիմաց գրվում էր *Greek*<sup>72</sup>:

Ահա այսպես, XIX դ. վերջից Իզմիթի հայ հոռոմները հայտնվեցին պանհելլենականության քարոզչամեքենայի ուշադրության կենտրոնում: Չունենալով կրթական անհրաժեշտ մակարդակ, միլլեթային դրվածքի պատճառով բավականին անջրպետված լինելով մնացյալ հայությունից և անմիջական ենթակայության տակ լինելով հույն հոգևորականությունից՝ Բյութանիայի օրթոդոքս հայերը շունեին որևէ ազդու միջոց՝ ընդդիմանալու այդ պրոպագանդային, որը համընկավ համիդյան հայասպան քաղաքակա-

նությունը, երբ սուլթանը, մի կողմից կոտորելով հայերին, մյուս կողմից ցուցադրաբար փառաբշում էր հույներին, այդպիսով բացառելով հայհունական համագործակցության ու փոխօգնության որևէ հեռանկար<sup>73</sup>:

Այդ պարագայում, ուղղափառ հայերն իհարկե շահագրգռված էին «հույն» համարվելու, քան թե սպանդի ենթակա «էրմենի»: Հունական քարոզչամեքենայի ազդեցիկ միջոցները դարձան դավանական խտրության շեշտումն ու հունարեն լեզվի տարածումը: Արդյունքում սրվեցին Օրթոդոքսի ուղղափառ և առաքելական հայերի փոխհարաբերությունները, ընդ որում կրոնական Ֆանատիզմի հողի վրա ատելությունը, որ երբեմն արյունալի հետևանքներ է ունեցել, հրահրվել է երկու կողմերի հոգևորականության կողմից<sup>74</sup>:



Օլիմպոս լեռան լանջերին փոված Օրթոդոքս՝ Սբ. Գևորգ ուղղափառ եկեղեցիով, XX դ. սկիզբ

71 Տես Κονόρτας, *Οθωμανικές*, էջ 308:

72 Տես Κονόρτας, *Οθωμανικές*, էջ 310:

73 Տես Χασιώτης, *Αδελφά έθνη*, էջ 154-159:

74 Տես Ֆարհատ, «Հայ-հոռոմները», Գ, 1-2:



Հովակիմ մետրոպոլիտ Ապոստոլիդիսը (1883-1962 թթ.)

Մազումով Օրթոդոքսի հայ հոռոմներից: Եղել է Հովակիմ III տիեզերական պատրիարքի զարմիկը: Ուսանել է Խալկիի Տեմարանում և Փարիզում: 1914 թ. եպիսկոպոս է ձևանադրվել և պայքար մղել երիտթուրքերի դեմ, ինչի համար էլ մահվան է դատապարտվել: Գնդակահարությունից խուսափելով՝ 1923 թ. Նշանակվել է Սերվիայի և Կոզանիի (Հունաստանի Արևմտյան Մակեդոնիա մարզ) մետրոպոլիտ: Հունաստանի գերմանական բռնադավթման տարիներին եղել է հյուսիսային Հունաստանի ազգային-ազատագրական պայքարի ղեկավարներից մեկը: 1943 թ. այս գործունեության համար Հովակիմ մետրոպոլիտն անարդարացիորեն կարգազուրկ է հռչակվել Հելլադայի Եկեղեցու Սինոդի կողմից: Հետագայում՝ 1957 և 2000 թթ. նա լիովին արդարացվել է:<sup>75</sup>

**XX դ. սկզբին իզմիթցի հայ հոռոմները, թեպետ արդեն կորցրել էին իրենց հայկական ինքնագիտակցությունը, ամեն կերպ ծածկում էին իրենց իրական ծագումը և իրենք իրենց հույն**



Ալեքսանդր մետրոպոլիտ Իմնապոլոս (Իմնոլլի, 1876-1942 թթ.)

Մազում է Քաղըքյոյի հայ հոռոմներից: Ավարտելով Խալկիի հոգևոր ճեմարանը՝ 1918 թ. մեկնել է Ամերիկա, որտեղ շորս տարի անց հիմնել է Ամերիկայի հույն ուղղափառ արքեպիսկոպոսությունը և դարձել դրա առաջին թեմակալ առաջնորդը: 1930 թ. ընտրվել է Կերկիրա (Կորֆու) կղզու մետրոպոլիտ և այդ պաշտոնում մնացել ընդհուպ իր վախճանը:<sup>\*\*</sup>

**համարում, այնուամենայնիվ պահում էին հայ ինքնությունից գլխավոր կրողը՝ հայոց լեզուն: Այն դարձավ պանհելլենականության քարոզչության հիմնական թիրախը: Հայոց լեզուն հետապնդվում էր հասարակական վայրերում ու դպրոցներում, հայերեն խոսելու համար սահմանված էր դրամական տույժ<sup>75</sup>: Եվ նույնիսկ այդ միջոցները**

\* Տես Փեթրոս, *Միտրոպոլիտից*:

\*\* Տես «Αλέξανδρος»:

75 Տես Ֆարհատ, «Հայ-Հոռոմները», Ե, էջ 2: Ահա այսպես է, որ հույն ուսումնասիրողների մեջ, հարկավ նույն հայ հոռոմների միջոցով, տարածում է գտել այն կարծիքը, թե հայ հոռոմները ոչ թե ուղղափառ հայեր են, այլ՝ հայախոս հույներ: Այդ կարծիքը միայն մի որոշ մասով է արդարացի, եթե նկատի ունենանք հայ հոռոմների ու հույների միջև պատահած ամուսնությունները, սակայն հայ հոռոմների ողջ երևույթը («հայախոս հույների») հանգեցնելը միանշանակ սխալ է: Հայ հոռոմների ազգային ինքնության խնդրին հանգամանալից անդրադարձել ենք առանձին հրատարակմամբ. տես Լազարյան, «Հայ հոռոմներ»:

Հին կարողանում վերջանակորեն արմատախիլ անել հայ հոռոմների մայրենին:

XX դ. սկզբում, երբ քրիստոնյաների պա-  
րանոցին գնալով ավելի սեղմվեց թուրքական  
կախազանի պարանը, հույների ու հայերի մեջ  
փոխօգնություն ու սերտ համագործակցման կո-  
չեր ու քայլեր կատարվեցին: Այդ գաղափարնե-  
րի կրողն էր Հովակիմ III տիեզերական պատ-  
րիարքը (1878-1884, 1901-1912 թթ.): 1912  
թ. հունվարի 1-ին, այցելելով Կ. Պոլսի հայոց  
պատրիարք Հովհաննես Արշարունուն (1911-  
1913 թթ.), հայասեր տիեզերական պատրիար-  
քը համաձայնություն կայացրեց առ այն, որ  
իզմիթցի հայ հոռոմ պատանիներ կրթություն  
ստանան Արմաշի նշանավոր դպրեվանքում:  
Ըստ կայացած համաձայնության՝ այդ սերուն-  
դը կոչված էր դառնալու այն կրթյալ կամուրջը,  
որն իր նպաստը պիտի բերեր հայ-հունական  
համագործակցությանը, Ուղղափառ և Հայ Առա-  
քելական Եկեղեցիների կապերի ամրացմանն  
ու վերջնական միությունը<sup>76</sup>: Դժբախտաբար,  
պատմությունն ընթացավ մի այլ՝ թե՛ հայերի,  
թե՛ հույների համար ողբերգական ծրագրով:

## ՀԱՄԻԴՅԱՆ ԶԱՐԴԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԱՂԵՏ

1895 թ. Օսմանյան կայսրության մեջ սուլ-  
թան Աբդուլ Համիդ II-ի (1876-1909 թթ.) հրա-

մանով իրականացվեցին հայկական ջարդերը,  
որոնց զոհ գնացին 300 000 հայեր: Նույն թվա-  
կանին քրդերը ջարդեր կազմակերպեցին Չմշ-  
կածազի հայկական գյուղերում: Մամսացիներ-  
ը, բավականաչափ զենք ու զինամթերք ունե-  
նալով, միասնաբար մարտնչեցին հրոսակների  
դեմ՝ ունենալով մարդկային զոհեր: Մարտերի  
ընթացքում ընկած հայ հոռոմներից հայտնի են  
Թումոյի և Նիկոլ Պապայանի անունները: Այդու-  
հանդերձ, քրդերի հարձակման ժամանակ հայ  
հոռոմները թալանի շենթարկվեցին, ավելին՝  
նրանցից ոմանք համագործակցեցին թշնամու-  
հետ<sup>77</sup>: Ջարդերից հետո Չմշկածազի հայ հոռոմ-  
ների ինդրկիկ գյուղի 8 ընտանիքների մի մասը  
Մամսա տեղափոխվեց, մյուս մասն արտագաղ-  
թեց, և այսպիսով գյուղը վերացավ<sup>78</sup>:

Նույն այս ժամանակ Հողուսի բնակիչնե-  
րը վերահաս բնաջնջումից փրկվելու համար  
դիմեցին իրենց բարեկամին ու պաշտպանին՝  
երզնկայում բնակվող դատապաշտպան Փա-  
նիկ Էֆենդի կամցիդիսին: Վերջինիս հաջողվեց  
համոզել թուրքական իշխանություններին, որ  
հողուսցիները ոչ թե հայեր են, այլ հայախոս  
հույներ, և այդպիսով գյուղը փրկվեց կոտորա-  
ծից<sup>79</sup>:

1896 թ. սեպտեմբերին հրով ու սրով բնաջնջ-  
վեց Ակն քաղաքի հայ բնակչության մեծագույն  
մասը, որից հետո քաղաքում մնացին մոտ 150  
հոգի՝ կանայք ու ծերունիներ: Կոտորածներն

76 Տես Χασιώτης *Αδελφά έθνη*, էջ 482-483:

77 Տես Գասպարեան, *Չմշկածազ*, էջ 382-383, 660:

78 Տես Գասպարեան, *Չմշկածազ*, էջ 282-283:


79 Տես Գասպարեան, «Բարձր Հայքի», ս. 375-376:

ու թալանը շարունակվեցին Ակնի գյուղերում՝ զոհերի թիվը հասցնելով շուրջ 3000-ի<sup>80</sup>:

Ակնի կոտորածների մասին հունական «Էստիա» թերթը 1896 թ. սեպտեմբերի 3-ի համարում գուժում է. «Հստ Կոստանդնուպոլսից ստացված մեր նոր տեղեկատվության՝ Փոքր Ասիայի վերջին անհանգստության վերաբերյալ, կոտորվածների մեջ են 800 հայ հոռոմներ, այսինքն՝ ուղղափառ հայեր, որ էգիհի մոստակայքում են բնակվում, և 1500 մաքուր հայեր<sup>81</sup>»:

Ջարդերից հետո Ակնի հայ հոռոմ գյուղերում վերացվեց հայերեն ժամասացությունը. այն փոխարինվեց կարամանլերենով<sup>82</sup>:

Համիդյան կոտորածներն ընդամենը նախաշեմն էին այն ամենի, ինչը պիտի տեղի ունենար 1915 թ. սկսյալ: Իսկ մինչ այդ՝ 1908 թ. ընդունվեց երիտթուրքական Սահմանդրությունը,



«Էստիա» թերթի փառաբանությունը

որի համաձայն թուրքական բանակ պարտադիր պիտի զորակոչվեին նաև քրիստոնյաները: Այս «ժողովրդավարական» նորամուծությունը քրիստոնյաների մեջ արտագաղթի նոր ալիք բարձրացրեց: Այսպես, վանքցի շատ ընտանիքներ 1908 թ. հետո Պոլիս գաղթեցին: Թուրքերը 80-100 լիրի գիմաց ուզում էին գնել հայ հոռոմների տները, բայց միայն 12 թուրք ընտանիքների հաջողվեց հաստատվել Վանքում: Մնացած տները հայ հոռոմները գերադասեցին պարզապես կողպել ու հեռանալ: 1914 թ. Վանքում մնացել էին 45 տուն հայ հոռոմներ<sup>83</sup>: Նույն թվականին Շրգույի հայ հոռոմներից շատերը բռնեցին գաղթի ճանապարհը, իսկ ավելի ուշ գաղթածների տներն ու ունեցվածքը իշխանությունների որոշմամբ գաղթեցին թուրքերը<sup>84</sup>:

1915 թ. հայոց Մեծ եղեռնի ժամանակ Արևմտյան Հայաստանի հայ հոռոմները ջարդերից զերծ մնացին այն պատճառով, որ նրանք ոչ թե «էրմենի», այլ «Ռում» միլլեթի անդամներ, այսինքն՝ հույներ էին էին համարվում: Նրանց վիճակված է հայոց բնաջնջման լուռ ու անօգնական վկան լինել: Ակնի հայության մնացորդացը կոտորելուց հետո թուրք ջարդարարները նրանց մարմինները եփրատն էին գցում, ինչից գետի գույնը փոխվեց:

80 Տե՛ս Քէլեան, Ակն, էջ 737:  
81 Նշված թվերի եզրությունը տարակուսելի է, քերևս զոհերի թիվը շփոթվել է ակնցի հայ հոռոմների ընդհանուր թվի հետ. 1880 թ. վիճակագրության համաձայն՝ նրանց թիվը մոտ 530-ի էր հասնում, իսկ ըստ Հ. Ճանիկյանի տրամադրած թվերի վերլուծության՝ մոտ 800-ի: Բայց ամեն դեպքում հայ հոռոմների զոհերը նրանց ընդհանուր թվի հետ համեմատած պիտի որ զգալի եղած լինեն: Հնարավոր է նաև, որ «Էստիայի» սույն տեղեկության մեջ հաշվի են առվել նաև չմշկածագցի հայ հոռոմները:  
82 Տե՛ս Բարթիկյան, «Հայ-հոռոմները», էջ 257:  
83 Տե՛ս ԿՄՏ/ԱՅՍ, φάκελος ΧΕ1:  
84 Տե՛ս ԿՄՏ/ԱՅՍ, φάκελος ΧΕ3:

Դիակներն այնքան շատ էին, որ գետի ստորին հոսանքի գյուղերից բողոքեցին, և դրանից հետո դիակներն սկսեցին թաղել: Հայ հոռոմների հուշերով՝ «Մի ամիս շարունակ ջրերով իջնող նրանց (հայերի) ուռած դիակներն էինք տեսնում: Ահավոր հոտ էր գալիս: Այդ ժամանակվանից շուգեցինք գետից ձուկ ուտել»<sup>85</sup>:

Մինչև 1916 թ. Մուշեղկայում երկու հայ առաքելական ընտանիքներ կային. «Այն ժամանակ նրանց հանեցին ու կոտորեցին, ու հայկական շունչ չմնաց, հույներն էլ (իմա՝ հայ հոռոմները- Գ. Ղ.) հեռացան՝ ավելի լավ բախտ գտնելու»<sup>86</sup>:

Հայոց կոտորածներից հետո թուրքական հսկիչները Ակնի հայ հոռոմ գյուղեր ժամանեցին ու ոչնչացրեցին հայերեն դասագրքերը: Հայոց լեզվի ուսուցումը խստիվ ու մեկընդմիջտ արգելվեց<sup>87</sup>:

Յավով պետք է արձանագրել, որ ըստ պահատեսների՝ Մամսայի հայ հոռոմները թուրքերի ձեռքին գործիք են դարձել՝ գյուղի հայերին զինաթափելու գործում: Ավելին, նրանցից յոթ հոգի ուղեկեցել են հայ տղամարդկանց մահվան շարանը և Եփրատի ափին տանջամահ են արել Մամսայի քահանա տեր Սամուել Աճեմյանին<sup>88</sup>:

Մղձավանջային այս օրերին Հողուսի վերջին քահանային՝ պապա Նիկոլ Փափազօղլիին հաջողվեց իմանալ թուրքական սպայակույտի գաղտնի հրահանգը, որի համաձայն հողուսցի-

ները պիտի տեղահան արվեին ու բռնեին Մեծ եղեռնի մահվան քարավանների ուղին: Պապա Նիկոլը շտապ կապ հաստատեց քուրդ ցեղապետերի հետ և, գումար ուղարկելով նրանց, պայմանավորվեց փրկել գյուղացիներին: 1916 թ. հոկտեմբերի 28-ին 300 զինված քրդեր հասան Հողուս, գերեվարեցին գյուղ մտած թուրքական պահակազորին, որը պիտի իրականացներ գյուղացիների «տեղահանումը»: Քրդերն սպանեցին թուրքերի հրամանատարին և հայ հոռոմներին ձյունապատ սարերի, քրդական գյուղերի միջով հասցրեցին մինչև ռուսական զորքերի դիրքերը: Ռուսներն հողուսցիներին ընդունեցին ու տարան Երզնկա, որն այդ ժամանակ գրավված էր ռուսական զորքերի կողմից: Երզնկայում հայ հոռոմների խնամքն ստանձնեց ռուսական Կարմիր խաչը: Սակայն հողուսցիներին վիճակված չէր ապահովությունը. 1918 թ., երբ ռուսական զորքերը բռնեցին նահանջի ուղին, ճարահատյալ հայ հոռոմները հունվարյան սառնամանիքի պայմաններում հետիոտն հետևեցին նրանց: Այդ ճանապարհին շատերը մահացան ցրտից, հիվանդություններից ու քրդերի հարձակումներից: Ողջ մնացածները սփռվեցին հարավային Ռուսաստանի ու Կովկասի տարբեր քաղաքներով, հիմնականը մասը՝ Նովոռոսիյսկում<sup>89</sup>:

Արդեն 1912 թ. թուրքերն սկսեցին խժոժույթ-

85 Տես ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος ΧΕ2:

86 Տես ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος ΧΕ2:

87 Տես ԿՄՏ/ԱՊՊ, φάκελος ΧΕ1:

88 Տես Գասպարեան, *Զմշկածագ*, էջ 423, 245: Այս ոճրագործության հավանական պատճառի մասին տես Ղազարյան, «Հայ հոռոմներ», էջ 130:

89 Ղազարեան, «Բարձր Հայքի», ս. 367-368, 377-378:



Օսմանյան խորհրդարանի պատգամավոր իզմիթցի հայ հոռոմ Անաստաս Միխայիլիսը կնոջ՝ Կիրիակի Քիլիջոլույի (Քնարիկ Քիլիջյան) և զավակների հետ  
4. Պոլիս, 1910 թ.

յուններ սերմանել Իզմիթի հայ հոռոմների և առաքելական հայերի միջև: Մասնավորապես, Գեյվեյում թուրքերը դրդեցին հայերին՝ աշխատանքից հեռացնել հայ հոռոմներին, խուսափել նրանց հետ շփումից: Ի վերջո գեյվեցի հայ հոռոմներն ստիպված եղան լքել բնակավայրը՝ հաստատվելով Օրթագյուղում<sup>90</sup>:

1915 թ. Հայոց եղեռնի ժամանակ իզմիթցի հայ հոռոմները բնականաբար շտուժեցին, սակայն դա ապահովության միայն ժամանակավոր խաբկանք էր. 1920 թ. ամռանը թուրքերը հաշված օրերում զանգվածաբար կոտորեցին

90 Տես КМЭ/АΠΠ, φάκελος Β33:

\* Տես Χατζηγεωργίου, Τὸ Ὀρτάκιοϊ, էջ 7:



Անգելոս Բահանա Դիմիտրիադիս (Դիմոյան)  
Օրթագյուղի վերջին քահանաներից

1920 թ. կոտանքներից հետո արքայվել է Խարրերդ, որտեղ և կնքել է իր մահկանացուն:<sup>91</sup>



Հ. Գևորգ Պապադոպոլոս (Փափազյան)  
Օրթագյուղի և Խուլիի քահանան, ուսուցիչ Թ. Պապադոպոլոսի հայրը

Նահատակվել է 1922 թ. Քլոթիայում՝ բազմամսյա գերությունից հետո:



Հ. Խարալամպոս Ապրիկիդիսը (Ափրիկյան, ծնվ. 1884 թ.)

Հունաստանի Վեոխա շրջանի Ամմոս գյուղում՝ հիմնված Օրթագյուղի և Խոսիի՝ շարդեից փրկված հայ հոռոմների կողմից

Հայր Խարալամպոսն ավարտել է Խալկիի Աստվածարանական գաղթոցը, 1909 թ. քահանա է ձեռնադրվել Նիկիո Վասիլ մետրոպոլիտի (հետագայում՝ տիեզերական պատրիարք) ձեռամբ՝ նշանակվելով Օրթագյուղում: Առաջին անգամ ձերբակալվել և կախաղանի է դատապարտվել էջրի-Շեհիրում 1919 թ., սակայն նրան հաջողվել է փրկվել մահապատժից: Հաջորդ տարի՝ Օրթագյուղի կոտորածի ժամանակ, չեթները սպանել է նրա երեցկնոջը և երեք զավակներին: Մի կարճ ժամանակով՝ մինչև 1922 թ. Փոքրասիական աղետը, հ. Խարալամպոսը ծառայել է Քյոթահիայում, այնուհետ՝ գաղթել Հունաստան՝ հաստատվելով Քսանթիում, ապա՝ 1925 թ. Կոմոտինիում, որտեղ ստացել է արքեմանդրիտի աստիճան և ապա նշանակվել Մարոնիայի և Թասոսի թեմի զիվանապետ: Մահվան տարեթիվն ու թաղման վայրն անհայտ են:

**Իզմիրի շուրջ 10 000 հայ հոռոմներին<sup>91</sup>: Բժիշկ Վ. Ադամանդիադիսի վկայությամբ. «Այս ողջ բնակչությունը ... մոտավորապես տասնհինգ հազար բնակիչներով, կուտակվեց Կարա Չայ**

(Սանգարիոս) գետի մոտ գտնվող քարավանատներում: Այնտեղ խոշտանգվեցին, պատվազրկվեցին և ի վերջո մորթվեցին չեթների ձեռքով, որոնց օժանդակում էր տեղի թուրք բնակչությունը: Ասում են, որ կոտորածը տևել է երեք օր: Պատահաբար շրջակա անտառներում ապաստան գտած բնակչության մնացորդները հետապնդվեցին շների օգնությամբ, իսկ ձերբակալվածներին պատվազրկելու հետ մեկտեղ անդամաահատեցին»<sup>92</sup>: Սոսկայի կոտորածից փրկվեցին շատ քեր, օրինակ՝ Բուրխանիեյի 600 բնակիչներից հաջողվել է վերապրել միայն 50-ին:

1923 թ. հունվարի 1-ին կնքված Լոզանի պայմանագրով Հունաստանի և Թուրքիայի բնակչության փոխանակման համաձայնություն կնքվեց: Ըստ դրա՝ Թուրքիայի ուղղափառ բնակիչները պիտի գաղթեին Հունաստան, իսկ վերջինիս մահմեդականները՝ Թուրքիա: Ահա այսպես հայ հոռոմների սակավաթիվ մնացորդները՝ շուրջ 1 500 000 փոքրասիացի հույների հետ Հունաստան գաղթեցին:

1924 թ. Հունաստան ժամանեցին ընդամենը 25 հայ հոռոմ ընտանիքներ Վանքից, 35 ընտանիք Մուշեղկայից, 10-ական ընտանիքներ Չորակից ու Շրգուից (50 հոգուց բաղկացած): Շրգուից 5 ընտանիք գաղթեց Դամասկոս, մի քանիսն էլ՝ Կոնստանդնուպոլիս<sup>93</sup>:

\* Տես BX. 41, 2022, էջ 6.

91 Տես Բարթիկյան, «Հայ-հոռոմները», էջ 257-258: Հմմտ. Ղազարյան «Հայ-հոռոմները», էջ 135-135: Օրթագյուղի կոտորածների մասին մանրամասն պատմել է վերապրած օրթագյուղցի Խ. Հաջյանը (Հաջիգեորգիուն) իր հուշապատումի մեջ (տես Χατζηγεωργίου, Τὸ Ὀρτάκιον):

92 Ἀδαμαντιάδης, «Ἐκθεσις», էջ 47-48:

93 Տես ΚΜΣ/ΑΠΠ, φάκελος Χ3:





Ակնցի հայ հոռոմները, XX դ. սկիզբ  
 Հողհորականներից ձախից առաջինը Գրիգոր ք'ն Փափազազլին է,  
 մյուս երկու հողհորականների ինքնությունն անհայտ է



Ակնցի հայ հոռոմ Հովսեփ Քոռոսյանը (Քեռորիդիս)  
 իր ընտանիքով, XX դ. սկիզբ

Հունաստանում ակնցիները բնակության վայր ընտրեցին էվիա (էվբեյա) կղզու Կաստանիոտիսսա գյուղի շրջակայքը՝ իրենց հայրենիքը հիշեցնող բնությունն ունենալու պատճառով: Այստեղ նրանք հիմնեցին Նեա էգին (Նոր Ակն) գյուղը, որը 1928 թ. ուներ 207 բնակիչ: Հետագայում գյուղը միաձուլվեց հարևան Կաստանիոտիսսային:

1924 թ. մամսացի 35 ընտանիքներ՝ պապա Անդրեաս քահանայի գլխավորությամբ հաստատվեցին Հունաստանի Կիլիկիա մարզի Շեքարլի բնակավայրում (այժմ՝ Զախարատո, Կիլիկիա մարզկենտրոնից 4,5 կմ. հյուսիս), որտեղ մինչ այդ բնագրվել էին 15 պոնտացի հույների ընտանիքներ: Հետագայում նրանց միացան Վրաստանի Միսգարոյից գաղթած հույներ: Մամսացի 8-9 ընտանիքներ էլ հաստատվեցին տարածաշրջանի Պիկրոլիմնի գյուղում:

Մինչ այդ՝ 1921-22 թթ. հողուսցի 30 ընտանիքներ Նովոռուսիյսկից ժամանեցին նորահո-



Ջորակի Սբ. Նիկողայոս եկեղեցին մեր օրերում  
 Գյուղն այսօր անմարդաբնակ է



Կաստանիոտիսսայի Սբ. Նիկողայոս եկեղեցին՝ կառուցված ակնցի գաղթականների կողմից, հար և նման Ջորալի նույնանուն եկեղեցու

չակ Պոնտոսի հանրապետության մայրաքաղաք Տրապիզոն, իսկ նրանցից 4-ը ժամանակավորապես նույնիսկ վերադարձավ Հողուս: Պոնտոսի անկումից հետո հողուսցիները պապա Նիկոլի գլխավորությամբ մեկնեցին Պոլիս, իսկ այնտեղից էլ Հունաստան, որտեղ բնակություն հաստատեցին Դուդուլար գյուղում (այժմ Սալոնիկի Դիավատա թաղամաս)<sup>94</sup>: Այնտեղ հաստատվեցին մուշեղկացի 6 ընտանիք, ինչպես նաև՝ 87 հույն ընտանիքներ՝ արևմտյան Փոքր Ասիայից<sup>95</sup>: Հողուսցի 15 ընտանիք մնաց Խորհրդային Ռուսաստանում, 2-ը՝ Պոլսում, 4 ընտանիք մեկնեց Բուլղարիա, իսկ 1 ընտանիք՝ Ռումինիա<sup>96</sup>:

94 Տե՛ս Ղազարեան, «Բարձր Հայքի», ս. 368, 378: Հունաստանում հաստատված հողուսցի ընտանիքների ճշգրիտ թիվը հայտնի չէ (տե՛ս Ղազարյան, «Հայ հոռոմները», էջ 137): 1928 թ. Դիավատայում կար 606 բնակիչ:

95 Ղազարեան, «Բարձր Հայքի», ս. 365:

96 Ղազարյան, «Հայ հոռոմները», էջ 137:

97 Տե՛ս Էմμανουηλίδης, *Η Νικόπολη*, էջ 29-31:



Տկն Մարիա Կարայաննին՝ Կաստանիոտիսսայի վերջին հայախոսներից, 2013 թ.

## ԹԵՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XX-XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ

1899 թ. Նիկոպոլսի և Կոլոնիայի մետրոպոլիտ ընտրվեց Պոլիկարպոս Պսոմհադիսը՝ հոգեշունչ ու կրթյալ մի անձնավորություն, որը մեծ ջանքեր գործադրեց իր թեմում բարձրացնելու համար հույների կրթական ու հոգևոր մակարդակը<sup>97</sup>: Պոլիկարպոսն ի թիվս այլ հետազոտությունների, զբաղվել է նաև Հայ Առաքելա-

կան եկեղեցու պատմության ու դավանության ուսումնասիրությանը՝ հեղինակելով «Հայոց եկեղեցին ուղղափառ տեսանկյունից» փոքրածավալ երկը<sup>98</sup>։

Պոլիկարպոսին հաջորդեց Սոփրոնիոսը (1911-1914 թթ.), որի մահվանից հետո Կոլո-



Պոլիկարպոս մետրոպոլիտ  
Պսոմիադիսը (1899-1911 թթ.)

նիայի և Նիկոպոլսի աթոռը չորս տարի թափուր մնաց։ 1914 թ. Սեբաստիո Թատղոսակիր Էպիսկոպոս ձեռնադրվեց Գերվասիոս Սումելիդիսը (1882-1943 թթ.)՝ ծննդով Պոնտոսի Կրոմնի գյուղից։ Գերվասիոսը Նեոկեսարիայի մետրոպոլիտության օգնական Էպիսկոպոսի կարգավիճակն ուներ։ 1919 թ. նա դարձավ Կոլոնիայի մետրոպոլիտ՝ փոխարինելով 1917 թ. Կոլոնիայի առաջնորդ ընտրված, բայց հրաժարված Դորոթեոս Խրիստոփորին<sup>99</sup>։ Արդեն իսկ 1915 թ. սկսվել էին տարածաշրջանի քրիստոնյաների տեղահանություններն ու կոտորածները։ Գեր-

վասիոսն ահռելի ջանքեր գործադրեց քրիստոնյաներին սովից ու զրկանքներից փրկելու համար։ Այսպես, մետրոպոլիտի շնորհիվ կազմակերպվեց դրամահավաք, որին արձագանքեցին անգամ Ամերիկայի հույները։ Ի վերջո, 1921 թ. թուրքերը Գերվասիոսին մեկուսացրեցին վանքերից մեկում։



Գերվասիոս եպս Սումելիդիսը  
(1862-1944 թթ.)

Մի քանի տարի անց մետրոպոլիտը կարողացավ ցեղասպանությունից վերապրածների հետ զաղթել Հունաստան<sup>100</sup>։

Արևելյան Հայաստանի՝ 1828 թ. պարսկական տիրապետությունից ազատվելուց և Ռուսական կայսրությանը միավորվելուց, ինչպես նաև 1877-1878 թթ. Կարսի գրավումից հետո այստեղ ստվարացել էր ուղղափառների թիվը։ Գրանք մեծավմասամբ ռուս զինվորներ էին, Հայաստան տեղափոխված ռուսներ, հույներ ու ասորիներ, ինչպես նաև աննշան թվով Ուղղափառություն ընդունած հայ գյուղացիներ<sup>101</sup>։

XIX դ վերջում Երևանի և Կարսի ուղղափառ

98 Տես Մωμάδης, *Η Αρμενική Έκκλησία*.

99 Տես Πρεμετίδης, *Η Μητρόπολις*, էջ 142-144:

100 Տես Εμμανουηλίδης, *Η Νικόπολη*, էջ 31-32:

101 Դրանք հիմնականում Շիրակի մի քանի գյուղերի բնակիչներ էին, որոնք 1900 թ. վերադարձան Հայ Առաքելական և Հայ Կաթողիկե եկեղեցիների գիրկը (տես Долженко, «Православие», էջ 116):



Պետական Սրբապատկերասրահի ֆոտոգրաֆիա, 1827 թ. Երևան. Եկեղեցի տաճարի մեջ:  
 Etavan. Eglise dans la forteresse.

Պետական Սրբապատկերասրահի ֆոտոգրաֆիա, 1827 թ. Երևան. Եկեղեցի տաճարի մեջ:  
 Etavan. Eglise dans la forteresse.



Կարսի Կարողիկեն (Սր. Առաքելոց)՝  
 վերածված որպես ուղղափառ տաճար, 1905 թ.

համայնքները բաժանված էին չորս՝ Երևանի, Ալեքսանդրապոլի<sup>102</sup> և Կարսի զույգ եկեղեցական վարչությունների՝ բարեկարգությունների (областничество), որոնք ենթակա էին Ռուսաց եկեղեցու Վրաց փոխանորդությանը (նախկին Վրաց կաթողիկոսություն)<sup>103</sup>: Հետաքրքրական է նշել, որ Կարսի նահանգում ռուս հոգևորականությունը ջանքեր էր գործադրում դարձի բերելու տեղի մահմեդականներին<sup>104</sup>:

1907 թ. Կարսի բարեկարգությունը բաժանվեց չորսի առանձին բարեկարգությունների՝ Կարսի, Կաղզմանի, Օլթիի ու Արտահանի<sup>105</sup>:



Երևանի Սր. Նիկողայոս Սֆանչելագործ տաճարը,  
 XX դ. սկիզբ<sup>\*\*</sup>

\* Տես Շանազիզ, Հին Երևանը, էջ 186. Гаспарян, «Церковное», էջ 272-274:

102 Ալեքսանդրապոլի ուղղափառ համայնքները հիմնականում բաղկացած էին ռուսական զինվորականներից (տես Ավագյան, «Ալեքսանդրապոլի»), ինչպես նաև հույներից, որոնց մեջ թերևս փնտրելի է կարնեցի հայ հոռոմների հետքը:

103 Տես Кертох, История, էջ 3:

104 Տես Кертох, История, էջ 7-8:

105 Տես Кертох, История, էջ 9:

\*\* Տաճարի մասին տես Гаспарян, «Церковное», էջ 276-278:



Դավիթան էպս Գովորովը  
(1855-1936 թթ.)

պիսկոպոսությունը):  
Նվիրապետական այս  
միավորի առաջնորդը  
դարձավ Պիմեն էպս  
Պեգովը (1912-1915  
թթ.), որին մեկական  
տարով հաջորդեցին  
Լեոնտի եպիսկոպոս  
Վիմպֆենը, ապա՝  
Դամիան եպիսկոպոս  
Գովորովը<sup>106</sup>:

Այս ժամանակ  
Երևանի փոխանոր-

XX դ. սկզբում  
նվիրապետական նոր  
աթոռ հիմնադրվեց  
Արևելյան Հայաստա-  
նում (Երևանի նա-  
հանգ). 1912 թ. Ռու-  
սիո եկեղեցու Սինո-  
դի որոշմամբ Վրաց  
փոխանորդության  
Քարթլի-Կախեթի թե-  
մի կազմում ստեղծ-  
վեց Երևանի վիկա-  
րիատությունը (քորե-



Լեոնտի էպս ֆոն Վիմպֆենը  
(1873-1919 թթ.)

դություն տարածքում կային ավելի քան 30 ուս-  
սական եկեղեցիներ՝ սփռված Ալեքսանդրապո-  
լում, Կարսում, Երևանում, Սարիղամիշում, Օլ-  
թիում, Ստեփանավանում ևն<sup>107</sup>:

1917 թ. հեղափոխությունից հետո Վրաց  
եկեղեցին անկախություն հռչակեց՝ անջատ-  
վելով Ռուս եկեղեցուց և վերականգնելով իր  
դարավոր Կաթողիկոսությունը: Հարավային  
Կովկասի ոչ վրացազգի ուղղափառների համար  
Ռուս եկեղեցում ստեղծվեց Կովկասյան փոխա-  
նորդությունը, որի կազմի մեջ հավանաբար որ-  
պես առանձին թեմ մտավ Երևանի եպիսկոպո-  
սությունը<sup>108</sup>:

1924 թ. Մոսկվա-  
յի և համայն Ռուսիո  
Տիխոն պատրիար-  
քը (1917-1925  
թթ.) Երևանի և Սու-  
խումի եպիսկոպոս  
ձեռնադրեց Անտոն  
Ռոմանովսկուն, իսկ  
1930 թ. Երևանի թե-  
մի խնամքը հանձն-  
վեց Բաբվի թեմի  
առաջնորդ Սերա-  
ֆիմ էպս Պրոտոպո-  
պովին<sup>109</sup>:



Անտոն աբ Ռոմանովսկին  
(1886-1962 թթ.), 1924-1929 թթ.  
Երևանի և Սուխումի եպիսկոպոս\*

106 Տես Масиель Санчес, «Ереванское викариатство», էջ 594:

107 Տես Масиель Санчес, «Ереванское викариатство», էջ 595-597:

108 Տես Масиель Санчес, «Ереванское викариатство», էջ 594:

109 Տես Масиель Санчес, «Ереванское викариатство», էջ 594:

\* Նրա մասին տես Э. П. Р. «АНТОНИЙ»:

Մի քանի տարի անց՝ 1927 թ., Վրաց եկեղեցում ստեղծվեց Ախթալայի և Բեշթաշենիի եպիսկոպոսությունը, որի կազմի մեջ այլ տարածքների հետ մտան Լոռին ու Տաշիրը<sup>110</sup>: Այսպիսով, Արևելյան Հայաստանում հաստատվեցին երկու օրթոդոքս իրավասություն՝ Ռուսաց և Վրաց եկեղեցիների, իսկ 1943 թ. Ռուս Ուղղափառ եկեղեցու սինոդական որոշմամբ Հայաստանի տարածքում գտնվող բոլոր ուղղափառ համայնքները փոխանցվեցին Վրաց կաթողիկոսությանը<sup>111</sup>:

Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուս եկեղեցին վերականգնեց իր հայաստանյան համայնքները: Դրանք կցվեցին Կրասնոգարի (այժմ՝ Եկատերինոգար) մետրոպոլիտությանը:

2016 թ. Ռուսաց եկեղեցու Մինոդի որոշմամբ Հայաստանի տարածքում գտնվող ռուս ուղղափառ ծուխերը, վերցվելով Եկատերինոգարի մետրոպոլիտությունից, «Պատրիարքական ծխական բարեկարգություն» կարգավիճակով կազմեցին առանձին միավոր և հանձնվեցին Վաղդիկավկազի և Ալանիայի առաջնորդ Լեոնիդ արքեպիսկոպոս Գորբաշևի կառավարմանը: 2021 թ. հոկտեմբերի 15-ին Ռուս եկեղեցու Մինոդի որոշմամբ վերականգնվեց Երևանի և Հայաստանի թեմը, որի առաջնորդ նշանակվեց

վեց Կլիմի մետրոպոլիտ դարձած նույն Լեոնիդ Գորբաշևը<sup>112</sup>: 2023 թ. դեկտեմբերին Գորբաշևը պաշտոնանկ արվեց, և Երևանի թեմի ժամանակավոր առաջնորդ նշանակվեց Պողոսիկ և Լյուբերցիի արքեպիսկոպոս Աքսի Լոբովը: 2024 թ. թեմական խորհրդի որոշմամբ կազմավորվեց Երևանի բարեկարգությունը, որի մեջ ներառվեցին մայրաքաղաքը, Գյումրին, Վանաձորը և ասորաբնակ Դմիտրով գյուղը:

Մինչ այդ՝ 2006 թ. Վրաց եկեղեցու կազմում վերականգնվեց պատմական Դմանիսի թեմը՝ վերանվանվելով



Դմանիսի, Ագարակ-Տաշիրի առաջնորդ Ջենոն արքեպիսկոպոս


«Դմանիսի, Ագարակի և Տաշիրի եպիսկոպոսություն»՝ Ջենոն եպս Խարաջուլիի առաջնորդությամբ<sup>113</sup>: 2018թ. Ախալցխիսեի թեմի առաջնորդին տրվել է Տառ-Կլարջեթիի, իսկ Ախալքալակի առաջնորդին՝ Կարսի եպիսկոպոսների տիտղոսները:

Ինչ վերաբերում է

110 Տե՛ս Зенон, «Дманисская», էջ 422:  
 111 Տե՛ս Масиель Санчес, «Ереванское викариатство», էջ 594-595:  
 112 2022 թ. Ալեխանդրիո եկեղեցու տարածք հակակաթոնական ներխուժման պատճառով նույն այդ եկեղեցու ժողովական որոշմամբ Լեոնիդ մետրոպոլիտը կարգալույծ է հռչակվել:  
 113 Տե՛ս Зенон, «Дманисская», էջ 422:



Թեոդոր մետրոպոլիտ Ջուսնեն՝  
Ախալցխիսի Տառ-Կլաբչերիի և Լազիկեի առաջնորդը  
Նիկողոզ մետրոպոլիտ Պաշուաշվիլին՝ Ախալցախի,  
Կումուսդոյի և Կարսի առաջնորդը



Կոլոնիայի առաջնորդ  
Աթանաս մետրոպոլիտ  
Թեոխարուսը

Թեպետ զուտ անվանապես, բայց գոյություն

Կոստանդնուպոլսի  
տիեզերական պատ-  
րիարքությանը, ապա  
դրա կազմում 1967-  
2003 թթ. Կոլոնիայի  
առաջնորդն էր Գաբ-  
րիել մետրոպոլիտ  
Պրեմետիդիսը, իսկ  
2021 թ. նոր առաջ-  
նորդ ընտրվեց Աթա-  
նաս մետրոպոլիտ  
Թեոխարուսը: Ներ-  
կայումս Կոստանդ-  
նուպոլսի պատրիար-  
քության կազմում

ունի Սերաստիայի  
մետրոպոլիտությունը:  
1990-2019 թթ. դրա  
առաջնորդը Գիմիտ-  
րիոս մետրոպոլիտ  
Կոմմատասն էր, իսկ  
2019 թվականից առ  
օրս՝ Սերաֆիմ մետ-  
րոպոլիտ Գինիսը:

Տիեզերական  
պատրիարքու-  
թյան կազմի մեջ է  
նաև Բասենի (հու-  
նարեն՝ Ջասիանի)  
եպիսկոպոսու-  
թյունը, որի առաջնորդը  
2002 թվականից առ  
օրս Ամերիկայի ար-  
քեպիսկոպոսու-  
թյան օգնական եպիսկո-  
պոս Անտոն Պարո-  
պուլոսն է:

2017 թ. Արաբիոսի  
տիտղոսակիր առաջ-  
նորդ ընտրվեց Կա-  
սիանոս եպս Նոտիսը,  
որը Քաղկեդոնի մետ-  
րոպոլիտի օգնականն  
է և Խալկիի Սբ. Երրոր-  
դություն վանքի վանահայրը:  
Մեկ տարի անց՝  
2018 թ. Մելիտենեի տիտղոսակիր առաջնորդ



Սերաստիո առաջնորդ  
Սերաֆիմ մետրոպոլիտ  
Գինիսը



Բասենի առաջնորդ  
Անտոն եպս Պարոպուսը



Աբաբխոսի առաջնորդ  
Գասիանոս եպս Նոտիսը



Մելիտենեի առաջնորդ  
Մաքսիմոս եպս Պաֆիլիսը

ընտրվեց Մաքսիմոս Պաֆիլիսը, որը Ֆրանսիա-  
յի մետրոպոլիտի օգնական եպիսկոպոս է:

Եվ վերջապես, ինչ վերաբերում է Անտիո-  
քի պատրիարքության Ամիդի և Կարինի  
պատմական մետրո-  
պոլիտություններին,  
ապա դրանցից առա-  
ջինը ցարդ թափուր  
է, իսկ 2014 թվակա-  
նից Թեոդոսուպոլսի  
առաջնորդն է Քայիշ  
եպս Սադեկը:



Թեոդոսուպոլսի Քայիշ եպս  
Սադեկը

Այսպիսով, նա-  
խորդ դարի ողբեր-  
գական իրադար-  
ձությունների՝ հայերի

ու հույների ցեղասպանությունների և հայրե-  
նի եզերքից արմատախիլ լինելու պատճա-  
ռով, միջնադարյան ուղղափառ հայերի վերջին  
փշրանքները՝ հայ հոռոմները, անցան պատ-  
մության գիրկը: Ներկայումս պատմական Հա-  
յաստանի տարբեր հատվածների անունը կրող  
ուղղափառ եպիսկոպոսները զուտ անվանական  
առաջնորդներ են և չունեն հոտ, բացառությամբ  
Երևանի թեմի: Իսկ Հայրանիքից դուրս բնակվող  
օրթոդոքս հայերը չունեն առանձին նվիրապե-  
տական կառույցներ և ենթակա են տվյալ տե-  
ղի (երկրի, թեմի) եկեղեցական իշխանությանը:



## ԱՄՓՈՓՈՒՄ

Ամբողջացնելով մեր այս ուսումնասիրությունը՝ կարող ենք հանգել մի քանի կարևոր եզրակացությունների.

1. Հայաստանի պատմա-աշխարհագրական պայմանները, որոնց մեջ հայտնվեց ու զարգացավ Եկեղեցին, կանխորոշեցին եկեղեցական պատմության հետագա զարգացումները. V-VI դդ. առաքելահիմն Հայաստանյայց Եկեղեցու ներքին հոսանքները, մի կողմից բախվելով աստվածաբանական խնդիրներին, իսկ մյուս կողմից՝ քաղաքական գործունեություններին, հանգեցրեցին նրան, որ Հայքի եկեղեցական մարմնի մեջ առաջացան երկու տարբեր ուղղություններ՝ Քաղկեդոնի Տիեզերաժողովի կողմնակից և հակառակորդ: VI դ. երկրորդ կեսն ու ողջ VII դարն անցան այս երկու հոսանքների ներեկեղեցական պայքարով, իսկ երբ VIII դ. սկզբներին՝ արաբական տիրապետության հաստատմանը համահունչ, հաղթեց հակաքաղկեդոնական թևը, երկու ուղղությունների պատմական ճանապարհները վճռակա՛նապես բաժանվեցին:
2. Հետարաբական շրջանում, երբ ազատագրված Հայաստանի առջև նոր պատմական հորիզոն էր բացվում, Քաղկեդոնի ժողովի ընդունման և, հետևաբար, Տիեզերական Եկեղեցու հետ միաբանելու հիմնախնդիրը կրկին հրապարակ եկավ: Բազրատունիներն

սկզբնապես հակված էին Կոստանդնուպոլսի հետ դավանաբանական երկխոսության, ինչի արդյունքը եղավ 862 թ. Շիրակավանի ժողովում կնքված հավատո միաբանությունը: Սակայն հետագայում, երբ Բագրատունյաց իշխանությունն ամրապնդվեց, հակաքաղկեդոնական կողմնորոշումը դարձավ նրանց տերության կարևոր տարբերակիչ գիծը ոչ միայն զերհզոր Հռոմոց կայսրությունից, այլև հարևան պետություններից՝ Տալթի և Աբխազաց թագավորություններից: Բագրատունիները, համագործակցելով Հայոց կաթողիկոսության հետ ու վերջինս ենթարկելով իրենց, X դ. կեսերից պայքար սկսեցին Շիրակավանի ժողովի ժամանակներից ի վեր Հայաստանում զորացած ուղղափառ համայնքների, ինչպես նաև Հայոց Եկեղեցու օրթոդոքսամետ հատվածի դեմ: Այդ պայքարն ի վերջո ապարդյուն անցավ, քանի որ X-XI դդ. Հռոմոց կայսեր իշխանության՝ հայկական տարածքների ու թագավորությունների վրա տարածմանը զուգահեռ, Հայաստանում բազմացան օրթոդոքս թեմերը: Այս վերելքը սակայն կարճ ժամանակ տևեց, քանի որ սելջուկյան ասպատակություններով սկիզբ դրվեց քրիստոնյա տարածաշրջանների հոգևոր անկմանն ու աստիճանական մահմեդականացմանը:

3. Հայաստանի ուղղափառ համայնքները մեկ անգամ էլ ծաղկում ապրեցին Զաքարյանների շրջանում, երբ սելջուկներից ազատագրված Հայաստանի մի մեծ հատվածը Վրաց

թագավորության մասը կազմեց: Այս շրջանի առանձնահատկությունն այն էր, որ ուղղափառ հավատքը պետական հովանավորություն էր վայելում: Զաքարյանների կրոնական հարցերում հավասարակշռված, խոհեմ քաղաքականության և երկրի բարեկեցության պայմաններում ծաղկում ապրեց հանուր հայ ժողովրդի, այդ թվում նաև ուղղափառ հայոց մշակույթը:

4. Ո՛չ Բագրատունյաց, ո՛չ բյուզանդական տիրապետության կարճ ընթացքում, ո՛չ էլ Զաքարյանների օրոք հայկական տարածքների ուղղափառ համայնքներն այդպես էլ չկարողացան ստեղծել իրենց սեփական նվիրապետական կառույցը, իրենց առանձին եկեղեցին, այլ մնացին երեք այլալեզու եկեղեցիների՝ Պոլսի և Անտիոքի պատրիարքությունների, Քարթլիի կաթողիկոսության հոգևոր իշխանության ներքո: Սեփական կաթողիկոսություն քաղկեդոնական հայերը կարողացան կազմակերպել միայն VI դ. վերջում, մի կարճ ժամանակով, իսկ 632/33 թթ. Վաղարշապատի (Դվինի) կաթողիկոսությունը Կարինում կնքեց հավատո միաբանության Տիեզերական եկեղեցու հետ, և այդպիսով առանձին քաղկեդոնական կաթողիկոսություն ունենալու հրամայականը վերացավ: Իսկ IX-XIII դդ. առանձին և ինքնուրույն եկեղեցի «ծայր» հայերն անկարող էին կազմակերպել, թեկուզ միայն այն պատճառով, որ նախ՝ ազգային պետականություն-

նը նրանց կողմնակից չէր, և երկրորդ՝ ուղղափառ հայոց համայնքները տարածված էին մասնատված Մեծ Հայքի տարբեր հատվածներում, որտեղ տարբեր իշխանություններ և հետևապես, քաղաքական տարբեր նպատակներ կային:

5. Հայ ժողովրդի պատմության առանձնահատկություններից է այն, որ նա չի սահմանափակվում Հայաստանի տարածքով. մեր պատմության անքակտելի մասն է հայ գաղթաշխարհը: Ուղղափառ հայերն այս առումով ևս բացառություն չեն կազմում, այնպես որ նրանց ներկայությունը և ժառանգությունը սփռված է նաև Հայրենիքից դուրս՝ Հոռոմոց կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում, Սբ. Երկրում, Հոռոմում, Սբ. Լեո Աթոսում, Արևմտյան Եվրոպայում, Ռուսիայում, Վրաստանում և այլուր: Ուշագրավ է, որ օտար ափերում հաստատված «ծայր» հայերը ջանացել են պահպանել իրենց մայրենին, հետևաբար նաև իրենց ազգային ինքնությունը: Այսպիսով, ուղղափառ հայոց պատմությունը կապվում է և՛ Հայաստանի, և՛ օտար երկրների պատմության հետ, մասն է կազմում թե՛ Հայաստանյայց, թե՛ Օրթոդոքս եկեղեցու ժառանգության դառնալով յուրօրինակ մի կամուրջ, որ կապում է հայությունն այլ երկրների ու ժողովուրդների հետ:
6. Սելջուկյան, ապա և օսմանյան տիրապետության հաստատումը Կովկասում ու Փոքր Ասիայում քրիստոնեական համայնքների,

այդ թվում օրթոդոքսների առջև բացեց դանդաղ մահվան դուռը: XVI-XVIII դդ. ընթացքում բռնի կամ հարկադրված իսլամացման գոհ գնացին հայուխյան և քրիստոնյա այլ ազգերի հոծ զանգվածներ, ինչի արդյունքում զգալիորեն փոխվեց երբեմնի քրիստոնյա տարածաշրջանների ազգային և կրոնական պատկերը: Մահմեդականացման ու «տաճկացման» սարսափելի ալիքի մեջ հատկապես խոցելի եղան օրթոդոքս հայերը, քանի որ նրանք առանց այդ էլ փոքրամասնություն էին կազմում: Արդյունքում նրանց թիվն այնպես նվազեց, որ XIX դ.-XX դարասկզբում այն սահմանափակվել էր ընդամենը մի քանի գյուղերով ու ավաններով՝ հիմնականում Չմշկածագի և Ակնի գավառներում, Ամիգում և Իզմիրի շրջանում:

7. Հայ հոռոմ համայնքների հոգևոր-մշակութային կյանքի մի վերջին ծաղկում նկատվեց XVIII դ.-XIX դ. սկզբում, երբ կատարվեցին ծիսական գրականության նոր թարգմանություններ հունարենից հայերեն, Ակնում նորոգվեցին եկեղեցիները, ծիսամատյաններ տպագրվեցին: Դժբախտաբար սակայն, XIX դ. վերջից Արևմտյան Հայաստանի և հատկապես իզմիրիցի հայ հոռոմների մեջ առաջ տարվեց հելլենականացումը, իսկ համիդյան ջարդերը, Հայոց և Հունաց ցեղասպանություններն ու վտարումը հայրենի եզերքից վերջին մահացու հարվածը հասցրեցին այդքան դժվարությունների միջից անցած ու

հազիվ իրենց գոյությունը պահպանած հայ հոռոմ փոքրաթիվ համայնքներին:

8. Մայր Հայրենիքում միևնույն էթնոսի շրջանակներից ներս՝ առաքելական և օրթոդոքս հայերն ապրել ու ստեղծագործել են կողք-կողքի, հաճախ միևնույն բնակավայրում, անգամ՝ միևնույն տոհմի մեջ, ինչպես օրինակ Զաքարյան իշխանների պարագայում: Հազվադեպ երևույթ չի եղել այս կամ այն եկեղեցու անցումը մի համայնքից մյուսին, ինչի արդյունքում այսօր ունենք ընդհանուր սրբավայրեր և երկշերտ հուշարձաններ: Դարերի ընթացքում ոչ միայն առաքելական հայերն են ուղղափառություն ընդունել, այլև հայ հոռոմները, մնալով առանց հովվի, ընդունվել են Հայ Առաքելական եկեղեցու գիրկը: «Մայր» հայոց ստեղծած մատենագրական հուշարձանները հաճախ ներառվել են առաքելական հայոց գրական ժառանգության մեջ, ինչն ապահովել է դրանց պահպանումն ու փոխանցումը զալիք սերունդներին: Փաստորեն, մեկ ազգի մեջ գործ ունենք երկու եկեղեցական-մշակութային ավանդությունների փոխներթափանցման հետ: Այս կարևորագույն եզրահանգումը պիտի ուղենիշ լինի՝ ուղղափառ հայոց պատմությունն ու ժառանգությունը որպես արժեքավոր գոհար ներառելու ընդհանուր հայ ժողովրդի պատմամշակութային գանձարանի մեջ: Քանզի է «Ժամանակ ձգելոյ քարինս, եւ ժամանակ ժողովելոյ քարինս» (Ժող. Գ, 5):

## РЕЗЮМЕ

Проблематика истории и культурного наследия православных армян (“армян-халкидонитов”) впервые была введена в сферу арменоведческих исследований в 1905 г., благодаря докладу-статье Н. Я. Марра “Аршун: монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкидонитах”. На протяжении XX в. отдельные вопросы, связанные с историей и наследием православных армян, были освещены в работах таких исследователей, как Л. Меликсет-Бек, о. Нерсес Акинян, Р. Бартикян, П. Мурадян, В. Арутюнова-Фиданян и др. Кроме того, что указанные арменоведы касались лишь отдельных моментов исследуемой тематики, их исследования почти исключительно ограничиваются Средневековьем. Между тем, наша монография пытается заполнить оба этих пробела, т. к. ее цель – во-первых, представить взору читателя панораму богатой и сложной истории православных армян, не углубляясь в многочисленные частные вопросы, которые должны стать предметом дальнейших исследований; и во-вторых, книга охватывает историю православных армян вплоть до начала XX в. Вкратце представим содержание семи глав книги:

Глава 1. “Золотой восход”: в главе вкратце излагается история распространения христианской веры в двух частях исторической колыбели армянского народа – в Малой и в Великой Армении (I-IV вв.).

Глава 2. “Два пути”. Эпоха Вселенских соборов и христологические споры. Двинские соборы VI-VII в., приведшие к образованию в Армении двух церковных традиций – армянской православной (халкидонитской) и армянской апостольской (антихалкидонитской).

Глава 3. “На земле армянской”. Обзор положения православных общин в Тайке (IX-X вв.) и в Армении периода Багратидов и Захарянов (X-XIII вв.).

Глава 4. “На чужих берегах”: миграции православных армян, византийские императоры и константинопольские патриархи армянского происхождения; православные армянские общины в монастырях Палестины, Св. Горы Афон, Балкан (V-XI в.).

Глава 5. Православные епархии Армении в III-XV вв. в данной главе представлены православные митрополии и епископские кафедры, существовавшие на армянских землях в Средние века: митрополии Севастии и Мелитены (Малая Армения), Таронская и Трапезундская митрополии (Константинопольский патриархат); Каринская митрополия и другие армянские кафедры Антиохийского патриархата; армянские кафедры Грузинского католикосата – Анийская, Карсская, Вагаршакертская и Дманисская епархии.

Глава 6. “Между жизнью и смертью”. Борьба за существование христиан в Османской империи и их исламизация в XV-XVIII вв.. Кратковременный расцвет общин

православных армян (“хай-хоромов”) в XVIII- начале XIX вв.

Глава 7. “Красный закат”. Положение общин хай-хоромов (армян-ромсев) в конце XIX-начале XX вв. Эллинизация и истребление православных армян Измита. Миграция хай-хоромов Западной Армении в Грецию.

В результате нашего исследования мы можем сделать несколько выводов, важных для дальнейших исследований:

1. Историко-географические условия Армении, в которых возникла и развивалась Церковь, определили ход церковной истории: в V-VI вв. внутренние течения Апостольской Церкви Армении, с одной стороны столкнувшись с богословскими проблемами, а с другой – с политическими факторами, привели к возникновению двух различных направлений – сторонников и противников IV Вселенского собора (Халкидон, 451 г.). Вторая половина VI в. и весь VII в. прошли во внутрицерковной борьбе этих двух течений, а когда в начале VIII в., на фоне установления в Армении арабского владычества, победило антихалкидонитское крыло, исторические пути двух направлений решительно разошлись.
2. В послеарабский период, когда перед освобожденной Арменией открывался новый исторический горизонт, на первый план вновь вышел вопрос принятия

Халкидонского собора и, следовательно, восстановления евхаристического единения со Вселенской Церковью. Первые Багратуни изначально были склонны к догматическому диалогу с Константинополем, что привело к унии, заключенной на Ширакаванском соборе 862 г. Однако позднее, когда власть Багратидов укрепилась, антихалкидонитская направленность стала важной отличительной чертой их державы не только от сверхмогущественной империи Ромеев, но и от соседних багратидских государств - Тайкского и Абхазского царств. Армянские Багратуни, сотрудничая с Армянским католикосатом и подчинив себе последний, с середины X в. начали борьбу против православных общин, укрепившихся в Армении со времен Ширакаванского собора, а также против склонной к диалогу с Византией части духовенства самой Армянской Церкви. В конце концов, эта борьба оказалась безуспешной, поскольку в X-XI вв. православные епархии в Армении умножились параллельно с распространением власти византийского императора на армянские земли и царства. Тем не менее, этот подъем был недолгим, поскольку нашествия сельджуков положили начало упадку и постепенной исламизации христианских регионов.

3. Православные общины Армении еще раз расцвели при Захарянах, когда

большая часть освобожденной от сельджуков Армении вошла в состав Грузинского царства. Особенностью этого периода было то, что православная вера пользовалась покровительством государства. Благодаря взвешенной, рассудительной политике Захарянов в религиозных вопросах и всеобщего процветания страны, культура армянского народа, в том числе и православных армян, пережила подъем.

4. Ни в период правления Багратидов, ни в короткий период византийского владычества, ни в период правления Захарянов православные общины армянских территорий не смогли создать свою каноническую структуру, свою отдельную Церковь, но оставались в составе трех иноязычных Церквей - Константинопольского и Антиохийского патриархатов, а также католикоса Восточной Грузии. Армяне-халкидониты смогли организовать свой католикосат только в конце VI в., на совсем неподолжительный промежуток времени. На Каринском соборе 632/33 гг. Вагаршапатский (Двинский) католикосат вступил в общение со Вселенской Церковью, и таким образом необходимость иметь отдельную иерархию для халкидонитов отпала. В дальнейшем, в IX-XIII вв. православные армяне уже не могли организовать отдельную и независимую

Церковь хотя бы потому, что, во-первых, их не поддерживала национальная власть, а во-вторых, православные армянские общины были разбросаны по разным частям раздробленной исторической Армении, где были разные власти и, следовательно, разные политические цели.

5. Одной из особенностей истории армянского народа является то, что она не ограничивается территорией Армении: армянская диаспора – неотъемлемая часть нашей истории. Православные армяне не являются исключением в этом отношении, поэтому их присутствие и наследие распространяется и за пределы Родины, в таких центрах и краях, как Царьград, Святая Земля, Рим, Гора Афон, Западная Европа, Россия, Грузия. Примечательно, что обосновавшиеся на чужих берегах армяне-халкидониты стремились сохранить родной язык, а значит, и свою национальную идентичность. Таким образом, история православных армян связана с историей как Армении, так и зарубежных стран, является частью наследия как Армении, так и Православной Церкви; это своеобразный мост, соединяющий армянский народ с другими странами и народами.

6. Установление сельджукского, а затем и османского господства на Кавказе и в Малой Азии открыло дверь для медленной

смерти христианских общин. В XVI-XVIII вв. большие массы армян и других христианских народов стали жертвами вынужденной или насильственной исламизации, в результате чего существенно изменился национальный и религиозный облик некогда христианских регионов. Особо уязвимыми в страшной волне мусульманизации и туркизации оказались православные армяне, т. к. они составляли меньшинство. В результате их численность уменьшилась настолько, что в XIX-XX вв. она ограничивалась лишь несколькими селами и поселками, в основном в Чимишкацагском, Акнском, Амидском и Измитском областях.

7. Последний расцвет духовной и культурной жизни общин армян-ромеев приходится на конец XVIII-начало XIX вв., когда были осуществлены новые переводы литургической литературы с греческого языка на армянский, в селах Акнской области были восстановлены церкви, напечатаны богослужебные книги. К сожалению, с конца XIX в. в Западной Армении, но в особенности среди армян-ромеев Измитской области прошла кампания по их эллинизации, а хамидийская резня, армянский и греческий геноциды, изгнание с исторической родины христиан нанесли последний смертельный удар по малочисленным православным армянским общинам, пережившим столько

трудностей и еле выжившим в сложных круговоротах истории.

8. На Родине, в рамках одного и того же этноса, апостольские и православные армяне жили и творили бок о бок, часто в одном поселении, даже в одной семье, как например, в случае с князьями Захарянами. Переход того или иного храма или обители из одной церковной традиции в другую не был редким явлением, в результате чего сегодня мы имеем общие святыни и памятники с пластами двух конфессий. Кроме того, на протяжении веков, как в Православие переходили апостольские армяне, так и в лоно Армянской Апостольской Церкви переходили оставшиеся без пастыря хай-хоромы. Литературные памятники, созданные армянами-халкидонитами, часто включались в литературное наследие апостольских армян, что обеспечивало их сохранность и передачу будущим поколениям. По сути, мы имеем дело с взаимопроникновением двух церковно-культурных традиций в рамках одной и той же нации. Этот важнейший вывод должен стать ориентиром для включения истории и наследия православных армян в качестве ценной жемчужины в общую культурную сокровищницу армянского народа. Ибо «есть время разбрасывать камни, и время собирать камни» (Еккл. 3: 5).

## SUMMARY

The issue of the history and cultural heritage of Eastern Orthodox Armenians (“Armenians-Chalcedonians”) was first introduced into the field of Armenian studies in 1905, thanks to the report-article by N. Y. Marr “Arkhaun: a Mongolian term for Christians, in connection with the question about the Armenians-Chalcedonians.” Throughout the 20th century, specific issues related to the history and heritage of Eastern Orthodox Armenians were explored in the works of researchers such as L. Melikset-Bek, Fr. Nerses Akinyan, R. Bartikyan, P. Muradyan, V. Arutyunova-Fidanyan, and others. However, these Armenian studies scholars were mainly focused on specific aspects of the research topic, with their studies predominantly limited to the medieval period. In contrast, our monograph attempts to address both of these gaps. Its goal is twofold: firstly, to present readers with a panoramic view of the rich and complex history of Eastern Orthodox Armenians without delving into numerous specific questions that should be the subject of further research; and secondly, the book covers the history of Eastern Orthodox Armenians up until the early 20th century.

Briefly, let us outline the contents of the seven chapters of the book:

### Chapter 1: “Golden Sunrise”

This chapter provides a brief history of the spread of the Christian faith in the historical cra-

dle of the Armenian people, encompassing both Lesser and Greater Armenia (1st to 4th centuries).

### Chapter 2: “Two Paths”

The era of Ecumenical Councils and Christological disputes is explored in this chapter. The Dvin Councils of the 6th and 7th centuries led to the formation of two Armenian ecclesiastical traditions: the Eastern Orthodox (Chalcedonian) and Oriental Orthodox (Armenian Apostolic, Anti-Chalcedonian).

### Chapter 3: “On Armenian Soil”

A survey of the status of Orthodox communities in Tayk (9th-10th centuries) and in Armenia during the Bagratid and Zakaryan periods (10th-13th centuries).

### Chapter 4: “On Foreign Shores”

This chapter covers the migration of Eastern Orthodox Armenians; Byzantine emperors and Constantinopolitan patriarchs of Armenian origin. It also discusses Eastern Orthodox Armenian communities in the monasteries of Palestine, Mount Athos, and the Balkans (5th-11th centuries).

### Chapter 5: “Eastern Orthodox Dioceses of Armenia from the 3rd to the 15th Century”

This chapter presents Eastern Orthodox metropolises and episcopal sees that existed in Armenian lands during the Middle Ages. It includes the metropolises of Sebasteia and Melitene (Lesser Armenia), the Taron and Trebizond metropolises (under the jurisdiction of the Patri-



archate of Constantinople), the Karin metropolis, and other Armenian sees of the Patriarchate of Antioch. It also covers Armenian sees of the Georgian Catholicosate: Ani, Kars, Vagarshakert, and Dmanis.

#### Chapter 6: "Between Life and Death"

This chapter discusses the struggle for the existence of Christians in the Ottoman Empire and their Islamization from the 15th to the 18th centuries. It touches upon the brief flourishing of Eastern Orthodox Armenian communities known as "hay-horom," (which means "Armenian-Rum") in the 18th to early 19th centuries.

#### Chapter 7: "Red Sunset"

The situation of "hay-horom" (Armenian-Rum) communities in the late 19th to early 20th centuries is explored in this chapter. It covers Hellenization and the extermination of Eastern Orthodox Armenians in Izmit, as well as the migration of the "hay-horom." from Western Armenia to Greece.

As a result of our research, we can draw several conclusions that are important for further studies:

1. The historical and geographical conditions of Armenia, in which the Church originated and developed, determined the course of its subsequent history. In the 5th and 6th centuries, internal currents within the Armenian Church, confronted with theological and political challenges, led to the emergence of two distinct factions - supporters and opponents of the Fourth

Ecumenical Council (Chalcedon, 451 AD). The second half of the 6th century and the entire 7th century were marked by internal struggles between these two factions. In the early 8th century, with the establishment of Arab rule in Armenia, the anti-Chalcedonian faction emerged victorious, and the historical paths of the two factions diverged decisively.

2. In the post-Arab period, as newly liberated Armenia faced a new historical horizon, the question of accepting the Council of Chalcedon and, consequently, restoring Eucharistic unity with the Universal Church came to the forefront. The Bagratids were initially inclined towards doctrinal dialogue with Constantinople, which led to the union concluded at the Council of Shirakavan in 862. However, later on, as the power of the Bagratids strengthened, their anti-Chalcedonian stance became an important distinguishing feature of their realm, not only from the mighty Roman Empire (Byzantium) but also from neighboring Bagratid states - the Kingdoms of Tayk and Abkhazia. The Armenian Bagratids, in collaboration with the Armenian Catholicosate and subjugating it, began their struggle against the Eastern Orthodox communities that had established themselves in Armenia since the Council of Shirakavan, as well as against a faction of the clergy within the Armenian Church that was inclined towards dialogue with Byzantium. Ultimately, this struggle proved futile, as Eastern Orthodox dioceses multiplied in Armenia parallel to the expansion of

Byzantine rule over Armenian lands and kingdoms in the 10th and 11th centuries. However, this resurgence was short-lived as the invasions of the Seljuks marked the decline and gradual Islamization of Christian regions.

3. Eastern Orthodox communities in Armenia experienced a revival once again during the reign of the Zakaryans when a significant portion of Armenia, liberated from the Seljuks, became part of the Kingdom of Georgia. One notable feature of this period was that the Eastern Orthodox faith enjoyed the patronage of the state. Thanks to the balanced and prudent policies of the Zakaryans in religious matters and the overall prosperity of the country, the culture of the Armenian people, including Eastern Orthodox Armenians, flourished.
4. Neither during the reign of the Bagratids, nor during the short period of Byzantine rule, nor during the rule of the Zakaryans, could the Eastern Orthodox communities of Armenian territories establish their own canonical structure or separate Church. They remained part of three foreign-language Churches - the Patriarchates of Constantinople and Antioch, as well as the Catholicosate of Kartli (Eastern Georgia). Armenians-Chalcedonians were able to organize their own Catholicosate only in the late 6th century, for a very brief period of time. At the Council of Karin in 632/33, the Catholicosate of Vagharshapat entered into communion with the Universal Church, eliminating the need for a separate

hierarchy for the Chalcedonians. In the following centuries, from the 9th to the 13th, Eastern Orthodox Armenians could no longer organize a separate and independent Church. Firstly, they lacked the support of the national authorities, and secondly, the Eastern Orthodox Armenian communities were scattered across different parts of fragmented historical Armenia, where different authorities and, consequently, different political objectives existed.

5. One of the peculiarities of Armenian history is that it is not limited to the territory of Armenia itself: the Armenian diaspora is an integral part of our history. Eastern Orthodox Armenians are no exception in this regard, and their presence and heritage extends beyond the homeland to centers and regions such as Constantinople, the Holy Land, Rome, Mount Athos, Western Europe, Russia, Georgia, and others. It is noteworthy that Armenians-Chalcedonians who settled in foreign lands sought to preserve their native language and, therefore, their national identity. Thus, the history of Eastern Orthodox Armenians is intertwined with the history of both Armenia and foreign countries, forming part of the heritage of both Armenia and the Eastern Orthodox Church. It serves as a unique bridge connecting the Armenian people with other countries and peoples.
6. The establishment of Seljuk and later Ottoman rule in the Caucasus and Asia Minor opened the door to the slow demise of

Christian communities. In the 16th to 18th centuries, large numbers of Armenians and other Christian peoples fell victim to forced or violent Islamization, leading to significant changes in the national and religious identity of once-Christian regions. Eastern Orthodox Armenians were particularly vulnerable in the terrifying wave of Islamization and Turkification as they constituted a minority. As a result, their numbers dwindled to the point where, in the 19th and 20th centuries, they were limited to only a few villages and settlements, primarily in the Chmişkatsagh, Akn, Amid, and İzmit regions.

7. The last flourishing of spiritual and cultural life in the Armenian-Rum communities was in the late 18th to early 19th centuries, when new translations of liturgical literature from Greek to Armenian were made, churches were restored in the villages of the Akn region, and liturgical books were printed. Unfortunately, from the late 19th century onwards, a campaign of Hellenization took place, particularly targeting the Armenians-Romans communities of the İzmit region. The Hamidian massacres, Armenian and Greek genocides, and the expulsion of Christians from their historical homeland dealt a final deadly blow to the small Eastern Orthodox Armenian communities, who had already experienced so many difficulties and barely survived in the complex twists and turns of history.
8. In the homeland, within the framework of the same ethnic group, Apostolic (Oriental

Orthodox) and Eastern Orthodox Armenians lived and created side by side, often in the same settlements and even within the same families, as in the case of the Zakaryan princes. The transition of a church or monastery from one church tradition to another was not uncommon, resulting in shared holy sites and monuments that bear the layers of both confessions. Furthermore, over the centuries, just as some Apostolic Armenians converted to Eastern Orthodoxy, remaining Armenian-Rum communities also joined the Armenian Apostolic Church when they were left without pastors. Literary monuments created by Eastern Orthodox Armenians often became part of the literary heritage of Apostolic Armenians, ensuring their preservation and transmission to future generations. Essentially, we are witnessing the interpenetration of two church and cultural traditions within the same nation. This important conclusion should serve as a guide for incorporating the history and heritage of Eastern Orthodox Armenians as a valuable gem into the collective cultural treasury of the Armenian people. For there is a time to "cast away stones, and a time to gather stones together" (Ecclesiastes 3:5).

# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

### Հայերեն

Ազաթանգեղոս, Պատմության Հայոց = Ազաթանգեղոս, Պատմության Հայոց (հրատ. Կ. Իլգրաշեան, Պ. Մուրադեան), ՄՀ, հ. Բ, Ե դ., էջ 1291-1735:

Անանիա Մոկացի, Յադագս ապստամբության = Տեսնել Անանիայի Հայոց կաթողիկոսի յարագս ապստամբության տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրությանն արտաքոյ սուրբ Լուսաւորչի պօրոցն (հրատ. Ա. Բոզոյեան), ՄՀ, հ. Ժ, Ժ դ., էջ 255-274:

Անանուն, Թագակիրների = Անանուն (XIII դ.), Թագակիրների պատմական ու գովասանքը, Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, հ. Բ, էջ 5-32:

Անանուն, Թագավորների = Անանուն (XIII դ.), Թագավորի ոճման կարգը, Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, հ. Բ, էջ 47-48:

Անանուն, Ժամանակագրություն = Անանուն (XIII դ.), Ժամանակագրություն, Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, հ. Բ, էջ 49-70:

Անանուն, Վրաց Մատյանը = Անանուն (XI դ.), Վրաց (Քարթլիի) Մատյանը, Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, հ. Ա, էջ 199-213:

Արիստակես Լասախվերցի, Պատմություն = Պատմություն Արիստակեսի Լասախվերցույ վարդապետի վասն անցիցն անցեղոց ի յայլասեռն ազգաց, որ շուրջ զմեք են (հրատ. Գ. Տեր-Վարդանեան), ՄՀ, հ. ԺԶ, ԺԱ դ., էջ 526-633:

Արսեն Սափարացի, Վրաց և Հայոց = Արսեն Սափարացի (IX դ.), Վրաց և Հայոց բաժանման մասին, Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, հ. Ա, էջ 27-70:

Բարթիկյան, «Narratio» = Բարթիկյան, «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր», ԲՄ, 6 (1962), էջ 457-470:

Գիրք Թողոց = Գիրք Թողոց (հրատ. Նորայր արք Պողարեան), Երուսաղեմ, տպ. Ս. Յակոբեանց, 1994<sup>2</sup>:

Գրիգոր Կամախեցի, Ժամանակագրություն = Ժամանա-

կագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցու կամ Դարանաղեցու: Հրատ. Մեսրոպ վրդ Նշանեան, Երուսաղեմ, 1915:

Եպիփան Կիպրացի, Έκθεσις = Եպիփան Կիպրացու Έκθεσις πρωτοκλησιῶν πατριαρχῶν τε και μητροπολιτῶν. Հայերեն եւ յունարեն, հրատարակեց Ֆ.Ն. Ֆինկ, Թիֆլիս, 1902:

Եւսեբիոս, Պատմություն = Եւսեբիոսի Կեսարացու Պատմություն Եկեղեցու: Յեղեպ յատրույն ի Հայ ի հինգերորդ դարու, պարզաբանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Ճարեան ի Մխիթարեանց, Վենետիկ, 1817:

Թուղթ Փոռայ = Թուղթ Փոռայ պատրիարքի առ Չարարիս կաթողիկոս Հայոց Մեծաց վասն երկու միաարեալ բնութեանցն մի անձնադրություն գոյոյ Տեսնել մերոյ Յիսուսի Թրիստոսի եւ վասն ճշմարտախոսութեան ժողովոյ սուրբ Հայրն որ ի Քաղկեդոն (հրատ. Հ. Ն. Ալիկեան), ՀՄ, 1968, թիւ 1-3, ս. 65-100, թիւ 4-6, ս. 129-156:

Կիրակոս Գանձակեցի, Պատմություն = Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց: Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1961:

Հակոբ Կարնեցի, Շինուած = Շինուած Կարնոյ քաղաքին, որ կոչեցաւ Թեոդոսյօշիս, որ այժմ Արզրում վերայ-ձայնիս կոչի, Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 548-585:

Հակոբյան, Մանր Ժամանակագրություններ = Մանր Ժամանակագրություններ XIII-XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. I-II, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1951, 1956:

Հովհան Դամասկացի, Հայերեն = Հովհան Դամասկացի, Հայերեն թարգմանված երկեր. քննական բնագրեր և ուսումնասիրություն, աշխ. Գ. Մուրադյանի, հ. Ա-Բ, Եր., 2019, 2023:

Ղազար Փարպեցի, Թուղթ = Ղազար Փարպեցի, Թուղթ Ղազարայ Փարպեցու մեղադրություն ստախասու արեղայից յառաջաբան թողոյս առաքեալ յԱմիրք քաղաքէ (հրատ. Կ. Իլգրաշեան, Պ. Մուրադեան), ՄՀ, հ. Բ, Ե դ., էջ 2378-2395:

Մատթեոս Ուռնայեցի, Ժամանակագրություն = Մատթեոս Ուռնայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898:

Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները = Լ. Մելիքսեթ-Բեկ,

Վրաց աղբյուրները Հայաստանի յեզ հացերի մասին, Յերևան, հ. Ա (Ե-ԺԲ դ.), 1934, հ. Բ (ԺԳ-ԺԸ դ.), 1936, հ. Գ (ԺԸ-ԺԹ դ.), 1955:

Մովսես Կաղանկատուացի, Պատմություն = Մովսես Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, քնն. քննագիրը և ներած. Վ. Առաքելյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1983:

Յոհան Նիկիացի, Թուղթ = Թուղթ սրբազան արքեպիսկոպոսին Նիկիոյ խնատոնոյն Յոհաննու առ կրանկի կաթողիկոսն Հայոց Չարարից վասն տօնի Ծննդեան և Յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ (հրատ. Յ. Քեռսեան), ՄՀ, հ. Թ, Թ դ. (Յաւելուած), էջ 441-445:

Յովհաննէս Օձնեցի, Ընդդէմ կրեւոյթականաց = Նորին ընդդէմ երեւոյթականաց (հրատ. Յ. Քեռսեան), ՄՀ, հ. Է, Ը դ. (Յաւելուած), էջ 45-66:

Նեղոս Դորսապատիւ, Կարգագրութիւն = Նեղոսի Դորսապատի կարգագրութիւն պատրիարքական պթոնոցն հայերէն և յունարէն: Հրատարակեց Ֆ. Ն. Ֆինկ, Վաղարշապատ, ի տպարանի Ս. Էջմիածնի, 1902:

Նեմեսիոս Եմեսացի, Յաղագս = Նեմեսիոս Եմեսացի, Յաղագս բնութեան մարդոյ: Առաջարանը, համեմատական քննագիրը և ծանոթագրութիւնները՝ Կ. Մոսկկյանի, Եր., 2019:

Ներսէս Լամբրոնացի, Առննաբանութիւն = Առննաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացոյ, Վենետիկ, 1812:

Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածութիւն = Խորհրդածութիւն սրբազան պատարագի, բացատրութեամբ տնտն Ներսիսի Լամբրոնացոյ արքեպիսկոպոսի Տարսնի Կիլիկեցոց, Երուսաղէմ, 1842:

Ուխտանէս, Պատմություն = Ուխտանէս եպիսկոպոս, Պատմություն Հայոց, ՄՀ, ԺԵ հ., Ժ դ., Պատմագրութիւն, Բ գիրք, էջ 466-616:

Պաշտոնականք = Պաշտոնականք (XV դ.). «Թագավորական ոճման ծիսակարգութիւնը». «Սամցիսե-Սասթարագոյի թանկի ցուցակը», Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, հ. Բ, էջ 73-75:

«Պատմութիւն Խաչին» = «Պատմութիւն սուրբ Խաչին Հացունեաց, գոր էառ ի Հերակլայ կայսերէն Բիւրեղ տիկինն Սիւնեաց», Արարատ, 1888, Է, էջ 399-404:

Պաւղոս Տարանացի, Թուղթ = Թուղթ կրանկոյն Պաւ-

ղոսի Տարանացոյ յաղթաղ պիտոյան վարդապետի ընդ դէմ Թեոփիստեայ Հոռոմ փիլիսոփային (հրատ. Գ. Ալավերդեան), ՄՀ, հ. ԺԷ, ԺԱ դ., էջ 298-563:

Սամուէլ Անեցի, Ժամանակագրութիւն = Սամուէլ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն Աղանից միկեկ 1776, աշխ. Կ. Մաթեոսյանի, Եր., «Նաիրի», 2014:

Սեբեոս, Պատմություն = Սեբեոս, Պատմություն (հրատ. Կ. Իւզբաշեան), ՄՀ, հ. Դ, Է դ., էջ 543-565:

Սիմէոն Երեւանցի, Չամբո = Չամբո. Գիրք որ կոչի յիշատակարան արմանացոցի, հայկի և պարունակող բնաից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոց շրջակայից վանքերիցն: Համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէոնէ ցաւագար և վշտակոծ Կաթողիկոսէ Երեւանցոյ, ի Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1873:

Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն = Սիմէոն դպրի Լեհացոյ ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք: Ուսումնասիրեց և հրատարակեց հ. Ներսէս վ. Ալիկնեան Միխիթ. ուխտէն, Վիեննա, Միս. տպ., 1936:

Ստեփանոս Ասողիկ, Պատմություն Տիեզերական = Ստեփանոս Տարանեցի Ասողիկ, Պատմություն Տիեզերական (հրատ. Գ. Մանուկեան), ՄՀ, հ. ԺԵ, Ժ դ. Պատմագրութիւն երկու գրքով, գիրք Բ, էջ 639-829:

Ստեփանոս Օրբէլեան, Պատմություն = Պատմություն Լահանցին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910:

Վախուշտի Բագրատիոն, Վրաստանի թագավորութեան = Վախուշտի Բագրատիոն արքայազն, «Վրաստանի թագավորութեան նկարագրութիւն»-ից («Վրաստանի աշխարհագրութիւն»-ից), Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 77-87:

Վահան Նիկիոյ, Բանք = Վահանայ Նիկիոյ եպիսկոպոսի բանք, հրատ. Հ. Ներսէս վրդ Ալիկնեան, ՀԱ, 1968, թիւ 7-9, ս. 557-280:

Վարդան Բարձրբերդեցի, Պատմություն = Մեծին Վարդանայ Բարձրբերդեցոյ պատմութիւն տիեզերական: Ի յոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861:

Վկայաբանութիւն Բարդողոմէոսի = Վկայաբանութիւն սրբոյ Բարդողոմէոսի առաքելոյ, Սոփերք, ԺԹ, Վենետիկ, 1854:

Ψιμυριωνιτην Γωνητη = Ψιμυριωνιτην τε ρηιν  
ιζημιων U. Γωνητη ιμυριτην τε Uινημηινην ιημιη,  
Uτηληρη, Γ, Ψινητηη, 1853:

### Οιωνιωνιτην

Anne Comnène, *Aléxiade* = Anne Comnène, *Aléxiade. Règne de l'empereur Aléxis Ier Comnène (1081-1118)*. Texte établi et traduit par B. Leib, t. I-III, Paris, 1937-1945.

Darrouzès, *Notitiae* = *Notitiae episcopatum ecclesiae constantinopolitanae*. Texte critique, introduction et notes par J. Darrouzès. Paris, 1981.

Delehay, *Sunaxarium* = H. Delehay, *Propylaeum ad Acta Sanctorum, Novembris, Sunaxarium Ecclesiae Constantinopolitanae*, Bruxelles, 1902.

Δελικάνης, *Έγγραφα* = Καλλίνικος Δελικάνης, Αρχιμανδρίτης, *Τὰ ἐν τοῖς κώδιξι τοῦ Πατριαρχικοῦ Αρχιεποφυλακείου σωζόμενα ἐπίσημα ἐκκλησιαστικά ἔγγραφα τὰ ἀφορῶντα εἰς τὰς σχέσεις τοῦ Οἰκουμενικοῦ Πατριαρχείου πρὸς τὰς Ἐκκλησίας Αλεξανδρείας, Αντιοχείας, Ἱεροσολύμων καὶ Κύπρου (1574-1863)*, Κωνσταντινούπολη, 1904.

Garitte, *La Narratio* = G. Garitte, *La Narratio de rebus Armeniae*, édition critique et commentaire, CSCO, vol. 132, Subsidia tome 4, Louvain, 1952.

Γρηγόριος Θεολόγος, *Λόγος ΜΓ*, *Εἰς τὸν μέγαν Βασίλειον, ἐπίσκοπον Καισαρείας Καππαδοκίας, ἐπιτάφιος*, PG 36, 493-606.

Григорий Мерчуле, *Житие* = Григорий Мерчуле, *Житие св. Григория Хандзтуйского*/Груз. текст, введ., изд., пер. Н. Марра с дневниками поездки в Шавш(ет)ню и Клардж(ет)ню. СПб, 1911.

Γρηγόριος Νύσσης, *Επιτάφιος Λόγος εἰς τὸν Μέγαν Μελέτιον ἐπίσκοπον Αντιοχείας*, PG 46. 851-864.

Hannich, *Das Taktikon* = *Das Taktikon des Nikon vom Schwarzen Berge. Griechischer Text und kirchenslavische Übersetzung des 14. Jahrhunderts*. Ediert von Ch. Hannich in Zusammenarbeit mit P. Plank, C. Lutzka und T. I. Afanas'eva, unter Herenzienhung der Vorarbeiten von I. Doens, Weiher-Frierburg I. Br. 2014.

Ἰωάννης ἀρχιεπίσκοπος Νίκαιας, *Περὶ τῆς Γεννήσεως τοῦ Χριστοῦ πρὸς Ζαχαρίαν τὸν Καθολικὸν τῆς Μεγάλης*

*Αρμενίας*, PG 96, 1435-1450.

Ἰωάννης Χρυσόστομος, *Εἰς τὸν ἐν ἀγίοις Πατέρα ἡμῶν Μελέτιον ἀρχιεπίσκοπον Αντιοχείας τῆς μεγάλης, καὶ εἰς τὴν σπουδὴν τῶν συνελθόντων*, PG 50, 515-520.

*Μηναιὸν τοῦ Σεπτεμβρίου* = *Μηναιὸν τοῦ Σεπτεμβρίου, περιέχον ἅπασαν ἀνηκούσαν αὐτῷ ἀκολουθίαν*, ἔκδ. τῆς Ἀποστολικῆς Διακονίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, 2002<sup>2</sup>.

*Μηναιὸν τοῦ Ὀκτωβρίου* = *Μηναιὸν τοῦ Ὀκτωβρίου, περιέχον ἅπασαν ἀνηκούσαν αὐτῷ ἀκολουθίαν*, ἔκδ. τῆς Ἀποστολικῆς Διακονίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, 2011<sup>3</sup>.

*Μαρτύριον τοῦ Ἁγίου μάρτυρος Ἐδδοξίου καὶ τῶν σὺν αὐτῷ ἀθλησάντων ἁγίων μαρτύρων*, PG 115, 617-634.

*Μαρτύριον τῶν Ἁγίων ΜΕ' μαρτύρων*, PG 115, 323-346.

Noret, *Vitae Duo* = *Vitae Duo Antiquae Sancti Athanasii Athonitae*, ed. J. Noret, Brepols-Turnhout, 1982.

*Ὠρολόγιον* = *Ὠρολόγιον τὸ Μέγα*, ἔκδ. τῆς Ἀποστολικῆς Διακονίας τῆς Ἐκκλησίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, 2005<sup>5</sup>.

Parthey, *Hieroclis* = *Hieroclis Synecdemus et Notitiae Graecae episcopatum. Accedunt Nili Doxapatrii Notitia Patriarchatum et Locorum nomina immutata*. Et recognition G. Parthey. Verlag Adolf M. Hakkert-Amsterdam, 1967.

Petit, «*Vie*» = *Vie et office de Sant Euthyme le Jeune*. Texte grec puble par le L. Petit, *BHO*, 5, 1904, pp. 1-51.

Photius Constantinopolitanus, *Epistulae et Amphilochia* = Photii patriarchae Constantinopolitani, *Epistulae et Amphilochia*, recensuerunt B. Laourdas et L. G. Westerink, vol. I-VI, Leipzig, 1984-1988.

Φώτιος Κωνσταντινουπόλεως, *Έγκύκλιος ἐπιστολή* = *Έγκύκλιος ἐπιστολή πρὸς τοὺς τῆς ἀνατολῆς ἀρχιερατικούς θρόνους, Αλεξανδρείας φημι καὶ τῶν λοιπῶν ἐν ἧ περι κεφαλαίων τινῶν διάλυσιν πραγματεύεται, καὶ ὡς οὐ χρή λέγειν ἐκ τοῦ πατρὸς καὶ τοῦ υἱοῦ τὸ πνεῦμα προέρχεσθαι, ἀλλ' ἐκ τοῦ πατρὸς μόνον*, Photius Constantinopolitanus, *Epistulae et Amphilochia*, vol. I, pp. 40-53.

Φώτιος Κωνσταντινουπόλεως, *Κατὰ τῆς Θεοπασχιτῶν αἰρέσεως* = *Κατὰ τῆς Θεοπασχιτῶν αἰρέσεως*, Photius Constantinopolitanus, *Epistulae et Amphilochia*, vol. III, pp. 4-97.

Ράλλης-Ποτλῆς, *Σύνταγμα* = Γ. Α. Ράλλη, Μ. Ποτλή,

Σύνταγμα τῶν Θείων και ἱερῶν κανόνων, τ. Α'-ΣΤ',  
Αθήναι, 1852-59.

Regel, *Analecta* = *Analecta Byzantino-Russica*, ed. W. Regel,  
Petropoli, 1891.

Schwartz, *Kyryllos* = E. Schwartz, *Kyryllos von Skythopolis*,  
Leipzig, 1939.

Συμεών Μεταφραστής, *Βίος και πολιτεία τοῦ ὁσίου πατρὸς  
ἡμῶν Θεοδοσίου τοῦ Κοινοβιάρχου*, PG 114, 469-554.

Théodore Daphnopatès, *Correspondance* = Théodore  
Daphnopatès, *Correspondance*, éditée et traduite par  
J. Darrouzès et L. G. Westerink, éditions du Centre  
National de la Recherche Scientifique, Paris, 1978.

Θεόδωρος Δαφνοπάτης, *Ἐπιστολή = Ἀντίγραφον ἐπιστολῆς  
πρὸς τὸν τοῦ Σουνῆς ἐπίσκοπον χώρας τῶν Ἀρμενίων,  
δογματίζοντα μίαν φύσιν ἐπὶ Χριστοῦ μετὰ τὴν ἔνωσιν.  
τοῦ βασιλέως προστάξαντος*, Théodore Daphnopatès,  
*Correspondance*, pp. 109-141.

Τριῶδιον = *Τριῶδιον κατανακτικὸν περιέχον ἅπασαν τὴν  
ἀνηκούσαν αὐτῷ ἀκολουθίαν τῆς Ἁγίας και Μεγάλης  
Τεσσαρακοστῆς*, ἐκδ. τῆς Ἀποστολικῆς Διακονίας τῆς  
Ἐκκλησίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, 2003.

Usener, *Vita* = H. Usener, *Vita S. Theodosii Abbatis a Theodoro  
ep. Scripta*, Bonnae, 1890.

Βασίλειος Μέγας, *Ἐπιστολή ΝΖ'*, *Μελετίω, ἐπισκόπῳ  
Ἀντιοχείας*, PG 32, 405-408.

*Vita Georgii Hagioritae* = *Vita et mores sancti et beati patris nostri  
Georgii Hagioritae*, AB, XXXVI-XXXVII, pp. 77-159.

*Vita Iohannis atque Euthymii* = *Vita beati patris nostrum  
Iohannis atque Euthymii, et oratio de probatis eorum  
moribus, conscripta a paupererulo Georgio presbytero  
et monacho*, AB, XXXVI-XXXVII pp. 13-68.

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Հայերեն

Արուածե, «10-րդ դարի վրացերեն» = Ի. Արուածե, «10-րդ  
դարի վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակագր-  
ությունները և նրանց նշանակությունը հայ բար-  
բառագիտության համար», *ԲՄ*, 4 (1958), էջ 35-42:

